Экстраполирован и сценарии действий армянских революционеров: “При своей разрушительной работе в целях образования “великой и независимой Армянской республики”, “союзной с Российской”, “Дашнакцутюн” средствами для этого использовало усиленное революционизирование и вооружение народных масс, систематическое и открытое восстание”. Революционная организация рассматривалась деструктивной и разрушительной для существующих устоев:” Распространив свое влияние не только на Кавказе и Россию, но и на Западную Европу и Малую Азию, он имеет вполне законченную, чрезвычайно конспиративную организацию, олицетворяющую остов государственного организма республиканского типа”. Более того она представлялась готовой к государственному управлению: “В составе партии имеются все ведомства: законодательное, просвещение, администрация, суд со строгими карательными и исполнительными функциями (широкий террор в отношении как своих членов-ослушников, так и враждебных союзу правительственных должностных лиц), полиция и военная сила”.

Подпиткой партии представлялась армянская пресса на Кавказе и деятельность революционной фракции “Поторик” в составе армянского духовенства, которая добивалось нужных кондаков (указов) от Эчмиадзинского католикоса для воздействия на всех армян и противодействия правительственным установкам. Важной составной влияния партии указывалось наличие вооруженной армии “зинворов” в 100 тыс. чел, на содержание которой было истрачено 10 млн. руб., военные школы в Болгарии и Америке, а также финансовые поступления. В 1907г. около 165 тыс. “Союза армянских революционеров” внесли в партийную кассу 1 млн. руб., остальные поступали в виде взноса с населения и обложения зажиточных предпринимателей.

Наместник Кавказа открыто обвинялся в игнорировании революционной сущности партии, являющейся разрушительным детонатором царской власти на Южной окраине: “Наружно на Кавказе все спокойно, но внутри ведется самая широкая агитация “Дашнакцутюна”, сумевшего внушить кавказским властям ложное убеждение в том, что партия работает только против Турции, и все пополняется список жертв партийного террора, и прогрессирует вооружение масс”. Партия “Дашнакцутюн” обвинялась в подготовке покушения на султана Турции и шаха Персии, взаимодействии с местными революционерами и возможно осуществления “особо важного террористического акта в России”. Вновь говорилось о наличии плана захвата Карса и Эрзерума, при помощи 60 тыс. армии.

Записка Департамента главной ударной силой революционных настроений на Кавказе представляла партию “Дашнакцутюн” и призывала главу правительства к системной борьбе против ее деятельности. Она была обсуждена Столыпиным с Воронцовым, но как показывают последующие события, каждый из них остался

при своем мнении. Премьер-министр лишь усилил борьбу против революционной организации, рассматривая ее самой радикальной силой на Южной окраине.

ЛИТЕРАТУРА

1. Тунян В.Г. *Легенды и были: охранка и Армения XIX – нач. XX вв.* Ер., 2008.
2. *Борьба с революционным движением на Кавказе в эпоху Столыпина*. - Красный архив. 1929, т. 4 (35), с. 141.
3. *Программа А.Р. Дашнакцутюн*. Женева, 1907, с. 4 – 8. - На арм. яз.
4. *Дашнаки.-Военно-исторический журнал*. 1990, N 8, с. 10 -12.
5. *Российский государственный исторический архив (РГИА)*, ф. 821, оп. 139.

Վ.Գ. ԹՈՒՆՅԱՆ – Ոստիկանության բաժանմունքը և «Դաշնակցությունը» 1908թ.: – Սկզբնավորման պահից ի վեր «Դաշնակցություն» կուսակցությունը գտնվել է ոստիկանության բաժանմունքի կամ դեպարտամենտի՝ ցարական իշխանությունների բարձրագույն գաղտնի կազմակերպության ուշադրության կենտրոնում: Հոդվածում փաստական առատ նյութի հիման վրա բացահայտվում են դեպարտամենտի գաղտնի գնահատականներն այդ կուսակցության գործունեության ուղղվածության, նրա կուսակցական կառույցների և նպատակների և դրանք չեզոքացնելու անհրաժեշտության մասին:

ՀԱՅ – ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԲԸ 1830 – 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ն.Է. ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ-ամերիկյան հարաբերությունները կամ առնչություններն սկզբնավորվել են բավականին բարդ պայմաններում. հայ ժողովուրդը, զրկված լինելով պետականությունից, մասնավորապես Թուրքիայում այդ հարաբերություններն իրականացնելու ճանապարհին կանգնելու էր բազում խոչընդոտների առջև, քանի որ ԱՄՆ-ի կազմակերպությունների առաքելությունները կրում էին կրոնական, կրթական կամ մարդասիրական բնույթ, որն ինքնին խրախուսելի չէր մահմեդական Թուրքիայի իշխանությունների կողմից: Սակայն, ի վերջո, այդ առաքելությունները, որոնք սկսվում են 19-րդ դարի 30-ական թվականներից, թեպետ դժվարությունների հաղթահարման գնով, տալիս են իրենց արդյունքները նախ՝ այն պատճառով, որ մինչև նույն դարի վերջերը հայ ժողովուրդը Թուրքիայի կողմից ենթակա չէր ծայրահեղ բացասական վերաբերմունքի և երկրորդ՝ ԱՄՆ-ի կողմից նման առաքելությունները բացարձակապես չէին կրում քաղաքական բնույթ: Հարկավ, որևէ երկրում ցանկացած նման գործունեություն չի կարող չունենալ քաղաքական ենթատեք, մանավանդ կրոնականը, քանզի ցանկացած կրոնական գաղափարախոսություն, ի վերջո, ընդլայնելով իր ազդեցության շրջանակները, ծառայում է որոշակի քաղաքական նպատակների: Սակայն սա այն դեպքում, երբ դա արվում է պետական մակարդակով: Մի բան, որը չես պնդի ԱՄՆ-ի պարագայում, քանի որ վերջինիս կամ ավելի ճիշտ նրանում առկա կազմակերպությունների՝ Թուրքիայի, այնտեղ ապրող քրիստոնյաների, այդ թվում և հայերի հետ հարաբերությունները հետևանք չէին պետական քարոզչության: Այս ամենից ելնելով էլ՝ ԱՄՆ-ի և հայ ժողովրդի փոխհարաբերությունների պատմությունը որոշակի ժամանակահատվածների համար պետք է բնութագրել **ոչ քաղաքական և քաղաքական**: Կարծում ենք նաև, որ ճիշտ չեն բոլոր այն հեղինակները, որոնք հայ-ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը նույնացնում են Հայկական հարցի նկատմամբ ԱՄՆ-ի հետաքրքրության հետ: Նախ՝ հայտնի է, որ **Հայկական հարց** հասկացողությունը ի հայտ է եկել Բեռլինի կոնգրեսում և երկրորդ՝ այդ կոնգրեսից հետո էլ ԱՄՆ-ը այդ հարցը համարում էր Եվրոպական տերությունների հարց, որովհետև ըստ նրա՝ այդ տերություններն էին հայերին խոստացել բարենորոգումներ և ուրեմն՝ պարտավոր էին իրենց խոստումը կատարել: Ելնելով այս ամենից՝ հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման ընթացքը պետք է ներկայացնել հետևյալ փուլերով.

1. 1930-ական թթ. մինչև 1895-96թթ., երբ ամերիկացիների գործունեությունը հիմնականում կրում էր միսիոներական և կրթական բնույթ:
2. 1895-96թթ. մինչև 1918թ., երբ ԱՄՆ-ի գործունեությունը կրում էր նաև մարդասիրական բնույթ, ընդ որում՝ այդ մարդասիրական առաքելություններն արդեն խրախուսվում էին պետության կողմից: Այս փուլում ԱՄՆ-ը հետաքրքրվում էր Հայկական հարցով՝ բայց ավելի շատ ելնե-

լով մարդասիրական շարժառիթներից և հետամուտ եվրոպական գործերին չմիջամտելու Մոնրոյի դոկտրինային:

3. 1918-20թթ., երբ հայ-ամերիկյան հարաբերություններն արդեն կրում են քաղաքական բնույթ, վերածվում են Հայաստանի Հանրապետություն – ԱՄՆ պետական հարաբերությունների, բայց դարձյալ Մոնրոյի ուսմունքին պետական շրջանակների հակվածությունը արգելք է դառնում ԱՄՆ-ի կողմից հոգուտ Հայկական հարցի կտրուկ միջամտությանը, որի պայմաններում նախագահ Ուիլսոնի ձգտումները մնում են միայն մարդասիրական:

Այժմ փորձենք փոքր-ինչ մանրամասնորեն ներկայացնել հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման ընթացքը այս փուլերից առաջինում:

Քանի որ հայ ժողովուրդը զուրկ էր պետականությունից, իսկ Թուրքիայում ավետարանական կամ բողոքական քարոզչությունը պետք է ընդգրկեր տեղի բնակչության քրիստոնյա շրջանակները, ուստի նախ և առաջ անհրաժեշտ էր այդ քարոզչության համար հիշյալ պետության թույլտվությունը: Սակայն դա դյուրին խնդիր չէր: Երբ 1810թ. ԱՄՆ-ում ստեղծվում է «American Board of Commissioners for foreign missions» ընկերությունը, որն հայտնի է «Բորդ ընկերություն» անունով, սկսում է միսիոներների առաքումը Թուրքիա: Հարց է առաջանում՝ իսկ ինչու նաև՝ ոչ Ռուսաստան: Այս հարցին տրամաբանական պատասխան է տալիս Ա. Ալպոյաճյանը: Նրա կարծիքով՝ դա թույլ չեն տվել անգլիացիները, որոնք, Թուրքիայում միսիոներական գործունեություն ծավալելով, կվաթարացնեին իրենց հարաբերությունները Ռուսաստանի հետ, որը չէին ուզում: Այդ պատճառով նրանք խրախուսում են տեղում ամերիկյան միսիոներների գործունեությունը, որոնց հետ բնականաբար կապի մեջ էին: Նրանք փաստորեն վերջիններիս ձեռքով Թուրքիայում ստեղծում էին «համակիր ու գործիք տարր մը»⁵⁷:

Թուրքիա ներթափանցած առաջին միսիոներները վերոհիշյալ «Բորդ» ընկերության ներկայացուցիչներն էին: Դրանցից կարելի է հիշատակել Լևի Փարսլնգին, Փլինի Ֆիսքին, Ֆերնին, Վորքեստրին, Կուտելին, Դուայթին և ուրիշների: Նրանք շրջում են Միջագետքում, Պաղեստինում, Բեյրութում, Կ.Պոլսում, Ջմյուռնիայում, Կարսում, Եվդոկիայում, Տրապիզոնում և այլուր: Իրենց առաջին կենտրոնները միսիոներներն ստեղծում են Ջմյուռնիայում, Բեյրութում, Տրապիզոնում և նավահանգստային մի քանի այլ քաղաքներում, որոնք պետք է ծառայեին որպես բանալի «դեպի հայաշատ քաղաքները թափանցելու և տարածվելու համար»⁵⁸:

Ինչպես վկայում է Ե. Քասունին, միսիոներների՝ հայոց մեջ թափանցելուց առաջ նրանցում արդեն ավետարանական շարժումն սկսվել էր, որն ինքնին նրանց հաջողության կարևորագույն գրավականներից էր: Նա մասնավորապես հետևյալն է գրում. «Այս նոր, կրթական-հոգևոր շարժումին մեջ ժողովուրդին առաջնորդ ըլլալու պատրաստ և յարմար կարգ մը անձինք ալ կային արդեն»⁵⁹: Ընդ որում նման անձինք կային և՛ հոգևորական և՛ ամիրայական խավի մեջ (Հ. Պեզճ-

⁵⁷ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Կահիրէ, 1952, էջ 853:

⁵⁸ Գ.Ա. Նազիկյան, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969, էջ 161:

⁵⁹ Վեր. Եղիա Ս. Քասունի, Լուսաշաիդ պատմութիւն հայ ավետարանական շարժման, 1846-1946, Պէյրութ, Լիբանան, 1947, էջ 13:

յան, Մ.Ճեզգիրյան և այլն): Կ. Պոլսում հայ ավետարանական շարժման հենա-
սյուներից մեկն էր Գրիգոր Փեշտիմալճյանը՝ 1828-ին Պոլսում բողոքական
քահանաներ կրթող վարժարան բացելու գլխավոր նախաձեռնողներից մեկը: Նա
սերտ կապի մեջ էր ամերիկյան միսիոներների և հատկապես Կուտելի ու Դուայ-
թի հետ, որոնք նրան համարում էին «Հայ եկեղեցական բարեկարգութեան Երաս-
մուսը»⁶⁰:

Բնականաբար, մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ ներկայացնել
հայության մեջ միսիոներական շարժման արմատավորման ողջ գործընթացը:
Միայն ավելացնենք, որ մինչև 1846թ. նրանք իրենց համայնքներն են ստեղծում Կ.
Պոլսում, Բրուսայում, Տրապիզոնում, Մարաշում, Զեյթունում, Զմյուռնիայում,
Այնթապում, Խարբերդում և բազում այլ քաղաքներում: Նրանք իրենց քարոզչու-
թյունը զուգորդում էին տպարանների և դպրոցների բացմամբ, հավաքում էին
բանվորներին, արհեստավորներին, գործագուրկներին և գրել-կարդալ սովորեց-
նում, նպաստներ բաժանում: Որք երեխաներին ընդունում էին իրենց բացած գի-
շերօթիկ դպրոցները:

Միսիոներների գործունեության առավել ընդլայնմանը նպաստեց 1846թ.
հուլիսի 1-ին Թուրքական կառավարության թույլտվությամբ հայ ավետարանա-
կան կամ բողոքական եկեղեցու ստեղծումը, որում կարևորագույն դեր են ունե-
նում Կուտելը և Դուայթը: Հայաստանեայց ավետարանական եկեղեցու առաջին
հովիվ կամ երեց է ընտրվում Պատ. Աբիսողոմ Խաչատուրեանը, հարկավ, Դուայ-
թի համաձայնությամբ: Այնուհետև նման եկեղեցիներ են հիմնվում Նիկոմեդիա-
յում, Ատաբազարում, Տրապիզոնում «և ապա գավառներու մեջ ուրիշ տեղեր»⁶¹:

Իհարկե, բողոքականների արմատավորումը հայոց մեջ հեշտորեն չէր ըն-
թանում, այլ հայ առաքելական եկեղեցու խիստ ընդդիմությամբ: Բայց երկու հան-
գամանք՝ ավետարանական շարժմանը հայ հարողների թվաքանակի հետզհետե
աճը և մեծ տերությունների միջամտությունը (Անգլիայի և Ֆրանսիայի) նպաստեց
այդ շարժման օրինականացմանը Թուրքիայում: 1847թ. նոյեմբերի 19-ին սուլթա-
նի հրամանով եպարքոսը հատուկ «պույրությունով» (հրամանագրով) ավետարա-
նականերին Թուրքիայում անկախություն էր տրվում: Իսկ 1850թ. կայսերական
ֆերմանը «Բողոքականաց կացութեան կը շնորհէր Թուրքիոյ մէջ հինէն ի վեր գո-
յութին ունեցող Քրիստոնէայ հասարակութեանց բոլոր արտօնութիւնները և ամ-
բողջ կազմաւորական հաստատութիւնն ու տնականութիւնը»⁶²:

Այսպիսով՝ փաստորեն հայ ավետարանականներն իրենց իրավունքներով
հավասարեցվին Թուրքիայի մյուս կրոնական համայնքներին, որն ինքնին նշա-
նակում էր ամերիկյան միսիոներների համար գործունեության լայն ճանապարհ:
Այս շրջանից սկսած՝ ամերիկյան միսիոներական շարժումը տարածվում է Արև-
մուտյան Հայաստանի և Կիլիկիայի գրեթե բոլոր վարչական կենտրոններում, նույ-
նիսկ գյուղերում: Սովարանում են հայ ավետարանական համայնքները, որոնց
փաստացի ղեկավարներն էին ամերիկացի միսիոներները: Բացվում են եկեղեցի-
ներ, վարժարաններ, քոլեջներ, միջնակարգ դպրոցներ: Փաստորեն ամերիկյան

⁶⁰ Նույն տեղում, էջ 18:

⁶¹ Նույն տեղում, էջ 56 :

⁶² Նույն տեղում, էջ 65:

ուսումնական հաստատությունները Թուրքիայում դարձել էին լուսավորության կարևորագույն կենտրոններ:

Այստեղ հարկ ենք համարում քննել մի կարևորագույն խնդիր: Բանն այն է, որ հայ պատմագրության կողմից (Լեո, Ա.Ալպոյաճյան, Գ. Նազիկյան և ուրիշներ) այն տեսակետն է մատուցվել, թե ամերիկյան միսիոներական շարժումն ունեցել է քաղաքական թաքուն նպատակներ: Բայց, կարծում ենք, որ նման տեսակետներին չի կարելի համամիտ լինել նախ՝ այն պատճառով, որ ԱՄՆ-ը, որը դեռևս մինչև 19-րդ դարի կեսերը որպես պետություն ուներ ներքին կատարելագործման խնդիր, և արտաքին քաղաքականության առումով Թուրքիան նրան ամեննին չէր հետաքրքրում, երկրորդ՝ բուն ամերիկյան միսիոներները, որոնց մեջ կարող էին մեկ-երկու անգլիական կամ ֆրանսիական լրտեսներ լինել, բացարձակապես դեմ էին հայ ազգային-ազատագրական շարժումներին՝ գտնելով, որ դրանով հայերը կենթարկվեին բռնությունների, և կվտանգվեին իրենց ծավալած գործունեությունը: Այդ մասին են վկայում թեկուզ և 1894թ. Սասնո կոտորածից հետո հնչակյան կուսակցության կողմից Թուրքիայի դեմ հեղափոխական շարժման շարունակության համար Ամերիկայում տարվող քարոզչությամբ չտարվելու միսիոներներ Պարթևի և Հիչքոքի՝ ամերիկահայ բնակչությանն ուղղված կոչի հետևյալ տողերը.

«Ամերիկայի Հայք պետք է ապրստամբական խօսքերէ, կազմակերպութիւններ ըննելէ եւ այդ նպատակաւ ստակ հավաքելէ հեռանան: Ունեցէք ժողովներ, բայց միայն քաջալերելու եւ վառ պահելու Ազգային ոգին, կրթական, հոգեւոր եւ նիւթական գործն յառաջացնելու ձեր և ձեր ընդհանուր ժողովրդեան մէջ, այն ամէն խաղաղ եւ գործական միջոցներով որ կարելի է: Բայց մի՛ խօսիք ապստամբելու եւ այս նպատակաւ ստակ մի հավաքէք եւ կամ թող մարդ չերթար ի Թուրքիա ասոր համար.

Նախ - այսպիսի ջանքեր բոլորովին անօգուտ են, լաւ արդիւնք չեն ունենար;

2-րդ - Պիտի շփոթէ եւ արգելու այն կառավարութիւնք որք այժմ կը ջանան օգնել հայոց: Օտար տէրութիւնք կը ջանան պաշտպանել անգին եւ անօգնական հայոց դատը, ըսելով, թէ այս ջարդը հայ յեղափոխականաց եւ ապստամբներու գործն չէր: Տաճիկն արդէն կարդարացնէ զինքն ըսելով թէ յեղափոխական առաջնորդներ յարուցին այս կռիւն ու կոտորածը: Այսպիսի պարագաներու տակ, ուրեմն, եթէ հայք ջանքեր ընեն յեղափոխութեան եւ ապստամբութեան գրգռելու ընդհանուր հայ ժողովուրդն, Տաճիկն ճիշդ փափաքին եւ նպատակին կը հասնի եւ բերանը կը սրբէ աշխարհի առջեւ: Եվ այս բանն պատճառ կըլլայ որ օտար տէրութիւնք կամաց շարժին եւ կամ բոլորովին ձեռքերնին քաշեն:

Խնդրենք ուրեմն որ հայեր չվնասեն իրենց արդար դատը այսպիսի գործերով:

Ձեր բարեկամները եւ եղբայրները

Ճ.Լ. Պարթևն

Մ.Հ. Հիչքոք»⁶³:

⁶³ Մանուկ Գ. Ճիզմեճեան, Պատմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 46-47:

Ինչպես համոզվում ենք այս կոչից, միսիոներները ոչ մի քաղաքական նպատակ չէին հետապնդում: Նրանց մտահոգում էր հայության բռնաճնշումների և ջարդերի վտանգը, որի դեպքում կկորցնեին գործունեության լայն դաշտ: Բացի այդ, նրանք, հիրավի, մարդասեր էին և այդ առումով՝ կոսմոպոլիտ: Այլ հարց է, որ ամերիկյան միսիոներների գործունեությունը ձգտում էր իր շահերին ծառայեցնել մասնավորապես Անգլիան, որի համար Թուրքիայում բողոքականության տարածումը կարող էր հիմք դառնալ այն մասնատելու իր քաղաքական նպատակների համար: **Բայց հանձինս ամերիկյան միսիոներների՝ նա այդ հիմքը չկարողացավ ստեղծել:**

Որ ԱՄՆ-ը իսկապես Թուրքիայի հայության նկատմամբ իր հարաբերություններում քաղաքական նպատակների հետամուտ չէր, վկայում է նաև 1913–16թթ. Թուրքիայում ԱՄՆ դեսպան Մորգենթաուն: Նույնիսկ 1915թ. Թուրքիայի նկատմամբ Միացյալ Նահանգների «դերին մասին» նա հետևյալն է գրում. «Թիւրքերը մեզ կը նկատէին գաղափարապաշտներու եւ այլասէրներու ժողովուրդ մը, զուտ մարդասիրական նպատակի մը համար միլիոններ վատնող, ինչպէս սքանչելի վարժարաններ շինել իրենց երկրին մէջ, ինչ որ իրենց զարմացում եւ թերեւս հիացում կը պատճառէր: Անոնք մեզ կը սիրէին եւ մեր մէջ կը տեսնէին իրենց միակ անկեղծ բարեկամները: **Բայց Թիւրքիայի մէջ մեր շահերը աննշան էին:** Ճիշդ է որ՝ «Standard Oil Gompany»-ն մեծ գործեր կը կատարէր. Մինկէր Ընկերութիւնը կարի մեքենաներ կը ծախէր Հայերուն եւ Յոյներուն: Մենք ալ՝ կը գնէինք իրենց ծխախոտը, գորգերը եւ կը ժողվէինք մարուխի տունկերը: **Ասոնց մէջ կը սահմանափակուէին մեր առետրական յարաբերութիւնները. մինչդեռ ամենքը քանի մը «միսիոնար»-ներ եւ ուսուցիչներ կը կազմէին՝ մեր իրական շփումի կապերը՝ բնիկներուն հետ: Անոնք գիտէին որ՝ մենք դիտաւորութիւն չունէինք իրենց երկիրը պատառելու կամ Պալքաններու քաղաքականութեան միջամտելու...»⁶⁴ (Ընդգծումները մերն են - Ն. Հ.):**

Հատկապես մեր ընդգծած նախադասությունները մի ավելորդ անգամ վերկայում են, որ ԱՄՆ-ը թե՛ Թուրքիայի և թե՛ առավել ևս տեղի բնիկների ու մասնավորապես հայերի նկատմամբ քաղաքական ոչ մի նպատակադրում չունէր: Չնչին էր նրա տնտեսական շահը, որը բոլոր քաղաքական իրադարձությունների գլխավոր հիմքն է: Այս տողերը դեսպանը գրել է 1915թ. Թալեաթի հետ իր հանդիպումների առիթով՝ համոզված լինելով, որ ԱՄՆ-ը հիմնականում առաջնորդվում է մարդասիրական և լուսավորական նկատառումներով: Եվ եթե Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ երկիրը հեռու էր նման միտումներից, ապա ամենին հիմքեր չկան մինչև այդ պատերազմը նրա քաղաքական ծրագրերում դրանց առկայությունը պնդելու վերաբերյալ: Ուստի և միանգամայն ճիշտ է Արշակ Չոպանյանը, որ ամերիկյան միսիոներները Թուրքիա են ուղարկվել ոչ թե «հայ ժողովուրդը քարոզելու համար, այլ որպեսզի անոնց օգնեին գործադրել տալու այն անմիջական բարեփոխումները, որ ազգին մտաւորական եւ բարոյական զարգացման համար պէտք են»⁶⁵:

⁶⁴ Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը եվ հայկական եղեռնի գաղտնիքները, թարգմանիչ Ենովք Արմեն, Երևան, 1990, էջ 35:

⁶⁵ «Անահիտ», թիւ 2, Փարիզ, 1905, էջ 41:

Նա նաև չի սխալվում՝ գտնելով, որ արևմտահայ կանանց կրթության գործը հենց ամերիկացիներն սկսեցին, ինչը «բարձրացուց իրենց ընտանեկան իմացողութիւնը, բերաւ մշակում եւ նրբութիւն ընկերութեան մէջ, զոր անկարելի էր ուրիշ որևէ կերպով առաջ բերել»⁶⁶:

Եվ, վերջապես, միսիոներների գործունեության և հայ-ամերիկյան առաջին փոխհարաբերությունների վերաբերյալ փաստորեն գրեթե նույն տեսակետն է արտահայտում ամերիկահայ պատմաբան Գ. Սարաֆյանը: Նա կոչ է անում կասկած չունենալ ամերիկյան միսիոներների «անկեղծ մարդասիրական նպատակների վերաբերյալ»⁶⁷:

Գ. Սարաֆյանն այն տեսակետն է հայտնում, որ միսիոներները երբեք չեն հակադրվել հայ առաքելական եկեղեցուն և դավանափոխ արել հայությանը, պարզապես քարոզել են Նոր կտակարանը, աշխարհիկ լեզուն, խթանել են կրթական շարժումը՝ արժանավոր տեղ զբաղեցնելով կրթական գործի կազմակերպման բնագավառում⁶⁸:

Որ իսկապես հայ-ամերիկյան փոխհարաբերություններում ամերիկացիների կողմից քաղաքական նպատակադրումները հետին պլան էին մղվել, վկայում են նրանց հայանպաստ ձեռնարկները 1895 – 96 թթ. առաջին մասսայական ջարդերի ժամանակ, երբ միսիոներները հանդես բերին մարդասիրական լայն և անկեղծ դրսևորումներ, ավելին՝ փորձեցին ԱՄՆ-ի իշխանությունների միջամտությունը ձեռք բերել հոգուտ հայոց և երբեք Հայկական հարցը չփորձեցին ծառայեցնել իրենց շահերին, **հայերին չներշնչեցին այն գաղափարը, որ հարելով ավետարանական շարժմանը, կարող են գերծ մնալ կոտորածներից:**

Ընդանրացնելով հայ-ամերիկյան առնչությունների առաջին փուլի վերաբերյալ ասվածը՝ պետք է շեշտել.

1. Դրանք սկզբնավորվել են 19-րդ դարի 30-ական թթ. ոչ թե ԱՄՆ-ի պետական քաղաքականության, այլ ավետարանական շարժման քարոզիչների գործունեության արդյունքում:
2. Միսիոներական շարժումը կրել է միայն կրոնական, կրթական և լուսավորական բնույթ:
3. Այդ շարժման արդյունքում ստեղծված կրթական և լուսավորական կենտրոնները նպաստել են արևմտահայության հոգևոր զարգացմանը:

Н.Э. АКОПЯН – Процесс развития армяно-американских отношений в 1830 – 1890-ых гг. – Зарождение армяно-американских отношений датируется 1830-ым годом и развитие их до 90-ых годов носит миссионерский характер. Обосновавшись в разных районах запада, американские миссионеры осуществляли образовательную и просветительскую деятельность. Она имела не политическую, а гуманистическую направленность, против которой турецкое правительство не выдвигало никаких претензий. Эта деятельность способствовала духовному развитию западных армян.

⁶⁶ Նույն տեղում, էջ 43:

⁶⁷ Sarafian G., History of education in Armenia, California, 1930, p. 163.

⁶⁸ Նույն տեղում, էջ 169:

**ՍԱՍՈՒՆՈՒՄ ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ
«ՀԱՅՏԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԳԻՍՅՈՒՄ ՄԻՆՉԵՎ
ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ 1895 ԹՎԱԿԱՆԻՆ»
ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ**

Ա.Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

1894թ. Սասունի հայ բնակչության կոտորածը ևս լուսաբանվեց ու դատապարտվեց «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը 1895 թվականին» ժողովածուում⁶⁹: Ժողովածուի հեղինակների անաչառ գնահատականները, Սասունում արդուկհամիդյան ոճրագործությունների պսակազերծումը եթե համեմատենք հայ պատմագրության մեջ իր արտացոլումը գտած սույն դեպքերի և դրանց տված գնահատականների հետ, ապա, ի պատիվ ժողովածուի հեղինակների, պետք է ասել, որ հայ պատմագրությունը նոր, ակնառու փաստեր չի ավելացրել, նույն անաչառ և հավաստի լուսաբանումն է զարգացրել ու արձանագրել:

Անգլիացի հասարակական-կրոնական գործիչ Մակքոլ Մալկոլմը⁷⁰, ժողովածուում զետեղված իր «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի առաջ» աշխատության մեջ, խոսելով Սասունի դեպքերի մասին, գրում է, որ քրիստոնյա հայերը պարտավոր են քրդերին փրկագին վճարել, որպեսզի փրկեն իրենց սեփականությունը, կյանքը և կանանց պատիվը, որովհետև թուրքական իշխանությունները մերժում են հայերի պահանջած պաշտպանությունը: Դրա հետևանքով քրիստոնյա բնակչության զանգվածը այնքան էր քայքայվել, որ ի վիճակի չէր վճարել նաև պետական հարկերը: Իբրև ապացույց՝ կարելի է էջերով ներկայացնել «Կապույտ գրքից» վերցրած քաղվածքները... Բոլոր հաղորդումները վկայում են, որ Հայաստանում նորերս կատարված գազանությունների (Սասունի կոտորածները - Ա.Հ.) պատճառն այն է, որ հայերը փորձել են իրենց և իրենց գույքը պաշտպանել քրդերից, մասամբ էլ այն, որ հայերը հրաժարվել են կառավարական հարկերը վճարել, որովհետև զրկված են եղել այդ հնարավորությունից: Այդ պատճառով հայերը զրկվել են կյանքի իրավունքից, և նրանց ջարդերն այդպիսով համարվել են օրինական⁷¹:

⁶⁹ «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.

⁷⁰ Մակքոլ Մալկոլմ - անգլիացի հասարակական-կրոնական գործիչ, կանոնիկոս: Եղել է անգլո-հայկական «Գրովենոր Հաուզ» միության ակտիվ անդամներից: «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի հանդեպ» (1895), «Կոստանդնուպոլսի սպանդը և նրա դասը» (1895), «Մուլթանը և տերությունները» (1896), «Հայաստանը և Տրանսվալը» (1896), «Հայաստանը Եվրոպայի առջև» (1897) աշխատություններում լուսաբանել է հայ բնակչության ծանր կացությունը Օսմանյան կայսրությունում, 1894-1896 թթ. հայերի ջարդերը, քննադատել Մեծ Բրիտանիայի և մյուս տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում: (Մակքոլ Մալկոլմի մասին առավել մանրամասն տե՛ս Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, էջ 299):

⁷¹ Макколь Малькольм, Ответственность Англии перед Арменией, с. 132-133, в книге «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.

Մասունի կոտորածի պատճառները միանգամայն անաչառ են լուսաբանված Մալկոմի աշխատության մեջ, որովհետև իսկապես սասունցին կա՛մ պետք է պաշտպաներ իր ընտանիքը, պատիվը՝ զենքը ձեռքին, կա՛մ նրա նկատմամբ դաժան հաշվեհարդար կտեսներ թուրք խուժանը: Մասունցիների ելույթը հետևականքն էր թուրքական իշխանությունների իրականացրած հայահալած քաղաքականության:

Օսմանյան կառավարությունը, հեղափոխական շարժումներին արևմտահայության մասնակցության կեղծ պատրվակով քողարկելով նրանց նկատմամբ իր հայաջինջ քաղաքականությունը, սանձագերծեց Մասունի կոտորածները:

Այդ ոճրագործությունը թաքցնելը դարձավ անհնարին: Մեծ տերությունների՝ Կ. Պոլսի դեսպանները թուրքական կառավարությունից պահանջեցին քննիչ հանձնաժողով ուղարկել Մասուն: 1895թ. հունվարին Մասուն ժամանեց հայկական ջարդերի պատճառներն ու հանգամանքները քննող կառավարական հանձնաժողով, որի կազմում որպես դիտորդներ մասնակցում էին նաև Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Հանձնաժողովի գումարած հարյուրից ավելի նիստերում հարցաքննվեցին տարբեր կարգ ու աստիճան ունեցող 190 հայ, թուրք, քուրդ վկաներ, որոնց ցուցմունքներն ամբողջովին մերկացրին օսմանյան վարչակարգի կատարած բարբարոսությունները⁷²:

Այդ հանձնաժողովի չափազանց մանրամասն քննությունն արձանագրեց այն եզրակացությունը, որ թուրքական կառավարության դեմ տեղի չի ունեցել հայկական ապստամբություն քաղաքական նպատակով, այլ եղել է կոտորած Մասունի հայ խաղաղ բնակչության, որն օրինականորեն փորձում էր պաշտպանել իր տարրական իրավունքները:

Ժողովածուում ներառվեց նաև Եվրոպայի նշանավոր պետական գործիչ Գլադստոնի⁷³՝ Աբդուլ Համիդ Երկրորդ սուլթանի եղեռնագործությունը դատապարտող չեստերյան ճառը: Նա, 1895թ. հուլիսի 26-ին Չեստերի հանրահավաքի ժամանակ հանդես գալով արևմտահայերի պաշտպանությամբ, դատապարտեց աբդուլհամիդյան ոճրագործությունները, այդ թվում նաև, անտարակույս, Մասունի՝ 1894թ. կոտորածները:

Գլադստոնը նշում է, որ եթե իր ելույթից 6-8 ամիս առաջ առկա էին արևմտահայերի կոտորածների վերաբերյալ միայն անհատական հաղորդագրություններ, ապա դրանից հետո եղան ոչ միայն եվրոպական, այլև ամերիկյան վկայություններ, որոնք համընկնում էին⁷⁴:

⁷² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1981, էջ 246:

⁷³ Ուիլյամ Յուարթ Գլադստոն (1809-1898) - Անգլիական պետական գործիչ: 1832 թ. ընտրվել է պառլամենտում՝ տորիների կուսակցությունից, նախարարական պաշտոններ զբաղեցրել պահպանողական կառավարություններում: Այնուհետև հեռացել է տորիներից և հարել լիբերալ կուսակցությանը: 1868 թ. ընտրվել է լիբերալ կուսակցության պարագլուխ և առաջին անգամ գլխավորել կառավարությունը (մինչև 1874 թ.), այնուհետև ևս 3 անգամ (1880-1885, 1886, 1892-1894) եղել է վարչապետ: 1896 թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ քննադատել է արևմտահայության հանդեպ սուլթանական կառավարության քաղաքականությունը՝ Աբդուլ Համիդի անվանելով «մեծ մարդասպան»: (Գլադստոնի մասին առավել մանրամասն տե՛ս Армянский вопрос, Энциклопедия, Главная редакция армянской энциклопедии, Ереван, 1991, с. 148, Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, էջ 103, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977, էջ 90):

⁷⁴ Տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, с. XII-XIII.

Կոտորածների փաստը կասկածի տակ չդնող Գլադստոնն իր ասելիքն առավել հիմնավորելու համար մեջբերում է կատարում Էմիլ Դիլոնի⁷⁵ հոդվածից, որը գետեղված էր “Contemporary Review”-ում⁷⁶: Տալով այդ մեծավաստակ մարդու բնութագիրը՝ նա նշում է, որ իռլանդացին, իր կյանքը վտանգի ենթարկելով, Արևմտյան Հայաստանում մեծ թվով փաստեր հավաքեց՝ թուրքական ոճրագործությունները մերկացնող: Նա արձանագրում է, որ Դիլոնի վկայությունների անաչառ և հավաստի լինելու իրողությունը հաստատվեց նաև Սասունի դեպքերը հետաքննող հանձնաժողովի հանգամ վերջնական արդյունքով⁷⁷: Գլադստոնը նշում է, որ շատ խոչընդոտներ հաղթահարվեցին, մինչև հնարավոր եղավ սկսել հետաքննությունը: Անդրադառնալով Սասունի դեպքերը քողարկել ձգտող թուրքական կառավարության ջանքերին՝ նա վկայում է, որ փաստերի ժխտումը եղել է թուրքական վարչակարգի գենքը⁷⁸:

Անգլիական պաշտոնաթող վարչապետը կոչ է անում չհավատալ թուրքական խոստումներին: Նա նշում է. «Դրանք ոչ մի արժեք չունեն. դրանք անօգուտից ավելի վատն են, որովհետև, դրանց շնորհիվ որոշ մարդիկ... ընկնում են մոլորության մեջ՝ կարծելով, որ թուրքական կառավարությունը, խոստումներ տալով, մտադիր է դրանք իրականացնել⁷⁹:

Իրավացի է Գլադստոնը. Թուրքիայում ամենահեշտը խոստումներ տալն է, իսկ դժվարը, նույնիսկ անհնարինը՝ դրանք կյանքի կոչելը:

Չնայած վարչապետ Սուլթերիի հետ ունեցած թվացյալ հակամարտությանը՝ Գլադստոնի՝ հայ ժողովրդի օգտին արտասանած բազմաթիվ ելույթները հետապնդում էին իշխանությունների հեղինակությունը պաշտպանելու նպատակ: Չեստերի հանրահավաքը և Գլադստոնի ելույթը կայացել էին Սուլթերիի գիտությամբ և համաձայնությամբ: Իր ելույթի վերջում Գլադստոնը հայտարարեց, որ հանրահավաքը կազմակերպված է ոչ թե ներկայիս կառավարության գործողությունների դեմ՝ իբրև բողոքի նշան, այլ հակառակը, նրա դիրքերն ամրապնդելու, նրան ազգային և բարոյական աջակցություն ցուցաբերելու նպատակով, առանց որի այն բացարձակ իշխանություն ունենալ չէր կարող: Անգլիայի երբեմնի վարչապետը փորձում էր ուղղել հասարակական կարծիքը կառավարության համար ցանկալի հունով:

Չեստերի հանրահավաքն ընդունեց Գլադստոնի առաջարկած հետևյալ բանաձևը. «... ողջ ազգը, առանց կուսակցությունների տարբերության, սրտանց պաշտպանելու է Նորին մեծություն կառավարության ձեռնարկած յուրաքանչյուր

⁷⁵ Էմիլ Դիլոն - (1854-1933), իռլանդացի գիտնական և լրագրող: Արևելյան լեզուների և համեմատական լեզվաբանության մասնագետ: 1895 թ. որպես Լոնդոնի «Դեյլի թեկեգրաֆ» թերթի թղթակից՝ եղել է Թուրքիայում, այցելել Արևմտյան Հայաստան՝ այնտեղի իրադարձությունները լուսաբանելու համար: Հավաքել է մեծ քանակությամբ արժանահավատ տեղեկություններ հայկական կոտորածների վերաբերյալ: Այդ տվյալների հիման վրա գրել է Հայկական հարցին վերաբերող հոդվածաշար, որը տպագրվել է անգլիական մամուլում (տե՛ս «Հայաստանը և հայ ժողովուրդը» (1890), «Իրադրությունը Հայաստանում» (1895), «Հայաստան. դիմում» (1896), «Չախտղում Հայաստանում» (1896) և այլ հոդվածներ): (Է. Դիլոնի մասին առավել մանրամասն տե՛ս Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, էջ 115):

⁷⁶ Տե՛ս “Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году”, М., 1896, с. XIII.

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ XIII:

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ XVIII:

⁷⁹ Տե՛ս նույն տեղում, էջ XX:

միջոցառում, որն ուղղված կլինի Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստան - Ա.Հ.) բնակչության համար վարչական կառավարման այնպիսի բարենորոգումների ապահովմանը, որոնք կստեղծեն բնակիչների կյանքի, պատվի, կրոնի ու ունեցվածքի լուրջ երաշխիքներ. իրական նշանակություն կարող են ունենալ միայն այն բարենորոգումները, որոնք գտնվում են Եվրոպայի մեծ տերությունների անդուլ հսկողության ներքո»⁸⁰:

Գլադստոնը հանդես եկավ Հայկական հարցում եվրոպական տերությունների համատեղ քաղաքականության օգտին: Նա կարծես փորձում էր փոխել անգլիական քաղաքականությունը, որը Բեռլինի վեհաժողովում արտահայտվում էր այդ հարցում հոգուտ Անգլիայի միանձնյա և անկախ գործողությունների:

Չնայած որ Գլադստոնի այս ճառն այն ժամանակ արտասանվեց, երբ նա պաշտոնաթող էր, բայց, այնուամենայնիվ, այն կարևոր իրողություն է. այդ պետական գործիչը մեծ համարում ուներ Եվրոպայի քաղաքական շրջանակներում, նա ակնավոր դեմքերից էր, որի կարծիքն ու խոսքը ժամանակին անառարկելի էին և վճռորոշ:

1894թ. Սասունի կոտորածները, դրա պատճառներն ու դեպքերի նկարագրությունը մանրակրկիտ լուսաբանված են ամերիկացի միսիոներ Ֆ.Դ. Գրինի⁸¹ ժողովածուում, որը հրատարակվել է նաև առանձին գրքով⁸²:

Գրինի «Հայկական ճգնաժամը և թուրքերի տիրապետությունը (Սասունի կոտորած)» աշխատությանը կցված է տասնվեց նամակ, որոնց բնագրերի վավերականությունը հաստատում են զանազան բնագավառների քսան ականավոր գործիչներ: Այդ նամակների մասին հեղինակը տալիս է ծանոթագրություն և հիմնավորում, որ դրանք գրել են այնպիսի մարդիկ, որոնք որևէ պատճառ չէին կարող ունենալ փաստերը խեղաթյուրելու առումով: Նամակները հիմնված են գլխավորապես ջարդի ենթարկված վայրերից փախստականների, ինչպես և ջարդերին մասնակցող քրդերի ու զինվորների ցուցմունքների վրա: Նամակները գրվել են միմյանցից միանգամայն անկախ, տարբեր ժամանակներում և ուղարկվել յոթ տարբեր քաղաքներից (այդ յոթ քաղաքներից հինգը գտնվում են ջարդի ենթարկված վայրի շրջակայքում): Նամակները միանգամայն անաչառ են, որովհետև վկայությունները համընկնում են: Բոլոր ցուցմունքները վկայում են, որ Սասունում կատարվել է վիթխարի ու սարսափելի ջարդ, որին ենթարկվել են հայ տղամարդիկ, կանայք ու երեխաները, և որ այդ ջարդը կատարել են թուրքական սուլթանի կողմից զինված քրդերը և կանոնավոր բանակի զինվորները, որոնք ուղարկվել են հատուկ հրամանով և գործել են թուրքական բարձրաստիճան սպաների անձնական ղեկավարությամբ⁸³:

⁸⁰ «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, с. XXIII:

⁸¹ Ֆրեդերիկ Դեյվիս Գրին - ամերիկացի միսիոներ: Օսմանյան կայսրությունում հայ բնակչության 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ եղել է Արևմտյան Հայաստանում և, որպես Հայ օգնության կոմիտեի (Նյու Յորք) քարտուղար, մեծ գործ կատարել տուժած հայերին օգնելու համար: Նրան են պատկանում «Հայկական ճգնաժամը Թուրքիայում: Ջարդ 1894» (1895), «Հայկական ջարդերը կամ Մուհամմեդի սուրը» (1896), «Թուրքի իշխանությունը և հայկական ճգնաժամը» (1897) գործերը: (Գրինի մասին առավել մանրամասն տե՛ս Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, էջ 107-108):

⁸² Ա.Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, Հայաստան, 1965, էջ 135:

⁸³ Տե՛ս Փ.Դ. Գրին, Армянский кризис и владычество турок (Сасунская резня), с. 229-230, в книге «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.

Այս արժեքավոր նամակները Գրինի աշխատության մեջ գրվել են ժամանակագրական հաջորդականությամբ:

Ոչ միայն ջարդերի ժամանակ, այլև դրանից հետո մի քանի ամիս շարունակ ողջ Մասունը շրջապատված էր զինվորներով: Մասունի գյուղերը դրսից ոչ ոք չէր կարող մտնել: Իշխանություններն ամեն տեսակ միջոցների դիմում էին, որպեսզի արտաքին աշխարհում լուր չտարածվեր Մասունում կատարված ջարդերի մասին⁸⁴: Բիթլիսից ստացված հաղորդագրության մեջ (1894թ. հոկտեմբերի 31-ին գրված 4-րդ նամակում) ասված է. «Մասունում 27 գյուղ ոչընչացվել է: 6000 տղամարդիկ, կանայք և երեխաներ սպանվել են գորքի ու քրդերի կողմից: Այդ սարսափելի դեպքը միայն այժմ է այստեղ հայտնի դառնում, չնայած կոտորածը տեղի է ունեցել սեպտեմբերի սկզբներին: Թուրքերը բոլոր միջոցներին դիմել են, որպեսզի խոչընդոտեն լուրերի տարածմանը...»⁸⁵: Չնայած այս արյունոտ պատմությունը թաքնելու օսմանյան կառավարության համառ ջանքերին՝ այն հայտնի դարձավ: 6-րդ նամակը (1894թ. նոյեմբեր) ավերակույտի վերածված Մասունի մահասարսուռ տեսարաններն է բովանդակում. «...40 գյուղ լրիվ կործանված է, և թվում է, թե սպանվել է ոչ պակաս, քան 16 հազար մարդ: Ամենափոքր թիվը 10 հազարն է...»⁸⁶: Ծանոթագրությունում հեղինակը, խոսելով հատկապես վեցերորդ նամակի մասին, նշում է. «Այն կազմված է այնպիսի վկայությունների հիման վրա, որոնք հավաքված են հատուկ փութաջանությամբ՝ դեպքերի վայրին մերձենալի ամենամոտ կետում: Այդ վավերագրերը գրել են այնպիսի մարդիկ, որոնք մոտ հարաբերության մեջ են անցյալ հոկտեմբերին տեղում առաջին քննությունը կատարող Եվրոպայի բարձրաստիճանավորի հետ, որի հաշվետվությունը մինչև այժմ չի հրապարակվել»⁸⁷: 8-րդ նամակում կարդում ենք. «Այդ օրերին մի քանի հարյուր զինվոր վերադարձան գործողության վայրը, և նրանցից մեկը պատմում էր... ինքը մենակ սպանել է 30 հղի կին: Որոշ զինվորներ, հավանաբար, ամաչելով իրենց խայտառակ արարքներից, ասում էին. «Մենք գործել ենք համաձայն հրամանի»»⁸⁸: Իսկ 11-րդ նամակում (1894թ. դեկտեմբերի 29-ը) մանրամասն լուսաբանված են հետաքննության խոչընդոտման նպատակով ձեռնարկված միջոցառումները: Այստեղ մասնավորապես նշվում է, որ Բիթլիսի նահանգապետը պահանջեց սահմանապահ ջոկատ տեղադրել Մուշի շուրջը. իբր խղերայի համաճարակ կար: Սակայն այն հեռու էր իրականությունից: Մասունի ջարդերի վկաների նկատմամբ դաժան հաշվեհարդար էին տեսնում՝ ցանկանալով ոչնչացնել կոտորածների մասին վկայող ցանկացած ապացույց⁸⁹: Գրինի հողվածը բացահայտ ճշմարտություն է:

Կոտորածներից հետո Համիդը, աշխատելով չքմեղանալ, հայտարարեց. «Թուրքերը հայերի վրա չեն հարձակվել, հայերն ու թուրքերն ապրում են կողք կողքի և խաղաղ. պատճառը քրդերի ու հայերի միջև եղած խլրտումներն են», և ինքը, որպես գթասիրտ սուլթան, առանց կողմնակալության, կարգավորել է երկու համայնքների միջև ծագած խռովությունները⁹⁰:

⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 231:

⁸⁵ Ф. Д. Грин, նշվ. աշխ., էջ 232:

⁸⁶ Նույն տեղում, էջ 240:

⁸⁷ Նույն տեղում, էջ 230:

⁸⁸ Նույն տեղում, էջ 243:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 244-245:

⁹⁰ Տե՛ս Մ. Կ. Պողոսյան, Գոյասունան պայքարի քառուղիներում, Երևան, Հայաստան, 1989, էջ 233:

Մինչդեռ պատմության անաչառ քննությունն ապացուցում է, որ կոտորածների կազմակերպիչն օսմանյան կառավարությունն է, և որ դրանք իրականացվել են քուրդ ցեղապետերի, թուրքական բանակի ու ոստիկանության միջոցով: Իսկ ժամանակի ռազմական տեխնիկայով զինված այդ հսկա բանակի դեմ հանդիման կանգնած էր լոկ բարոյական իր ուժը գիտակցող և հիմնականում կայծքաբե հրացաններով, դաշույններով, կացիններով ու եղաններով զինված, բայց հաստատակամ ու աննկուն սասունցի գեղջուկը⁹¹:

Այդ մերկացված իրողությունն իր անդրադարձը գտավ նաև սույն ժողովածուում ընդգրկված դիլոնյան էջերում՝ «Իրադրությունը Թուրքահայաստանում» հոդվածում: Էմիլ Դիլոնի հետազոտությունը Մոսկվայում լույս է տեսել նաև առանձին գրքով⁹²:

Չնայած թուրքական իշխանությունների հարուցած դժվարություններին՝ Էմիլ Դիլոնը 1895 թվականին շրջագայեց ջարդերի վայրերով և, հիմք ունենալով ստուգված փաստերը, գրեց. «Այժմ արդեն ապացուցված է, որ Սասունի կոտորածը պայծառափայլ Բարձր դռան կանխամտածված գործն է, որը նա նախապատրաստեց հոգատարությամբ և իրագործեց դաժանորեն»⁹³:

Միանգամայն անաչառ է օտարերկրացու գնահատականը, քանզի տակավին 1891թ. Օսմանյան կայսրության տարբեր մասերում և հատկապես հայկական նահանգներում հայերին բնաջնջելու նպատակով կազմակերպվել էին քրդական անկանոն զնդեր, որոնք սուլթան Աբդուլ Համիդի անունով կոչվեցին «համիդիե»: Այդ հեծելազնիները Սասունի կոտորածներին ևս մասնակցեցին⁹⁴: «Համիդիե» հեծելազնիի հրամանատարներն ու զինվորները թուրքական կառավարությունից ստանում էին աշխատավարձ, զենք, զինամթերք և հայերի հողը, տունը, ունեցվածքը խլելու դեպքում մնում անպատիժ⁹⁵:

Իռլանդացի գիտնականը, խոսելով Սասունի դեպքերի հետաքննության ժամանակ Ռուսաստանի խաղացած դերի մասին, արձանագրում է, որ Ռուսաստանը հոժարակամ ընդունեց անգլիական կողմի առաջարկը և պարտաճանաչ կատարեց իր խոստումը. ռուսական օգնությունը, ներդրված ջանքերը մեծ նպաստ էին դեպքերի անաչառ հետաքննության համար: Դիլոնը հայերի հարցում Ռուսաստանի ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքին /նա, ապաստան տալով, վերահաս ոչնչացումից փրկեց քսան հազար փախստականների/ հակադրում է անգլիացիների տված խոստումների սնանկ և անարդյունք լինելու իրողությունը⁹⁶: Իրավացի և անաչառ է Դիլոնի եզրահանգումը. ճիշտ է, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկին հանդես էր եկել Թուրքիայի տարածքային ամբողջականության օգտին, այդուամենայնիվ, ջարդերի ժամանակ ռուսական կողմը չփակեց իր սահմանները՝ թույլ տալով, որ արևմտահայերի մի զանգված ներգաղթի Ռուսաստան:

⁹¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1981, էջ 243:

⁹² Տե՛ս Ա. Ն. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 134:

⁹³ Э. Диллон, Положение дел в Турецкой Армении, с. 333, в книге “Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году”, М., 1896.

⁹⁴ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1981, էջ 231 և 243:

⁹⁵ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 114:

⁹⁶ Տե՛ս Э. Диллон, նշվ. աշխ., էջ 330-331:

Ժողովածուում տեղ գտան նաև հայագրի հրապարակախոս Գ.Ա. Ջանշյանի (Ջանշին)⁹⁷ «Հայկական հարցը Թուրքիայում» ընդհանուր խորագիրը կրող և պատմական մեծ արժեք ներկայացնող չորս նամակները՝ ուղղված կարծեցյալ թուրք գործընկերոջը: 1895թ. այդ նամակները հրատարակվել են, իսկ 1898թ. վերահրատարակվել առանձին գրքույկով⁹⁸: Դա արդուլհամիդյան ոճրագործությունները պսակազերծելու հեռամետ նպատակով էր պայմանավորված: Ջանշյանը հանդես էր գալիս Դին ծածկանվամբ, որպեսզի ազատ զգա թուրքական չարագործությունները մերկացնելիս և դատապարտումը չդիտվի կողմնակալության դրսևորում:

Դինը, անդրադառնալով Սասունի կոտորածներին, դատապարտում է արդուլհամիդյան ոճրագործներին իր վերջին նամակում և Հավելվածում՝ գրված Մոսկվայում 1895 թվականին, այսինքն՝ այն ժամանակ, երբ առաջին նամակը գրելուց արդեն անցել էր չորս տարի և «....շատ ջուր էր հոսել, բայց, դժբախտաբար, ոչ միայն ջուր, այլև շա՛տ, շա՛տ... արյուն, անմեղ հայ տառապյալների արյուն: Անմարդկային, հրեշագործ, անգամ խելակորույս մահմեդական մոլեռանդության համար հայերի սիստեմատիկ ոչնչացման ծրագիր, ձեզ համար ատելի Հայկական հարցը վերացնելու նպատակով...: Սատանայական այդպիսի զգուշավորությամբ մտածված և նույնիսկ բաշխեցությունների համար անմարդկային սառնասրտությամբ իրագործված Սասունի սպանողը՝ բերեց «Սասունի բարձունքներում թափված անմեղ արյան հեղեղներ», որը «ձեզ էժան չի նստի՝ ուժի աստվածացմամբ հանդերձ»⁹⁹: Դինը դատապարտում է օսմանյան իշխանություններին Արևմտյան Հայաստանի համար Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանների կողմից մշակված բարենորոգումների ծրագրի կենսագործումից փարիսեցիորեն խուսափելու համար:

Սասունում արդուլհամիդյան կոտորածների պսակազերծումը սույն ժողովածուում իր անաչառությամբ ջարդուփշուր է անում ճշմարտության խեղաթյուրված անդրադարձը թուրքական ծուռ հայելու մեջ:

А.А. АКОПЯН – *Разоблачение гамидского избияения в Сасуне, в сборнике “Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году”*. – Султан Абдул Гамид 2-ой в 1894 году в Сасуне организовал резню армянского населения. Авторы сборника резко осудили антиармянскую политику «красного султана». Данная статья посвящена этим событиям. Изучение сборника “Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году” имеет не только научно-познавательное, но и прикладное, актуальное значение.

⁹⁷ Գրիգոր Ավետի Ջանշյան (Դին)– Ծնվ. 1851 թ. Թիֆլիս – մահ. 1900 թ. Մոսկվա, հայ հրապարակախոս, գրական և հասարակական գործիչ: Ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, ապա ՄՊՀ իրավաբանական ֆակուլտետը: (Ջանշյանի մասին առավել մանրամասն տե՛ս Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, էջ 381, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 477):

⁹⁸ Գր. А. Диев, Армянский вопрос в Турции (из переписки со стамбульским публицистом), М., 1895.

⁹⁹ Գր. А. Диев, Армянский вопрос в Турции, с. 423-425, в книге “Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году”, М., 1896.

«ԱԶԳ»-ԱՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵԶ

Ռ.Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և մշակութային պատմության համակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն հասարակական կազմակերպությունների հնավանդ ձևերի վերապրուկների հետազոտությունը: Դրանք դարերի ընթացքում իրենց կենսունակության շնորհիվ մեծ դեր են խաղացել օտար տիրապետությունների պայմաններում ազգապահպանության, կենսապահովության և սոցիալ-մշակութային բնագավառում, նաև ազգակցական համակարգում, որը գրականության մեջ հայտնի է «ազգ»-արենակցական խումբ («պատրոնիմիա») անվամբ: «Պատրոնիմիա» եզրույթը թարգմանաբար նշանակում է անվանում հայրական գծով, քանի որ լատիներեն *pater* նշանակում է հայր և *nomen*՝ անուն¹⁰⁰:

Ազգի մասին վկայություններ կան Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Թ. Արծրունու և այլոց երկերում: Ցավոք, հայ մատենագիրները շատ կցկտուր են անդրադարձել այս հարցին, որովհետև նպատակային գրանցում չի եղել: «Ազգ»-արենակցական խմբի ուսումնասիրությամբ Հայաստանում առաջինը զբաղվել է ազգագրագետ Վ. Բոդյանը¹⁰¹, այնուհետև առավել հանգամանորեն՝ Է. Կարապետյանը¹⁰²:

Հիմնախնդիրը հանգամանորեն ուսումնասիրել է ռուս նշանավոր ազգագրագետ Մ. Կոսովեն, որը հայերի ազգ-արենակցական խումբը նույնացրել է կովկասյան ժողովուրդների պատրոնիմիայի հետ՝ նրանց միջև հավասարության նշան դնելով: Նա պատրոնիմիան բնութագրել է որպես «նահապետական տոհմային կարգերին հատուկ և դասակարգային հասարակարգում գյուղական բնակչության մեջ մեծ մասամբ պահպանված հնագույն հասարակական ձև: Այդ ձևը նահապետական մի մեծ ընտանիքի բաժանման հետևանքով կազմված և միմյանց միջև տնտեսական, հասարակական, գաղափարական ու տարածքային միասնությունը տարբեր չափերով պահպանած ազգակից-արյունակից ընտանիքների մի խումբ է»¹⁰³:

Այս կարծիքը բաժանել է նաև անվանի ազգագրագետ Է. Կարապետյանը: Նա անդրադարձել է «ազգ»-արենակցական խմբի կառուցվածքին, ազգի ընդհանրության՝ տարածքային, տնտեսական, հասարակական, գաղափարական մնացուկային դրսևորումների ձևերին, փորձել բացահայտել դրա սոցիալական էությունը, ցույց տալ նրա տեղը սոցիալական և հասարակական հարաբերությունների ընդհանուր համակարգում XIX դարի վերջերի և XX դարի սկզբների կտրվածքով:

¹⁰⁰ Տե՛ս **Մ.Օ. Կոսեն**, Семейная община и патронимия, М., 1963, էջ 92:

¹⁰¹ Տե՛ս **Վ. Բոդյան**, Кровнородственный “азг” и родственные отношения у армян, “Советская этнография”, 1952, № 1, Նույնի՝ Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 155-165:

¹⁰² Տե՛ս **Ջ. Կարապետյան**, Родственная группа “азг” у армян, Ереван, 1966.

¹⁰³ Տե՛ս **Մ. Կոսովեն**, Чувства и социальные отношения в армянском патрионимии, «Պատմաբանասիրական հանդես», № 1, 1963, էջ 93:

Վ. Բոդյանը գտնում է, որ հայկական ազգը պատրոնիմիայից որոշ չափով զանազանվում է և ոչ թե նույնանում: Հայկական արյունակցական ազգը ժամանակագրորեն պատրոնիմիայից հետո և նրա հիմքի վրա առաջացած կառուցվածք է: Ազգը հայերի մեջ երբեք չի ունեցել հյուսիսկովկասյան ժողովուրդների օրինակով ընդհանուր հողօգտագործման համակարգ: Ընդհակառակը, ազգի ընտանիքների միջև ծագող հակամարտությունների բուն պատճառը մասնավոր հողատիրությունն էր: Եվ չնայած այդ հակամարտությանը՝ յուրաքանչյուր ընտանիքի սեփականության կոլեկտիվ պաշտպանությունն ազգի հիմնական հատկանիշներից մեկն էր¹⁰⁴: Մենք ընդունում ենք այս մոտեցումը:

Պատմական Հայաստանի Ադձնիք նահանգի հայ բնակչության գերդաստանին, ազգակցական համակարգին և այլ հարցերին նվիրված կենցաղամշակութային նյութերի հիման վրա կատարված մասնագիտական ուսումնասիրություններ ունի նաև տողերիս հեղինակը¹⁰⁵: Ի մի բերելով գրառված գերդաստանին, ազգակցական համակարգին և այլ հարցերին նվիրված ազգագրական նյութերը՝ մենք հանգել ենք այն եզրակացության, որ տնտեսական, տարածքային, հասարակական-գաղափարական ընդհանրության տարրերի պահպանմամբ ազգ-արենակցական խումբը իր ներսում պահպանում էր հնագույն տոհմային հարաբերությունների բազմաթիվ վերապրուկներ:

Ազգը մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է, որ կազմավորվել է նահապետական ընտանեկան համայնքի կամ գերդաստանի մեծացման և հատվածավորման շնորհիվ և այս կամ այն չափով ու ձևով պահպանել է տնտեսական, տարածքային, հասարակական և գաղափարական միասնությունը, ունի ընդհանուր ազգակցական անվանում՝ բաժանվող ընտանիքների հիմնադրի անունով:

Ազգը էթնիկական միավոր է, որ երևան է եկել տոհմային հասարակության քայքայման շրջանում: Այն փոփոխվել է հասարակության զարգացմանը զուգընթաց և ժամանակի ընթացքում աստիճանաբար կորցրել է նախնական հատկանիշները: Հին Հայաստանում, երբ արտադրության միջոցները վերածվում էին մասնավոր սեփականության, ազգը այլևս չէր կարող դիտվել իբրև ինքնուրույն տնտեսական միավոր: Այդպիսին էր ընտանիքը: Ազգը, սակայն, պահպանում էր տնտեսական ընդհանրության շատ տարրեր, որոնք արտահայտվում էին արտադրության թանկ գնահատվող միջոցների համատեղ օգտագործմամբ, աշխատատար պրոցեսների համատեղ կազմակերպմամբ:

ԱԶԳ-ԱՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սովորաբար ազգն իր նախնական փուլում կազմավորվում էր միայն ընտանեկան համայնքներից: Սակայն հետագայում, տոհմական կարգերի քայքայմամբ և մեծ ընտանիքների տրոհմամբ՝ ազգ-արենակցական խումբը կազմվում էր ինչպես մեծ, այնպես էլ փոքր ընտանիքներից, իսկ XIX դարի վերջերին և XX դ. սկզբներին՝ հիմնականում փոքր ընտանիքներից: Ընտանիքների թիվը կարող էր

¹⁰⁴ Տե՛ս **В. Бодян**, նշվ. հոդվածը:

¹⁰⁵ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Նյութական փոխօգնության ձևերի մնացուկները ադձնիքահայության ազգակցական խմբերի մեջ XIX դարում և XX դարի սկզբներին, «Երևանի համալսարան», 1977, թիվ 2; Նույնի՝ Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները ադձնիքահայության մեջ (XIX դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ), «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, թիվ 1; Նույնի՝ Ադձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Եր., 2004, էջ 73-86:

հասնել 100-ի, գուցե և ավելի: Յուրաքանչյուր մեծ ընտանիք կամ գերդաստան կարող էր լինել ազգի առաջացման սկիզբ: Այստեղից էլ հետևում է, որ յուրաքանչյուր ազգի ներսում կարող էին աճել նոր դուստր ազգեր:

Հայերենում «ազգ» տերմինը գործածվում է տարբեր իմաստներով. կենդանական ու բուսական առանձին տեսակների, հասարակական խավերի, միևնույն զբաղմունքի տեր մարդկանց խմբերի, առանձին լեզվախմբերի, առանձին դավանանքների, առանձին ժողովուրդների, առանձին պետությունների, էթնիկ հանրության բարձրագույն տիպի՝ *нация*՝ ազգ իմաստով, որպես նախարարական տան (ազգն Մամիկոնեաց) անվանում, բայց առավել շատ այն գործածվում է որպես արյունակից, ազգակից ընտանիքների միասնական խումբ իմաստով:

Որոշակի անճշտություններ կան տերմինաբանության հարցերում, որ գալիս է միջնադարյան հայ պատմագիրներից: Շատ հաճախ գրականության մեջ մատնանշվում են «տոհմ, ազգատոհմ» եզրույթները, որտեղ տոհմի հիշատակումը խորհրդանշում է երբեմնի տոհմական սերտ միասնությունը: «Ցեղ» բառը հին ժամանակներում ավելի մոտ ազգակցական կապ է նշանակել՝ որպես ազգի մի ճյուղ, սերունդ, մի ընդհանուր հայր¹⁰⁶: Մ. Խորենացին «ցեղը» դիտում է որպես ազգի ճյուղ, այսինքն՝ ազգականների ավելի մերձավոր շրջանակ, մինչդեռ հետագայում «ցեղը» իմաստավորել է ազգականների ավելի լայն շրջանակ, քան անգամ «տոհմ» հասկացության մեջ ընդգրկած ազգականների շառավիղները: Չի բացառվում, որ «ցեղ» եզրույթը հենց այն հայկական բառն է, որ կիրառվել է ազգարենակցական խմբի համար, և որը պարսկական գերիշխանության շրջանում դուրս է մղվել «ազգ» և «տոհմ» բառերի կողմից, որոնք հայկական ծագում չունեն: Դրանք փոխառված են պահլավերենից. «տոհմ» նշանակում է ընտանիք, ազգ, դաս, ճյուղ, որոնք հայերենում ձեռք են բերել ազգակցական խումբ իմաստը: «Ազգին» համանիշ է նաև «տուն» բառերը, որն ունի տարբեր իմաստներ՝ տոհմ, ընտանիք, տուն (բնակարան), կալվածք, նախարարական տուն (Արծրունյաց տուն), երկիր և բուն հայկական դաս իմաստները: Հետագայում փոփոխվել է ազգակցական կապը մատնանշող դրանց գործածությունը: Ներկայումս «ցեղ», «ցեղակից» բառերն ավելի հեռավոր ազգակցություն են մատնանշում, մինչդեռ ազգը խորհրդանշում է ազգականների ավելի սերտ խումբ:

Հայերը ազգ-արենակցական խմբի համար գործածում են նաև ***ազգական, ազգակից, ազգակցություն, ազգ ու տակ, տոհմ, ազգատոհմ, ցեղ, ցեղակցություն, արյուն, դաս, քոք ու բուս*** բառերը:

Ազգակցական խմբերը վաղ միջնադարյան գրականության մեջ հիշատակվում են «ազգ», «տոհմ», «ազգատոհմ» բառերով¹⁰⁷: Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմություն» աշխատանքում խոսում է Արծրունյաց ***տոհմի***, Արծրունյաց ***ազգի*** մասին¹⁰⁸: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է միևնույն ազգակցական խմբին: Սրանից հետևում է, որ վաղ միջնադարյան գրականության մեջ ազգ, տոհմ, ազգատոհմ եզրույթներն ունեցել են միևնույն իմաստը:

Հայկական բառարաններում «տոհմ» և «ազգ» բառերի իմաստներում էական տարբերություններ չկան: Ստ. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանում» գրված է. «Ցեղը մարդկանց խումբ է, որ սերված է մի ընդհանուր հո-

¹⁰⁶ Տե՛ս ***Ստ. Մալխասյան***, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1980, էջ 521, 554:

¹⁰⁷ Տե՛ս ***Մ. Խորենացի***, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 148, 162, 167, 216, 296, 301, 307, 322:

¹⁰⁸ Տե՛ս ***Ղազար Փարպեցի***, Պատմություն հայոց: Թիֆլիս 1913, էջ 45, 47:

րից և նշանակում է տոհմ, սերունդ, ընտանիք: Տոհմը մի նախահորից սերված մարդկանց խումբ է, որոնք իրար հետ կապված են արենակցական կապերով: «Ազգ նշանակում է՝ տոհմ, գերդաստան, տուն, որի բոլոր անդամներն իրար հետ կապված են արյան կապով»¹⁰⁹: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» առաջին հատորում «ազգ» եզրույթը բացի սեռ, տեսակ (մարդկանց, կենդանիների), ժողովուրդ, հանրույթ, վիճակ մարդկանց, կարգ, դաս և այլ նշանակություններից, նշանակում է նաև՝ «գարն և զավակ սերեալ ի միոյ ի նախնեաց, Ծնունդք միոյ նահապետի առաջնոյ», «ցեղ և տոհմ սերեալ ի նմին ազգի ի մասնաւոր ցեղապետէ», «տուն, ազգատոհմ, ծնունդք և սերունդք», «արեանառու ազգականք», «սերունդ որդւոցն և թոռանց, պորտ»¹¹⁰, այսինքն ազգը ներկայացված է որպես միևնույն մարդուց կամ նախահորից սերված ժառանգների, արյունակից ազգականների միավորում (միասնություն): Նույն տեղում նշված է, որ «տոհմ» եզրույթի հոմանիշներն են ազգ, ցեղ, ճյուղ, սերունդ, գարն, ազգատոհմ, տուն բառերը¹¹¹: Ուշ միջնադարում առանձին բարբառներում սկսեցին օգտագործել արաբական ծագում ունեցող «ջինս» (տոհմ, ազգ) և սենսիլե» (սերունդ, ճյուղ), պարսկական՝ «թախում» (թախում-սերմ), «թայֆա» (կողմնակիցներ, արյունակիցներ), թուրքական՝ «սոյ» եզրույթները՝ ազգ, ցեղ, գարն իմաստներով:

Ազգը հայրական գծով հիմնադիր նահապետից սերված վարընթաց և շեղակի կամ հորիզոնական ճյուղավորումներով մերձավոր արյունակից ընտանիքների միավորում է, որի մեջ ընդգրկված են սովորաբար վեցից յոթ, երբեմն էլ ավելի սերունդներ: Ազգի հիմնադրի անունից էլ սովորաբար առաջանում է ընդհանուր ազգանունը: Ազգի սերնդային հաշվարկը կատարվում է արական գծով, որը կոչվում է պորտ: Եթե ազգի մեջ տղամարդ չկա, այն համարվում է անհետացող: Տվյալ պարագայում ազգի ներկայացուցիչները կարող են միևնույն հեռավոր ազգական ընտանիքից որդեգրվել: Որդեգրվածը ձեռք է բերում այդ ազգի անվանումը և նրա բոլոր իրավունքները:

Արյունակցական ազգը կազմավորվում է երրորդ սերնդից ուղիղ գծով: Երեք պորտից այն կողմ բոլոր արյունակից եռաստիճան սերունդները ազգակիցներ են: Նրանք մեկ ազգ են համարվում այնքան ժամանակ, քանի դեռ հետնորդ սերունդները հիշում են իրենց ազգակցական կապի մասին¹¹²:

Բացի արյունակիցներից, տվյալ ազգի անդամ էին համարվում երկու սեռի այն բոլոր անձինք, որոնք այդ ընտանիքի կողմից հարսնացվում, որդեգրվում կամ ծայրահեղ դեպքերում տնփեսայացվում էին: Մյուս կողմից՝ ազգի շրջանակներից դուրս էին համարվում այն բոլոր աղջիկներն ու կանայք, որոնք ամուսնանալով պետք է թողնեին իրենց հայրական տունը: Այսպիսով՝ հարսը իր հայրական ազգի համար դառնում էր լոկ «ցեղակից», իսկ սկեսրայրենց համար՝ ազգագրված ազգակից: Ազգն իր հարսնացած աղջկան նայում էր որպես կիսաօտարացածի, սոսկ ցեղակցի, բայց ոչ երբեք ազգի ու ընտանիքի լիազոր իրավունքներով օժտված անձի: Հարսնացողը հայրական տնից օժիտ էր տանելու ամուսնու օջախ և «օտար ազգի» համար ժառանգներ էր մեծացնելու, ովքեր չէին կարող համարվել մայրական գծով ազգի անդամներ, բայց համարվում էին ուղղակի ցեղակիցներ:

¹⁰⁹ Տե՛ս **Ստ. Մալխասյան**, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 7:

¹¹⁰ Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1 (Ա-Կ), Երևան, 1979, էջ 6-7:

¹¹¹ Նույն տեղում, հ. 2, Երևան, 1981, էջ 887:

¹¹² Տե՛ս **В. Бдоян**, Кровнородственный “азг”..., հոդվածը:

Ազգը՝ որպես արյունակցական մեծ խումբ, բաժանվում է ճյուղերի, որի հաշվումը կատարվում է ազգի հիմնադրի որդիներից, եթե նրանք մի քանիսն են, իսկ եթե ազգի հիմնադիրն ունի մեկ որդի, ապա առանձին ճյուղերի հաշվումը կատարվում է երրորդ սերնդից: Այս խմբին տարբեր շրջաններում տարբեր կերպ են կոչել՝ **թաբու, թիրա, թախում, թայֆա, դաս, սերունդ, ճյուղ** և այլն: Օրինակ՝ Տավուշում օգտագործել են **թիրա, թաբու**, Մուշում՝ **դաս**, Սիսիանում, Արմավիրում՝ **թախում**, Գորիսում, Ստեփանավանում՝ **սերունդ, ճյուղ, ցեղ** եզրույթները: Յուրաքանչյուր ճյուղ իր հերթին բաժանվում է ավելի փոքր, բայց ավելի մոտ ազգականների խմբի, որոնք տարբեր բարբառներում կոչվում են **բիձոնք, հոսպարանք, ապերանք, ամիանք, հոխարտանք, հոսկա-ձժեր**, այլ կերպ ասած՝ հորեղբոր տղերք կամ եղբոր տղերք: Յուրաքանչյուր ճյուղ ներառում է հինգ-վեց սերունդ, որոնք սերված են ազգի հիմնադրի որդիներից կամ թոռներից, իսկ ավելի փոքր միավոր համարվող «ապերանք» խմբի մեջ մտնում են եղբայրներն իրենց երեխաներով և թոռներով: Սրանք վարընթաց և հորիզոնական ճյուղավորումներով երեք սերնդից բաղկացած ընտանիքներ են:

Ժամանակի ընթացքում մայր ընտանիքից առանձնանում են ավելի փոքր դուստր ընտանիքներ, որոնք գիտակցում են տվյալ ազգակցական խմբին իրենց պատկանելը և հինգ-վեց, որոշ դեպքերում նաև ավելի շատ սերունդներ հիշում են տվյալ ազգի հիմնադրի անունը:

Ազգակցական խմբի մեջ մտնում են այն ընտանիքները, որոնք ապրում են միևնույն բնակավայրում: Կան դեպքեր, երբ ազգի մի ճյուղը, որոշակի հանգամանքներից ելնելով, տեղափոխվում է այլ վայր՝ բնակություն հաստատելու, որն էլ համարվում է նոր ազգի հիմնադրման սկիզբ: Սկզբնական շրջանում այդ ճյուղը շարունակում է կրել նույն անվանումը, պահպանել գաղափարա-բովանդակային կապերը, բայց ժամանակի ընթացքում թուլանում են դրանք, և նա դառնում է լիիրավ ազգ՝ պահպանելով հիշողությունը, որ մի ժամանակ պատկանել է մեկ այլ ազգի: Որպես կանոն, հինգ-վեց սերունդ հետո հին անվանումը փոխարինվում է նոր ձևավորվող ազգի հիմնադրի անունով:

Խոշորացող գերդաստանից նախ առանձնանում էին նրա կողմնային կամ հորիզոնական ճյուղերը՝ հորեղբորորդիների ընտանիքները, ապա՝ ուղիղ գծով սերունդները: Դրանով դրվում էր ազգի, ազգակցական թաղի հիմքը: Լինում էին դեպքեր, երբ ուղիղ, վարընթաց գծով սերունդներից կազմված գերդաստաններից բաժանվում էր դժգոհ որդիներից մեկը: Եղբայրական որոշ գերդաստաններում իրար նեցուկ լինելու համար բաժանվում էին երկու եղբայրները՝ մեկ ընտանիք կազմելու պայմանով: Եվ այդ առանձնացած փոքր ընտանիքները կրկին շարունակում էին պահպանել բազմասերունդ և բազմանդամ կազմը՝ 15-25 և ավելի հոգի¹¹³:

Բաժանումից հետո էլ յուրաքանչյուր ընտանիքի սեփականության կոլեկտիվ պաշտպանությունը ազգի հիմնական հատկանիշներից մեկն էր: Որքան համախմբված էր ազգը, այնքան ապահովված էին նրա ընտանիքները և՛ նյութապես, և՛ բարոյապես:

Ազգակցական հարաբերությունների պահպանման աստիճանը հստակորեն պայմանավորված է եղել տիրող պատմաքաղաքական և տնտեսամշակութային հանգամանքներով:

¹¹³ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, էջ 77:

ԱԶԳԱՏՈՀՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄԻԱՄԱՌՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Ազգ-արենակցական խումբն իր տնտեսական-արտադրական ընդհանրությունն ավելի շուտ է կորցնում, քան գաղափարական և տարածքային ընդհանրությունը: Ազգի գաղափարական ընդհանրությունը դրսևորվում է առաջին հերթին ընդհանուր ազգի հարատևության, ընդհանուր նախահոր հիշողության պահպանման և ազգի ինքնանվանման պահպանման մեջ:

Ազգի ընտանիքների համախմբման գրավականներից մեկը XIX դ. ընդհանուր ազգանունն էր, որին, որպես այդպիսին, անծանոթ էր ավելի վաղ շրջանի ազգը: Եղել են ազգը կոչելու և ազգակցական աստիճանները ցույց տալու տարբեր ձևեր:

Ազգանվան նախնական ձևը նույնքան հին է, որքան ամուսնության պատմությունը: Հասարակության բոլոր երևույթների նման ազգանունը ևս ապրել է անընդհատ զարգացում, մինչև հասել է այժմյան աստիճանին: Հինգերորդ դարից սկսած՝ գրականության մեջ արձանագրվել են ազգանվան մի շարք ձևեր: Ըստ մեզ հասած գրավոր և բանավոր տվյալների՝ հայկական ազգանունը միջնադարում ձևավորվել է երեք հիմնական սկզբունքներով.

1) ամենահնագույնը՝ նախնու անունով, 2) բնակավայրի անունով, 3) զբաղմունքի անունով:

Ազգի ինքնանվանումը նրա համեմատաբար կայուն հատկանիշներից մեկն է: Ազգի հիմնադրի մասին հիշողությունը պահպանվում է մինչև վեց-յոթ, երբեմն նաև ութ սերունդ: Մասնագիտությունը դրվում է ինքնանվան հիմքում այն ժամանակ, երբ այն դառնում է տվյալ ազգի սերնդի ժառանգական զբաղմունք: Նման ինքնանվանումները տարածված են արևմտահայոց մեջ: Դա վկայում է արհեստի հիմնական զբաղմունք լինելը: Արհեստի անունով ազգանունը կոչելը վերաբերում է ոչ թե մեկ ընտանիքի, այլ ազգակցական ընտանիքների խմբի: Այն բնակավայրերում, որտեղ բնակչությունը կազմում են տեղաբնիկները (Գորիս, Ստեփանավան) կամ բնակեցված են Պարսկաստանից գաղթածներով (Միսիանի, Արմավիրի, Աշտարակի շրջաններ), որտեղ հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, ազգակցական խմբի անվանումներն ըստ մասնագիտությունների հազվադեպ են հանդիպում: Երբեմն ազգը կարող էր կորցնել հիմնադրի անունը, նման դեպքերում հիշվում էր ազգի հիմնադրի զբաղմունքը, պաշտոնը, օրինակ՝ Իրիցանց, Տերտեբանց ազգանունները: Հաճախ ազգի մի ճյուղը նշելու համար մատնացույց էր արվում ընդհանուր անվանումը (օրինակ՝ Նահապետենց ազգից): Երբեմն ազգի հիմնադրի անունը մոռացվում է, և նրա սերունդները հիշատակվում են կենդանության օրոք ճանաչում ստացած նրա մականունով:

Բնատնտեսության պայմաններում ազգատոհմերը ճանաչվում էին միայն նրա հիմնադրի անվամբ, մինչդեռ Արևմտյան Հայաստանում հաճախ մոռացվում էր հիմնադրի անունը, և ազգը ճանաչելի էր դառնում տոհմական զբաղմունքով, արհեստատեսակով՝ Ոսկերչյան, Դարբինյան, Նալբանդյան, Ժամկոչյան և այլն:

Ազգը, բացի ազգանուններից, կարող էր ունենալ նաև մականուն (ավել կամ «փուտ» անուն), որն օգտագործվում էր ազգանվան հետ միասին: Ազգի հիմնադրի անունը երբեմն մոռացվում էր, և հիշվում էին նրա վարքագծով կամ ֆիզիկական որևէ հատկանիշով պայմանավորված մականունները: Մեր իրականության մեջ կան նաև կանանց անունով ազգանուններ: Սովորաբար դրանք խելացի, խիզախ,

գեղեցիկ և այլ դրական հատկանիշներով օժտված կանանց անուններ են, երբեմն էլ անբարոյական վարքի և այլ բացասական հատկանիշներ ունեցողների անուններ:

Հնում ազգանունն այսօրվա նման մի ընդհանուր վերջավորություն չի ունեցել, և որևէ մեկին հիշատակելու համար նախ տալիս էին նախնու, ապա պապի ու հոր անունները, օրինակ, Ավետներանց Մարգարի Մկոյի Ենոք, որը նշանակում է Ավետի ազգատոհմի Մարգարի որդի Մկրտիչի տղա Ենոք¹¹⁴: Սա բացատրվում է նրանով, որ վաղ միջնադարում գյուղացիության շրջանակներում, նշելով միայն հանգուցյալի և նրա հոր անունները, ինչպես գրվում էր տապանաքարերի վրա, բավական էր համագյուղացուն ճանաչելու համար: Ժամանակի ընթացքում, երբ գյուղատնտեսությունը ներքաշվում է ապրանքադրամական հարաբերությունների մեջ, և երբ ամրանում է գյուղացիության կապը շուկայի հետ, առաջանում է ազգանունների օգտագործման անհրաժեշտություն:

Արդեն ուշ միջնադարում՝ XVI դարից սկսած, ինչպես վկայում են մատենագրական և արխիվային նյութերը, ազգի նահապետի անունով ազգանվան սաղմերը արդեն երևում էին: Ազգանունը մատնանշող վերջավորություններն էին՝ «անց», «անք», «եց», «ենց», «ից», «ունց», «ոնց», «եանց», օրինակ՝ Բաբենց, Սահականց, Սևունց: Սրանց հետագայում հավասարազոր է դառնում «յան», «յանց» վերջավորությունը: Գործածվել է նաև «ունի» վերջավորությունը, որն առավել հին ձև է (Արշակունի): Այս վերջավորությունները արյունակցական կապ ու պատկանելություն են ցույց տալիս: Հասարակ ժողովրդի մեջ առավել տարածվածը «անց», «ենց» ձևերն են: «Եան» վերջավորությունը միջնադարում միաժամանակ ավելանում էր և՛ հայրանվանը, և՛ ազգանվանը: XIX դարում հաճախ «եան» վերջավորությունը հայրանունն էր ցույց տալիս, իսկ «եանց»-ը՝ ազգանուն (Արտաշես Աշոտեան Սմբատեանց)¹¹⁵: Միջնադարում, բացի նախնիների անունով կոչվելուց, տարածված էր նաև հայրանունով կոչվելը, օրինակ, Դավիթ Ալավկա որդի, այսինքն՝ Ալավկայի որդի Դավիթ: XIX դարի վերջին XX դարի սկզբին վերականգնվեց հայրանվան ժողովրդական ձևը, «յան»-ը դարձավ ժամանակակից ազգանվան վերջավորությունը, իսկ «եանց»-ը գործածությունից դուրս եկավ (Արտաշես Աշոտի Սմբատյան):

Թվարկված վերջավորություններից «ոնք»-ն ու «ոնց»-ը առավել օգտագործելի են համարվել բարբառներում, գյուղական վայրերում, երբ գյուղական ընտանիքը ճանաչելի է դառնում ազգի հիմնադրի սերնդին պատկանելու առումով: Այդ վերջավորությունները ավելացնելով պապի անվանը՝ ստացվում էր ազգանունը: Ներկայումս բացարձակ տիրապետող ձևը «յան»-ն է համարվում: Ի դեպ, «ունց», «ունի» վերջավորություններն ավելի տարածված էին Արցախում և Սյունիքում:

Ազգանունը կարող էր առաջանալ նաև ազգի հիմնադրի որդիների կամ թոռների անուններից: Այս դեպքում պարտադիր էր դառնում ազգի ընդհանուր անվան հիշատակումը: Միննույն ազգի ներսում առաջանում էին մի քանի ազգանուններ: Նույնիսկ մի ընտանիքում կարող են լինել տարբեր ազգանուններ. մի որդին կարող էր կրել պապի անունը, մյուսը՝ ազգի անվանումը: Գրանցվել են դեպքեր, երբ ազգանվան փոփոխություններ են կատարվել: Օրինակ, երբ ավել կամ փոքր անունն ավելի շատ է օգտագործվել և վերածվել է ազգանվան:

¹¹⁴ Տե՛ս Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, էջ 160:

¹¹⁵ Տե՛ս Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, էջ 161:

Ազգի մեծամեծների, երևելիների, ազգային հերոսների անուններով ազգանվան պահպանումը համարվել է տվյալ ազգի հպարտության խորհրդանիշ: Ժողովրդական մտայնությամբ՝ ազգի անվանման պահպանման հետ մեկտեղ պահպանվում է նաև ազգի միասնությունը:

Ազգակցական խումբը ցանկացած պարագայում միասնական է հանդես գալիս: Վերը նշվածի վառ օրինակներից մեկը, որ գոյատևում էր դեռևս XX դարում, ազգային գերեզմանոցների առկայությունն է: Հայտնի է, որ հայկական գյուղերում առանձին ազգեր ունեցել են իրենց առանձնացված գերեզմանոցը կամ ընդհանուր գերեզմանատան առանձին հատվածը, որն ավելի բնորոշ երևույթ էր: Ազգի գլխավորի պարտականությունների մեջ էր մտնում գերեզմանոցում գերեզմանաշարքի կամ գերեզմանատան իրենց հատվածի հսկողությունը. տնկիների ու ծառերի մշակումը, մաքրումը և այլ արարողությունները: Յուրաքանչյուր ընտանեկան գերեզմանոց ուներ իր պաշտամունքային նշանակության ծառը¹¹⁶: Առանձին ազգակցական գերեզմանոցները հազվադեպ երևույթ էին: Ամենատարածվածը միևնույն գերեզմանոցում տարբեր ազգատոհմերի ննջեցյալների առանձին շարքն էր՝ «էրամը», որը հատուկ էր տոհմային կարգերին: Դա ցույց է տալիս, որ արյունակից ազգի մեջ վերապրուկային ձևով պահպանվել են տոհմահամայնքային կարգերի աղոտ արտահայտությունները: Այս ավանդույթը խախտվեց 20-րդ դարի 30-ականներից: Մինչև վերջերս էլ շատ վայրերում հանգուցյալին հուղարկավորում են միևնույն ազգին պատկանող տարածքում, կամ՝ որքան հնարավոր է նրան մոտ:

Դեռ XX դարի սկզբներին գերեզմանոցների ազգակցական տարածքների ազատ մնացած հատվածներում մրգատու ծառեր էին տնկում, որոնց խնամքն ընկնում էր տվյալ ազգի բոլոր անդամների վրա: Ստացված բերքից օգտվում էին բոլոր ազգակից ընտանիքները:

Հայոց մեջ տարածված էր հանգուցյալին օտար վայրից իրենց գերեզմանատուն տեղափոխելու սովորույթը: Այդ սովորույթի համաձայն ազգակիցները պետք է ապրեին միասին ոչ միայն այս կյանքում, այլև անդրշիրիմյան աշխարհում: Ազգակիցներն իրար կողքի պետք է լինեին ինչպես այս աշխարհում, այնպես էլ անդաշխարհում: Նույնիսկ այն դեպքում, երբ անձը մահանում էր ոչ իր ծննդավայրում, նրան բերում և հուղարկավորում էին իր ազգի գերեզմանոցում: Մեղք էր համարվում օտար հողում հանգուցյալին թողնելը: Տեղափոխում էին նաև ժողովրդական այն ընկալման համաձայն, ըստ որի հարազատ հողը չի ճնշի հանգուցյալին: Ազգից որևէ մեկի թաղման ժամանակ տվյալ ազգի բոլոր մեծահասակ տղամարդիկ պետք է ներկա գտնվեին, որոնք պարտավոր էին մինչև «յոթը», անգամ «քառասունքը» սուգ պահել: Հանգուցյալի տանը յոթ օր չպետք է օջախ վառվեր, կերակուր եփվեր, այդ ամենի մասին հերթական կարգով հոգ էին տանում նույն ազգի բոլոր ընտանիքները:

Ազգովի համախմբվածությունը դրսևորվում էր ոչ միայն մահվան և հուղարկավորման, այլ նաև ամուսնահարսանեկան, մանկան ծննդի, խնամքի, դաստիարակության, ընտանեկան տոների ժամանակ: Ամուսնության հարցը քննարկվում էր ազգի ավագների պարտադիր մասնակցությամբ և իրագործվում

¹¹⁶ Տե՛ս **В. Бдоян**, Кровнородственный “азг” и родственные отношения у армян, էջ 35-39; Նույնի՝ Հայ ազգագրություն, էջ 155-165:

էր միայն նրանց համաձայնությամբ: Մասնակցում էին ոչ միայն լոկ իրենց խորհուրդներով, այլև նյութական օգնությամբ:

Ավագները որոշակի հեղինակություն էին վայելում ինչպես ազգատոհմում, նաև ողջ համայնքում: Ազգի մեծի դերի մասին կար ժողովրդական այն ընկալումը, որ եթե «տունը մեծ ունի, պաշտիր նրան, եթե չունի՝ մի մեծ քար դիր նրա տեղը և իբրև մեծի՝ պաշտիր»: Յուրաքանչյուր արյունակցական խումբ ուներ որոշակի խորհուրդներ տվող, ազգի անունից համայնքին խնդիրներ ներկայացնող «ազգի մեծ», որին կոչում էին «ազգի սպիտակամորուս», «ջոջ», «թախումի քոթուկ» և այլն: Այս տիտղոսներ կրողը սովորաբար ազգի ամենաավագ տղամարդն էր լինում: Համենայն դեպս, տրված պատվանունները կրող անձը նշանակալի դեր ուներ ազգի տնտեսական և բարոյական կյանքում: Նա պետք է ներկայանար օրենքի առաջ՝ լուծելու հողային կամ այլ հարցեր:

Ազգի մեծի դերը XX դարի սկզբներին արևելահայության մեջ թուլացել էր, մինչդեռ Արևմտյան Հայաստանի շատ ազգագավառներում դեռ երկար ժամանակ պահպանվեց:

Ազգակից ընտանիքները ամուսնության ավանդական կապեր պահպանելու, նոր տուն կառուցելու, առևտրական որևէ գործարքի, ընտանեկան բաժանքի, թաղման տեղի և կարգի, կենցաղային, համայնքային բազմապիսի հարցեր, հողային և այլ կարգի վիճելի խնդիրներ խաղաղությամբ լուծելու նպատակով դիմում էին ազգի մեծին, որի վրա էր ընկնում ընդհարված ազգատոհմերին հաշտեցնելու պարտականությունը, որ հաճախ ավարտվում էր կողմերին խնամիացնելով:

Ազգի մեծի կինը ինքնաբերաբար դառնում էր ազգատոհմի կանանց խորհրդատուն՝ մասնավորապես ամուսնության ու բարոյական դաստիարակության հարցերում և ընդհանուր առմամբ ամուսնու կամքի արտահայտիչն էր: Ազգի ընտանիքները իրենց բոլոր նախաձեռնությունների ժամանակ բարոյական պարտք էին համարում ներկայանալ ազգի մեծին ու նրա կնոջը և լրջորեն խորհրդակցել նրանց հետ: Ազգամեծի կինը շատ հաճախ ժողովրդական բժշկությամբ և մանկաբարձությամբ համայնքում աչքի ընկնող դեր էր կատարում: Ազգի մեծը ըստ էության ուներ այն պարտականությունները, ինչը ունեցել է վաղնջական ժամանակների տոհմավագը:

Ազգի յուրաքանչյուր անհատին հատուկ է եղել նաև արժանապատվության գիտակցությունը: Ազգատոհմի բոլոր անդամները պաշտպանում էին ազգի շահերը, իսկ ազգն էլ՝ նրանցից յուրաքանչյուրի շահերը: Ազգի պատվազրկումը հիմնականում առնչվում էր իգական սեռի բարոյական վարքի հետ: Հանցավոր արարք էր համարվում, երբ փորձում էին առևանգել ազգի աղջկան կամ հարսին: Նման դեպքում հանցավոր անձի մեղքի համար պատասխանատու էին նրա ընտանիքը և ողջ ազգը: Վրեժը լուծում էին առաջին հերթին տուժողի մերձավոր հարազատները, վերջիններիս բացակայության պարագայում դա ազգի յուրաքանչյուր այլ անդամի բարոյական պարտքն էր համարվում: Երբ նման դեպքեր էին պատահում, ազգերի միջև ծագած կռիվների ժամանակ ոտքի էին կանգնում երկու կողմերի բոլոր հասուն տղամարդիկ: Կռիվը մահակներով էր կատարվում, երբեմն նաև՝ սառը զենքով: Իգական սեռի պատվի, հողային հարցերի և երեխաների պաշտպանության համար սկիզբ առած կռիվներում վրիժառությունը երբեմն ավարտվում էր մարդասպանությամբ: Վերջինս կասեցնելու կամ վերջ տա-

լու միջոցներից ամենագլխավորը տուժող կողմի հետ խնամփական կապեր հաստատելը և նյութական միջոցներով հատուցելն էր: Եթե հանցավորի ընտանիքը ամուսնացնելու աղջիկ չուներ, զոհողության էր գնում նրա մերձավոր ազգականը: Եթե տուժող կողմը հաշտության առաջարկը մերժում էր, նշանակում է նա հետապնդելու էր հակառակորդ ազգի հանցավոր ընտանիքին՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման վրեժ լուծելու համար: Նույնիսկ տասնյակ տարիներ անցնելուց հետո որևէ ձևով այն ի կատար էր ածվում: Եղել են դեպքեր, երբ հրդեհվել է հանցավորի անասնակերի ձմեռային պաշարը կամ ծղոտի դեզը:

Պատմական գրականության մեջ կան սակավ, բայց ցայտուն օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ վրիժառության հիմքում ընկած են եղել ոչ միայն բարոյական, այլև քաղաքական դրդապատճառները: Այսպես, օրինակ, Փ. Բուզանդը գրում է, թե Մանավազյան և Որդունի նախարարական տների միջև քաղաքական նկատառումներով արյունահեղ կռիվներ են մղվել: Միմյանց մեծապես վնասելուց բացի, նրանք ավերել են նաև հայոց արքունական տունը¹¹⁷: Վրիժառության հիմքում բոլոր դեպքերում եղել են սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական ու բարոյական դրդապատճառներ:

Հայերի մեջ տարածված է այն կարծիքը, թե ազգն ուժեղ է այնքան, որքան արու զավակներ ունի, ուստի տղաների ծնունդն ավելի մեծ խանդավառությամբ է ընդունվել, ինչը չենք կարող ասել աղջիկների մասին: Նրանք համարվել են օտարի տունը շենացնողներ, օտարի ճրագը վառողներ: Տղաների և աղջիկների դաստիարակությունը տարբեր ձևով է իրականացվել: Ազգի մեջ պահպանվում էր նոր սերնդին ազգատոհմի նկատմամբ նվիրվածության ոգով դաստիարակելու ձրգտումը: Տղաները մեծերի կողմից ստանում էին տիրելու, բռնացնելու պաշտպանվելու դասեր: Տղան դառնալու էր իր հայրական տան և ազգի շահերի պաշտպան, իսկ աղջիկը՝ ընտանիքի և ազգի պատիվը բարձր պահող, որի նկատմամբ դաստիարակությունն ավելի խիստ էր. անհանդուրժելի էին այն դեպքերը, երբ տվյալ ազգի կամքից անկախ՝ հակառակորդ ազգի տղաների հետ որևէ ձևով սիրային կապեր էին հաստատվում:

Թույլ ազգերը համախմբվում էին խնամփական կամ հեռավոր ազգակցական կապերի միջոցով: Նման համախմբման համար հարմար միջոց էր նաև արյան եղբայրությունը, որը կատարվում էր օտար տղայի և օտար աղջկա ճկույթներից հանված արյունը ծծելու եղանակով: Սա երբեմն վավերացվում էր եկեղեցու կողմից: Այս պարագայում եղբայրացած ազգերը միմյանց նկատմամբ չեզոք էին մնում:

Մինչև XX դարի վերջերը ազգերն ունեցել են իրենց առանձին պաշտամունքային առարկաները՝ փրնչի ծառ, փոքր եկեղեցի, սուրբ գրքեր համարվող Նարեկ, Աստվածաշունչ և Ավետարան, ինչպես նաև գրավոր թալիսմաններ, հմայիլներ: Որպես կանոն՝ սուրբ գրքի ձեռք բերումը ազգի հիմնադրի խնդիրն էր: Դրանք գերդաստանի տրոհման ժամանակ մնում էին պապենական տանը: Պապենական տունը հրդեհվելու կամ փլվելու դեպքում այն նոր տուն էին տեղափոխում: Նման դեպքում սրբի անվամբ մատաղ էին անում: Սրբություն համարվող առարկան երբեք դռնից չէր հանվում, այլ պատի մեջ բացված անցքից: Սրբությունը տանից հանողի աչքերը անպայման կապում էին:

¹¹⁷ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, գլ. Դ, ԺԵ, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 93:

Արենակցական ազգի գլխավոր ու կարևոր հատկանիշներից մեկը էքզոգամ ամուսնությունն էր, ազգի ներսում թույլատրվում էր միայն յոթ պորտ անց: Այն ազգերը, որոնք չունեին յոթ պորտ սերնդային կապեր, թույլատրվում էր միայն հինգերորդը լրանալուց հետո: Ամուսնական արգելքը կիրառվում էր նաև մայրական գծով, ընդ որում տվյալ պարագայում իբրև արգելքի սահման համարվում էր չորս պորտ լրանալը: Հայրական կողմը կոչվում էր **արյան ազգակցություն**, իսկ մայրական կողմը՝ **կաթի**: Հայոց ամուսնական արարողակարգերում խստորեն արգելվել է մերձավորների միջև ամուսնությունների այդ չափանիշների անտեսումը, հակառակ դեպքում խախտողները արժանանում էին հասարակության նախատինքին: Ըստ Պ. Պողոսյանի «Ցեցեր» վեպի՝ երբ գյուղացիներից մեկը ցանկացել է իր քեռու աղջիկ թոռանն ուզել իր տղային, արժանացել է համագյուղացիների պարսավանքին¹¹⁸: Փավստոս Բուզանդը, հենվելով կանոնական դրույթների վրա, գրում է. «Ներսես Մեծը նաև կարևորում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից»¹¹⁹: XIX դ. նման վերաբերմունքն ամուսնական կարգը խախտողների նկատմամբ վկայում է, որ դարերից եկող նորմերը դեռևս բավական կենսունակ էին: Հայոց եկեղեցու կողմից սահմանված կանոնակարգը, հասարակական կարծիքը, ավանդական ներփակ կենցաղը նպաստում էին հին բարքերի պահպանմանը:

Ամուսնական արգելք էր սահմանված նաև հոգևոր ազգակցության ժամանակ, ինչպես, օրինակ, քավորի ընտանիքի հետ: Սովորույթային իրավունքի չափանիշների համաձայն նույնը պահպանվում էր որդեգիր տղայի նկատմամբ, որին իրավունք չունեին ամուսնացնել ազգի որևէ աղջկա հետ, քանզի որդեգրվածը համարվում էր ազգի անդամ: Արգելված էր ամուսնությունը կաթնեղբայրների ու կաթնաքույրների միջև, չէր թույլատրվում երկու հարազատ եղբայրների ամուսնությունը երկու հարազատ քույրերի հետ: Ազգի ներսում արգելված է եղել ամուսնանալ եղբոր այրու հետ, թեպետ այդ սովորույթի աննշան մնացուկներ հարատևել են մինչև XIX դարի վերջերը: Այդ երևույթը ազգագրական գիտության մեջ կոչվել է լեիրատ (տեգրամուսնություն): Լեիրատի դեպքեր հաստատագրվել են վաղ միջնադարում: Դրանցից մեկը Գնելի այրու՝ Փառանձեմի հետ Արշակ թագավորի ամուսնությունն էր¹²⁰:

Արյան վրեժի և համերաշխության հասարակական-ազգակցական ընդհանրության վերապրուկային մնացուկները գոյատևեցին մինչև XX դարի 50-60-ական թվականները՝ բոլորովին փոփոխված սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում անգամ:

Р.А. НАГАПЕТЯН – Родственная система “азг” у армян. – В статье обсуждается значение одной из традиционной социальной организации во всестороннем изучении рода. Представляются начальные формы этнографического понятия на основании данных “азг” первой четверти XIX и XX веков.

Показываются общественно-идеологические проявления элементов общности в процессе организации рода в различных сферах жизни и в различные эпохи.

¹¹⁸ Պ. Պողոսյան, Ցեցեր, Երկեր, կազմեց և առաջաբանը գրեց Ս. Սարինյանը, Երևան, 1987, էջ 77; Տե՛ս Ս. Մանթրոսյան, Ժողովրդական տվյալների արտացոլումը Պ. Պողոսյանի երկերում, ՊԲՀ, 2009, թիվ 1, էջ 91:

¹¹⁹ Տե՛ս Փավստոս Բուզանդ, դպր. IV, գլ. Դ, էջ 121:

¹²⁰ Նույն տեղում, էջ 194:

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ – ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ. ՈՒՐՈՒԱԳԻԾ
ՍԸ ԳՐԱԿԱՆ ԴԻՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՔԷՆ

Ա.Ա. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

*Խոր գերության ներքոյ, այնուամենայնիւ
Պատմութեան քառողիներում ոլորապտոյտ
Պայքարել է ոգով, մաքառել է նա միշտ
Եւ չի կորել դաժան տարիներում այն մութ:
Եղիշէ Չարենց*

*Կենդանութիւն, տնական Հակասութիւն էր,
Պայքար, Արեանս մէջ յարաշարժ:
Ճշմարտութեան մը վերջին, չունեցան
Ձևը երբեք Խոհերը մեր...:
Նիկողոս Սարաֆեան*

Չարենց կ'ըսէ՝ «պայքարել՝ ոգով», - հաւաքականութեան իմաստիւ,- Սարաֆեան՝ կ'արձանագրէ՝ «Հակասութիւն էր, /Պայքար, Արեանս մէջ,- իր ըմբռնումէն իսկ բխող,- միով բանիւ՝ Եղիշէ Չարենց – Նիկողոս Սարաֆեան. երկուքն ալ բանաստեղծումի հօգործեամբ իրենց իսկ ժամանակի ՇՈՒՆՉԸ եղած են, և ոչ միայն, այլև խտացումը՝ յեղափոխականօրէն, նոյն ատեն անոնք տնական ամայութենէն ետք սկզբնաւորած են հայ բանաստեղծութեան ընդհատուած շարժումը, զոր Չարենցի պարագային կը շրջագոցուէր Վահան Տէրեանի մահով, Նիկողոս Սարաֆեանն ալ /«չնայած հեռու մեծ կրթանքներէն»/ 1928 թուականին հրատարակած Անջրպետի մը Գրաւումը հատորով Դանիէլ Վարուժանի բանաստեղծական ասանդոյթի առաքինութիւնը կը վերականգնէր: Շուրջ երկտասնամեակի տնական խզում մը, զոր զարգացում պէտք է ենթադրէր, իրաւ զարգացում մը: Սա իրողութիւնները առարկայօրէն բացատրելու, ըսել կ'ուզեմ՝ մասնալատկելու համար, կը փորձեմ երկու մեծ բանաստեղծներու ապրած համաժամանակային զգայնութիւնները դիտարկել ընդհանրական, ոգեղինութեան իմաստիւ իրարմէ գրեթէ չզատուող խորապատկերի վրայ:

Արդ խնդրայարոյց՝ Եղիշէ Չարենցի Գիրք ճանապարհի /1929 – 1934/ և Նիկողոս Սարաֆեանի Տեղատուութիւն և Մակընթացութիւն /1931-1933 / հատորներու «ընդհանուր թելադրանքները» ամենէն առաջ մեզի կը հետաքրքրեն, ըսել կ'ուզեմ խորհրդածումի կը մղեն տարբեր իմացական - զգացական գոյավիճակներ /խորհրդային և սփիւռքեան/ ապրած, բայց նոյն ատեն ազգային - անհատական ժամանակին մէջ ստեղծագործած բանաստեղծներու նկարագիրներու առումով: Երկուքն ալ իրաւակարգային տարբեր պայմաններու մէջ ապրած՝ դիմագրաւած են իրականութեան հակազդեցութիւնը, թերևս, պատրանք ապրած: Յամենայն դէպս, Սարաֆեան տեղ մը կը գրէ. «Պատրանք մը խուսափելու արդիւնք

է Չարենցին փառաբանութիւնը: Պատրանք մը: Ուրիշ պատրանքէ խուսափելու ողբ մըն է Վարուժանին անէծքը: Պատրանք մը դարձեալ: ...Ի՞նչ պիտի ըլլայինք եթէ չըլլային այդ պատրանքները և անոնց տուած դառնութիւնները, որոնք աղբիւրն են ստեղծագործութեան»: Առաւել հասկանալի ըլլալու համար ըսենք, որ Սարաֆեան սփիւռքեան իրականութենէն անդին՝ ինքն ալ պատրանք մը ունի, ու կ'ապրի ոչ այնքան ինքզինքը երևակայելով պատրանքի,- ըսել է թէ՝ ինքնավերացումի գոհ,- այլ արմատ «նետելու» մղումէն կ'երևակայէ կամ կ'ուզէ երևակայել հոգևոր ինքնապաշտպան վիճակ մը, զոր սփիւռքեան իրականութիւնը չի խոստանար և յոյսն ալ կարծես թէ վրիպանք կը թռի այլևս: Եւ եթէ Չարենց կը գրէ.

Իսկ ժողովուրդը, որ եղել է հանճարեղ,
Եղել է որմնադիր, եղել է կառուցող,
Քաղաքներ է շինել, պարիսպներ է շարել,
Կամուրջներ է գցել նոր գծով...

Սարաֆեան կ'ապրի նոյն վիճակը, կ'անդրադառնայ /ոչ Չարենցի յաւակնոտ - բացապարզ կրքոտութեամբ, զոր գաղափարային իրողութիւն պիտի ըլլար, բնականաբար, ազգային տագնապ ըլլալէ զատ /և աւելորդ չէ դիտել, որ անդիմադրելի ցանկութենէն, հոգեվիճակէն խորունկ գիտակցութիւն մը կ'արթնայ. սա իրականութիւնը տառապանք մըն է, այլ բառով վերապրում մը, աւելին՝ անհերքելի, վասնզի պիտի քալէ իրականութիւնը, զոր արժանի պիտի ըլլար անհատի ապրումներուն, բայց չէ եղած, նոյն ատեն ինքնութեան փնտրտուքը չէ դադարած, տակաւին «հողէն մեր» կ'ելլէ կարօտի այնքան յուզում՝ հոգեղէն և հողողէն.

աղաքներու կարօտն էր
Դեռ այս առտու... ծովէ ծով
Պիտի երթամ տեսնել ես բոլոր բերքերն հողին մեր,
Ըսփինքսներէն անվերդով,
Տաճարներէն կիսափուլ, անտառներու հոծ ծառոց
Տակ թողուած հին կուռքերէն -
Մինչև շէնքերն երկնասլաց՝ ոստաններու արտառոց...

Ընդհանրապէս, Չարենց և Սարաֆեան հոգեկան կեցուածքի՝ հոգեբանական խառնուածքի այնպիսի դրսևորումներ,- բնականաբար նոյնական,- հանդէս կը բերեն, որ անտարբեր ու անհաղորդ չես անցնիր, որքան ալ չկարդացուին զանգուածէն, անոնք ճշմարտութիւններ կը պատգամեն՝ կրկնապէս ապրելով իրականութիւնը, ի վերջոյ երկուքն ալ համընդհանրական աւանդութեանց կրողն են կամ կու գան նոյն ակունքէն՝ տոհմիկ առաքինութեան կիրքովը տոգորուն, տարբեր փորձառութեան բովէն անցած իրաւ ապրումներով, հաղորդական ոգիով: Եւ այն գիտակցումը,- թէ,- ինչպէս Սարաֆեան կ'ըսէ,- «Ստածումն է, որ մարդը պիտի դարձնէ իրապէս մարդ և կենսունակ, պիտի տայ անոր ապրելու լիակատար հաճոյքը: Ու մտածողներուն թիւն որ պիտի շատնայ հետզհետէ: Հող է զանգուածներուն հասնելիք կէտը և փրկութիւնը» - կը բաբախէ կեանքին սիրտը այն ատեն, երբ կը պակսի ներշնչումը, ասիկա ճշմարտութիւնը գոհաբերել կը նշանակէ, որքան ալ Սարաֆեան զրոյթեան մը մէջ /«Սփիւռքը և իր գրականութիւնը»/ կ'անդրադառնայ մեզի շատոնց քաջածանօթ Չարենցի գաղափարային կեցուածքին. «Մեծ եսասէր մըն էր նաև Չարենցը, դարձեալ հաւաքականութեան սերը քարոզող և ոգեկանութիւն չճանչցող վարդապետութեան /իմա համայնավարութեան/, /Ա.Ա./ ետին: Ան իրմէ վեր կը դասէ բեռնակիր Աւօ մը և սակայն,

կտուրին թառած աքլորի մը նման կը պոռայ համայն աշխարհին իր հսկայ պոէտ մը ըլլալը, հսկայ և նայիրեան: Հասկցեք թէ տաղանդը կը պոռթկայ ընդհանրական ոգիէն անդին և տաղանդները միշտ թշնամի են զիրենք անձնականութենէն զրկող վարդապետութիւններուն: Ագատ են: Իրենց ետը կու գայ ցեղին արիւնէն»:

Ամէն պարագայի նպատակ չունինք, ինչպէս կ'ըսեն բացայայտ գիտակցումով մը անդրադառնալու խնդրոյ առարկայ մեռելածին վարդապետութեան մը և Չարենցի տուած տուրքին զոր իր եղերական վախճանով պիտի «փրկագնուէր»: Այլ զանգուածներու կամ հաւաքականութեան և անհատի «ճշմարտութիւնը գտած ըլլալու» փնտռոտքի խորհրդաւորութեան արծարծումը կ'ուզենք մասնաշատկել երկու բանաստեղծներու կողմէ՝ ով ինչպէս կ'երևակայէ տեսարանը ու կը պատկերացնէ մարդիկը: Հոս՝ Ես –ի խնդիրն ալ մասնայատկութեամբ, չափազանց որոշակի, կ'ընդգծուի, յամենայն դէպս, սապէս կ'ենթադրեմ, որ նորէն բնաստեղծական եւ բանաստեղծական այլազան խառնուածքներու, անշփօթելի ըմբռնումներու արգասիք է: Հաւատացեք, ոչ մէկ երևակայական, երևակայածին ընդլայնում իր կողմէ.

Մենք լսում էինք, քարացած, շեփորի ձայնը դժնի,
Որ վերից, բլուրի գագաթից հնչում էր ամեհի թափով,-
Երբ ահա ներքնից, անտառից ողողուած ցոլքերով լուսնի,
Սկսեց ելնել ու հոսել դէպի մեզ - հսկայ մի թափօր:
Շարժում էր թափօրը՝ լուսնի սպիտակ լոյսով ողողուած,
Ահագին, ինչպէս մարդկային վիթխարի մի գետ, կամ հեղեղ...

Սարաֆեան անուղղակի թելադրութեամբ կը պատկերէ՝ տիպաբանական շարժում մը արթնցնելով, նախապէս կեանք և տեսիլք համադրութիւնը ամբողջական կ'ըլլայ, թերևս՝ ինքնատպութիւն մը, ատիկա վերստին արդիւնք է մտածումի՝ ի գին զգացումի արտայայտման:

Սրինգներու ծակերէն կեանքի հոսումն անդադար...
Հայելինէրն, ուղիղ ու շեղ՝ ծիծաղելով կը նային
Իմ ցաւերուս վրայ սակայն:
Ու զիստ զիստի ամբարտաւան պարողներն,
Ուրուականներ ճգմելէն,
Դժոխքն ի վար անփութութեամբ կը քալեն:

Ճիշդ որ Սարաֆեան անուղղակի կ'անդրադառնայ «դժոխքն ի վար քալողներուն»: Ով ըլլալը, որպիսութեան խնդիրը կու տայ, ատկէ ետք բան մը չ'ըսեր: Չարենցեան «մարդկային վիթխարի գետը»՝ «թափօրը» գրեթէ նոյն աշխարհը կը ներկայացնէ՝ ընդլայնած զգացումներու ծիրը: Ըստ էութեան երկուքն ալ ժողովրդեան ներքին տագնապներուն կ'անդրադառնան: Յակոբ Օշական իրեն բնորոշ միջոցներով, ըսել կ'ուզեմ արտայայտակերպովը կը խօսի. «Հեզութիւնը հայ հոգիին ամէնէն մասնատր մէկ բաղադրիչն է, անոր գերութեան դարերը անուշ-ցընող, անոր ներքին աշխարհին մատուցուած ու անկէ իրեն դարձած սփոփանքին երկնային ցօղը: ...Ժամանակին հետ կը հաշտուէինք մեր նոր միջավայրին, կը մնայինք վերապահ, բայց համակրանքով, այսինքն՝ չէինք զատեր մեզ ու մեզ հիւրընկալող հողերը իրարմէ»:

Կրնայ առարկուիլ, որ Օշական սփիւռքեան գոյութեանական վիճակը կամ հոգեվիճակը իր իսկ բառով՝ դոյզն ինչ ազնուականացուցած է՝ միշտ քիչ մը անդիմադրելի չէ եղած, բայց դարձեալ ժամանակէն և միջավայրէն տագնապած: Այս

պարագային՝ ժամանակներէն և միջավայրերէն, ուր Չարենց և Սարաֆեան ապրած են՝ համաժամանակային վերացումով, վստահաբար: Որովհետև մեծ անհատները կու գան իրենց ժամանակներու խորքերէն և միշտ յորդոթեամբ մը այլ ժամանակներու ամփոնքը կը հասնին, երբեմն իրենց ապրած ժամանակի չհասկացութեան գոհը ըլլալով:

Ուրուային շարժում մը, թաւալումի հառաչալիւր ընթացք մը կ'արձանագրեմ /ասիկա կարելի է միջանկեալ, նոյնիսկ աղօստ ուրուագիծ մը նկատել/ Կէօթէի Ֆաուստ պոէմի երկրորդ մասի, մասնաւորաբար «Դասական վալպուրգեան գիշեր» տեսարանին մէջ, հոն հանդէս կու գան դիցաբանական այլազան և այլակերպ հերոսներ, ոգիներ: Դասական հնադարի դիցաբանական տիպերու ոգեկոչումներու միջոցաւ վերծանելի կ'ըլլայ աշխարհի մը գոյութեանականութեան իրողութիւնը, որ ներէն , կ'ենթադրեմ, մեծ գերմանացին ի խնդիր իմացականութեան՝ մեզի հրամցուցած է, որ գայթակղութեամբ մը չափորոշենք մեր ինքնաճանաչողութեան սահմանները, զորս բաղդատութեան կ'ենթարկուին եթէ, ի հարկէ իրարմէ զատորոշենք անցեալ-ներկայ՝ ոչ հարկադրաբար, և ոչ ալ զգացական անխոհեմ յիմարութեամբ մը, մանաւանդ և յատկապէս մեր՝ հայոց պարագային: Այս է՝ համամարդկային պոռթկում ըստածը, որ խորքին մէջ շատ ալ մարդկային է, ըսել կ'ուզեմ՝ որոշարկուած՝ ազգային:

Կրնանք անվարան արձանագրել, որ Չարենց և Սարաֆեան փրկաբերութեան ուժին կը կարօտին.

Արդ, անցել էինք արդէն մենք մոայլ եզերքից,
Լայնահուն աշխարհն էր իր դէմ՝ ողողուած հրով փրկարար,-
Այն ոսկեայ լապտերի լոյսով ես դարձայ Գալիլիի երգիչ,-
Այդ լապտերը, ով Առաջնորդ, կը փրկէ աշխարհը արար...

Անտառին մէջ ամայի, լուսաբացին տակ պայծառ,
Ստեղնաշար մը լոյսի
Ու շուքերու շարժելով, կ'առաջնորդես ծառէ ծառ
Զիս՝ քայլերովդ կոյսի:
...Հոգիս իր բերքը տուած՝ մերկ է աշնան հողին պէս,
Բայց յդի՝ նոր գարունով:
Կը թուի ինձ՝ կեանքի դուռն այն մաքուր ոգին ես,
Որ կը ծաղկի մահուան քով:

«Առաջնորդող ոգի» կամ «Առաջնորդ»՝ դիմակայութիւն մը, զոր պարտաւոր ենք իրարմէ տարանջատել: Չարենցեան «Առաջնորդ» շատոնց և շատեր անձնաւորած են նոյնիսկ պատմական անպարկեշտութեամբ որոշարկած անգետեղելի Չարենց - երկոյթի հոգեկան պառթկումէն ներս: Թերևս չեմ զարմացներ, եթէ ըսեմ, որ Առաջնորդը՝ առաջնորդութեան կորովի թելադրութեամբ՝ զգայացունց ուժ կ'ենթադրէ, քան ենթադրուած է ցայժմ: Եւ պատմութիւնը, մանաւանդ Չարենցի ապրած պատմական ընթացքը այդ ուժի զգայնութեանց անհրաժեշտութիւնը ունէր և անիկա կերպարանել կամ կերպարով մը սքօղել՝ անընդունելի կը համարեմ, մանաւանդ չարենցեան ապրումի և մտածումի ընդմեջէն: Փրկաբերութեան ուժը ժամանակ և տարածութիւն չի «ճանչնար»՝ ոչ ալ կը հանդուրժէ և այս հակասութիւնները բացատրելի կ'ըլլան այն ատեն, երբ ժողովուրդի մը ճակատագիրէն զօրէինք ներս նայիլ՝ ճանչցած ըլլալով անցեալը,- ընդարձակեալ վերապրու-

մով,- և ներկան ալ արինքամ չընելով: Հոս է Սարաֆեանի «առաջնորդող ոգու» էութեանականութիւնը, զոր կը փոխանցուի մեզի հօգո տարողութեամբ՝ ոնէ առարկութիւն չհանդուրժելով: Սարաֆեան զոգ գիտէ խորհուրդին Խորհրդաւոր ըլլալը, քանզի «կայ տենդոտ սէրը կեանքին» և կեանքն ալ իրականութեան ամենէն զգայական վիճակները կը բացայայտէ: Եւ կը խորհի, թէ այլ կերպ անկարելի է իրականութիւնը ապրիլ՝ զայն հասկնալու, ամենէն առաջ սփռուածութեան տարադէտ, անտեղիտալի վիճակէն դուրս. «Սփիւռքը հասարակութիւն էր ու չէր, ժողովուրդ էր ու չէր: Բայց վճռապէս չէր գրականութիւն մը ապրեցնող հոգեդէն իրականութիւնը», կը գրէ Օշական: Բայց ուրիշ տեղ մը Սարաֆեան կը գրէ. «Խելճ Օշական, այդպէս ալ սփիւռքը չճանչցաւ»: Նախկին աշակերտի խօսք՝ ուղղուած «դժգոհին, խստապահանջին»՝ չեմ գիտեր: Աշակերտ, զոր «պետք ունէր քօլտսի/իմա՝ հսկայի, Ա.Ա./ մոլիչի մը իր ախորժակին համաձայն, և ի վերջոյ, կը հասնի, կ'ըմբռնէ նաև անոր տառապանքը: Եւ իր այդ հասկնալն իսկ կը պարտի անոր: Եւ կը տանի անոր՝ վիհերէն իր բերած լոյսը»:

Այս բոլորը կը նշանակեն, որ կրնանք խօսիլ երկու բանաստեղծներու սերնդակցութեան վրայ: Ինչ որ կարևոր նշանակութեամբ մը /Չարենց ծնած է 1897-ին, Սարաֆեան՝ 1902-ին/ կը տեսնենք իրենց փնտռած կեանքին մէջ՝ ստեղծագործական սխրանքով սրբագործուած: Երկուքն ալ ապրեցան տարօրինակ և դժուարին տարիներ՝ երիտասարդ տառն՝ ժամանակին ճնշումին ներքև: Չարենց ժամանակէն կանուխ ողջակիզուեցաւ, Սարաֆեան ապրեցաւ իր հոգերով, չնայած ցաւով պիտի ըսէր. «Քերթող մըն եմ, որ չունիմ զիս կարդացող ժողովուրդ»: Իր հոգերը՝ ինք իր պարտքը կը նկատէր, այլ խօսքով՝ հարկը հոգեկան, զոր կը կարծէմ վճարած է իրաւ և սրտառուչ խոհականութեամբ: Բայց անբաւարարութեան գիտակցում մը ունէր, չհասկացուածութեան կիրք մը կը տանջէր զինքը: Ինծի այնպէս կը թուի, թէ անոր քերթողութիւնը կը մնայ անթափանց, ինքնափակ: Նոյնիսկ տառնին անուանած էին «ուղեղային բանաստեղծութիւն», «սահմանափակ զգայնութիւն» աւելին՝ յորջորջած էին... «անապագայ»: Բոլորովին այլ էր Չարենցի պարագան. ինչ որ «ժողովուրդի թշնամի» բանաստեղծի համար կեանք արժէ: Քանի որ «Չարենցը քար է մեր գրականութեան ճանապարհի վրայ, պետք է հեռացնել այդ քարը»: Ի դիմաց վիթխարի վաստակի՝ աժան զագրաբանութիւն...

Գիրք ճանապարհի, տեղատուութիւն և մակընթացութիւն. ասոնք հատորներու խորագրերը ըլլալէ զատ, խորունկ ոգեկոչումով կ'արտայայտեն, նախ անցած, փորձառալից ճամբայի խոհականութիւնն ու մտածման տիրական ըլլալը, և յետոյ, Սարաֆեանի պարագային,- ինչպէս Յարութիւն Քիրքճեան դիտել կուտայ. «Ճամբորդութենէն մը ուրեմն, կրկին դէպի ինքնութիւն: Ինքնացումն է ան, գոյաստեղծական բանաստեղծական կրկնարկ գործարկումը: Երբ որ տեղի կ'ունենայ Անտառին մէջ...»: Քիրքճեան «ճամբորդային» փոխաբերութեան համադրումը չի տարանջատէր իրական կամ հոգևոր ճամբորդութիւնէն: Սարաֆեան տեղ մը կը գրէ. «Ճամբորդութեան խենթ սէրէն առողջութիւնս անցաւ». ան Անտառի գոյաւորումի խորհուրդը կը դիտարկէ Անտառ-Կեանք խորապատկերի վրայ:

Ընդհանրական պատկերին ներսը անշուշտ կան ներքին վիճակ և ծորումներ յատկանշող ուրիշ վիճակ մը, թերևս սարաֆեանական մտավիճակ, ինչ որ Չարենցի պարագային հոգեկեցուածքի վերապահութեան յաւակնութիւն ունեցած է յայտնապէս. դժուար, անապրելի կեցութիւն մը Չարենցի համար:

Առանց կասկածի կրնանք ըսել, որ եթե Դանիել Վարուժանով արթնցաւ Չարենց, Սարաֆեան նորոգուեցաւ Վարուժանով: Իրենց անօրինակ նպաստովը անոնք տակաւին բովանդակային արժևորում չեն ստացած ու յայտնաբերելի ենթաշերտեր ունին, յատկապէս իրաւ հոգեբանական բանաստեղծներ ըլլալու հանգամանքովը: Բանաստեղծը երբ կ'ապրի իրականութիւնը՝ անձնականօրէն, գոհաբերութեան արուեստը բովանդակութեամբ և մտածմամբ կ'ընկալէ: Եւ կ'ըլլայ այդ ընկալման ու ըմբռնումի զոհը: Անոնք ասիկա բնագոյով կը հասկնային ու կ'ապրէին, և կ'անմահանան ինքնասնուցանող սնեռումով մը. Հայութիւնը այսպէս ապրած է իր մեծերու ճակատագրով, որ ազգը մեծութեան կը մղէ...

Չարենց ճաշակած «իմաստութեան դառնապատիւ պտուղը» չկրցաւ փախուստ տալ իրականութենէն՝ իրօրեայ, իբրև «անհաւատարիմ» և թշնամի տարր մը: Կրնայ առարկուիլ, բայց ինչպէս Անրի Պերգսոն կը վկայէ. «Ընդհանուր առմամբ իրականութիւնը կարգաւորուած է ճիշդ այն կերպ, որ կերպով ան կը բաւարարէ մեր մտածողութեանը: Այդ իսկ պատճառաւ կարգը առարկայական և ենթակայական գործերուն միջև եղած որոշեալ համաձայնութիւնն է՝ իրարու ընդմէջ՝ իրարու վերագտնող ոգին: Բայց ոգին ալ կրնայ շարժուիլ տարբեր /հակառակ/ ուղղութեամբ. կամ ալ այն կը հետևի իր բնական ուղղութեանը, զոր այս պարագային լարուած-շարժուն առաջընթաց մըն է, մշտագոյ ստեղծաբանութիւն»:

Չարենցի քերթողութիւնը ընդհանրապէս իրականութեան հետ բախումի արտայայտութիւնը պէտք է ըլլար, ինչ որ բնական է, անոր պէս վաղահաս և իրականութեան համար վտանգալարոյց մեծութեան մը համար: Չարենցի տառապանքը իրական խորութիւն և նաև բնագոյային պատճառներ ունէր: Այլ է Սարաֆեանի պարագան: «Սփիւռքի գրական ճաշակներու յեղաշրջումը», անոր համար ճակատագիր մըն էր: Իրմէն մեզի անցած քերթողութիւնը սովորական-բանաստեղծական հաղորդականութենէն անդին է և տակաւին կը շահագրգռէ մտածումի և պատկերներու նորարար ուժգնութեամբ՝ բացուած ապագային առջև: Կը խորհիմ այնքան ալ չարժևորուած և անբացայայտ. «Միայն Նիկողոս Սարաֆեանի քերթողութիւնն է, որ կ'ազատագրէ ինքզինքը ընկղմող նաւէն ու կը նետուի դէպի մտածումի և զգայնութեան նոր, արդիական սարահարթեր ու կիրճեր... Սարաֆեանի երկը... ան որևէ ազգականական կապ չունի գրական աւանդութեան հետ: Ոչ հայ, ոչ ալ օտար, զուտ ինքնեկ, անինքնութիւն, առանձին և արկածախրնդիր՝ Սփիւռքն է» /Վահէ Օշական/:

Արդ, Սփիւռքի պարագան, ըսել կ'ուզեմ «ապսիւրսոր, խուճապը, կեանքի անիմաստութիւնը այլևս ապրող, տառապեցնող թեմաներ չեն», որովհետև քաղաքակրթութիւնը և առողջ վերացականութիւնը քովէ քով կ'ապրին և Սարաֆեան, - կրնանք հաստատել, - իր պաշտպանութեան տակ կ'առնէր «սերունդի մը դառնութիւնը» և կ'ուզէր չհասկցուող Սփիւռքի խորացող անդունդին նկարագիրը պեղել, եթէ կ'ուզէ՝ փրկել կործանումէն ամէնէն առաջ և կը յաջողի, հոն, ուր շատեր իր սերունդէն պիտի վարանէին, ինք կը նետուէր իբրև «առաջնորդ ոգի»: Սարաֆեան Սփիւռքը կը բացայայտէ նաև «ոտանաւոր խաղալու» դէմ իր զօրաւոր մտածումով - պայքարով, այն ինչ Սփիւռքի իրողութիւնը բացապարգող էականութիւն մը պիտի ունենար, կ'անտեսէ բանաստեղծական հնոճ վիճակներու հրավառութեան թշուառութիւնը ու ամէնէն աւելի և ամէնէն առաջ կը տառապի: Տեղ մը կը գրէ. «Ամէն մարդ չի կրնար գիտակցութեան հասնիլ եթէ չունի անոր

հասնելու կարող միտքը: Նոյնպէս, ամէն ոք չի կրնար խորանալ իր մէջ և հասնիլ իր ներքին ճշմարտութեան: Հետևաբար, ոչ բանականութիւնը կրնայ ըլլալ ազատարար, ոչ ալ ենթագիտակցութիւնը, երբ անհատը օժտուած չէ ի ծնէ ներքին և արտաքին աշխարհը տեսնելու կարողութեամբ:

Սարաֆեան բնաւ չի ներկայացներ այնպիսի իրողութիւններ զորս յուսահատութենէն կու գան ու խորքին մէջ դառնութիւններ կը ծնին. միայն ճշմարտութիւնը զինքը կ'ապրեցնէ, բայց. «...եթէ տարակուսէին մարդիկ, պիտի ըմբռնէին թէ ոչ ոք իրաւունք ունի յոխորտալու իր ճշմարտութեամբ և ոտքի տակ առնելու ուրիշի մը սրբութիւնը: Ըշմարտութիւնները այլազան են ու անոնց ոչ մէկը վերջնական է»:

Ահա վասիկ, լայնընդգրկուն հայեացք մը՝ զոր կ'ընդարձակէ «տեսարանները, մարդիկ և ես»ի փորձառութեան շրջածիրը: Եւ «եսը» յաճախաբար «մենքի» կը վերածուի, ոչ երևակայական ու ճշմարտագերծ, այլ իրականութեան խորքին մէջ ոգեղինութիւն փնտռող, մանաւանդ, եթէ նկատի ունենաք սարաֆեանական՝ աշխարհին բացուելու սկզբունքը: Հսել կ'ուզեմ Սփիւռքն արժևորելու, «արմատ նետելու» «սերունդի մը մտածողական փորձընկալումը» /Մ. Նշանեան/:

Մեզի պէտք են հուններ միշտ, ըլլան անգամ պարտալիր:

Ազատութիւն, բարութիւն, երջանկութիւն: Կան, սակայն Յառաջացման մէջ՝ անոնք կը պայթին միշտ, միշտ ունայն, Յաւերժական են թէև, կան շարունակ, չեն փլիք:

Միշտ կը սկըսին թէ մեր մէջ, թէ աշխարհին մէջ համայն:

Բայց ու ը գտնել հուններն այդ, երբ ծնէր եմ գաղթական:

Անդաստական եմ եղեր: Մերժէր են զիս երկիրներ:

Ես լըբեր եմ երկիրներ՝ որ կ'ըլլային ապաստան:

Կանգ եմ առեր միայն հոն՝ ուր կրնայի ոգեկան

Լոյսէր առնել: Չեմ կրցեր հոն իսկ նետել արմատներ:

Հոս է ինքնադրստոր այն բացատրութիւնը զոր անձնականէ անդին է և կը պատկերէ ճշմարտութեան պատմութիւնը կամ պատմական ճշմարտութեան յետյեղեռնեան համապատկերին իրաւ, անգունազարդ էութիւնը:

Յաւելեալ ու անորոշ ազգայնացումի գեղագիտական օրինավիճակ,- ըսել կ'ուզեմ նաև վավերագրականութիւն չյանդուրժող Սարաֆեան անտեսած է այդ ըմբռնումը: Հետամուտ չէ եղած գիտակցելու անոր անհրաժեշտութիւնը, այդ իսկ պատճառաւ ընկալեալ հասկցած և արժևորած է Սփիւռքի գոյութենական խորհուրդը՝ հոգեվիճակներու և մտավիճակներու ընդգծեալ խորութեամբ:

Ինձի կը թուի Սարաֆեան ոչ զգացական մթնոլորտի մը մէջ,- սփիւռքեան պայմաններու թելադիր ոգեկոչումով, հայութիւնը կ'ապրի, ըլլայ քերթողութիւն, յօդուած, թէ արձակ մտածում՝ ի զին հայութիւնը ապրեցնելու՝ «Փինիկէն աւելի փինիկ է Հայը»:

А.А. АНДРАНИКЯН – Египте Чаренц – Никогос Сарафян – Одно очертание из глубин литературного образа. – В статье освещаются общие литературные стороны книг Е. Чаренца и Н. Сарафяна, особенно связанные со спасением армянского народа. В суровые годы 1930-ых Чаренц в Армении и Сарафян в Спюрке в своих произведениях главной задачей считали сохранение и самостоятельность нации и не теряли веру в его будущее.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈՒՅՁԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա.Ա. ՍԱՐՀԱՏՅԱՆ

Գուցե և շատերին այսօր հնացած ու հնաոճ, անգամ ձանձրալի ու հոգնեցնող կրկնություն թվա Մեծ հայրենականի թեման. Շա տ է խոսվել նրա մասին, շա տ է գրվել, բայց պատերազմական թեման ավարտված չէ: Ու քանի դեռ չի մարել պատերազմի վտանգը, և հայտնի չէ՝ դեռ քանի անգամ, երբ ու որտեղ նոր ռումբեր կպայթեն մոլորակի վրա, քանի դեռ նաև մեր սահմանների վրա կրակոցներից զոհեր ենք ունենում, պատերազմական թեման, ցավոք, կմնա որպես պատմության ու գրականության հավերժորեն արդիական թեման: Իսկ այդ թեմային գրականությունը արձագանքել ու շարունակում է արձագանքել հույզերի հորդացող հորձանքով, սիրո և ատելության խորհախորհուրդ նրբալեկեղումներով, հաստատման ու մերժման իրարամերժ, հախուռն զգացմունքներով...

1941-ին պայթած պատերազմի առաջին կրակոցների ու ականների պայթյունի հետ, մեռնող առաջին վիրավոր զինվորի խուլ հառաչանքի հետ, առաջին մահերի ու վերքերից ծորացող արյան առաջին կաթիլների հետ, առաջին սև թուղթն ստացած մոր, կնոջ ու սիրած աղջկա այրող արցունքների ու ցավ ու կսկիծի հետ ու նրանցից ծնվեցին Հայրենականի թեմաներով առաջին բանաստեղծությունները...

Դրանք սոսկ բանաստեղծություններ չէին՝ չափածոյի տաղաչափական կանոններով: Դրանք հոգու և սրտի խորքերից արձակված սիրո ու կարոտի արտահայտություններ էին, հեռվից արված խոստովանություններ, դրանք մեր ծերացած, մի բուռ դարձած մոր ու նորածին զավակի չափ փոքր սուրբ հողի հանդեպ հայրենաբաղձ ու հրայրքոտ տողեր էին, սիրո թախճաշաղախ շշուկ-մըրմունջներ, կյանքի ու մահվան, հույսի ու հուսահատության, թշնամու հանդեպ այրող ատելության ու վրեժի փոթորկումներ...

Ինչպես անվանի գրականագետ Հր. Թամրազյանն է ասում, ատելության ու սիրո բոցով էր բռնկված ողջ երկիրը, ու պատմության ոչ մի շրջանում զեղեցիկ գրականությունը իր վրա չէր վերցրել պարտքի այնպիսի ծանրություն, քաղաքացիական խղճի ու գործունեության այնպիսի վիթխարի բեռ, ինչպես այժմ: Արտատվող շիկացման հասած սիրո և ատելության գորեղ կիրքը սպառնալիքի ու տագնապների օրերին նորովի իմաստավորվեց հայրենի եզերքի, հող ու ջրի, ժողովուրդների եղբայրության ու հավատի հոգեբանական արձագանքներով:

/1. Տե՛ս Հր. Թամրազյան, Սովետական գրականության պատմություն, Ե., 1980, էջ 550:/

Հույզերի ի՛նչ հեղեղ կար հայրենիքի սիրո ներշնչանքով բանաստեղծ դարձած, կովող նորաթուխ զինվոր պատանիների ու երիտասարդների, ինչպես նաև թիկունքում մնացածների չափածո ու արձակ տողերում, այն եռանկյունաձև նամակներում, որոնք, թեև արդեն խունացած, կրծքին սեղմվելուց ու համբուրելուց

մաշված, բայց այսօր էլ պահպանվում են շատերի տներում ու պատմում այն ա-
հեղ օրերի մասին...

Հայրենականի առաջին իսկ պահերից ժողովրդական ինքնաբուխ ցասումը
հնչեց ահեղ ու ազդու խոսքի միջոցով, որ կրում էր այդ օրերի փոթորկոտ շունչը,
որ կովող զինվորին մղում էր սխրանքի, նրանց հոգիները պարուրում հույսի,
հաղթանակի հանդեպ հավատի բուռն զգացումներով: Հայրենականը առաջ բե-
րեց մտքի շիկացում, կրքերի բռնկում ու գորություն, բարձր խոհեր ու կենսափի-
լիսոփայություն, որ դռներ բացեց անկեղծ զգացումների համար, որոնք պիտի
դառնային բանաստեղծություններ, իսկ բանաստեղծությունը, ինչպես բանաձևել
են համաշխարհային գրական մտքի մեծերը, մարդկային գորության հայտնագոր-
ծությունն է բանաստեղծի մեջ: Պատերազմական շրջանի գրականության մեջ,
ինչպես գիտության մեջ է լինում, նոր գյուտեր չհայտնագործվեցին, հեղաշրջում-
ներ չեղան, պարզապես նորացավ ու թարմացավ գրականության բովանդակու-
թյունը, որ նոր, ավելի հուժկու և մարտաշունչ հնչեղություն ձեռք բերեց, ավելի
հզոր ու հուզազգացական շեշտեր ստացավ: Մարդկային ինչքա՞ն հույզեր ու
զգացումներ արթնացան մարդկանց սրտերում պատերազմի առաջին իսկ օրե-
րից. մի կողմից՝ թշնամու հանդեպ համազգային վրեժի, ցամառն ու ատելության,
ճակատ մեկնելու և թշնամուց հայրենի հողն ու հեռվում արցունքներից ծովացած
աչքերով թողած սիրելիներին պաշտպանելու անսասան կամքի ու ցանկության,
մյուս կողմից՝ թիկունքում մնացած հարազատների՝ որդուն, եղբորը, հորը, ա-
մուսնուն ու սիրած տղային ռազմադաշտում կորցնելու տագնապահարույց զգա-
ցումներ...

Փորձենք վերապրել այն հույզերը, որ ապրել են զինվորներն ու գրիչը որ-
պես զենք գործածած պոետները Մեծ հայրենականի ընթացքում... վերապրենք՝
գալիք բոլոր սերունդներին հիշեցնելով, որ ոչինչ ու ոչ ոքի չպետք է մոռանալ...

Եվ այսպես՝ պայթեց պատերազմը... Հնչեցին առաջին արձագանքները,
հնչեցին հենց հունիսի 22-ից.

Դու քաղցր ես, հող իմ հայրենի,

Չկա քեզնից պայծառ անուն,

Բայց վտանգի ահեղ ժամին,

Երբ սպառնում է թշնամին,

Դու ավելի ես քաղցրանում: /Ն. Զարյան/

Հնչեց Շիրազի «Էքսպրոսոր»՝ վեցտողանի մի բանաստեղծություն, որ իր
հակիրճությամբ հավերժ կանգուն լեռների ու անցողիկ չար հողմերի անգերա-
զանցելի համեմատությամբ ավելին էր ասում մեր ժողովրդի տոկունության, հա-
մառության ու հավերժության մասին, քան ծավալուն շատ ստեղծագործություն-
ներ:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ...

Իսկ թշնամին դաժան էր, ու նրա կործանարար ձեռքը դանթեական դժոխ-
քի էր վերածում քաղաքներ ու գյուղեր, ու չար կայծակի պես ճայթող սև լուրերից
արցունքներ էին լճանում, հառաչանք ու թախիծ, և թշնամու հանդեպ ցասումն ա-
վելի էր մեծանում...

Հայրենիքի զինվորներին հայրենասիրության ոգի ներարկելն ու լավատե-
սություն ներշնչելը բանաստեղծերի առաջին պարտքն էր, որ ռազմադաշտում ու

թիկունքում կատարում էին Հր. Հովհաննիսյանն ու Նաիրի Զարյանը, Համո Սահյանն ու Գուրգեն Բոբյանը, Միլվա կապուտիկյանն ու Գևորգ Էմինը և շատ ուրիշներ:

Հայրենականի օրերին գրված շատ բանաստեղծություններ շարքային զինվորների պես «ընկան» ռազմադաշտում, բայց նրանցից անմահները մինչ այսօր և հետայսու կշարունակեն իրենց հաղթական շքերթը...

Հայրենաշունչ բանաստեղծներից մեկը Գուրգեն Բոբյանն էր, որ գերմանական ֆաշիստների ուխտադրուժ հարձակումից մի քանի օր անց հնչեցրեց հայրենիքի սրբազան սահմանները պաշտպանող զինվորի երգումը.

Երդվում եմ մինչև շունչը իմ վերջին

Ես կմաքառեմ մեր հողի համար,

Որ արեգակը իմ երկրի լանջին

Կապի հաղթության ոսկեղեն կամար...

Ե՛վ 1941-ի հուլիսին լույս տեսած «Մարտիկի երգումը», և՛ 1942-ին հրատարակված «Կակե լեզվով» ժողովածուները հյուսված են մի զգացման առանցքի շուրջ՝ հայրենիքի սիրո, որ այս հողագնդում բարձր է ամեն ինչից: Եվ այդ սիրով այրվող բանաստեղծի հոգուց ռոտխի հանդեպ ցասկոտ վրեժի, նրան բնաջնջելու, հերոսաբար դեպի արևմուտք քշելու ոգեշունչ հորդոր է հնչում: Ու թեև սև խորշակը՝ վայրագ ու դաժան բորենու տեսքով, ավերում էր մեր ծաղկաշատ այգիները, բայց աներեր էր բանաստեղծի հավատը վաղվա օրվա հաղթանակի հանդեպ...

Հայրենիքի չքնաղ գեղեցկությունները, հայրենի լեռների կապույտն ու քաղցրակարկաչ պաղ աղբյուրները թշնամու հայացքից անգամ չպղծվելու համար, խենթ գետակների օրորը նորից լսելու, զարնան թովչանքն ու կապույտ գորգեր գործող մանուշակների բույրը նորից զգալու, կապույտ շորեր հագած սիրած աղջկան թշնամուց պաշտպանելու, նրան նորից տեսնելու, թշնամուն զարկելու և արիությամբ հերոսանալու համար կովի դաշտ գնաց Աշոտ Գրաշին՝ իր հետ տանելով նրանց կարոտը, որ հետո պիտի դառնար քնարական նուրբ մեղեդիների մի շարք:

Ձեզ կանաչ տեսա, հայրենի հանդեր,

Իմ հոգու հանդն էլ ձեզ պես կանաչեց,

Լսեցի ձեր երգը, հայրենի հավթեր,

Իմ հոգու հավթն էլ հովտում կանչեց...

Պատերազմն ավելի հարստացրեց նրա քնարը: Նա նոր երանգներով ու նորովի հնչեցրեց հայրենասիրական մոտիվը, ջերմաշունչ թրթիռներով կերտեց մոր կերպարը, կարևորեց ժողովուրդների հզոր բարեկամությունը:

Պատերազմական օրերի հուզագգացական արձագանքներն էին Միլվա Կապուտիկյանի բանաստեղծությունները: Զգայուն ու խորն է կնոջ հոգին, խորախորհուրդ ու հորդաբուխ են կանացի զգացումները, որում մեզ համոզում է հայ ժողովրդի տաղանդաշատ բանաստեղծուհի դուստրը: Նրան տեսնում ենք մեկ որպես ներքին տագնապներից հուզախռով մայր, մեկ որպես սիրող ու սպասող կին, տեսնում ենք մեկ բոլոր սգավորներին վշտակցելու ու սփռվելու պահին, մեկ հաղթանակի հավատի երգը շուրթին: Ահա նա, մանկան օրոցքի մոտ նստած, խաղաղ ու պայծառ օրեր է երագում իր որդու համար, որ նա մեծանար՝ ոչի՛նչ չիմացած այդ աղետավոր օրերի մասին: /«Կուզեի հիմա...» Բայց նրա օրոցքի վերև

արտույտի հեքիաթի փոխարեն շանթ է ճայթում՝ խռովելով նրա արդար քունը: Ոչինչ, թող որդին մեծանա չարին ու բարուն գիտակ, թող իր կաթի հետ աստելության հուրը խառնվի նրա արյանը, ու նա սովորի մանկուց ասել թշնամուն... /Իմ առաջին երգը տղայիս/

Փորձության այդ օրերին /«Փորձության օրերին»/ բանաստեղծուհին արցունք ուներ բոլորի համար՝ և՛ որդեկորույս սգավոր մայրերի, և՛ որբացած հարս ու աղջիկների համար.

...Երկիր իմ, ամեն շնչիդ ու քարիդ
Վիշտը թող կիսեմ, ամենքի հետ լամ,
Որ թեթև քայլես փորձության ուղիդ
Դեպի լեռնն ի վեր փառքի, հաղթության...

Նահանջի օրերին անգամ հաղթության հավատի հազարալույս ջահեր են վառվում նրա հոգում: /«Նահանջի օրեր»/ Կանացի կարոտաբաղձ ու անքեն հույզերի ու ապրումների հոգեբանական մի արտացոլանք, անկեղծ ու անպաճույճ մի խոստովանություն է «Նամակ դեպի ռազմաճակատ» բանաստեղծությունը: Գարուն է բացվել, երգ են կարկաչում աղբյուր ու վտակ, զարթնել են Աբովյանի ծառերը, բողբոջել: Ամեն ծառ ու քար սիրած տղային է հիշեցնում ու այն օրերը, երբ նա անհոգ ու անփույթ խաղում էր իր սրտի հետ և տագնապով ու խանդով լցնում իր անօգ սիրտը, խանդով դեպի մրցակցուհի այն աղջիկը, որը սիրելի է հիմա /Ա՛խ, չէ որ և նա՛ հիշեցնում է քեզ/: Այժմ անքեն է աղջկա հոգին, կարոտը տարել է խանդ ու նախանձ.

Բայց թող հրդեհվի՛ իմ սիրտը կրկին
Տազնապո՛վ, խանդո՛վ ու վշտով անանց,
Թող նրա՛ն սիրես, թող դավես դու ինձ,
Թող դու ինձ անհաս մի երագ մնաս,
Միայն հաղթությամբ դու տուն գաս կովից,
Իմ հեռավո ըրես, միայն ե՛տ դառնաս...

Իրեն սիրող տղային մերժելու համար աղջկա ուշացած զղջումի հոգեբանությունն է պատկերված «Զղջում» բանաստեղծության մեջ: Տղան քնքշորեն սիրել էր, Բայց աղջիկը պաղ ժպտացել էր նրա սիրո վրա և նրա խոսքերը համարել ձանձրույթ ամենօրյա: Բայց մի օր աղջկան ասում են, որ նա ռազմի դաշտում կռվել է քաջ զինվորի նման ու վերքը սրտում ընկել՝ օտար հողում գտնելով գերեզման: Բանաստեղծության հերոսուհին մեղքի ու զղջման զգացում է ապրում. հայրենիքի նահատակ զինվորը իր սիրտն ու ջահել կյանքը տվեց, իսկ ինքը զլացավ սիրո քնքուշ մի ժպիտ անգամ շռայլել ու հիմա կուզեր գտնել նրա կորած շիրիմը և զղջումի արցունքներ թափել նրա վրա...

Ուշագրավ ու ինքնատիպ ստեղծագործություն է «Կինը և մահը», որ ձոնված է ռազմաճակատի քույրերին ու սանիտարուհիներին: Մա խոհափիլիսոփայական մտորում է կյանքի, մահվան ու կնոջ մասին: Բանաստեղծուհին կնոջը համեմատում է հողի հետ, որ գարունների մայրն է, արեգակի հետ, որ իր գույքով գուրգուրում է բոլորին, քանի որ հողի պես բեղուն ու արևի պես բարի կնոջ մայրական կենսատու կրծքի տակ է ջերմանում կյանքի հունդը, ու նրա երկունքը սրբազան կոիվ ու մաքառում է մահվան դեմ: Հիմա մեր խնկաբույր դաշտերում շղթայագերծ մահը բարձրացրել է իր դժխեմ գերանդին: Բանաստեղծուհու հայացքն ու խոսքն ուղղված են ռազմադաշտի սանիտարուհիներին, որոնք քանի՛-

քանի՜ ջահել կյանքեր են խլել մահվան ճիրաններից: Ու թող հիմա նրանք կտրեն մահվան խավար ճամփան, ջահել վիրավոր զինվորների կրծքերից հանեն մահվան բոլոր նետերը, սրբեն նրանց վերքի արյունը.

Փա յլ տուր հանգչող աչքերին, դիր վերքերին բալասան,
Շունչդ կյա՛նք է բուրվառում, փոխ՛ր շունչդ որպես խունկ
Մեր դաշտերում արյունոտ, և թող մահը չարաշուք
Նահանջի փող հնչեցնի, թո՛ղ ծունկի գա վերստի՛ն,
Կի՛ն, փշրիր քո ոտքի տակ մահվան ահեղ գերանդին:

Այս բանաստեղծությունը մարտադաշտում և թիկունքում անձնագոհության ու արիության սխրանքներ գործած կանանց փառաբանություն է՝ գրված անկեղծ հիացումով ու գեղարվեստական հզոր շնչով...

Հերոսաբար կռվեցին խորհրդային անձայրածիր երկրի զինվոր զավակները, ու թեն անհամար էին գոհերը, ու արյուն հեղվեց գետի նման, բայց ի վերջո հաղթության դափնիներ վաստակեցին նրանք, ու սուրը դրվեց դափնիների վրա... Պատերազմի մահաբեր շունչը շատերի հետ զգաց նաև շնորհաշատ բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը և երկրի որդիների հետ գնաց պատերազմելու մոր ու քրոջ, կնոջ ու որդու և ամենքի ազատության համար... Ու պատերազմի ողջ ընթացքի մասնակից բանաստեղծը քարտեզագրեց իր բանաստեղծությունների գրության տարեթվերը, տեղանունները՝ իր ծանր ու հուսաշող խոհերի ու տրամադրությունների դրոշմով, որոնք հետո պիտի ամփոփեր «Սուրը դափնու վրա» ժողովածուում: Հենց 41-ի հունիսին գրվեց «Պատերազմ» փոթորկահույզ բանաստեղծությունը.

Պայթեց պատերազմը...

Մնաս բարև, սե՛ր իմ...

Սիրած աղջկան, ապա մորն ու հայրենի երկրին ուղղված հրաժեշտի հուզական տողերով է սկսվում բանաստեղծությունը, որոնց հաջորդում են հանուն հողի, հանուն կյանքի զենքը ձեռքին մարտ սլացող անվեհեր երիտասարդի՝ մարտական ոգու կրակոտ զգացումները.

Պայթեց պատերազմը...

Իմ հայրենի՛ երկիր,

Մու՛ր տուր, հու՛ր տուր դու ինձ և առաքիր ի մա՛րտ...

1941-ի հուլիսին գրած բանաստեղծությունը սկսվում է արդեն հանդարտված հույզերի՝ դիպուկ համեմատություններով հագեցած պատկերավոր նկարագրությամբ.

Սև հրդեհի պես սև թուխպը ամպի

Ելավ ու պատեց երկիրն ամենուր.

Աղավնին զգաց օդում ամպրոպի

Մահաբեր շունչը և սարսափը խուլ:

Սրան հաջորդում են միմյանց հրաժեշտ տվող հարազատների հորդորները՝ չտխրելու, շուտ-շուտ նամակ գրելու, իրար չմոռանալու և փառքով տուն վերադառնալու խոստումները:

Անափ կարոտ կա զինվոր բանաստեղծի սրտում, և նա բոլորի անունից հնչեցնում է մորմոքող կարոտի հուզաթաթավ երգը.

Ամպե՛ր, ձերմակ ամպե՛ր, որ չվում եք հարավ,

Կարոտներս տարեք հայրենի լեռներին,

Տարեք իմ աղջկան սիրտս սիրածարավ,

Տարեք համբույրներս իմ մոր խաժ աչքերին:

Անափ էր կարոտը, որ բույն էր դրել թե՛ մարտադաշտում կոժող զինվորների, թե՛ թիկունքում մնացածների հոգում: Եվ այդ կարոտի անգուգական արտահայտությունը եղավ Գեղամ Սարյանի սքանչելի կարոտերգը, որ հազարավորների շուրթերից պոկված թախծախոտով, կարոտի՝ այրելու չափ շիկացած զգացումների պոռթկում է, որը բառերից չի հյուսված, այլ խազերից, նոտաներից, որը սեր է, մրմուռ, պարզապես մեղեդի, երգ, որ չես կարողանում կարդալ, այլ երգում ես ինքդ քեզ, քեզ համար, կարոտի ու տխրության պահերին...

Թռչելի մտքով տուն,

Ուր իմ մայրն է արթուն...

Ո՛վ գիտի, գուցե մի օր կվերանա պատերազմի վտանգը, կհնանան ռազմի ու խիզախման երգերը՝ մնալով որպես անվերադարձ անցած օրերի հուշ, բայց հավերժորեն կհնչեն սիրո ու կարոտի երգերը՝ որպես մարդկային ապրումների մեջ ամենանորոգը, ամենաթանկն ու նվիրականը, ամենահզորն ու հավերժականը...

Մեծ հայրենականի պոետ զինվորը դաձավ նաև Գևորգ Էմինը: 1941-ի հունիսի 22-ին հնչեց նրա մարտաշունչ, պատկերավոր բանաձևումը՝

Նրանք ուզում են սպանել Վա՛ղը,

Ձնջել մեր անցյա՛լն ու մեր սե՛րմը նոր,

Խաղաղ երեկվա արյունոտ խա՛ղը,

Որ ավարտվել էր եղեռնի գնով...

Գևորգ Էմինի բանաստեղծությունները ահագանգ էին ու երդում, ռազմակոչ էին ու կիսավարտ հեքիաթներ՝ զոհված անհայտ զինվորի և դեռ հարս չեղած այրի աղջկա մասին, սգավոր կնոջ ու ցատումը սրտում խիզախ տղայի մասին, գրված ու չգրված նամակների մասին, տանկի տակ ջարդված պատանի ջութակահարի մասին, մարտի գնացող բանաստեղծի մասին, որ մահին հաղթած՝ գուցե վերադառնար կոնատ կամ կույր, բայց մահին հաղթած... Եվզենի Եվտուշենկոն մի պատկերավոր համեմատություն ունի. «Հուլիսի անջատված միտքը թառամու մ ու մեռնու մ է, ինչպես ճյուղից պոկված տերևը...», իսկ Էմինի այս շարքի երգերում զգայուն հոգու անկեղծ ու նվիրական խորունկ հույզեր ու համամարդկային ապրումներ կան՝ խորունկ մտքերին համահունչ... Բանաստեղծը խոր ընդհանրացումներ է կատարում՝ տրամաբանական կապ տեսնելով այս պատերազմի և ընդամենը երկուսուկես տասնամյակ առաջ կատարված արյունոտ սպանդի մեջ: Բանաստեղծություններից մեկում՝ «Գիտես՝ ով է գալիս, մայրի՛կ», հեղինակը նոր շեշտերով է արդարացնում իր կոժիվ մեկնելը՝ արտաավոդ մոր հիշողության մեջ արթնացնելով եղեռնի պատկերները, որ դարձյալ նույն այս թշնամին էր հրահրել, այսինքն՝ նա, ով 14 թվին մոր նշանված եղբորը տարավ գերի, ով Էնվերին «քը ս-քը ս» տված՝ ուզում էր հայոց հողն ավերել ու կարողացավ յանիչերի ձեռքով արյան ծով դարձնել երկիրը, ով կազմակերպեց սև ջարդը Տեր-Ջորի անապատում...

Մահով են չափում փառքի մեծությունը, մարտում են փորձվում հայրենասեր ոգիները, և նրանց վերքերի արյամբ են ներկվում հաղթության դրոշները բոլոր ժամանակներում... Ու նրանց արյան ու կյանքի գնով կյանքը փրկվեց մահից,

եկավ հաղթանակի լուսաբացը, եկավ ցանկալի խաղաղությունն ավետող Մայիսի 9-ը...

А.А. САРГАТЯН – *Отражение человеческих эмоций в поэзии периода Великой Отечественной войны.* – С первыми залпами орудий и первыми взрывами бомб родились стихи, в которых достигли необычайного накала чувства любви и ненависти, по-новому были осмыслены психологические отзвуки родных краев, земли и воды, братства и непоколебимой веры в победу.

В статье краткими ссылками дано отражение человеческих эмоций, которые зарождались с первых дней войны в лирике Н. Зарьяна, Ов. Шираза, А. Сагияна и С. Капутикян.

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ԿՅԱՆՔԸ ԿՐԱԿԻ ՏԱԿ» ՎԵՊՈՒՄ

Ա.Ա. ԱՂԱՄՅԱՆ

«Ծավալվում է և սաստկանում համաշխարհային մրրիկը, երկիրը փախչել է ուզում տեղից, հազարավոր հրանոթների որոտներից, միլիոնավոր բանակների ոտնադոպերից: Ամբողջ լուսավոր մարդկությունը կանգնած է երկընտրանքի առաջ՝ կա՛մ մարդկային կյանք, կա՛մ մահ:Մենք ներկա ենք այս բռնաբասի մի այնպիսի ճակատամարտի, որի նմանը չի տեսել և չէր կարող երևակայել հին պատերազմների պատմությունը...¹²¹»:

1943-ի հունվարին «Սովետական գրականություն» ամսագրում տպագրված այս տողերի հեղինակը Դ. Դեմիրճյանն էր:

Մեկ տարի անց՝ 1944 թ. դեկտեմբերին, երբ պատերազմական տարիների ընդհատումից հետո սկսեց վերահրատարակվել «Գրական թերթը», վերածնվող թերթի 1-ին համարում լույս տեսավ Դեմիրճյանի հերթական հոդվածը՝ «Նոր Էպոխա, նոր գրականություն» վերտառությամբ: Մեծ հայրենականի ահեղ հորձանուտին սրտի թրթիռով և անհանգիստ գրչով արձագանքող մեծանուն գրողը խորհում էր ժամանակի գրականության նորահայտ միտումների և զարգացման հնարավոր հեռանկարների մասին. «Հայրենական պատերազմը տվեց գրականություն, ճիշտը՝ սկսեց նոր գրականությունը: Կյանքի և մահվան, արյան և ծաղիկների միջով անցած նոր մարդը իմաստավորվեց, իմաստավորվեց կյանքը մեծ խորությամբ: Այդ գրականությունը կվերադառնա ռազմաճակատից և կկատարի թարմ հովի դեր¹²²»:

Իսկ պատերազմի ավարտից հետո՝ 1946 թ. սեպտեմբերին, Հայաստանի սովետական գրողների 2-րդ համագումարում գրողը հանդես եկավ ուշագրավ մի զեկուցմամբ, որտեղ վերաբժարվում և ընդլայնում էր վերոնշյալ հարցի շուրջ իր մտորումները: Դեմիրճյանի համոզմամբ՝ «պատերազմյան ալիքները շրջապատեցին մեր գրողներին բուռն թափով:Նա՝ պատերազմը, մեծապես կոնկրետացրեց ստեղծագործությունը¹²³»:

Տեսաբան Դեմիրճյանը միաժամանակ հանդիպադրում և յուրովի էր արժեվորում «թիկունքային գրող» և «ճակատային գրող» հասկացությունները: Կարծր միջնապատ չբարձրացնելով այս երկու տարբերակումների միջև, իբրև հակակշիռ եզրեր ընդունելով ականատեսությունն ու հեռակայությունը՝ Դեմիրճյանը, այնուամենայնիվ, հիմնավորվող տարբերություն էր տեսնում վերոնշյալ սահմանումների միջև: Նա մասնավորապես գրում էր. «Ճակատայիններն ավելի գրագետ էին ռազմական տեխնոլոգիայի և ռազմական կյանքի մարդկանց գոնե արտաքին հարաբերության հարցերում. նրանց գրվածքներում այսպես թե այնպես

¹²¹ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 12, Հոդվածներ, Եր., 1985, էջ 287:

¹²² Նույն տեղում, էջ 358:

¹²³ Նույն տեղում, էջ 377-378:

պատերազմի մարդն ու դեպքերը ավելի կենդանի ու բնական էին, քան՝ թիկունքային գրողի՝ ճակատային կյանքից գրվածքում¹²⁴։

Հիրավի, հետպատերազմյան շրջանի նորընծայող գրականության ինքնատիպ դեմքերից մեկի՝ Մ. Սարգսյանի ստեղծագործությունը հաստատեց գրող-քննադատի այս տեսությունը։ Իր հանրահայտ գործերում՝ «Կյանքը կրակի տակ», «Ճակատագրով դատապարտվածներ», «Մերժանտ Կարո», «Չմակարդվող արյուն», գրողը բացահայտեց պատերազմի ծանր ու դաժան ճշմարտությունը, մարդկային կորսված երազների, չիրականացած տենչերի և պատերազմի ծնած սարսափների ողբերգականությունը։ Պատերազմը չարագույժ հավասարության նշանով համագուգակցեց կյանքի և մահվան սահմանները, մեծն Թումանյանի խոսքերով ասած, «ազատ ու անպասպորտ» դարձրեց կյանքից դեպի մահ ժամանակավրեպ անցումը։

Չէր սխալվում Դեմիրճյանը. այլ էր պատերազմը անհիմն երևակայողի և միանգամայն այլ՝ պատերազմի մասնակցի պատկերմամբ։ Մ. Սարգսյանի՝ «Կյանքը կրակի տակ» վեպը ոչ միայն պատերազմական արհավիրքներին ականատես զինվորի օրագրային գրառումների մի փունջ է, այլև մարտնչող, բայց զգացող հոգու հուզիչ երկխոսություն՝ կյանքի և այդ կյանքն ահաբեկող մահվան հետ. դա միաժամանակ լուռ մենախոսություն է՝ սեփական սրտի, նրա գաղտուկ մորմոքների ու կամակոր հույսերի հետ։

Կյանքի և մահվան մշտնջենական պայքարն անհամեմատ բուռն է ծավալվում կենսակործան և մահասփյուռ չարիքի՝ պատերազմի ժամանակ, երբ տարբեր ռազմադաշտերում մոլեգնում է պատերազմի խորշակը, իսկ արկերի պայթյունները խեղդում են վտանգված խաղաղության ճիչը։

Պատերազմը մոլեգնում է նաև պատանի զինվորի հուշատետրում և դեռ երկար կփոթորկվի տարեց զինվորի հիշողություններում։ Տարիներ են անցել, բայց անգոր են եղել սրբելու սրտի արցունքները, ցավն ու հավիտենական մորմոքը։ Ահա և տարիների մեծ ընդհանրացումը, ավելի ճիշտ՝ վերջն իբրև սկիզբ. «Վերքերն արդեն սպիացել են, սակայն սիրտը դեռևս չի մոռացել ոչ պատերազմի արհավիրքները և ոչ էլ նրանց, ովքեր ընկան... Սիրտը չի ապաքինվել. սիրտն անբուժելի է։ ...Վաղուց սպիացել են իմ վերքերը, իսկ սիրտս դեռ շարունակում է տնքալ. իսկ երբ սիրտն է տնքում, ցավում են նաև սպիացած վերքերը¹²⁵»։

Մինչդեռ կար ժամանակ, երբ ռազմաճակատի սարսափներին անձանոթ այդ սիրտը, 18-ամյա պատանու սիրտը ապրում էր միմիայն երազներով, սիրած աղջիկների ծպտուն հայացքով։ Նորակոչիկների համար կյանքը դեռ սոսկ սեր էր, պատրանք ու գույների կանչող եթերախաղ։ Երազների բույրով արբեցած պատանիների համար կյանքն ամեն ինչ է, բայց՝ ոչ մահ. «Գնում ենք ռազմաճակատ, սակայն 18-19 տ. նորընծա սպաները երագում են ապագայի, կյանքի, սիրո մասին, բայց մահվան մասին՝ երբեք»(187)։ Քիչ ժամանակ կպահանջվի՝ ըմբռնելու համար չարագույժ հարցի ողջ նենգությունը. «Իսկ ֆրոնտում ո՞վ պիտի գոհվի, հը՞... »։

¹²⁴ Նույն տեղում, էջ 380։

¹²⁵ Մ. Սարգսյան, Հնտիր երկեր երկու հատորով, հ. 1, Եր., 1988, էջ 161։ Այս հատորից կատարված մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ, կնշվի միայն էջը։

Տանկերի հրանոթների՝ պարզ ու զիշատիչ լռությամբ նայող մութ երախեն-
քով մահը շնչում է առաջին անգամ մարտադաշտ ոտք դրած պատանու ական-
ջին. «Արյուն է պետք, ախպե՛րս, ձեզ նման ջահելների, առաջին կարգի արյուն...»:

Կյանքի գարունն ապրող զգայուն սրտի համար, սակայն, կյանքի խոր-
հուրդն անհամեմատ պայծառ ու որոշ է, մահվան տեսիլը՝ տարտամ ու անձև: Եվ
զինվորը փորձում է անտեսել այդ բառը, պայքարել և ապրել ոչ միայն զենքով,
այլև կենսասիրությամբ ու հավատով. «Դուր չի գալիս այդ զոհվել բառը: Ինչու՞
զոհվել, երբ աշխարհն այնքան լավ է, երբ կան Նազիկն ու Նոնոն, երբ ես ջահել
եմ. «կանաչ-կարմիր», ինչպես ասում էր տատս: «Կլոպեմ մահի դեմ, թշնամու
դեմ. չե՞ որ զինված եմ ոչ միայն զենքով, այլև սիրով, կյանքով, երագով, «կանաչ-
կարմիրով»... Կմեռնեմ, բայց չեմ զոհվի...»(188):

Վեպի առաջին իսկ էջերից երևում է Մ. Սարգսյանի գրչի զարմանալի
հատկությունը: Ներկայացվող թեման ինքնին ծանր ու բազմալար է, կյանք-մահ
առնչությունն առհասարակ խոր կենսաճանաչողությամբ հիմնավորված ասելիք
է ենթադրում, և ամեն ստեղծագործող չէ, որ գտնում է ձևի ու բովանդակության
ճիշտ համադրությունը: Դարձյալ հիշենք Դեմիրճյանին. «Երիտասարդ գրողը պի-
տի որոնի և ամենից շատ գտնի իրեն, իր ապրածը, իր մտածածը, իր գտած ձևերը:
Դա ամենադժվար բանն է: ...Ապա և դժվար է գտնել իր այդ ապրածի, երևակա-
յածի պատկերացման ճշմարտացի ձևերը, խոսքը, ոճը և այլն¹²⁶»:

Մ. Սարգսյանը գտավ այդ ձևը. ճիշտ խոսքարվեստի տաք գույներով պատ-
կերեց անհրաժեշտ բովանդակությունը:

Կյանքի և մահվան թևակցումն այլ ընթացք է տալիս առաջին անգամ ռազ-
մադաշտում հայտնված 19-ամյա զինվորի խոհերին. կանաչ արտերի մեջ վառվող
կակաչների ու հրեղեն լեզվով սիրած աղջկա ոտնահետքերը համբուրող արևի
փոխարեն նրան արյուն է մեկ այլ ջերմություն. նա զգում է ռազմաճակատի տաք
շնչառությունը. «Այ թե ինչպիսին ես դու, պատերազմ»:

Սկսվում է առաջին գրոհը, առաջին գրոհը զինվորի կյանքում. պատե-
րազմը բացում է իր վավաշոտ գիրկը՝ խառնշտելով կյանքի ու մահվան տիրույթ-
ները: Տեղի է ունեցել նաև առաջին «ծանոթությունը», դժողակ ու ակամա «ծանո-
թությունը» մահվան հետ. «Մահը քայլում է ռազմադաշտի վրա՝ կաղկանձելով,
պայթելով, դարանելով անզգույշին, սակայն նրա վրա ուշադրություն դարձնող,
բանի տեղ դնող չկա... կորցրել է զինը, էժանացել...»(192):

Եվ, այնուամենայնիվ, դժվար է հաշտվել այն մյուսի՝ կյանքի մշտական
հակառակորդի հետ, դժվար և տանջալից է անգամ այն դեպքում, եթե սպանվողը
թշնամի է՝ գերմանացի... Անմիտ ու անէական է թվում արդեն այն միտքը, թե ով
է մահ սփռում՝ իրե՞նք, թե՞ թշնամին, ով է պաշտպանվում, և ով՝ հարձակվում...
Ահա նա՝ 20-22-ամյա գերմանացի սպան՝ գեղեցկադեմ ու գլխաբաց, լայն ճակա-
տին թափված գանգուրներով, գնդակահարվեց իրենց իսկ ձեռքով. ահով էր նա-
յում մահվան աչքերին. շրջել էր գլուխը... Բայց մա՛հն անգամ անգոր է խլելու գե-
ղեցկությունը, կենսագրկվա՞ծ գեղեցկությունը, և դա սրտի խուլ ցավով է խոստո-
վանում կյանքի թրթիռը նրա կրծքից խլած ռուս զինվորը. «Գեղեցիկ է անիծ-
վածը», կամ՝ «Գեղեցիկն է շանորդին»... Զարմանալի և ողբերգական հակասու-
թյուն՝ մտքի ու գործի... Կյանքն ու մահը ազգություն ու պետական սահմանազը-

¹²⁶ Դ. Դեմիրճյան, հ. 12, էջ 359:

ծեր չեն ճանաչում. այստեղ կարևոր չէ այն, թե ով է սպանվել. ողբերգականը մեկն է. կյանքի մի ծաղիկ ևս տրորվեց՝ կապուտաչյա ու գանգրահեր, թո՛ղ որ օտար, թշնամական ժպիտով... Կյա՛նքը, կյանքում գեղեցիկն ավերվեց, իսկ նա ռուս և գերմանացի չի ճանաչում: «Ես տեսա, թե ինչպես են սպանում մարդուն, տեսա ամենազարհուրելին...», - խռովված սրտով կգրի զինվորը՝ ավտոմատի խզակոթը գրասեղան դարձրած, հոգեվարքի հասած քիմիական մատիտն իբրև գրիչ օգտագործելով... Չի ուշանա և ընկերական մեղմ հանդիմանանքը. «Փափուկ սիրտ ունեք», մինչդեռ սիրտը դժվար է ընտելանում ճակատի օրենքներին. «Լսի՛ր բանականությանը, սիրելի՛ս, ապա թե ոչ, մենք կկռվենք քեզ հետ և գուցե խռովենք...»(202):

Ջրե օղակով շղթայված՝ հրաշքներ են գործում մարտիկները. հերոսաբար կռվում ու զոհվում է ամբողջ գունդը: Մահվան բերանից ճողոպրած մարտական ընկերն արցունքն աչքերին է պատմում աննախադեպ անձնագոհության մասին. «Սաեւ գրագ էին եկել մահվան հետ, թե ո՞վ կհաղթի, և քշում էին ուղիղ նրա վրա: Նռնակների խրճերը գոտիներից կապած՝ նետվում էին տանկերի անվաթթթուրների տակ, պայթում նրանց հետ միասին... Ջարդվելով ջարդեցին, սպանվելով սպանեցին... Մի ժամում՝ երեք հազար... Խելագարվելու բան է, չէ՞... Երեք հազար հայացքով նայում էին այս սիրելի աշխարհին, երեք հազար սրտով սիրում և երեք հազար հոգով էլ առանց տատանվելու նետվեցին մահվան բերանը՝ կյանքի սիրուն»(209-210):

Տեղում է կրակը դիրքերում, մարդկանց վրա, բայց տեղում է և սիրո կրակը, կյանքի կրակը, արբեցման կրակը: Նույնիսկ մահվան մերձավորությունը չի կասեցնում կյանքի բնատուր օրենքների ու բնագեղ պահանջների ընթացքը. «Պատուհանի առջև արևով հարբած մի գարուն, գարունով հարբած մի այգի և սիրով հարբած մի ուկրաինացի ավագ լեյտենանտ բակում սիրաբանում է շտաբի խոհարարուհու՝ կարմրաթուշիկ ու սիրուն Մարուսյայի հետ...»(214):

Անտեսելով մահվան շուքը՝ աշխույժ ու ջահել կապավոր Մերգելը դուրս է գալիս խրամատներից՝ ձնծաղիկներ փնջելու, որ առատորեն ցողված են շուրջբոլորը: Հավաքած ծաղիկները նամակով ուղարկում է սիրած աղջկան... Այս անգամ կարծես մահը մեծահոգաբար ներեց նրա հանդգնությունը, բայց՝ յուրովի՝ մի քանի օր էլ բախշելով նրան: Ջոհվում է նաև կյանքի ա՛յս մի սիրահարը, իսկ մարտական ընկերոջ համար ձնծաղիկների սիրերգությունը վերածվում է մահերգության, դաժան մղձավանջի. «Ամբողջ գիշեր ես տեսնում էի արյունոտված ու տրորված ձնծաղիկներ: Մի անտեր եռածալ նամակ պատվում էր խրամատների վրա և չէր գտնում հասցեատիրոջը: Նամակը լավիս էր և խրամատների վրա կայթում ձնծաղիկ արյունոտ թերթե՛ր, թերթե՛ր...»(245):

Մ. Սարգսյանը նուրբ դիտողականությամբ է բացահայտում ֆաշիզմի դեմ պայքարող ու սպանող երիտասարդ զինվորի հուզապրումները, ռազմաճակատային խոհերը: 19-ամյա պատանին հստակ գիտակցում է սպանել բառի բազմիմաստությունը. «Այո՛, այստեղ թշնամիները սպանում են իրար, սպանում են ես էլ, սակայն մարդասպանությունը իմ արհեստը չէ: Ինձ սպանության չի մղում նաև ինքնապաշտպանական բնագոր, ո՛չ: Ամենազգայուն և մեծ զգացմունքը՝ հայրենասիրություն, այստեղ միանում է պարտականության անողորձության հետ և բարձրացնում է ձեռքդ թշնամու վրա: Բայց սպանելով սպանողին՝ ես կռվում

եմ սպանելու դեմ և երբեք սպանելու համար: Ահա այս է իմ և թշնամու տարբերությունը»(221):

Հեղինակն ականատես-մարտիկի սթափ հուզմունքով, բայց և հուզիչ հպարտությամբ է վիպերգում ընկնող քաջամարտիկներին և, ինչպես միշտ, իր բնութագրումներում ուրույն և ինքնօրինակ է. «Նա ընկավ, երբ արդեն մեռած էր: Հերոսները մեռնում են ընկնելուց առաջ...»(239): Կամ ահա հերոսության սարգըսանական բանաձևը. «Սպանելով չեն հերոսանում: Հերոսանում են կովելով»:

Ռազմաճակատային սարսափները բախտի դառն քմահաճությամբ ասես թափվում են առատության սև եղջյուրից՝ ավելի ու ավելի մտայնելով ականատես զինվորի հայացքը: Ահա գարնան գորովի ներքո ծաղկում է նորատի մի սեր, որ երևի... մի օրական է... Ծառերի դալար անտառում դողանջում է գեղեցկուհու արծաթ ծիծաղը. նա փորձում է խույս տալ բալենու ծաղկազարդ ճյուղով զինավորված երիտասարդ լեյտենանտի հետապնդումից, բայց ոռնում են հանկարծահայտ ֆաշիստական ականակիրները, պայթում են ականները, և լեյտենանտ Բորիսովը Դուայայի կենդանի, խաղուն իրանը գրկելու փոխարեն գրկում է նրա անշնչացած, արնաթաթավ մարմինը... Թափվում են բալենու ծաղկաթերթերը արցունքների նման, վիրավորվում է գարունը, սպանվում է մի լավ երգ... Սա պատերազմի անողոր ծամածռություններից մեկն է՝ խելակորույս ու լրբենի քրքիջը՝ նետված կյանքի ծաղկուն երեսին. «Պատերազմը: Նա կրոնավորի անսրբություն և ավագակի դաժանություն ունի... Պատերազմի բնավորությունը դուրս է ամեն մարդկայինից, նա մարդկության ոչ մարդկային ծնունդ է»(294): Եվ զինվորը հանգում է այն մտքին, թե աշխարհը պատերազմի հիվանդությունից բժշկելու համար անհրաժեշտ է վիրահատել այդ խոցը. վիրաբույժը խորհրդային զինվորն է, բայց ի՞նչ անել, երբ այդ վիրաբույժն ինքը կարոտ է բժշկի՝ վիրավոր սիրտն ու աղճատված հոգին բուժելու համար: Ի՞նչ անել, երբ կա ներքին ու անտես մի վախ, թե մահվան ու ատելության տարիները կսպանեն սիրտ քնքշանքն այդ բեկված սրտում, թե սերը կրակի բաժին կդառնա, կխանձվի վառողից, կձգվի տանկի անվաթրթուրների տակ: Այդ ժամանակ ահա վրա կհասնի իսկական ու վերջնական մահը՝ սրտի մահացումը, հետևաբար՝ կյանքի մահացումը:

Զոհվում է ևս մի ընկեր՝ Մանիկի սիրով բաբախուն մի սիրտ. նա խոստացել էր, որ տուն վերադառնալու դեպքում այլ ձևով պիտի ապրի: Նա արդեն սկսել էր ըմբռնել փութանցիկ կյանքի մեծ ու հուզիչ խորհուրդը: Օնիկը պիտի ապրեր ավելի լավ, թեթև ու գեղեցիկ կյանքով, որը կբացառեր ու կմոռացներ ապրած սարսափները: Բայց... չվերադարձավ, չապրեց:

Մահը հազար բերանով լափում է ռազմադաշտը, խայթում մարտիկներին, խոցում, իսկ նրա «ողջագուրումից» մազապուրծ երջանիկները՝ ռուս թե հայ, վաղանցիկ քնի անհանգիստ պարույրներում տեսնում են միշտ միևնույն երազը. տարբեր են միայն անունները: Ռուս զինվորը թևանցուկ է արել հարսանեկան զգեստով պարուրված Նյուտային՝ հարևանի աղջկան, եռաձի սահնակը թոցնում է նրանց անտառի միջով. ձյունը ծառերի վրայից թափվում է ծաղիկների պես, դողանջում են ձիասարքի զանգակները, իսկ Նյուտան ժպտում է ու լռում...

Մյուս դեպքում՝ մահվանն ընդառաջ վազող հայ զինվորը վերջին շնչում տեսնում է հայրենի եզերքը: Հարազատ Հարսնաղբյուրը վերջին անգամ հարսանեկան երգեր է երգում նրա հոգում, իսկ Անահիտ անունով նազելի հայուհին, հարսանեկան շորերով, մասբենու սպիտակ ծաղիկներից հյուսած պսակը գլխին, ծիծաղելով մի քանի ափ ջուր է ցանում նրա վրա...

Պատկերելով պատերազմի մաղձոտ թոհուրոհը՝ Մ. Սարգսյանն իրատեսորեն կերպավորում է բնությունը՝ հոգեբանական նրբանուրբ պատկերներն ասեղնագործելու համար: Գարուն է, մայիս... «Քարակ շամանդաղը քողի պես չոքել է դաշտի վրա՝ կանաչին խառնելով իր կապտագույնը: Արևը թավալվում է դաշտում, մարտիկների սրտերում, թռչունները լողանում են նրա ոսկե բոցերի մեջ և փառաբանում աշխարհը: Բու մ... Թշնամական հրետանին սկսում է իր հարձակումը... արևի վրա՝ խլելով թռչունների երգի իրավունքը և խեղդելով լուսաբացի խաղաղությունը»(233): Իսկ գիշերային գետանցի դրվագում, երբ թշնամու կրակահերթը բազում մատաղ կյանքեր է ջրասույզ անում, հեղինակն անձնավորում է լուսնին՝ իբրև մեռնող զինվորի հոգեկից եղբայր. «Ուշ երեկո. վիրավոր լուսինը խեղդվում է Դնեպրի ջրերում հայրենասեր զինվորի նման: Խեղդվում է, բայց նրա մահով գեղեցկանում են Դնեպրը, աշխարհը»(278):

Դնեպրի ծառացած ջրերի ցուլերից հյուսված ծիածանը ժպտում է խեղդվող զինվորին՝ «պոռնիկի թովիչ ու կործանարար ժպիտով»: Եվ մահվան հետ գիրկընդխառն գոտեմարտող զինվորը կյանքում թերևս առաջին անգամ նրան նայում է ատելությամբ՝ իբրև մահվան ծաղրաշուրթ սուրհանդակի... Գերող անմիջականությամբ է թաթախուն այդ պատկերը. «Ծիածանի տակից անցնող տղան աղջիկ կդառնա, աղջիկը՝ տղա», - հիշում եմ տատիս: Պետք է փորձել, թեև նա խաղաղության, իսկ սա մահվան ծիածան է: Նա գեղեցիկ մի սուտ՝ տղա կամ աղջիկ, սա՝ ահեղ ճշմարտություն՝ մահ կամ կյանք»(278):

Մի քանի սերունդ միախառնվեց ռազմի ահեղ դաշտերում. ահել ու ջահել մոռացան իրենց կենսափորձի ու ապրած-չապրածի տարբերությունը, դարձան հասակակիցներ: Պատերազմը որոշեց նրանց տարիքը. ահա պատերազմի վերջին սերունդը՝ 26 թվականի ծաղիկները: Պարզ ու սրտառույզ գործվով է Սարգսյանը խոսում նրանց մասին. «Հետո ձայթեց կարմիր հրթիռը, և 26 թվականը բարձրացավ գրոհի: Ջահել են, ո՛չ ահ ունեն, ո՛չ սարսափ: Բայց անզգույշ են: Դեռևս չառնականացած, բարակ ձայնով «ուռռա» են գոչում և նետվում առաջ՝ խաչաձև կրակի տակ: Գերազանց հարձակում է, բայց թափվում են կարկտահար հասկերի նման: Մղկտում է սիրտս, ես վազում եմ դեպի շրթաները:

–Զգույշ, խելառեն՝ր... Այդպես չի կարելի»(323):

Թվում է՝ վերջ, մարեցին, ասույի պես հալվեցին մահվան դաշտում՝ իբրև իրենց մատաղ սխրանքի վերջին վկայություն թողնելով ֆաշիստական այրվող տանկերը, բայց... «Հետո հաղթական 26 թվականն աղմուկ-աղաղակով լցվում է թշնամու պաշտպանության խորքը»(324):

Այսպիսին է մահու և կյանքի դաժան փիլիսոփայությունը. թեև մահը ֆաշիստի կերպարանքով սպասում է ջահել զինվորին, որ «մաքրի իր հաշիվները նրա հետ», թեև խլում է այդ կյանքը, թեև կա ներքին մի կսկիծ, թե կմակարդվի, կսևանա այդ թանկագին արյունը, բայց հեղինակը բուժքույր Զոյայի շուրթերով ճշում է մահվան երեսին. «Ո՛չ, երբեք, երբեք, 20-ամյա լեյտենանտի արյունը չմեռնող, չմակարդվող արյուն է, այս արյունը մնալու է միշտ կենդանի, միշտ շրջանառության մեջ...»¹²⁷:

Վեպում մահվան առջև չընկրկող, նորաբաց կյանքի խորհուրդն է լուսավառում պատերազմի խառնարանում ծնված մանկան ճիշդ: Նա սովետական գորամասերի հետ նահանջում է կրակների միջով: Շարունակվում է կյանքի և մա-

¹²⁷ Մ. Սարգսյան, Զմակարդվող արյուն, Եր., 1985, էջ 468:

հու գոտեմարտը. պայթյունների որոտը հարձակվում է նորածնի ճիչի վրա: Նը-
րանց միջև ծավալվում է մենամարտ, բայց արկերի ձայնը անգոր է լռեցնելու
կյանքի ճիչը: Մանկան փոքրիկ բարուրը փրկելու համար որքանում են մի քանի
օրորոց ու բարուր: Ու վերահաստատվելով թշնամուց մաքրված տանը՝ մանկիկն
իր յուրօրինակ ու սրտառուչ երախտագիտությունն է հայտնում զինվորներին:
Մինչդեռ իրապես. «Այդ մենք ենք շնորհակալ քեզնից, փոքրիկս, քո կենսահաս-
տատ ճիչի համար, որ մի քանի օր շարունակ սավառնում էր մեր նահանջող,
ջախջախված, իսկ այնուհետև՝ հարձակվող շարքերի վրա՝ որպես կյանքի և
հաղթանակի հավերժող հիմն»(272):

Նման ծանր կորուստների, թանկագին արյան, խաթարված ճակատագրերի
գնով է ձեռք բերվում հաղթանակը, բաղձալի ու քմահաճ հաղթանակը, որ սրտա-
մոտ քառու հեքով ընդառաջ է ելնում տունդարձի ճամփան բռնած զինվորին, ճա-
նաչում և նեղացած քաշքշում, բացում է շինելի փեշերը. «Հանի՛ր շինելը, զինվոր,
նրանից վառողի հոտ է բուրում, հանիր...»:

Մեծ պատերազմը փոքր գոհողություններով չի գոհանում: Արկերը դադա-
րեցին որոտալ, բայց պատերազմը շարունակվեց մարդկանց սրտերում, նրանց
հիշողություններում: Պատերազմը թնդանոթի որոտով սկսվեց, բայց նրա լռելով
չավարտվեց: Պատերազմի խոհն արդեն ծավալվում է հետպատերազմյան կյան-
քում. «Ա՛յ հաղթեցինք, փրկեցինք մեր հողը, մեր ոգին: Բայց սիրտը միայն արյուն
մղելու համար չէ. նա էլ իր կյանքն ունի, իր փոքրիկ հայրենիքը, որին մենք անձ-
նական երջանկություն ենք անվանում: Պատերազմն ամենից առաջ սուր է բարձ-
րացնում սրտի վրա: Վիրավորվեց սիրտը, էլ չի ապաքինվի... Ձոհերն ամփոփ-
վում են ոչ միայն եղբայրական գերեզմաններում, այլ ամենից առաջ սրտերի
մեջ»(338):

Մ. Սարգսյանի ստեղծագործության գլխավոր թեման պատերազմն է՝ մահ,
ավեր, արյունոտված գարուններ, այն, սակայն, չի վերածվում անհույս ողբեր-
գության, քանի որ ուղեկցվում է չպարտվող հավատով:

**Ա.Ա. АДАМЯН – *Философия жизни и смерти в романе Мкртича Саркисяна
"Жизнь под огнем"*.** – М. Саркисян – один из выдающихся представителей после-
военной армянской прозы. В своем знаменитом романе “Жизнь под огнем” писа-
тель и участник Великой Отечественной войны раскрывает тяжелую и жестокую
истину войны, трагическую несовместимость неисполненных грез, но упрямых
надежд человеческой души и неизбежных ужасов войны. Саркисян затрагивает
вечную тему жизни и смерти, но по-новому, глазами молодого новобранца. Война
зловеще уравнивает грани жизни и смерти, меняет представления солдата об этих
противоположных полюсах. В романе четко и образно дана характеристика войны,
психология воюющего солдата. Повседневная борьба на грани жизни и смерти...

Изображением природы М. Саркисян подчеркивает важные психологичес-
кие нюансы, сделав панораму войны более выразительной и целостной.

И хотя главная тема произведения - война, все же, она не превращается в
безнадежную трагедию, поскольку пронизана светлой и непобедимой верой.

ՌՈՒՍԵՐԵՆԻ ՄԻՋՈՑՈՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լ.Պ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հայտնի է, որ ժամանակակից հայերենում ֆրանսերենից փոխառյալ բառերի թիվը հասնում է ավելի քան մեկուկես հազարի: Հայտնի է նաև, որ ժամանակակից հայերենի նորագույն փոխառյալ բառերն ու տերմինները միջնորդավորված փոխառություններ են, որոնց մի մասը հայոց լեզու է ներթափանցել ռուսերենի միջոցով: Այս դեպքում ռուսերենը միջանկյալ օղակ է: Ռուսերենից թափանցած ֆրանսերեն բառափոխառությունները իրենց հնչյունական կազմով և արտահայտած իմաստով սովորաբար համընկնում են ոչ թե որպես սկզբնաղբյուր հանդես եկող լեզվի, այլ ռուսերենի համապատասխան բառերի և տերմինների հետ:

Ռուս-ֆրանսիական լեզվամշակութային հարաբերությունների պատմության ընթացքում փոխառությունների հոսք է նկատվում հասարակական կյանքի ու կենցաղի գրեթե բոլոր ոլորտներում: Նախ՝ դիվանագիտական և առևտրական սերտ հարաբերությունների ձևավորումը նպաստում է բանավոր լեզվական կապերի զարգացմանը, որը հաստատվում է պատմական և լեզվական մի շարք փաստերով: Ռուսերենում նույն փոխառյալ բառի բազմաթիվ տարբերակներն այն բանի ապացույցն են, որ այդ բառերը բանավոր ճանապարհով են փոխանցվել: Լեզվական բանավոր հարաբերություններին հաջորդում է ռուսերենի և ֆրանսերենի միջև գրավոր շփումների հաստատման սկիզբը:

Ռուսերենի բառապաշարում կատարված նորամուծություններն իրենց արտահայտությունն են գտնում նաև հայերենում: Հայ ժողովրդի քաղաքական կյանքում և կենցաղում տեղի ունեցած հսկայական փոփոխությունների հետևանքով նոր բառերի անհրաժեշտություն է առաջանում: Նորաբանությունների մեջ քիչ թիվ չեն կազմում նաև փոխառությունները, որոնք կիրառվում են կյանքի տարբեր բնագավառներում:

Ֆրանսերենից ռուսերենի միջոցով հայերենին անցած փոխառությունները դրսևորվում են գիտության և տեխնիկայի, արվեստի և գրականության, քաղաքականության ու հասարակագիտության, ճարտարապետության ու շինարարության, արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ: Նշենք բառափոխության մի քանի ոլորտներ՝ առավել տարածված օրինակներով.

Տեխնիկային և գիտության բազմաթիվ ճյուղերին առնչվող գործածական օրինակներ են՝ *ազավա-agave*, *ակացիա-acacia*, *անանաս-ananas*, *բամբուկ-bambou*, *բաոբաբ-baobab*, *բեգոնիա-bégonia*, *բերգամոտ-bergamote*, *բուտոն-bouton*, *դեգեներացիա-dégénération*, *դեգրադացիա-dégradation*, *լավանդա-lavanda*, *լատանիա-latanier*, *լիանա-liane*, *լոտոս-lotus*, *կակտոս-cactus*, *կամելիա-camélia*, *կարոտին-carotène*, *կոպալ-copal*, *մագնոլիա-magnolia*, *մանգո-mango*, *մանդարին-*

mandarine, մուսկատ-muscat, շամպինյոն-champignon և այլն, որոնք հանդիպում են բուսաբանական բնույթի մասնագիտական տեքստերում:

Բառափոխության արդյունք են բժշկության ու դեղագործության ոլորտում հաճախ գործածվող հիվանդությունների, դեղերի անվանումները՝ *ագրավացիա-aggravation, աերոֆոբիա-aérophobie, ալիմենտար-alimentaire, ավիտամինո-avitaminose, բալնոթերապիա-balnéothérapie, բացիլ-bacille, գանգրենա-gangrène, գեն-гене, գինեկոլոգ-gynécologue, գլաուկոմա-glaucome, գրիպ-grippe, դեզասիմիլյացիա-désassimilation, դեզինֆեկցիա-désinfection, դիաստոլա-diastole, դիզենտերիա-dysenterie, դիսպանսեր-dispensaire, դիֆտերիա-diphthérie, դոնոր-donneur, կատար-cataracte, կատարակտ-cataracte, կարանտին-quarantaine, կոմպրես-компрес, իզոլյացիոն-isoler, իմոբիլիզացիա-immobilisation, լանցետ-lancette, լեյկոմա-leucome, ասպիրին-aspirine, ատրոպին-atropine, թիոկոլ-thiocol, խինին-quinine, կալոմել-calomel, կամֆորա-camphre, կոդեին-codéine, կոկային-cocaine, կոֆեին-caféine, մորֆին-morphine, յոդոֆորմ-iodoforme, նիտրոգլիցերին-nitroglycérine, նովոկային-novocaïne, պենիցիլին-pénicilline, պիրամիդոն-pyramidon, պիրոքսիլին-pyroxiline, սանտոնին-santonine, ստրեպտոմիցին-streptomycine, տուբերկուլին-tuberculine.*

Տնտեսագիտական ժամանակակից փոխառություններ են՝ *ակցիզ-accises, ակցիոններ-actionnaire, ասիգնացիա-assignation, ավանս-avance, բալանս-balance, բանկիր-banquier, բանկրոտ-banqueroute, բիլոն-billon, բիմետալիզմ-bimétalisme, բյուջե-budget, դեբիտ-débit, դեզինտեգրացիա-désintégration, դեվալյացիա-dévaluation, դեֆիցիտ-déficit, դեֆլացիա-déflation, դևիզ-devise, կադաստր-cadastre, մոնոպոլիա-monopole, պարիտետ-parité, պրեյսկուրանս-prix-courant, ռեսուրս-resource, սինդիկատ-syndicat, վալորիզացիոն-valorisation, ֆինանս-finance, ֆոնդ-fond:*

Փոխառություններով հարուստ է նաև լեզվաբանության և գրականության ոլորտը *ագլյուտինացիա-agglutination, ասիմիլյացիա-assimilation, արգո-argo, արգոտիզմ-argotisme, ալտերնանս-alternance, բրետոներեն-breton, կատալոներեն-catalane, գալլիցիզմ-galicisme, գլոսեր-glossaire, էքսպրեսիա-expression, ժարգոն-jargon, իդիոմ-idiome, դիդակտիկ-didactique, ռոմանիստ-romaniste, վոկալիզմ-vocalisme, consonantisme-կոնսոնանտիզմ, վուլգարիզմ-vulgarisme, տերմինոլոգիա-terminologie, տրանսկրիպցիա-transcription, ուլուլյար-uvulaire, ֆոնետիկա-phonétique, ֆրազեոլոգիա-phraséologie, արքուրդ-absurde, արքուլյուս-absolut, ալտերնատիվ-alternative, դուալիզմ-doualisme, դուալիստ-doualiste, էկլեկտիզմ-éclectisme, իդեալիզմ-idéalisme, ինդիվիդուալ-individuel, ինդիվիդուալիզմ-individualisme, ինդիվիդուալիստ-individualiste, ինդիվիդուալիտետ-individualité, մատերիալիզմ-matérialisme, մեթոդ-méthode, սենսուալիզմ-sensualisme, սենսուալիստ-sensualiste, սոցիոլոգիա-sociologie, ստոիկ-stoïque, սուբստանցիա-substance, ուտոպիա-utopie, ուտոպիստ-utopiste, ֆիդեիզմ-fidéisme, ալկով-alcove:*

Ճարտարապետության, շինարարության մեջ հաճախ են հանդիպում հետևյալ փոխառությունները՝ *անտրետուլ-entresol, ասպիդ-apside, ասֆալտ-asphalte, ավանկուր-avant-cour, բալյուստրադ-balustrade, բարելիեֆ-bas-relief, բելետաժ-bel-étage, բետոն-béton, գոթական-gothique, կասկադ-cascade, կյուվետ-cuvette, կոլոնադ-colonnade, կոնսոլ-console, կոնտրֆորտ-contrefort, մակետ-maquette, մանսարդ-mansarde, նիշա-niche, պալիսանդր-palissandre, պավիլյոն-pavillon, պանն-*

panneau, պլաֆոն-plafond, պրոֆիլ-profil, ռեպեր-repère, վիտրաժ-vitrage, տամբուր-tambour, տոլ-tôle, տրեյաժ-treillage, ֆասաժ-façade, ֆերմա-ferme, ֆեստոն-feston, ֆրիզ-frise, ֆրոնտալ-frontal, ֆրոնտոն-fronton:

Հասարակական – քաղաքական և վարչական բնագավառներում առավել գործածական են հետևյալ օրինակները՝ *աբսոլյուտիզմ-absolutisme, աբսոլյուտիստ-absolutiste, աժիոտաժ-agiotage, ակցիա-action, ալարմիստ-alarmiste, անգաժամենտ-engagement, ավանտաժ-avantage, ասոցիացիա-association, աֆրոնտ-affront, բլանկ-blanc, բլոկ-bloc, բյուլետեն-bulletin, բյուրո-bureau, բուրժուա-bourgeois, բուրժուազիա-bourgeoisie, դեբատ-débat, դեզինֆորմացիա-désinformation, դենարշ-dénarche, դեմիլիտարիզացիա-démilitarisation, դեմոնստրատիվ-démonstratif, դեմոնստրացիա-démonstration, դեցենտրալիզացիա-décentralisation, դեպարտամենտ-département, դեպուտացիա-députation, դիրեկտիվ-directive, դիսկրեդիտացիա-discreditation, դոսիե-dossier, դեվիզ-devise, էլիտա-élite, էքսպրոպրիացիա-expropriation, էքսպլուատացիա-exploitation, իզոլյացիա-isolation, իզոլյացիոնիզմ-isolationnisme, իզոլյացիոնիստ-isolationniste, իմպերիալիզմ-impérialisme, իմպերիալիստ-impérialiste, ինտերնացիոնալիզմ-internationalisme, ինտերնացիոնալիստ-internationaliste և այլն:*

Իրավաբանության ոլորտում կիրառվող փոխառությունների օրինակներ են *ալիբի-alibi, ալիմենտ-aliment, արբիտր-arbitre, արբիտրաժ-arbitrage, լեգիսլատուրա-législature, լեգիսլացիա-législation, լեգիտիմ-légitime, լեգիտիմացիա-légitimation, լեգիտիմիզմ-légitimisme, լեգիտիմիստ-légitimiste, ռեցիդիվ-récidive, ռեցիդիվիստ-récidiviste:*

Դիվանագիտության ոլորտին առնչվող օրինակներ են՝ *ագրեման-agrément, դեմարշ-démarche, դեմոնստացիա-dénonciation, դեպոզիտար-dépositaire, դիպլոմատ-diplomate, դիպլոմատիա-diplomatie, դուայեն-doyen, կոնսուլ-consul, կոնսուլատ-consulat, միսսիա-mission, պրես-ատաշե-presse-attaché և այլն:*

Արվեստի ճյուղերին (թատրոն, գրականություն, գեղանկարչություն, պարարվեստ) վերաբերող փոխառություններ են *ամպլուա-emploi, անտրակտ-etracte, անտրեպրենյոր-entrepreneur, անտրեպրիզ-entreprise, ապլոմբ-aplomb, արտիստ-artiste, ավանսցեն-avant-scène, բալետ-ballet, բալլադ-ballade, բելետրիստիկա-belles-lettres, բենեֆիս-bénéfice, բեռուար-baignoire, գրավյուր-gravure, գուաշ-go-uache, դեբյուտ-début, դեբյուտանտ-débutant, դեկադանս-décadence, դեկոր-décor, դեկորատիվ-décoratif, դեկորացիա-décoration, դեկորատոր-décorateur, դուբլյոր-doubleur, դրամատիկ-dramatique, էստամպ-estampe, էտյուդ-étude, էստրադա-estrade, էսքիզ-esquisse, էքսպոզիցիա-exposition, էքսպրեսիոնիզմ-expressionisme, էքսցենտրիկ-excentrique, ժանր-genre, էքսպրեսիոնիզմ- impressionnisme, իմպրեսիոնիստ-impressionniste և այլն:*

Երաժշտության մեջ հաճախ կարելի է հանդիպել՝ *ադաժիո-adagio, ասոնանս-assonance, ալտ-alto, ակորդ-accord, ակորդեոն-accordéon, անսամբլ-ensemble, բարիտոն-baryton, բարկարոլա-barcarolle, բեկար-bécarre, գավոտ-gabotte, դիեզ-dièse, դիվերտիսմենտ-divertissement, դիսոնանս-dissonance, կադանս-cadence, կադրիլ-quadrille, կարմանյոլ-carmagnole, կլավեսին-clavecin, կլավիկորդ-clavicorde, կլանտետ-clarinette, կոռնետ-cornet, կոռնետ-ապիստոն-cornet à pistons, մադրիգալ-madrigal, մենուետ-ménuet, մոտիվ-motif, նոկտյուրն-nocturne, շանսոնետ-chansonnette, շանսոնիե-chansonnier, պաստորալ-pastorale, պիես-*

pièce, պոպուրի-pot-pourri, ռեպերտուար-repertoire, ռոմանս-romance, ռոյալ-royal, valse-վալս, վոկալիզ-vocalise, տակտ-tact, տամ-տամ-tam-tam, տեմքր-timbre, տենոր-ténor, տրոբադուր-troubadour և այլն:

Ռազմական ոլորտում հաճախ ենք հանդիպում՝ *աբորդաժ-abordage, ամբրազուր-embrasure, ամունիցիա- amunition, ավանագարդ-avant-garde, ավան-պոստ-avant-poste, ավանպորտ-avant-porte, արիերգարդ-arrière-garde, արսենալ-arsenal, բանկետ-banquette, բլինդաժ-blindage, դեսանտ-descent, դեզերտիր-déserteur, դեմարկացիա-démarcation, դեմոբիլիզացիա-démobilisation, դիսլոկացիա-di-slocation, դիվիզիա-division, էսկադրոն-escadron, էսկադրիլիա-escadrille, ժանդարմ-gendarme, ժանդարմերիա-gendarmerie, լեյտենանտ-lieutenant, լոկալիզացիա-localisation, կալիբր-calibre, կանոներկա-canonnière, կասսետ-casse-tête, կավալերգարդ-cavalier-garde, կավալերիա-cavalerie, կարաբին-carabine, և այլն* բառափոխություններին:

Շատ են գործածական մարզաձևերի, խաղերի անունները, ինչպես՝ *ալպինիզմ-alpinisme, ալպինիստ-alpiniste, բիլիարդ-billiard, դոմինո-domino, դուպլետ-doublet, էստաֆետ-estafette, լոտո-loto, կարամբոլ-carambole, կրոկետ-croquet, պայանս-patience, պատ-pat, պիկետ-piquet, պրեֆերանս-préférence, ռենոնս-rennonce, ռևանշ-revanche, վա-բանկ-va-banque, վելոդրոմ-vélodrome, վոլան-volant, տոտալիզատոր-totalisateur, տրավերս-traverse, տուր-tour:*

Միջնորդավորված փոխառություններ են հագուստի հետևյալ տեսակները՝ *բերետ-béret, բլուզ-blouse, գետրի-guêtres, գործետ-gorgette, դեզաբիլիե-déshabillé, դեկոլտե-décolleté, ժաբո-jabot, ժակետ-jaquette, ժիլետ-gilet, կապյուշոն-capuchon, կաշնե-cache-nez, կեյի-képi, կոմբինեզոն-combinaison, կոլետ-collette, կոստյում-costume, կորսաժ-corsage, կորսետ-corset, մանժետ-manchette, մանտո-manteau, յուրկա-jupe, շալ-châle, շարֆ-écharpe, պենյուար-peignoir* և այլն:

Որոշ ուտեստի անունները, նրանց պատրաստման եղանակները ևս փոխառությունների արդյունք են՝ *անտրեկոտ-entrecôte, բատոն-bâton, բիսպլիթ-biscuit, բորդո-bordeau, բուլիոն-bouillon, գաստրոնոմ-gastronome, գաստրոնոմիա-gastronomie, դելիկատես-délicatesse, դեսերտ-dessert, դյուչես-duchesse, էկլեր-éclairé, էսկիմո-esquimaux, ժելատին-gélatine, ժելե-gelée, լանգետ-langouette, լիկյոր-liqueur, կազոր-cahors, կարամել-caramel, կոմպոտ-compote, կոնսերվ-é-conserver, կոնֆիտյուր-confiture, կոտլետ-côtelette, մայոնեզ-mayonnaise, մարգարին-margarine* և այլն:

Այսպիսով՝ ակնառու է այն փաստը, որ ռուսերենի միջոցով հայերենին են անցել հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող ֆրանսերեն բազմաթիվ բառեր: Միջնորդավորված փոխառությունների իմաստաբանական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ռուսերենից փոխառյալ բառերի իմաստային տեղաշարժեր հայերենում չեն նկատվում, շատ բառեր, իմաստաբանական յուրացման ենթարկվելով ռուսերենում, նույնությամբ պահպանվել են նաև հայերենում:

Ռուսերենում և հայերենում ֆրանսերենից փոխառյալ բառերի իմաստային լրիվ համապատասխանությունը պայմանավորված է երկու լեզուների համար իմաստաբանական փոփոխությունների ընդհանուր օրինաչափություններով, ինչպես, օրինակ, փոխառված բառի նախնական իմաստում կատարվող այլաբանական, համըմբոնման և գործառական տեղաշարժերը: Օրինակ՝ *մադամ, մադ-*

մուագել բառերի ոճական նշույթավորումով հեզնական գործածությունը հայերենում հետևանք է միջնորդ լեզվում ռուսերենում, իմաստաբանական յուրացման:

Հատկանշական է, որ հայոց լեզվի հնչյունական համակարգը թույլ է տալիս հիմնականում հարազատորեն վերարտադրել ֆրանսերենից բառափոխառությունների հնչյունական պատկերը: Բնական է, որ կան նաև շեղումներ՝ կապված ֆրանսերենի և ռուսերենի, ռուսերենի և հայերենի, ֆրանսերենի և հայերենի հնչյունական համակարգերի տարբերությունների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հտ. 1-4, Երևան, 1969-1980, (100 000 բառ):
2. Սարգսյան Ս. *Բառարան ռուսերենում ֆրանսերենից փոխառյալ բառերի իրենց հայերեն համարժեքներով*, Երևան, 1997:
3. Ревзин И.И., Розенцвейг В.Ю. *Основы общего и машинного перевода*, Москва, 1964.
4. Локшина С.М. *Краткий словарь иностранных слов*, Москва, 1976.
5. *Словарь русского языка*, в 4-х томах. АН СССР. Москва, 1981-1983.
6. Ожегов С.И. *Словарь русского языка*, Москва, 1984.
7. *Le Petit Robert*, Paris, 1981.

L.P. DARBINIAN – *Les emprunts des mots français en arménien par intermédiaire du russe*. – En résumant tout ce que nous avons dit ci-dessus, nous pouvons conclure que de la fin du 19^{ème} siècle jusqu'au début du 20^{ème} siècle beaucoup de mots du domaine de la vie socio-politique et socio-économique se sont transmis à l'arménien par l'intermédiaire du russe. L'étude éthimologique de certains emprunts indirects a montré qu'il n'y a pas de changement sémantique en arménien, en ce qui concerne les mots empruntés au russe.

Les mots empruntés, subissant une assimilation sémantique en russe, conservent les résultats de cette assimilation en arménien. Les mots empruntés au français équivalent sémantiquement en arménien et en russe. Cela est conditionné par certains facteurs linguistiques et extralinguistiques.

Les emprunts transmis par le russe ont subi une assimilation phonétique, morphologique et syntaxique en russe avant d'être transmis à l'arménien, et naturellement ils ont obtenu des traits formels-linguistiques caractéristique au russe et correspondant à ses normes phonatoires, orthographiques etc. Le système phonique de l'arménien permet de bien reproduire l'image phonique des emprunts français. Naturellement, il y a des déviations, liées aux différences des systèmes phoniques de français, d'arménien et de russe.

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԱՍՍԱՅՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.Ս. ՄԱՐԴԱՆՅԱՆ, Ա.Ա. ՎԱՆԵՍՅԱՆ

Ասացվածքները պատկերավոր ու սեղմ ասույթներ են ժողովուրդների պատմության, նրանց կենսաձևի, բարքերի ու լեզվամտածողության վերաբերյալ և ունեն դաստիարակչական մեծ նշանակություն, ճանաչողական և իմացական մեծ արժեք: Ասացվածքների բնորոշ առանձնահատկություններն են քիչ բառերով շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, կոնկրետությունը, դյուրնկալելիությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը և գունագեղությունը:

Տարբեր լեզուների ասացվածքների և առածների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ճանաչել ժողովուրդների ազգային մտածելակերպը, նրանց գեղագիտական ըմբռնումները, փիլիսոփայական և բանաստեղծական մտքի դրսևորման առանձնահատկությունները:

Ֆրանսիացի, իտալացի և այլազգի մի շարք գրողներ, մտածողներ ու գիտնականներ յուրովի են բնորոշել ասացվածքները: Ռիվարոլն այսպես է բնութագրել ասացվածքները. «Բոլոր ասացվածքները ժողովուրդների ապրած կյանքի պտուղն են»: Գաբրիել Մորիեն գրել է. «Մի ասացվածքն արժե երկու լավ կարծիք»: Ջոն Գիթսն ասում է. «Ասացվածքն ասացվածք չէ, երբ այն չի լուսավորում քո կյանքը»:

Ֆրանսիական առածներին ու ասացվածքներին առնչվող կարևոր խնդիրներից է նրանց թարգմանությունը այլ լեզուներով: Հոդվածում փորձ ենք արել ուսումնասիրել դրանց հայերեն, ռուսերեն և իտալերեն լեզուներով թարգմանություններին առնչվող խնդիրները:

Ինչպես վկայում են բազմաթիվ ուսումնասիրությունները, ֆրանսիական ասացվածքների թարգմանությունները կատարվում են երեք տիպով.

1. ֆրանսիական ասացվածքը ռուսերեն, հայերեն և իտալերեն թարգմանվում է զուգահեռ համարժեքով, այսինքն պահպանվում է նույն ձևը, նույն բառային կազմը:
2. Ասացվածքը թարգմանվում է ոչ զուգահեռ համարժեքով, այսինքն՝ իմաստը նույնն է, բայց տարբեր է բառային կազմը:
3. Հաճախ ֆրանսիական ասացվածքը հայերենում, ռուսերենում և իտալերենում համարժեք չունի: Այս դեպքում նրանց իմաստը վերարտադրվում է բառացի կամ ազատ թարգմանության միջոցով:

Քննարկենք ասացվածքների առաջին տիպը:

L'appétit vient en mangeant.

Ախորժակն ուտելիս է բացվում:

L'appetito viene mangiando.

Аппетит приходит во время еды.

Այս ասացվածքի թարգմանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերեն և ռուսերեն թարգմանությունը ասացվածքի ճշգրիտ վերարտադրությունն է, որում պահպանվում է նույն բառային կազմը և ձևը: Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ զուգահեռ վերարտադրության պատճառները կարող են տարբեր լինել: Դրանցից հիմնականը ընդհանուր աղբյուրն է (հունական կամ հռոմեական դիցաբանությունը, Աստվածաշունչը և այլն): Հաճախ դրա պատճառը փոխառությունն է մեկ ուրիշ լեզվից:

Տարբեր բառարանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերը նշված ասացվածքի և հայերեն, և ռուսերեն, և իտալերեն տարբերակները փոխառվել են ֆրանսերենից: Ուշագրավ է, որ երբեմն հայերենում, ռուսերենում և իտալերենում դրանք ունեն մեկից ավելի համարժեքներ:

Քննարկենք մեկ ուրիշ ասացվածք:

Ala guerre comme à la guerre.

Պատերազմում՝ ինչպես պատերազմում:

Alla guerra come alla guerra

На войне как на войне.

Երեք լեզուներում էլ պահպանված են նույն բառային կազմը, նույն ձևը: Այս ասացվածքը հայերենում ունի ևս մեկ համարժեք՝

Աղոթքն իր տեղը, թուրն իր տեղը:

Նույն կարգին կարելի է դասել հետևյալ ասացվածքը՝

Au besoin on connaît l'ami.

Al bisogno si conosce l'amico.

Ընկերը նեղ օրն է ճանաչվում:

Друзья познаются в беде.

Հայերենում կա ևս մեկ տարբերակ՝

Բարեկամը նեղ օրվա համար է:

Նշենք ուսումնասիրության ընթացքում նկատված այն ասացվածքները, որոնք նշված բոլոր լեզուներում պահպանում են նույն բառային կազմը և ձևը:

1. *Au royaume des aveugles les bornes sont rois.*

Գույրերի թագավորության մեջ միաչքանին թագավոր է:

Nel paese dei ciechi anche un guerico e re.

В слепом царстве кривой-король.

2. *Comparaison n'est pas raison.*

Համեմատությունն ապացույց չէ:

Paragone non è ragione.

Сравнение не доказательство.

3. *Chacun porte sa croix.*

Ամեն մարդ իր խաչն է կրում:

Ciascuno porta la sua croce.

Каждый несёт свой крестъ

4. *Il n'y a pas de roses sans épines.*

Առանց փշի վարդ չկա:

Нет розы без шипов.

Իտալերենում երկու տարբերակներ իմաստային տեսանկյունից նույնն են, սակայն բառային և շարահյուսական կազմում ունեն տարբերություններ.

Non ci sono rose senza spine.

Se le rose fiorirano le spine non pungerano.

1. La parole est d'argent et le silence est d'or.

Խոսելն արծաթ է, լռությունը՝ ոսկի:

La parola è d'argento, il silenzio è d'or.

Слово – серебро, молчание – золото.

Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձևի, պատկերի և իմաստի զուգադիպության դեպքերը համեմատաբար սակավաթիվ են: Ամենից հաճախ ֆրանսիական ասացվածքները ռուսերեն, հայերեն և իտալերեն թարգմանվում են ոչ զուգահեռ համարժեքով, այսինքն իմաստը նույնն է, սակայն բառային կազմը տարբեր է: Կարծում ենք, որ այստեղ մեծ դեր է խաղում տվյալ ժողովրդի լեզվամտածողությունը.

Орինակ՝ Chat échaudé craint l'eau froide.

Բառացի թարգմանությունն է՝ Բերանն այրած կատուն սառը ջրին էլ է փչում: Ասացվածքի հայերեն համարժեքը հետևյալն է՝

Աչքը տեսածից է վախենում:

Իտալերենում այս ասացվածքը գործածվում է նույն իմաստով, տարբեր բառային կազմով և մի քանի տարբերակներով, որոնցում միշտ առկա է «վառվող կամ վառված կատուն».

A pentola che bolle, il gatto non s'accosta.

Al gatto che lecca lo spiedo, non affidare l'arrosto.

Chi si è scottato con l'acqua calda ha paura anche dell'acqua fredda.

Ինչպես իտալերեն, այնպես էլ ռուսերեն թարգմանությունը նույն իմաստը տարբեր բառային կազմով է տալիս՝

Пуганная ворона куста боится.

Հետաքրքիր է դիտարկել մեկ ուրիշ ասացվածք.

A chaque oiseau son nid est beau.

Բառացի նշանակում է՝ *յուրաքանչյուր թռչունի համար իր բույնը գեղեցիկ է:*

Մինչդեռ հայերենը և ռուսերենն ունեն հետևյալ համարժեքները՝ ոչ ոք իր թանին թթու չի ասի:

Всякий купец свой товар хвалит.

Հայերենում գոյություն ունեն նաև հետևյալ տարբերակները՝

Ամեն մարդ կասի՝ իմ ալյուրը ճերմակ է:

Ամեն մարդ իր լավաշին է տեղ անում:

Այս ասացվածքի դեպքում ևս իտալերենն ունի երկու տարբերակ, որոնցից առաջինը և բառային և իմաստային կազմով ուղիղ համեմատական է ֆրանսերենին՝

Per ogni uccello il suo nido è bello.

Երկրորդի և իտալական ժողովրդի կողմից առավել գործածականին դեպքում ունենք բառային կազմի որոշակի տարբերություններ՝

Ogni fornicia ama il suo buco.

Հետաքրքիր լեզվամտածողություն են հանդես բերել հայ և ռուս ժողովուրդները Ֆրանսիական *“En sa peau mourra le renard”* ասացվածքի թարգմանության ժամանակ.

Горбатогомогилаисправит.

Սապատավորին գերեզմանը կուղղի:

Իտալերենի դեպքում պատկերը փոքր ինչ այլ է՝

Chi nasce tondo non può morire quadrato.

Բառարանների ուսումնասիրությունները ցույց են տալիս ,որ այս ասացվածքը հայերենը փոխ է առել ռուսերենից: Հայերենում կա նաև “Կարմիր կովն իր կաշվից դուրս չի գա ” տարբերակը, որն իտալերենում ունի ուղղիղ համարժեք՝ Il lupo perde il pelo ma non il vizio. Երկու լեզուներում էլ նույն գործողությունն է ներկայացված՝ կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչների միջոցով: Հայերենի դեպքում կովն է, իտալերենի դեպքում՝ գայլը:

Բերենք մեկ ուրիշ օրինակ՝

Il n'est pire que l'eau qui dort.

Վախեցիր այն ջրից, որ ոչ վշշում է, ոչ խշշում:

E peggio l'acqua che dorme.

В тихом омуте черти водятся.

Հետաքրքիր է, որ չորս լեզուներում էլ իմաստը նույնն է և կապված է ջրի հետ:

Հաճախ ֆրանսիական ասացվածքը մյուս լեզուներում համարժեք չի ունենում՝ բացառությամբ իտալերեն լեզվի: Այս պարագայում նրանց իմաստը վերարտադրվում է բառացի կամ ազատ թարգմանության միջոցով: Բնականաբար, այդ թարգմանությունները հայերենում և ռուսերենում ասացվածքի կայուն կարգավիճակ չունեն:

Օր.՝ Pas de nouvelles, bonne nouvelles.

Non di notizie , buone notizie.

Հայերեն՝ լուր չունենալն էլ լավ լուր է, բառացի թարգմանությունը անշուշտ ասացվածք չէ: Նույնն է նաև ռուսերենում՝ Отсутствие вестей-хорошая весть.

Բերենք ևս մի քանի օրինակ.

Il faut manger pour vivre et non pas vivre pour manger.

Bisogna mangiare per vivere e non vivere per mangiare.

Անշուշտ, հայերեն և ռուսերեն թարգմանությունները ասացվածքի կարգավիճակ չունեն:

Les fous inventent les modes, et les singes les suivent.

I matti inventano le mode e le scimme li seguono.

Дураки придумывают моду, а умные следуют ей.

Հիմարները նորաձևություն են հորինում, իսկ խելացիները դրանց հետևում են:

Պակաս հետաքրքիր չէ դիտարկել այն ասացվածքները, որոնք մի լեզվում ունեն համարժեք, իսկ մյուսում՝ ոչ:

Օր. Qui donne aux pauvres prête à Dieu.

Այս ասացվածքը ռուսերենում և իտալերենում ունի իր համարժեքը՝

Кто бедному даёт, тому бог вернёт.

Chi del suo donna Dio gli ridonna.

Հայերենում այն թարգմանվում է բառացի՝

Աղքատներին տվողը Աստծուն է պարք տալիս:

Մեկ ուրիշ օրինակ՝

Le jeu n'en veut pas la chandelle.

Ռուսերենում կա համարժեք ասածվածքը՝ Игра не стоит свеч.

Իտալերենում բառացի թարգմանություն է՝ Il gioco non vale le candelle.

Հայերենում ևս բառացի թարգմանություն է՝ նման խաղի համար մոմ վատնել չարժե (խոսքը թղթախաղի մասին է, որն անցյալում տեղի էր ունենում մոմերի լույսի տակ և հաճախ չէր հանում դրանց ծախսը):

Հետաքրքիր է դիտարկել որոշ ասացվածքներ, որոնք հայերենում և իտալերենում համարժեք ունեն, իսկ ռուսերենում՝ ոչ:

Chaque chose a son prix.

Ogni cosa ha il suo prezzo.

Ամեն բան իր գինն ունի:

Ռուսերեն թարգմանությունը բառացի է՝ Каждая вещь имеет свою цену.

Փոքրիկ նվերները բարեկամություն են շինում:

կամ՝

Маленькими подарками поддерживается дружба.

Ֆրանսիական ժողովրդի հավաքական իմաստության վկայությունը համարվող այս և բազմաթիվ այլ ասացվածքները անսպառ աղբյուր են հետազոտությունների համար: Իզուր չի ասված՝ „Ասացվածքը մեկի միտքն է, բոլորի իմաստությունը,„:(Ջոն Ռասել)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Dournon J. *Mini-Encyclopedie des proverbes et dictons de France*, Paris 1984.
2. Maloux M. *Dictionnaire des proverbs*, Larousse. 2002.
3. Nazarian A. *Proverbes et dictons français*, Erevan, 1991.
4. Pineaux J. *Proverbes et dictons français*, Paris, 1967.
5. Giuseppe Giusti *Proverbi*, Firenze, 1839.
6. Карапетян Г. *Армянские пословицы и поговорки*, Москва, 1973.
7. Рецкера Я. *Французко-русский фразеологический словарь*, Москва, 1963.
8. *Dizionario dei proverbi italiani* (Raccolta di proverbi toscani), Roma 1958.

A.S. MARDANIAN, A.A. VANESEIAN – *Certaines particularités de la traduction des proverbes français*. – En résumant notre article, nous pouvons dire qu'un des problèmes importants, concernant les proverbes et celui de leur traduction qui est faite dans le présent article par les procédés suivants.

Le proverbe français est traduit en russe, en arménien et en italien par un équivalent parallèle, c'est-à-dire par un proverbe de forme et de sens identique. Mais il faut souligner que les cas où tout concorde: la forme, l'Image, le sens sont relativement peu nombreux. Le plus souvent le proverbe est traduit en russe, en italien et en arménien par un équivalent non parallèle c'est-à-dire par un proverbe de même sens, mais de forme différente. Il arrive souvent que le proverbe français n'a pas d'équivalents dans les autres langues. Dans ce cas nous avons été obligé de donner le sens de l'expression française par une traduction littérale ou libre. Sans dire, il est évident, que les correspondances russes, italiennes et arméniennes basées sous une telle traduction n'ont pas le statut de proverbes en tant que des unités des langues stables.

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՏ ՆՈՐ ԻՄԱՍՏԻ ՍԿԻԶԲ
(ՌԸՆԵ ՇԱՐ)**

Ա.Ա. ՎԱՆԵՍՅԱՆ

Յուրաքանչյուր բանաստեղծության թարգմանություն ինքնին բանաստեղծական գործընթաց է, որին թարգմանիչը մասնակցում է աննշմարելի, բայց անհատական մոտեցումով: Գոյություն չունեն որոշակի փոխկապակցված չափորոշիչներ, որոնց հիման վրա թարգմանիչն ընտրում է իր թարգմանության նյութը բանաստեղծությունը: Այլապես նա պիտի պատասխանի բանաստեղծի ցանկությանը, կամ պիտի արձագանքի նրա կարիքներին: Թարգմանիչը մեկ այլ էության փոխակերպվելու փորձ է անում, բայց ոչ թե իր էությունը հարստացնելու, այն կերպարանափոխված ներկայացնելու, այլ մեկ անգամ ևս հավաստելու ինքն իրեն, որ բանաստեղծական գործընթացը կարող է տեղի ունենալ, գոյություն ունենալ միայն բազմաբնույթ և մեծաթիվ ինքնությունների խաչուղիներում: Իհարկե, զգայական կամ մտավոր որոշ ընդհանրությունների դեպքում հաճախ սահմանափակվում է գրական գործի թարգմանության ընտրությունը, բայց այս դեպքում հարկ է հաշվի առնել նաև խթանիչ տարբերությունները: Այստեղ խոսքը ելակետային տեքստին է վերաբերում: Պետք է հնարավորինս լավ յուրացնել հեղինակի լեզուն: Չեն ընդունվում բառացի, միջնորդավորված թարգմանությունները:

Մեր հոդվածի մեջ ուսումնասիրելու ենք Ռընե Շարի որոշ բանաստեղծությունների թարգմանությունները: Ռընե Շարի գործածական լեզուն իր բանաստեղծական լեզվի հետ խիստ սերտ, բայց փոխակերպված կապեր ունի, որոնք ի հայտ են գալիս արմատապես տարբեր մակարդակներում: Թարգմանիչը չի կարող մոռանալ, որ չպետք է իր լեզվի գերիշխանությունը տարածի, այն գործածի իր բանաստեղծական լեզվում: Այս գաղափարը արտահայտվում է բանաստեղծական գործընթացի, փաստի ընկալման տարբեր շերտերում, որոնք սովորաբար հանդես են գալիս զուգահեռաբար նոր հայացքների կազմավորման հետ առանց վերջիններիս հետ խառնաշփոթ ստեղծելու:

Ինչպես թարգմանության տեսաբանների մեծ մասը, այնպես էլ Մեշոնիկը, խոսելով թարգմանության մասին, շեշտը դնում է Աստվածաշնչի թարգմանության վրա: Այստեղ հարց է ծագում՝ ինչո՞ւ միշտ Աստվածաշնչի. որովհետև աստվածաշնչյան տեքստերի կառուցումը գործնականորեն հիմնված է վերլուծության և համադրության շեշտերի, գրավոր-բանավոր համակարգի փոխներգործության անբաժանելի ավանդույթի վրա, որոնք սերտորեն կապված են թեմային և գոյություն ունեն համախմբածության սկզբունքով:

Աստվածաշնչի թարգմանությունը դառնում է նպաստավոր հող Մեշոնիկի փորձարարական բանաստեղծության համար, որտեղ տեսականը և գործնականը հավասարապես կիրառվում են: Ըստ նրա՝ թարգմանությունը մի կողմից գրողի և թարգմանչի միջև եղած տարբերության վերացումն է, մյուս կողմից՝ լավ թարգմանված տեքստի՝ որպես նոր իմաստ ստեղծելու ընդունակությունը:

Այսպիսով՝ հաջողված թարգմանությունն իր մեջ ունի որոշակի ստեղծագործական առանձնահատկություններ, և հակառակ ընդունված կարծիքին՝ այն վերջնակետ չէ, այլ ելման կետ, քանի որ թարգմանության ժամանակ պոեմի ասությունը ենթարկվում է վերաստության: Ըստ Մեշոնիկի՝ գոյություն ունի չորս տեսակի թարգմանություն.

1. Թարգմանություն-վերարտադրություն (վերջինս արագ է ծերանում),
2. Թարգմանություն-թարգմանություն, (պարունակում է պարզ փոխանցում), ոչ տեքստային,
3. Թարգմանություն-տեքստ (ենթադրում է լեզվամշակույթային ապակենտրոնացում, երկու մայրենի և թարգմանվող լեզուների միջև ենթադրում է բառացի կապ),
4. Պատճենում, նմանակում, արտատպում, հեշտությամբ հետադարձ վերարտադրվում է թարգմանվող լեզվում՝ խեղաթյուրելու աստիճան վտանգելով բնօրինակը:

Թարգմանության խնդիրը հիմնված է լեզվի, այլ ոչ թե խոսքի տրամաբանության վրա: Այսօրվա բանաստեղծությունը հերմետիկ է. այն ծածկագրի մի տեսակ է: Բանաստեղծությունը միշտ եղել է մի վայր, որտեղ խտանում են բանաստեղծի ցանկությունները, ազատ մի վայր, որտեղ իրականանում են ամենահամարձակ երևակայությունները, ամենաանկանխատեսելի խենթությունները, որոնք այնքան էլ ընկալելի չեն սովորական հաղորդակացման մակարդակում:

Լեզուն բանաստեղծության մեջ խորհրդավոր է, ունի ենթախորք: Բանաստեղծական դաշտը անչափ լարված, էլեկտրականացված, անհնարինի զեղում է՝ լեզվի և հեղինակի անհատականացման միջոցով: Բանաստեղծությունը հասկանալ և վերարտադրել կարողանալու համար պետք է ուսումնասիրել հեղինակի, ընթերցողի, որը համարվում է ապագա վերարտադրող, և թարգմանիչի միջև գոյություն ունեցող կապերը: Հեղինակը, որ հասցեատեր-հաղորդող-կողավորող /destinateur - emetteur - encodeur/ է, հղում է իր բանաստեղծական ուղերձը ընթերցող - հասցեատեր - ընդունող - վերլուծողին /lecteur - destinataire - recepteur - decodeur/: Այս բոլոր սահմանումներից առավել համաձայնեցված է կողավորող-վերծանող /encodeur - decodeur/ հարաբերությունը:

Թարգմանիչը, որ ընթերցող-վերծանողն է, առաջին հերթին իմաստի համապատասխանության որոնողն է, որը բնական գործընթաց է համարվում: Եթե նրան հաջողվում է այդ իմաստը գտնել (սուբյեկտիվ բացահայտման մասին է խոսքը), նա գոհացած է և պատրաստ է փոխադրել այդ իմաստն իր մայրենի լեզվի տեքստում: Ընթերցողի կողմից ընկալված իմաստը Ռիֆֆատերը սահմանում է որպես *նշանակելիի ներունակություն*:

Թարգմանաբանության բազմաթիվ տեսաբաններ գործածում են *signifiante* /նշանակելիի ներունակություն/ արտահայտությունը, Ռիֆֆատերը տարբերակում է *sens* /իմաստ/ և *signifiante* /ներունակություն/՝ որպես երկու ընթերցողների մեկնողականի և հայտնագործականի արդյունք: Առաջինը հիմնվում է տեքստի կողմից հաղորդված տեղեկատվության վրա: Այն ընթերցողների է. դա վերաբերական իմաստն է, երկրորդը՝ ռետրոակտիվ, հետադարձ ուժ ունեցող. այն բոլոր իմաստներով տեղի է ունենում տեքստի ներսում, ուստի երևում են բոլոր իմաստային և ձևական միավորները: Այս միավորը ստորադաս չէ ո՛չ իր շարությային առանցքին և ո՛չ էլ իր տեղեկատվական սահմաններին: Մի այլ աշխա-

տության մեջ Ռիֆֆատերը գրում է, որ տեքստի իսկական նշանակելիի ներ-
ունակությունը տեղակայված է հենց իր վերաբերականում ձև առ ձև՝ չնայած
խոսելաձևի շարունակական փոփոխություններին: Որքան ընթերցող-վերծանող,
այնքան նշանակելիի ներունակություն:

Բանաստեղծության թարգմանության միջոցով նոր իմաստի ստեղծման
օրինակներով առատ են Ռլեն Շարի բանաստեղծությունները.

Feuillets d'Hypnos

Hypnos saisit l'hiver et le vétit
de granit. L'hiver se fit sommeil
et Hypnos devint feu. La suit
appartient aux homes.

Հիպնոսի թերթիկները

Հիպնոսը բռնեց ձմռանը և նրան
Որձաքար հագրեց: Չմեռը քուն
Մտավ, իսկ Հիպնոսը հուր դարձավ:
Մնացյալը վերաբերում է մարդկանց:

Այժմ փորձենք վերլուծել Ռ. Շարի «Հիպնոսի թերթիկները» վերնագրով բա-
նաստեղծությունը, որը լի է քերականական ոչ ճիշտ կառույցներով: Հենց վեր-
նագրից ընթերցողը մուտք է գործում բանաստեղծական մթության մեջ, և այդ
խավարն էլ ավելի է ուժգնանում բանաստեղծության վերլուծության ու թարգմա-
նության ընթացքում: Այս բանաստեղծության մեջ Շարը հակադրության մեջ է
դնում մարդկային կյանքը և բնապատկերը: Նա գործածում է տարաբնույթ ոճա-
կան հնարքներ՝ իր ընթերցողին ցույց տալով իրականությունը խավարի մեջ:
Բանաստեղծության մեջ առկա է մասնավորի և ընդհանուրի փոխհարաբե-
րության սկզբունքը: Բանաստեղծության մուտքի միջոցով ընթերցողը հասնում է
դառնում մարդկային գիտակցության սահմաններին: Շարի այս բանաստեղծու-
թյունը ծնունդ է տալիս բազմաթիվ նշանակելիի ներունակությունների: Նրա
իմաստը պարզ չէ, այն շատ ներփակ է: Տարբեր մշակույթների կրողների կողմից
այն տարբեր մեկնություններ կարող է ունենալ: «Հիպնոսի թերթիկները»-ում
շարյան դրաման անվերջ այլընտրանք է որոնում դեպի ընդհատված վերջը, որն
ուղղված է սահմանային ժամանակին: Հրաժարվելով եզրափակել պատմությունը
բնական շարժումն անսպասելի ձևով նորից ընթացքի մեջ է գցում այն:

«Հիպնոսի թերթիկները» բանաստեղծության կաղապարը ներկայացված է
հենց վերնագրի մեջ, կամ ավելի ճիշտ քերականորեն ոչ ճիշտ տեղակայված կա-
ռույցներով. (տերևը սովորաբար վերաբերում է ծառին, ֆրանսերենում նաև թղդ-
թին), այսինքն իր բառային ամբողջականության մեջ քերականորեն սխալ է ար-
տահայտված: Օրինակ՝ *vétire* բայը հատուկ է մարդկային էակներին, կամ *l'hiver*
fit sommeil, sommei l ևս մարդուն յուրահատուկ հատկանիշ է: Այստեղ ակնհայտ է
փոխաբերությունը: Բայց առաջին հայացքից բանաստեղծությունը ընթերցողի
գիտակցության մեջ (խոսքը գրեթե լեզվական կարողություններից զուրկ ընթեր-
ցողի մասին է) արթնացնում է մահվան գաղափարը:

Granit-որձաքարի առնչանային իմաստը, մեր կարծիքով, սերտորեն կապ-
ված է բանաստեղծության բառային կազմի հետ, որովհետև, երբ *Հիպնոսը բռնեց*

ձմռանը և նրան որձաքար հագցրեց, Ձմեռը քուն մտավ, այսինքն՝ վերջինս անհայտացավ: Որձաքար հագցնելուց հետո բանաստեղծական մտքի շարունակականությունն ընդհատվում է, քանզի բանաստեղծական իրականության մեջ Ձմեռը վերջ, մահ է մատնանշում: Սակայն, հարկ է նշել, որ չնայած ստորոգյալների հակադրությանը, իմաստային ընդհարություն ունեն *ձմեռ և քուն* գոյականները: Վերջինս բացատրվում է որպես ցուրտ եղանակներին կենսական գործառույթների դանդաղեցում:

(....et Hypnos devint feu/...իսկ Հիպնոսը հուր դարձավ)

Այս հակիրճ նախադասությունից ընթերցողը կարող է բազմաթիվ իմաստներ բխեցնել՝ feu-հուր բազմանշանակ բառին վերաբերող: Ինչպես օրինակ՝ *combustible-վառելիք, foyer-օջախ, lumière-լույս, flambeau-ջահ, lampe-ճրագ, torche-կե-րոն*, կարող է ունենալ նաև *chaleur-ջերմություն իմաստը*: Բայց իրեն հաջորդող *devenir* բայի հետ բառն ստանում է իր բանաստեղծական-կոնտեքստային իմաստը, որի բառարանային բացտրությունը հետևյալն է. Feu=Litter. Qui est mort depuis peu de temps, défunt/ նա, ով մահացած է արդեն որոշ ժամանակ, հանգուցյալ է/:

Ինչ վերաբերում է հայերեն թարգմանությանը, պետք է նշել, որ գոյություն ունեն մի քանի առնշանային իմաստներ՝ կապված հայ ընթերցողի լեզվամշակութային առանձնահատկությունների հետ, որոնք բնագիրը չի արտահայտում: Վերցնենք օրինակ որձաքար-granit բառը, որի առաջացրած բանաստեղծական պատկերը ամբողջովին տարբեր է հայ ընթերցողի համար, քանզի այդ գոյականի վերարտադրության ժամանակ մեր առջև բացվում է նրա՝ այսպես ասած սեռային պատկերը, այն է՝ որձաքար, որ այստեղ ոչ այլ ինչ է, քան լիքիկական էրոտիզմ: Այս կոնցեպցիայի հետ համեմատած՝ ֆրանսերենի *granit* (անպտղություն, մանրէազերծություն) բառին բնորոշող երույթների նշանակությունները գրեթե չեզոքանում են հայերենում: Հենց առաջին ընթերցումով հայ ընթերցողը անմիջապես գլխի է ընկնում, որ խոսքը արական սեռի մասին է, բառը ինքը դա հուշում է, մինչդեռ ֆրանսերենում այն արտահայտված է *le* արական որոշյալ հոդով (*le* *vétit de granit*): Այնուամենայնիվ, երկու լեզուներում էլ ակնհայտ է, որ բանաստեղծությունն այսպես ասած «արական սեռի» է: Հեղինակը միշտ ծպտված ձևով ընթերցողի ուշադրությունը հրավիրում է իր բանաստեղծական նկարագրության ճարպելությանը՝ բանաստեղծականության ստեղծումով:

Հայտնի է՝ Hypnos-Հիպնոսը քնի աստվածությունն է, feu-հուրը ևս ունի քնի իմաստն իր մեջ, բայց այս դեպքում հավերժական քնի՝ մահվան:

Մեր կողմից դիտարկված հաջորդ բանաստեղծությունը, որ փորձել ենք ուսումնասիրել, վերնագրված է *Déclarer son nom-Հայտարարել իր անունը*:

Déclarer son nom

J'avais dix ans. La Sorgue m'en chassait. Le
Soleil chantait les heures sur le sage cadran
des eaux. L'insouciance et la douleur avaient scellé
le coq de fer sur le toit des maisons et se supportaient
ensemble. Mais quelle roué dans le coeur de l'enfant
aux aguets tournait plus fort, tournait plus vite
que celle du Moulin dans son incendie

blanc?

Հայտարարել իր անունը

Տաս տարեկան էի: Սորգն էր ինձ գրկում: Ջրերի
Խոհուն թվատախտակին արևն էր գովերգում ժամերը:
Անհոգությունը և ցավը երկաթե աքաղաղին դրոշմել էին
Տների տանիքին, և նրանք իրար հանդուրժում էին: Բայց ինչ
Անիվ էր՝ դարանակալված մանչուկի սրտում, պտտվում
անվերջ, ավելի ուժգին, պույտ էր գալիս ավելի արագ,
քան ջրաղացի անիվն իր սալիտակ հրդեհման մեջ:

Այս բանաստեղծության վերնագիրը ընթերցողին հուշում է, որ խոսքն ինչ-որ ազատության, հայտարարության, ինքնահաստատման մասին է: Նախ, հեղինակը խոսում է իր մասին, տպավորություն է առաջանում, թե նա մեզ պատմելու է իր ամբողջ կյանքը, բայց մի տող ներքևում երևում է մի հավերժականացված վայրկյան, որտեղ հեղինակը ջանում է փակել իր մասին տեղեկատվության ելքը: Այս տեսանկյունից ակնհայտ է Déclarer-Հայտարարել կատարողական բայը, որի ողբերգական առնշանային իմաստները բազմաթիվ են: Բայց հարկ է մասնավորապես ուշադրություն դարձնել Շար բանաստեղծի հմուտ երկակի խաղին: Այն է՝ կենսագրական տվյալների մոբիլիզացումը և միևնույն ժամանակ տեքստում հեղինակի գոյության ջնջումը: Այս տեսանկյունից համանման երևույթի կրկնությունն է անորոշ վերնագիրը, որտեղ անդեմ, անորոշի ինքնությունը մասնակիորեն վերականգնվում է մի անհայտ *je-tu*: Առաջին մասում մեր առջև բացվում է անձնական մանկության վերհուշը, իսկ մի քանի տող այն կողմ մենք տեսնում ենք առանց գործող անձի մի պատկեր: Սակայն նույնիսկ ինքնության հաստատումը «հետապնդվում» է *անորոշ* բառով, որը զարմանալիորեն ոչ մի կապ չունի բանաստեղծության հետ: *Déclarer son nom-Հայտարարել իր անունը* չի նշանակում հայտարարել իր՝ բանաստեղծի անունը: Թե ով է հայտարարում իր անունն այստեղ, խիստ սուբյեկտիվ է: Այս կենսագրության ապամանկականացումն ուղեկցվում է մի մանկության այլբանություններով, որոնք անհայտ են բանաստեղծության կոնտեքստի շրջանակներում (մոր հետ կոնֆլիկտային հարաբերությունները, վաղամեռիկ հոր վիշտը): Տեքստի վերջում խորհրդանշականորեն արտահայտվում է մանկական չբացահայտված աշխարհում անծանոթի և բանաստեղծի խզումը: Այդ պահից բանաստեղծությունը դառնում է հնարանք, առասպել, որի մեջ Շարը փորձում է ետ կանչել բանաստեղծական ճակատագրի ծնունդը: *Հայտարարել իր անունը* հավաստում է սկզբնական անջատում, հեռացում կենսագրական դաշտից:

Այսինքն՝ շարյան պոեզիան հասկանալու և ճիշտ ընկալելու համար, նրա ամենաչնչին ներքին պատճառներն ընկալելու համար պետք է դիմել անհայտ, դեռևս չբացահայտված ներտեքստային ուսումնասիրությանը: Չբացահայտված, որովհետև այս բանաստեղծությունը և ընդհանրապես Շարի բոլոր բանաստեղծությունները ակնարկային ձևի ներքո են առկայանում: Այդ անոմալիան վերանում է, երբ ընթերցողը բանաստեղծությունից դուրս տեղեկանում է բանաստեղծին ինքնորոշող նյութերին: Անկախ դրանց որոշակի կամ անորոշ լինելուն՝ *le sage cadran des eaux, le coq de fer* նպաստում են փոխաբերված ծածկագրի սահմանմանը: Կարելի է, այնուամենայնիվ, դրանք որոշակիացնել, որովհետև դրանց

փոխաբերությունը դեիկտիկ գործառույթ ունի: Դա ընթերցողի մեջ արթնացնում է այլ տեքստի հիշողություն, որի բաղադրիչները կարող են պատճառականացվել, նրա առնշանային իմաստը կարող է խորհրդանշվել վերջինիս *դեիկտիք գործառույթով*: Այսպիսով՝ *le coq de fer-երկաթե աքլորը կարող է* բացատրվել միայն իր խորհրդանշական ընկալումով, որը ֆրանսիական իրականության մեջ խորհրդանշում է հայրենիքը, երկիրը. վերջինս Շարի բանաստեղծական մտքի առանցքն է, որին, բնականաբար, հետևում է հպարտության հատկանիշը: Աքաղաղը հայտնի է որպես հպարտության խորհրդանիշ, որը հավաստում է հենց նրա հպարտ քայլվածքը: Աքաղաղը նաև արևի խորհրդանիշն է, քանզի նրա կանչը ազդարարում է արևածագը. այս հայեցակետը գոյություն ունի նաև հայ իրականության մեջ: Առաջին մտապատկերը, որ առաջանում է ֆրանսիացի ընթերցողի մեջ, բնականաբար, ֆրանսիայի խորհրդանիշն է, հետո գալիս են մյուս առնշանային իմաստները, բայց դրանք նույնը չեն հայ ընթերցողի համար: Մենք ունենք մի այլ իմաստ, դա ծիսական իմաստն է՝ մատաղը: Հայտնի է, որ հայ իրականության մեջ այդ ընտանի թռչունն օգտագործվում է ծիսական՝ մատաղի նպատակով: Այսպիսով՝ աքաղաղն ունի և՛ ընդհանուր, և՛ խիստ տարբեր իմաստներ երկու լեզուներում: Ինչ վերաբերում է նրա *երկաթե* մակդիրին, այն իհարկե կարող է իմաստ ունենալ նաև առանց աքաղաղի առկայության, բայց ոչ գրական գործառույթ: Ակնհայտ է, որ մտապատկերում կենդանի աքաղաղը չէ, այլ նրա արձանային տարբերակը:

Նոր իմաստի ստեղծման վերլուծության համար քննության առնենք ջրաղաց-*moulin* գոյականը: Սա նույնպես խորհրդանշային իմաստ ունի, այս դեպքում Փարիզի խորհրդանիշն է ֆրանսիացի ընթերցողի համար: Բայց հայերեն տարբերակում այն ամենից առաջ գեղջուկ, շինական է ուրվագծում և գյուղացու աշխատանք: Ըստ Ժան Շվալիեի բացատրական բառարանի՝ նրա իմաստն ամբողջովին տարբեր է մեր առօրեական ընկալումից, և հենց այս բառարանային իմաստն է, որ նախանշվում է բանաստեղծության մեջ: Այստեղ, բնականաբար, հարկ է ուշադրություն դարձնել գրողի կյանքի և ստեղծագործության միջև գոյություն ունեցող գաղտնի, չարտահայտված կապերին: Հեղինակի կյանքը ծածկագրի տեսքով ամբողջությամբ արտացոլված է նրա բանաստեղծություններում: Խոսենք հենց բանաստեղծությունում առկա *ջրաղաց* բառի առասպելական իմաստի մասին: Տիբեթյան իրականության մեջ, որն առկա է բազմաթիվ մշակութային և կրոնական շրջանակներում, ջրաղացը համարվում է էներգիայի աղբյուր: Հնում, այն գործի գցելով, կապ էին հաստատում տիեզերքի մակրոկոսմոսի հետ: Այս կապը անհրաժեշտ էր և շահավետ: Հրաշագործները նաև ջրաղացի քարերի մեջ մարդկային ուղեղի մի փոքրիկ կտոր են դրել. այստեղից էլ՝ իմաստային և ձևաբանական կապը հետևյալ բանաստեղծական տողերի միջև.

Բայց ինչ անիվ էր՝ դարանակալված մանչուկի սրտում, պտտվում անվերջ, ավելի ուժգին, պտտոյտ էր գալիս ավելի արագ,

Քան ջրաղացի անիվն իր սպիտակ հրդեհման մեջ:

A.A. VANESYAN – *La traduction de la poésie comme réécriture du sens*. – Pour conclure, il faut sans doute revenir à la relation qui existe entre le texte et le lecteur; celui dans l'esprit duquel a lieu se transfère sémiotique de signe à signe.

Riffaterre nous a fait montrer que chaque agrammaticalité dans un poème est un signe de grammaticalité ailleurs, le signe qu'elle appartient à un autre système. Cette relation systémique confère la signification.

Loin de libérer l'imagination, loin de donner plus de liberté au lecteur lorsqu'elle invite à une participation active. La lecture est en fait restrictive; la lecture rétroactive est comparative et établit des équivalences proposées ne sont pas naturelles.

La production du sens par le lecteur ne résulte pas d'une découverte progressive simultanée au développement du poème, ni de l'accumulation aléatoire d'associations verbales; elle résulte d'un mouvement de va-et-vient à travers le texte, mouvement qu'il impose la dualité même des signes, agrammaticaux comme mimesis mais grammaticaux dans le réseau de la signification. Ce va-et-vient d'une valeur à l'autre d'un signe, cette alternance répétée de révélation et d'éclipse de la signification, cette circularité sémiotique, caractérise la pratique signifiante qu'on appelle poésie. Dans l'esprit du lecteur, elle se traduit par un perpétuel recommencement, par des certitudes qu'il n'acquiert que pour les perdre aussitôt, à chaque effort, à chaque tentative de retrouver, de prolonger l'illumination de la signification; c'est pour cela qu'un poème est toujours relu, c'est pour cela qu'il ne cesse jamais de fasciner.

Nous avons étudié presque toutes les modalités des changements de la signification et nous avons voulu montrer que la traduction elle-même devient un nouveau point de départ du rayonnement du sens-signification, avec les pertes et les nouvelles acquisitions de connotations (avec les mots *montagne* et..., par exemple). Et nous voudrions constater la vérité déjà reconnue par les spécialistes: la traduction c'est la réécriture, un nouvel espace de création.

LES PARTICULARITÉS RÉFÉRENTIELLES DU PRONOM «ON»

L.A. SAKANIAN

Le pronom *on* a une grande importance dans le système des pronoms du français moderne. Les grammairiens classent le pronom *on* tantôt parmi les pronoms indéfinis, tantôt parmi les pronoms personnels. Dans le premier cas on tient compte de sa valeur indéterminée, dans le deuxième, de la possibilité de l'employer comme un équivalent de presque toutes les personnes. Selon J. Dubois *on* est neutralisé dans le système personnel et ne porte aucune marque spécifique de personne, mais impose au verbe la marque de la troisième personne du singulier.

Selon le contexte, le pronom *on* peut avoir différentes valeurs. Le contexte peut, bien entendu, limiter l'indétermination de *on*. La limitation peut s'obtenir aussi sans relation avec un contexte, par l'imposition du genre féminin ou du nombre pluriel au lieu du masculin singulier indifférencié. *On*, quoiqu'un pronom de la troisième personne, en arrive ainsi à pouvoir désigner le locuteur ou l'interlocuteur. *On* se réfère à un syntagme masculin ou féminin, singulier ou pluriel, mais il peut être employé seulement pour la classe des animés. Des substances plus ou moins définies sont présentées de façon indéterminée comme pour dépersonnaliser en quelque sorte, soit en généralisant l'affirmation particulière qui les concerne, soit en en effaçant par une sorte de modestie quelquefois ironique ou feinte, le caractère personnel. Les motifs qui poussent l'usager à employer *on* à la place des autres pronoms personnels peuvent être différents: le désir d'intensifier un ordre en donnant une forme collective au *je*, la formule affectueuse par transposition de personne, l'expression du sentiment d'affection, de mépris ou d'orgueil.

Le français moderne manifeste (surtout à l'oral) une forte tendance à remplacer par *on* le pronom *nous* qui inclut *je* dans un ensemble dont le reste de la composition demeure généralement indéterminé. Et seul le contexte nous permettra de distinguer ses valeurs. Cette alternance qui est critiquée par les puristes s'exprime aussi dans les textes classiques.

La possibilité de *on* d'assumer une fonction indexicale, combinée avec son indéfinitude sémantique, permet de jouer sur la référence de manière particulièrement souple et efficace. A travers des exemples tirés des œuvres littéraires nous tâcherons de révéler les particularités référentielles du pronom *on*.

L'indéfinitude attachée au sémantisme de *on* a été exploitée diversement en littérature. Tout d'abord, *on* offre un commode passe-partout lorsque l'auteur ne désire pas spécifier plus avant la nature d'une entité qui doit rester quelconque. Plusieurs auteurs ont exploité fréquemment cette possibilité de *on*.

A travers quelques lignes extraites du roman *Nord* de Céline, on aura un aperçu sur cette possibilité :

La société se structurait en groupes spécialisés: c'est-à-dire l'armée, les fonctionnaires, les médecins, les bouchers, les ingénieurs électriciens. On construisait des immeubles de 22 étages, puis on fixait sur leurs toits des antennes de télévision. Sous terre,

on mettait les canalisations, les fils électriques, les métros. On creusait, on faisait brûler ou exploser.

Les référents visés par «*on* construisait», «*on* fixait», «*on* mettait des canalisations» et «*on* faisait brûler ou exploser» ne sont jamais les mêmes. C'étaient les ingénieurs électriciens qui mettaient les fils électriques comme nous l'apprend le texte, c'étaient les constructeurs qui construisaient des immeubles. Mais l'essentiel est de noter que ce ne sont pas les mêmes individus qui fixaient les antennes, qui creusaient ou bien faisaient exploser.

Cette diversité des référents n'est pas traduite sur le plan morphologique et syntaxique. Notons que ces choix sont parfaitement volontaires, et caractéristiques par conséquent du style ou de la manière de l'auteur, car il pouvait éviter d'employer la forme «*on*», en lui substituant des syntagmes nominaux : p. ex. *les électriciens mettaient des fils électriques*. Cette fois encore il s'agit de gommer la représentation directe des individus.

L'emploi de *on* est donc en parfait accord avec le projet esthétique de l'auteur, qui a pris le parti de mettre à distance l'humain au profit de la description des inanimés, lesquels sont censés de refléter la débauche des hommes par leur diversité, leurs contrastes et leur caractère «exotique».

Dans l'exemple qui précède, on ne peut parler de fonctionnement déictique ou indexical, car les modalités d'interprétation propres aux pronoms personnels n'ont plus lieu d'être. Les emplois de *on*, dans le texte de Céline, manifestent un sémantisme indéfini, et cette indéfinition lexicale appelle un complément d'interprétation pragmatique. Cependant il existe des emplois nettement indexicaux de *on*, comparables à ceux d'un pronom de première ou de deuxième personne.

«On» et la référence au locuteur

On va en donner une idée avec deux courts extraits de *Zazie dans le métro* de Raymond Queneau, choisis avant tout parce que l'auteur y met en scène des emplois de «*on*» indexical. Voici le premier :

Sur le pas de sa porte, le patron criait : Mado !

- On arrive ! répondit-elle avec la force voulue pour que ses paroles fendissent l'air avec la vitesse et l'intensité souhaitées.

Ce «*on* arrive» est l'exact équivalent de «*j'*arrive» alors qu'il n'y a de fait qu'une seule Mado dans le café. *On* ne peut renvoyer qu'à celle qui dit *on*, exactement comme *je*. *On* fonctionne donc pleinement comme un indexical de première personne. Toutefois, il oriente l'interprétation en ceci qu'il tend à effacer la valeur spécifique attachée à l'indexical de *je* : en se désignant par *on*, Mado semble prendre une certaine distance par rapport à sa propre désignation, parce que le patron ne voit en elle que la fonction qu'elle remplit, alors que, pour elle, sa quantité de serveuse de bar n'est qu'un aspect de sa personne, un aspect seulement de ce à quoi renverrait un *je*. C'est aussi ce qui semble motiver, dans la vie quotidienne, les emplois de formules telles que «*on* arrive» et «*on* vient».

«On» et la référence à l'interlocuteur

Passons à une seconde valeur de *on*, encore plus fréquent à l'oral, que la précédente :

Charles s'en fut tout de suite après la surprise attendue d'une grenadine au kirsch, Gabriel lui son boulot commençait pas avant les onze heures. Il allongea les jambes sous la table et même au-delà et sourit à Zazie raide sur sa chaise.

- Alors, petite, qu'il dit comme ça, comme ça on va se coucher ?

- Qui ça «on» ? demanda-t-elle.

- Eh bien, toi bien sûr, répondit Gabriel tombant dans le piège. A quelle heure tu te couchais là-bas ?

- Ici et là-bas ça fait deux, l'espère.

- Oui, dit Gabriel compréhensif.

- C'est pourquoi qu'on me laisse ici, c'est pour que ça soit pas comme là-bas. Non ? (Queneau)

Le «on» vaut ici pour un «tu», et Zazie l'a parfaitement compris comme tel. Seulement, ainsi que l'explicite la suite du texte, elle n'a pas envie d'aller se coucher et fait comme si elle n'avait pas interprété «on» comme un indexical de deuxième personne.

Ce type d'emploi est souvent qualifié d'*hypocristique*. Ce terme désigne une énonciation dans laquelle le locuteur cherche à manifester de l'affection pour son interlocuteur à travers les choix linguistiques qui caractérisent son énoncé.

Toutefois, seule la fréquence d'emploi de tels énoncés dans ce type de situation permet de défendre la pertinence de la notion d'hypocristique.

«On», «nous» et «vous»

La possibilité pour *on* d'assumer une fonction indexicale combinée avec son indéfinitude sémantique, permet de jouer sur la *référence* de manière particulièrement souple et efficace.

L'association de «on» et de «nous»

L'association de «on» et de «nous» est relativement courante, puisque l'indéfinitude de «on» et sa capacité à assumer au besoin une référence indexicale permettent sans problème sa combinaison avec le pronom «de première personne du pluriel et ce, quelle que soit l'extension du référent attribué contextuellement à ce «nous».

On est drôle quand on est jeune, on voltige comme un piau gâté, du noir au clair, du rire aux larmes, on voit du bleu de ciel toujours dans les pires tornades ! Bon ! On pouvait pas rester ensemble comme ça toute la nuit. On se couche donc, moi tout jovial, je lui raconte quelques plaisanteries pour qu'il se réjouisse un peu d'avance, qu'il se régale de la chance nouvelle, qu'il prenne un acompte. (Céline)

Ce passage combine les pronoms «on» et «nous», avec désignation à travers ces deux termes d'un même référent générique et anonyme, qu'il serait paraphraser par un syntagme nominal de même orientation sémantique, tel que «les hommes» (au sens d'êtres humains) ou «les gens». L'association de «on» et de «nous» est d'ailleurs banale dans la langue orale ou nous employons souvent «on» et «nous» en alternance, pour référer à un même collectif.

L'association de «on» et de «vous»

Un autre extrait du roman *Le pont de Londres* de Céline est surtout original par la seconde association qu'il exploite, celle de «on» et de «vous» :

Plus tard, on prend son parti... on s'arrange de tout... on se contente, on chante même plus... puis on chuchote... puis on se tait... Mais quand on est jeune... c'est dur !

Il vous faut du vent!... de la fête!... des fanfares! et hop là ! du tonnerre!... La vérité c'est la mort!

Ce «vous» est adressé à un interlocuteur virtuel. Ou bien, ce «vous» est aussi le «vous» de quelqu'un qui se parle à lui-même, et qui s'inclut dans l'ensemble des êtres humains auxquels renvoie «vous». Il y a donc une fusion dans le texte entre un référent fréquemment désigné par «vous», résultant de l'indexation d'un interlocuteur virtuel générique, et une indexation plus rare de l'énonciateur lui-même, par m'emploi dans son propre discours d'une deuxième personne.

Il s'agit d'une exploitation littéraire particulièrement habile d'une attitude fréquente dans la vie courante, lorsque l'on se parle à soi-même en se tutoyant, souvent à travers des formules stéréotypées comme «tu ne peux pas te taire», adressée à soi-même.

En résumant on peut dire que le pronom *on* est un pronom indéfini toujours employé comme sujet. Cependant, même si le sujet est indéfini, la valeur de son appartenance aux êtres humains est maintenue. Sa valeur de base est en effet, celle d'un pronom indéfini renvoyant à une personne ou à un ensemble de personnes d'extension variable, que le locuteur ne peut ou ne veut pas identifier de façon plus précise.

On est surtout anonyme. Il ne marque pas nécessairement une personne inconnue au sujet parlant ou aux deux interlocuteurs à la fois. C'est ainsi que l'usager peut englober dans l'anonymat de l'indéfini sa propre personne, celle de l'interlocuteur ou celle des tiers. Il marque toute personne qu'on évite de nommer ou dont on évite de révéler l'identité. *On* exprime une personne généralisée. L'effet de la généralisation s'exprime dans les maximes, dans les dictons, dans les proverbes et dans toute la phraséologie à valeur de vérité générale.

En français moderne *on* se substitue à tous les pronoms personnels qu'il remplace de plus en plus largement et librement grâce à son caractère indéterminé et vague. Substitué à il(s), elle(s) anaphoriques le pronom *on* également marque une distance, parfois ironique, avec le référent de ces pronoms. *Nous* et *vous* utilisés dans le sens de *on* dans la fonction du complément, expriment non pas la personne indéfinie, mais la personne généralisée. L'association de *on* et de *nous* est relativement courante, puisque l'indéfinitude de *on* et sa capacité d'assumer au besoin une *référence indexicale* permettent sans problème sa combinaison avec ce pronom, quelle que soit l'extension du *référent* attribué contextuellement à ce *nous*. L'emploi de *on* à la place de deuxième personne a une valeur *hypocritique*. Le locuteur cherche à manifester de l'affection pour son interlocuteur. Les attributs de *on* s'accordent par *référence* avec le genre et le nombre grammatical de la personne ou des personnes évoquées par *on*.

De cette manière, *on* devient petit à petit le pronom personnel «par excellence», un personnel à tout faire marquant la «personne en général».

BIBLIOGRAPHIE

1. Benveniste E. *Problèmes de linguistique générale*, Gallimard, I, 1966; II, 1974.
2. Damourette J. et Pichon E. *Des mots à la pensée*, tomes IV, VI, Paris, 1974.
3. Dubois Jean *Grammaire structurale du français: nom et pronom*, Librairie Larousse, Paris, 1965.

4. Référovskaïa E.A., Vassiliéva A.K. *Essai de grammaire française*, Издательство «Просвещение», Ленинград, 1973.
5. Riegel Martin, Pellat Jean-Christophe, Rioul René *Grammaire méthodique du français*, Paris, 1994.
6. Tesnière Lucien *Eléments de syntaxe structurale*, Paris, 1976.
7. Wagner R.L. et Pinchon J. *Grammaire du français classique et moderne*, Librairie Hachette, Paris, 2^e éd., 1975.
8. Гак В.Г. *Теоритическая грамматика французского языка: синтаксис*, «Высшая школа», Москва, 1986.

Լ.Ա. ՍՄՔԱՆՅԱՆ – «Օո» դերանվան վերաբերական առանձնահատկությունները: – Ժամանակակից ֆրանսերենի դերանունների համակարգում *օո* դերանունը մեծ կարևորություն ունի: Լեզվաբաններն այն դասում են և՛ անորոշ, և՛ անձնական դերանունների շարքին՝ հաշվի առնելով *օո*-ի անորոշ բնույթը և բոլոր անձնական դերանուններին համարժեք լինելու նրա կարողությունը: Կախված համատեքստից՝ *օո* դերանունը կարող է ունենալ տարբեր արժեքներ: Համատեքստը, ինչպես նաև *օո*-ի հետ թվով և սեռով համաձայնեցված ստորոգյալը (քանի որ *օո*-ը միշտ հանդես է գալիս ենթակայի պաշտոնում և միշտ փոխարինում է շնչավոր գոյականներին) սահմանափակում են *օո*-ի անորոշությունը: Օո-ը, գործածվելով ասացվածքների մեջ, արտահայտում է ընդհանրացված անձի գաղափար, կարող է վերաբերել իգական կամ արական շարույթի, գործածվել եգական կամ հոգնակի իմաստներով, մատնանշել խոսողին կամ խոսակցին՝ լինելով 3-րդ դեմքի դերանուն:

Հոդվածում բացահայտվում են *օո*-ի վերաբերական առանձնահատկությունները, առանձնացվում *օո*-ի և խոսողի (*locuteur*), *օո*-ի և խոսակցի (*interlocuteur*) վերաբերական փոխկապակցվածությունը, ինչպես նաև *օո* և *nous*, *je* (մենք, ես), *օո* և *vous*, *tu* (դուք, դու) դերանունների զուգորդման և հերթագայման դեպքերը:

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԸ (ՎԱՐԱՆՅԱՆ-ԻՐԱՊԱՇԸ)

Լ.Ղ. ՇԻՐԻՆՅԱՆ

19-րդ դարի 60-ական թվականներից մինչև Առաջին աշխարհամարտ իրականացած հայոց մտավոր-քաղաքական վերածննդի գործում իր ուրույն տեղն ունի Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան), 1872-1934, որը գիտական որոնումների ու քաղաքական գործունեության ոլորտ մտավ 19-րդ դարի վերջին տարիներին և պայքարի հրապարակում մնաց շուրջ չորս տասնամյակ: Փիլիսոփայություն ու հասարակական գիտություններ ուսումնասիրեց Եվրոպայում /Գերմանիա, Շվեյցարիա/ և ստացած բազմակողմանի գիտելիքները ծառայեցրեց ազգային հեղափոխության ռազմավարության ու գործելակերպի տեսական հիմնավորմանը: Այդ տեսանկյունից, թերևս, նա իրեն հավասարը չունեցավ և իր կայուն ու նշանակալից տեղը գրավեց հայ գիտաքաղաքական ու սոցիալ-փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

Վարանդյանի մուտքը գիտա-քաղաքական հետազոտությունների ոլորտ աննկատ չմնաց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի հայազգի գործիչների համար ևս: Հայտնի են Ս. Սպանդարյանի, Ս. Շահումյանի՝ նրան տրված թունոտ գնահատականները: Վարանդյանի ստեղծագործական ժառանգությունը, բնականաբար, «վերլուծվել» և «արժևորվել» է խորհրդահայ փիլիսոփայության կողմից (Հ. Գաբրիելյան¹²⁸, Վ. Սևյան¹²⁹, Բ. Անանիկյան¹³⁰ և ուրիշներ):

Սակայն ժամանակն ինքն է սրբագրում կողմնակալ գնահատականները: Եվ այսօր պատահական չէ, որ Վարանդյան-տեսաբանը, Վարանդյան-քաղաքական գործիչը «անհանգստացնում է» հայ գիտաքաղաքական միտքը, ուղղորդում հետազոտողների որոնումները, քանզի նա իր փոթորկոտ ու բեղուն ստեղծագործական կյանքի ընթացքում փորձել է ըմբռնել մարդկության առաջընթացի ներքին տրամաբանությունը, նրա համատեքստում՝ հայ ժողովրդի անվտանգ գոյության ու Հայաստանի պատմական զարգացման հեռանկարը:

Հետամուտ առաջադրված խնդրին՝ ստեղծել է մինչև օրս չգերազանցված մեծարժեք գործեր, որոնց մեջ առանձնանում է «*Հայկական շարժման նախապատմություն*» (Ժնև, հ.1, 1912, հ.2, 1913) ուսումնասիրությունը, որտեղ դրկտոր Խ. Թուրունջյանի գնահատմամբ՝ «հանգամանորեն հիմնավորված է ժամանակակից հայության ազգ-պետություն դառնալու ձգտումը և անխուսափելի բնույթը

¹²⁸Գաբրիելյան Հ. Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը. Երևան.1960:

Նույնի՝ Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական վերլուծություն. Երևան.1966 և այլն:

¹²⁹ Սևյան Վ. Հայ բուրժուական փիլիսոփայության քննական վերլուծություն. 20-րդ դարի սկիզբ. Երևան.1971:

¹³⁰ Անանիկյան Բ. Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը. Երևան.1974:

հայ հեղափոխական ազատամարտին...»¹³¹։ Նրա օրգանական շարունակությունը կազմող և նրան համակողմանիորեն լրացնող հոդվածաշարներ՝ «Ուշացած մարգարեներ, Լեոն և հայկական շարժումը»¹³² և «Հիսուն տարի առաջ (1877-1927)»¹³³։

* * *

Վարանդյանը վառ արտահայտված երկրաքաղաքակրթական ենթատեքստ ունեցող իր գործերում վեր է հանում աշխարհագրական բարդ միջավայրում հայ ժողովրդի դարավոր պայքարի ու մաքառումների ընթացքը։ Այն դեպքում, երբ, թվում է, անհեղձան դատապարտված ժողովուրդը անհամար զրկանքների ու տեսական խարխափումների ուղեկցությամբ կարողացավ, այդուհանդերձ, «ճողպրել «...» անօրինակ նահատակության անդունդներից, ծածանելով մշտապես «...» ոչ միայն իր գոյության, այլև համեստ, թանկարժեք քաղաքակրթության դրոշմը... «Եվ գնում է թառելու քաղաքակրթության սանդուղքի պատվավոր աստիճանների վրա, գնում է բազմելու լուսավոր ժողովուրդների արեոպագում...»¹³⁴։

Դժոխային պայմաններում նա ստիպված է եղել ընտրություն կատարել Պրեսանսեի արտահայտությամբ՝ «երկու ահավոր տարերքների»՝ ռուսական ծովի և թուրքական դևի միջև, «երբեմն համբուրել իրեն հարվածող, զգեստնող ձեռքը, որովհետև այդ ձեռքը փոքրագույն չարիքն էր, որովհետև նրանից ավելի զարհուրելին կար»։ Եվ դա արևմտյան տերությունների դիվանագիտական մշտնջենական խարդավանքների ուղեկցությամբ։

Եվ սակայն, ինչպես ընդգծում է Վարանդյանը, նա միշտ էլ ձգտել է իր հայրենիքի «երեք հատվածների մեջ» «ուժ տալ ամենուրեք քաղաքական վերածնության, նվաճել ամենուրեք պետականություն, իշխանության մի մասնիկը, ստեղծել ամենուրեք այն անհրաժեշտ պայմանները, այն քաղաքական-ընկերային մթնոլորտը, ուր նա կարողանա ազատորեն զարգանալ, բարգավաճել՝ միացած, ձեռք-ձեռքի տված, դրացի, բախտակից ժողովուրդների հետ»։

Վարանդյանի քննախույզ հայացքի առաջ հայկական շարժման նախապատմությունն է (մինչև 1890-ական թվականները), այդ շարժման հեղափոխական ընթացքը՝ Արևելյան հարցի համատեքստում, խոշոր տերությունների՝ գլխավորապես Անգլիայի, Ռուսաստանի մրցակցությունը Հայաստանի ու Հայկական հարցի շուրջ։ Ընդամին նա տալիս է նաև հայության ամբողջական բնութագրի մեկնաբանությունը, նրա «մշտադալար սերվիլիզմի» (ծառայատության) ու կրավորականության անողորմ քննադատությունը։ Եվ միաժամանակ նույն ժողովրդի անմնացորդ նվիրումը քաղաքակրթական ու մշակութային առաջադիմությանը, անկեղծ ակնածանքը արևմտյան արժեքների հանդեպ։ Ու նրա դեմ հանդիման՝ թուրքական իրականությունը, թուրքն «իր բնագոյներով ու ավանդական քաղաքականությամբ»։

Վարանդյանը ցավով նկատում է, որ արևմտահայությունը, տալով «հերոսության բազմաթիվ ու հոյակապ տիպարներ», այդուհանդերձ, չկարողացավ երկնել երկիրը կամ նրա որևէ խոշոր հատվածը ընդգրկող ազատագրական շար-

¹³¹ Թությունջյան Խ., Միքայել Վարանդյան (Հ.Յ. Դաշնակցության տեսաբան-գաղափարախոսը). «Հայրենիք», 1936, թիվ 5, էջ 109։

¹³² «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 59-71, թիվ I, էջ 104-130, 1926, թիվ 3, էջ 97-107, թիվ 4, էջ 84-98։

¹³³ «Հայրենիք», 1927, թիվ 11, էջ 84-94, 1928, թիվ 9, էջ 80-90, թիվ 10, էջ 81-90։

¹³⁴ Վարանդյան Մ. «Հայկական շարժման նախապատմություն», Ժնև, 1912, հ.1, էջ 4-5։

ծում, ինչի հետևանքով Զեյթունը, Սասունը և նրանց համարժեք ապստամբական օջախները մնացին հերոսացման և ըմբոստացման սոսկական «ովասիսներ»։ Մեծապես ազդվելով Ֆրանսիական մեծ հեղափոխության ազատարար գաղափարներից՝ արևմտահայությունն ընտրեց դիմադրության ու պայքարի խաղաղ եղանակներ։ Նա գնաց պայքարի սահմանադրական ուղիով՝ զուգահեռաբար տուրք տալով դիվանագիտական ֆետիշին¹³⁵։ Ավելին, Հայկական շարժումը եղավ «ժողովրդային, ոչ ազգային»։ Այն չընդգրկեց ժամանակի հայ հասարակության բոլոր դասակարգերին, բոլոր հատվածներին, ընկերային խմբերին ու շերտերին։ Նա չեղավ ամբողջական։ «Ազգային չեղավ հայ ազատագրական շարժումը, այն իմաստով, ինչ իմաստով ըմբռնվել և մղվել է այն ուրիշ, ավելի առաջադեմ երկրներում՝ Իտալիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Իռլանդիայում և նույնիսկ Հունաստանում հավաքական ու համերաշխ ճիգերով, ազգի բոլոր դասակարգերի միահամուռ գործակցությամբ¹³⁶»։

Թուրք կառավարությունն իր հերթին «շնորհելով» Ազգային սահմանադրություն (1863թ.)՝ հետապնդում էր սեփական նպատակներ՝ անուղղակի քաջալերելով նրա կրավորական տրամադրությունները, օգտագործելով Սահմանադրությունը որպես մոլորեցնող (դիվերսիոն) գործիք, շարժումը պահելով նրա շրջանակներում։ Նա, այդպիսով, նպաստավոր հող նախապատրաստեց ապագա զանգվածային ջարդերի համար։ Նույն կրավորականությունն իր աղետաբեր դերն ունեցավ Մեծ եղեռնի տարիներին։

Հայ տարրը, ըստ Վարանդյանի, «չունեցավ տարրական կանխատեսություն»՝ ըմբռնելու, որ վաղ թե ուշ «անպայման անհրաժեշտությամբ» դրվելու է հայ քաղաքական հարցը ևս, ինչպես թուրքահպատակ մյուս եվրոպական ժողովուրդներինը, որին օսմանյան կառավարությունը պատասխանելու է իր ավանդական մեթոդներով...

Դեռևս 1870-ական թվականների վերջերին «Փունջ»-ը (Կ. Պոլիս) ցույց էր տալիս հայոց «հիմնական ու մահացու վերքը», «մարտական պետքերի լիակատար զանցառումը, ֆիզիկական ինքնապաշտպանության լիակատար անտեսումը»։ Վարանդյանը գրում է, որ արևմտահայությունը արհամարհեց, չըմբռնեց պատմափիլիսոփայության անագործային նշանաբանը՝ «Կռվով միայն պիտի նվաճես իրավունքը», «Ուժն է միայն, որ կառաջնորդե դեպի իրավունքի իրականացումը»։ Ուստի, երբ պատմական իրադարձությունների անկասելի ընթացքում արծարծվեց նաև Հայկական հարցը, մասնավորապես Բեռլինի վեհաժողովում (1878թ.), արևմտահայությունը Հայաստանում «մեռյալ տարր» էր (Իգնատև)։ Նա չունեւր «երկաթե շերտեր»։

¹³⁵ «Չարիքը հայկական դիվանագիտության այս կամ այն ձևի ու վրիպումի մեջ չէր, ընդգծում է Մ. Վարանդյանը, այլ այդ դիվանագիտության էության մեջ»։ Եվ «Եթե ճիշտ է, որ մեծ պետությունները այս կամ այն արևելյան կնճիոր հարթելու ատեն կղեկավարվեին յուրաքանչյուրը իր շահով, ապա մյուս կողմեն ճիշտ է և այն, որ հանդեպ ըմբոստ ժողովուրդի մը, որ կսպառնա պարբերաբար ու տևողաբար փոթորկել քաղաքական կացությունը և խռովել դիվանագիտական հանգիստը, հանդեպ այդպիսի ժողովուրդի մը նույն պետությունները ստիպված են իրավախոհել, միջոցներ փնտրել գոհացում տալու անոր «պահանջներուն» («Հայրենիք». 1928. թիվ 10, էջ 84. 87)։ Չարիքը հայկական խնդիրը բացառապես դիվանագիտական միջոցներով լուծելու փորձի մեջ էր. «երկաթե շերտեր» անտեսելու մեջ (տե՛ս նույն տեղը, էջ 10)։ Տե՛ս նաև Վարանդյան Մ. «Հայկական շարժման նախապատմություն». հ. 2, էջ 151։

¹³⁶ Վարանդյան Մ. Հայկական շարժման նախապատմություն. Ժնև, 1913 հ. 2, էջ 91։

Վարանդյանի բնութագրմամբ, հայոց ճակատագրի վարիչները չկռահեցին, որ սոսկ եվրոպական չափանիշներով «հիվանդ մարդը»՝ ամենուրեք քայքայում ու ապականություն արտադրող օսմանյան հրեշը, եվրոպական ժողովուրդների անգիշող մտրակի հարվածների տակ անդառնալիորեն մղվելու է Եվրոպայից դեպի Ասիա՝ անցնելով Հայոց լեռնաշխարհով, տարածվելու է դեպի Արևելք, այնտեղ, որտեղից դարեր առաջ սկսել է արշավել: Մինչդեռ Ջեյմս Բրայսը կանխատեսել էր, որ «Աբդուլ Համիդը հղացել էր հայության բնաջնջումի ծրագիրը Բեռլինի վեհաժողովեն անմիջապես հետո»* և «դժվար չէր նախատեսել հակահայ արշավանքը...»¹³⁷ (Բրայս):

...Ցավոք, զգացմունքներով ու գաղափարախոսական դոգմաներով առաջնորդվող հայությունը, նրա ազատագրության վարիչ մարմինները, անտեսելով քաղաքական աշխարհագրության հրամայականները, շարունակում էին ռոմանտիկ հրճվանք ապրել, նույնիսկ իրենց կարողությունների սահմաններում նպաստել Բալկանյան ժողովուրդների հակաթուրքական պայքարին՝ դրանով իսկ նրա պատկերով թուրքերի տեղաշարժին դեպի Արևելք:

Պատեհ-անպատեհ կրկնվում էր հայոց համար մահաբեր «հիվանդ մարդու» կանխադրույթը՝ սին հույսեր կապելով սահմանադրական ու բարենորոգվող Թուրքիայի հետ¹³⁸:

Բեռլինի վեհաժողովը, ըստ էության, դեպի Արևելք, դեպի Հայաստան թուրքական մեծ ու կտրուկ շրջադարձի (volte-face) սահմանագիծն էր: Այդպես «լարվեց» դանդաղ գործողության մահաբեր ռումբը, այդտեղ է հայոց հետագա բոլոր ջարդերի ու Մեծ եղեռնի մեկնակետն ու բուն պատճառը: Եվ հայ հեղափոխության անխուսափելի ծնունդը: Ֆրանսիայի դեսպան Կամբան իրավացիորեն նկատում էր. «Իր անգթությամբ Բարձր դուռը սրբագործեց հայկական շարժումը...»:

Թուրքական այդ շրջադարձն էլ ծնեց իր «դիվային հանճար»-ին՝ Աբդուլ Համիդին: Վերջինս, նկատում է Վարանդյանը, խնդաց «պատմության գահավիժող հորձանքի մեջ» անհատի դերը ժխտող «ձախլիկ ու անկայուն թեորիայի վրա», «ինչպես որ նա խնդաց հարյուր հազար հայկական դիակների վրա»¹³⁹: Ընդամին, Համիդի հավատամքն էր. «*Թուրքիան մեկ պայմանով* միայն կարող է

¹³⁷ Բանաստեղծ Գամառ-Քաթիպան ևս կանխատեսել էր թուրքական շրջադարձը: Նա գրում էր.

Սլավոնի ձեռքեն թափված շրթան Քեզ պինդ կկապե, խոճոճ ւ՛կ Հայաստան:

¹³⁸ Ի դեպ, Ռուբենը (Սինաս Տեր-Սինայան) Բալկանյան պատերազմի ընթացքում (1912թ.) գտնում էր, որ գուտ դիվանագիտական ճանապարհով հնարավոր չէ լուծել Հայկական հարցը, և ստեղծվել է նպաստավոր վիճակ Արևմտյան Հայաստանում ապստամբության կազմակերպելու համար: «Պետք է... օգտվիլ թուրքերու պարտությունեն և Պալքաններուն մեջ ու Պոլտ շուրջ չափազանց զբաղված ըլլալեն և ոտքի հանել Թրքահայաստանը» (տե՛ս Դարբինյան Ռ. Կյանքիս գրքեն, Բեյրութ. 1972, հատ. Ա. էջ 421): Ռուբենի առաջարկը Պոլսի Ազգային խորհուրդը մերժեց: Եվ իզուր: Թեկուզև ճիշտ էր գնահատված ռազմավարական հաշվեկշիռը Թուրքիայի շուրջ: Սակայն պատմությունը «թթե»-ներ չունի: Ավելին. ռազմավարական իրադրության ճշգրիտ ընկալման տեսանկյունից շշմեցնող է Բալկանյան պատերազմում թուրքերի դեմ կովող Անդրանիկի ջոկատի վիրավոր զինվորի կանխազգացումը: Ես, պատմում է տարաբախտ հայորդին, պառկած էի Ֆիլիպպոլի հոսպիտալում շուրջ 10 օր: Մեզ է այցելում Բուլղարիայի թագուհին, հարցաքննում է ամեն ինչի մասին: Ես նրան ասում եմ. «Ձեզ համար արդեն լավ է: Դուք թուրքերին քշում եք Ասիա, իսկ նրանցից մեզ համար կրկնակի վատ է լինելու»: Թագուհին պատասխանում է. «Սպասեք, ձեզ համար էլ լավ է լինելու» [Троцкий Л. Перед историческим рубежом. Балканы и балканская война (1913г.), изд. 1926 - Ст'а «Новое время». 22 января 2009г.]: (Հիրավի, երկու տարի հետո հայության համար, իրոք, լավ եղավ):

¹³⁹ Վարանդյան Մ. «Հայկական շարժման նախապատմություն». հ. 2, էջ 239:

ապրել, - այն որ բոլոր բոլոր օսմանցիները կանգնած մնան հավատարմությամբ «...» սուրբ օրենքի հինավուրց ու ամուր պատվանդանի վրա. այլապես «...» պիտի հռչակվենք քրիստոնյա պետությունների ձեռքով, որոնք բոլորն էլ ձգտում են կործանել մեզ»¹⁴⁰: Եվ հրապարակ նետվեց Հայաստանի անկախության քաղաքականությունը: (Այն իր գագաթնակետին հասավ երիտթուրքերի և Քեմալի կառավարման տարիներին):

Օսմանյան քաղաքական միտքը, նրա քաղաքական ղեկավարությունը՝ Համիդը, երիտասարդ թուրքերը և նրանց հաջորդները, գտնում են և իրագործում համապատասխան քաղաքականություն: Հաշտեցնում և համադրում են երկու ներհակ ուղղություն՝ մի ձեռքով «տալիս են» բարենորոգումներ (Պոլսում և կայսրության այլ կենտրոններում) հայերին, սիրիացիներին, արաբներին, մյուս ձեռքով (հատկապես գավառներում, *բում Հայրենիքում*) հետ առնում այն, ամայացնում երկիրը:

1877-1878 թվականներից սկսած՝ կայսրության ողջ տարածքում սկսվում է մինչ այդ նախադեպը չունեցող «արյան ու ավերածի աշխարհասասան քաղաքականություն»:

Գործի է դրվում նաև *քրդական* մահակը: Թուրք կառավարության կողմից վարպետորեն օգտագործվում են հայ-քրդական հակասությունները, նոմադ (քոչվոր) ցեղի տնտեսական շահագրգռություններն ու նախաքաղաքակրթական բնագոյները: Համիդը օգտվում էր այն նկատառումից, որ հայոց հարցը «իր իրավական ծագման մեջ» հայ-քրդական հարաբերությունների հարց էր, որը գոյություն է ունեցել դարերից ի վեր, իրապես (de-facto), թեկուզև իրավապես (de-jure) հրապարակ է հանվել 19-րդ դարի 70-ական թվականներին միայն¹⁴¹: Չէ՞ որ մինչ այդ ոչ մի այլ տարր պատմական Հայաստանի սահմաններում այն աստիճան չի վնասել հայության ֆիզիկական ու մշակութային գոյությանը, ինչպես քուրդը:

Արևմտյան Հայաստանի վիճակն էլ ավելի էր ծանրանում Ռուսաստանի գաղութարարական ռազմավարության հետևանքով, որը Վարանդյանի բնութագրմամբ՝ «զուտ քաղաքական-նվաճողական բնույթ ուներ»¹⁴²:

«Մի կողմից՝ Ռուսաստանի միջամտության մշտնջենավոր երկյուղը, մյուս կողմից՝ պանթուրանական ծրագիրը (կովկասյան մահմեդականների հետ շաղկապվելու երազը), դրդել են օսմանյան վարիչներին՝ գործադրելու Թուրքահայաստանում ավելի խոշոր ծավալով այն ավանդական թուրքական մեթոդը, որ գործադրված էր ժամանակին Հունաստանում և Բալկանյան այլ երկրներում»¹⁴³, - գրում է Մ.Վարանդյանը:

Ռուսաստանի միջամտության այս վտանգը առիթ էր տալիս թուրքերին «պարպել Հայաստանը հայերից» և, միաժամանակ, շահարկելով եվրոպական պետությունների, ազդեցիկ քաղաքական ուժերի և նույնիսկ ժամանակաշրջանի ամենաարմատական քաղաքական հոսանքների՝ հանրապետականների ու կոմունիստների՝ Լիբկնեխտ, Հայնդման, Լոնգե և այլն, «անհաշտ և թունավոր ատելությունը» հանդեպ ցարիզմը, նրանց մեջ սերմանել, ամրապնդել Թուրքիայի ամ-

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 246:

¹⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 96:

¹⁴² Տե՛ս նույն տեղը, էջ 204:

¹⁴³ «Հայրենիք», 1926, թիվ 4, էջ 85:

բողջականության «դոզմը», «գոհաբերել նրան մորթոտվող ու մարտնչող թուրքահպատակ ժողովուրդներին»:

Եվ, ի վերջո, հաղթում էր «Մեծ Բրիտանիո հղացած դոզմը»։ «Օսմանյան կայսրության ամբողջությունը անհրաժեշտ է միջազգային խաղաղության համար, պետք է ամեն գնով պահպանել այն՝ Ռուսիո հարձակողական ընթացքի հանդեպ»:

Ռուսաստանն իր հերթին դեպի Առաջավոր Ասիա ծավալման իր քաղաքականության մեջ, Պետրոս Մեծից սկսած, Թուրքիայի պարագայում հենվում էր գլխավորապես սլավոնների ու հույների, իսկ Պարսկաստանի դեպքում՝ հայերի վրա: «Երկու ճամբաներով էլ,– գրում է Մ. Վարանդյանը,– հյուսիսային «Կոլոսը» դիմում էր իր գորգուրած նպատակետին: Մի կողմից՝ դեպի Ստամբուլ, մյուս կողմից՝ դեպի Թեհրան, որի գրավումով ռուսական դրոշը մոտենում էր Հնդկաստանի սահմաններին...»¹⁴⁴: Ընդամին, այս քաղաքականության շրջանակներում՝ Կովկասյան ուղղության *փոխհատուցող* նշանակության շեշտադրումով: (Այսպես, ռուսական բանակի հռչակավոր գորավար Մ. Լորիս-Մելիքովի կենսագիրները, անդրադառնալով նրա դերակատարությանը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմում, իմիջիայլոց նկատում են. «Ռազմական գործողությունների կովկասյան թատերաբեմը պետք է, որ հակառակորդի ուժերը հեռացնել Բալկաններից»¹⁴⁵):

Ուրեմն, պատահական չէ, որ Ռուսաստանն իր արևելյան քաղաքականության մեջ առաջնորդվեց Հայոց հարցի լուծման *«հավիտենական ձգձգումների ու վախճանական վիժումի»* (ընդգծումն մերն է Լ.Շ.) անխախտ ռազմավարությամբ: Այն բխում էր ռուսական գաղութարարության էությունից: Ռուսաստանի համար, ընդգծում է Վարանդյանը, «հետաքրքրականը ապագա *գրավումի ու կցումի* ծրագիրն էր...»¹⁴⁶:

Հայությանը Ռուսաստանը տեղ էր տալիս այնքանով, որքանով նա անհրաժեշտ էր կայսրության զարգացման, տնտեսական, առևտրական ու մշակութային բարգավաճման, ինչպես նաև իր նվաճողական քաղաքականության իրականացման համար:

Սակայն նույնիսկ այս պարագայում Վարանդյանին չի դավաճանում իրատեսությունը: Նա հավանություն չի տալիս Ներսես Վարժապետյանի հակառուս, թեկուզև առարկայական հիմքերով թելադրված տրամադրություններին, իսկ ուրուշակի վերապահումներով՝ քննադատում է նրա կողմից շրջանառության մեջ դրված 1878թ. շրջաբերականը: Թեկուզև, որպես հետևանք Ռուսաստանի քաղաքականության, այդ տրամադրությունը որոշակի հող ուներ նաև «թուրքահայ դեկավարող տարրելու աչքերին», քանզի նրանց աչքում «այդ քրիստոնյա աշխարհակալող ուժը, ճիշտ է, կխնայե հայ ազգին «մարմինը», կպահպանե անոր ֆիզիկական գոյությունը, բայց կսպանե... «հոգին»¹⁴⁷:

Ուշագրավ է ռուսական աշխարհակալության «համապատասխան տակտիկի» վարանդյանական ընկալումը. «ռուսական վտանգը» մի կետում վայրկե-

¹⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 188:

¹⁴⁵ Итенберг Б.С. Твардовская М.Т. Граф М.Т. Лорис-Меликов и его современники. М. 2004. էջ 31:

¹⁴⁶ «Հայրենիք», 1928, թիվ 9, էջ 87:

¹⁴⁷ Նույն տեղում:

նաբար «չքանալով», լույս էր ընկնում մի այլ կետում, «ավելի ուժեղ ու սպառնական»: Ելնելով իր աշխարհակալական նկրտումներից, որի հիմքում ընկած էր «տիրապետության տենչը», Ռուսաստանը «նախ իր «հովանավորության» տակ է առնում որևէ երկիր, ապա հարուցանում է նրա մեջ երկպառակտումներ, վերջապես, միացնում է իր թագավորությանը, որպեսզի «վախճան դրվի» այն խռովություններին ու անկարգություններին, որ նա «ինքն է ստեղծել կամ հանդուրժել»¹⁴⁸:

Եվ եթե Օսմանյան կայսրության հանդեպ «խորքին մեջ» նույնն է եղել Ռուսաստանի (և ոչ միայն նրա) ռազմավարությունը՝ անընդհատ «համեղ պատառներ» պոկել նրա նեխոդ ու անդամահատվող մարմնից, տարբեր է եղել իրագործման եղանակը՝ կախված պատմական տարբեր վիճակներից և միջազգային ուժերի դասավորությունից, մասնավորապես Անգլիայի հետ ունեցած մրցակցության ներուժից: Այդ առումով Ալեքսանդր Երկրորդի սպանությունից և վարչապետությունից Լորիս-Մելիքովի հեռացումից հետո, երբ հայոց առաջադիմության համար ստեղծվել էին համեմատաբար բարենպաստ ներքին պայմաններ, և Հայաստանի զգալի տարածքներ միացվել էին կայսրությանը, երբ նպաստավորվում էր հայկական առաջադիմությունը, և երբ Ռուսաստանի իրական շահն էլ պահանջում էր «բարձրացնել ռուսական դրոշին փարած մի ազգ...», այս անգամ էլ Ռուսաստանն է ապրում ներքին քաղաքական հետադիմություն, արտաքին քաղաքական (հերթական) կտրուկ մի շրջադարձ (volte-face):

Եվ Անգլիայի «մտրակի» հարվածների տակ հեռանալով Մերձավոր Արևելքից՝ Ռուսաստանն այժմ ինքն է որդեգրում Օսմանյան կայսրության «ամբողջության դոգմը»: Ճիշտ է, ժամանակավորապես: Այս շրջանում էր, որ հանդես եկավ մի նոր գիշատիչ՝ Կայզերական Գերմանիան, որը աստիճանաբար ամրապնդեց իր դիրքերը Բոսֆորի ափերին, «չեզոքացրեց բոլոր մրցակից ուժերը» և որոշեց «փրկել կայսրության ամբողջությունը»¹⁴⁹:

Սակայն գալիքում իր վերադարձն ապահովելու և Թուրքիայից նոր պատառներ, թեկուզև հենց Թուրքահայաստանը պոկելու ակնկալիքով «Ռուսաստանին ձեռնտու էր, - նշում է Վարանդյանը, - պահպանել թուրքահայ գավառներում մշտնջենավոր քառս, մի հարատև անիշխանական վիճակ, որ կարող էր առիթ լինել շահավետ միջամտություններին»¹⁵⁰: Ռուս դիվանագիտությունը դարձավ Համիդի «ջերմ բարեկամը», իսկ Հայաստանը և Հայկական հարցը շուտով զգացին լրբանովականության մահաբեր շունչը:

Ու դա մի ժողովրդի հանդեպ, որը Առաջավոր Ասիայում գրեթե երկու դար եղել էր ռուսական առևտրի, մշակույթի, քաղաքական ազդեցության առաջապահ:

Վարանդյանն «ունայն աղերսանք» էր համարում օսմանյան դժոխքից դեպի Ռուսաստան ուղղված հայոց օգնության հորդորները, քանզի միայն «*նա ինքը գիտե իր գալու ժամանակը*», քանզի նա «*երբեք չի ազատել մի ժողովուրդ նրա սիրուն աչքերի համար*» (ընդգծումները մերն են. - Լ. Շ.):

¹⁴⁸ Վարանդյան Մ. Հայկական շարժման նախապատմություն. հ. 2, էջ 208-209, 194-195:

¹⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 217, 223:

¹⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 222:

Եվ հայոց համար Ռուսաստանի աղետավոր այս volte-face-ը այն շրջանում, երբ Արևմտյան Հայաստանում մոլեգնում էր Համիդի յաթաղանը, երբ 1895-ին հայկական բարենորոգումների հարցը առաջին անգամ դրված էր անգլո-ֆրանս-ռուսական դիվանագիտության սեղանին: Երբ, Անգլիան, որը Բեռլինի Վեհաժողովում, Դիզրայելիի (լորդ Բիկոնսֆիլդ) վարչապետության օրով աղետալի դեր էր խաղացել Հայկական Հարցում և թուրքերի օրինակով թուրքահպատակ հայկական նահանգները սկսել էր անվանել «Քրդստան», թերևս գերմանական «Drank nach Osten»-ի հարաճուն ճնշման տակ, թեքվել էր Հայկական Հարցի լուծման ուղին և կամենում էր 1895-1896 թվականներին, իրականացնելով Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ՝ ստեղծել «Անատոլիայի մեջ հայկական Լիբանան»: Այս անգամ էլ Ռուսաստանն էր, որ դրեց «իր վճռական վետոն, քաշելով իր ետևից դաշնակից Ֆրանսիան»:

Այնուհետև 1915-ին, երբ դրված էր արևմտահայության լինել-չլինելու հարցը, հայ կամավորական զորամիավորումներին խրախուսելու փոխարեն, նա «իր առեղծվածային նահանջներով» հնարավորություն տվեց թուրքերին «դատարկելու Հայաստանը»¹⁵¹: Եվ վերջապես, Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում, երբ հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով և անհամար զոհողություններով փորձում էր ստեղծել Միացյալ Հայաստանը, արդեն գործակցելով քաղաքակրթության ռիսերիմ թշնամու հետ, ռուսական բոլշևիզմը խորտակեց «Հայ նորածին անկախությունը»:

Ենթադրելի է, որ պատմության ընթացքը այլ կլիներ, և Ռուսաստանի ճակատագիրն ու հայոց արյունոտ իրականությունը այլ ուղղություն կստանային, եթե «Ռուսաստանի գլուխ կանգներ Սահմանադիր ժողովից ընտրվելիք օրինավոր սոցիալիստ ու դեմոկրատ կառավարությունը»: Երբ Արևմտահայաստանը, թեև ավերված ու կիսադատարկ, մինչև Երզնկա գրավված էր ռուս զորքի և հայ կամավորական զնդերի կողմից, Կերենսկու ժամանակավոր կառավարության կողմից «հռչակված էր ինքնավար» և գտնվում էր հայ փոխ-կառավարչապետ Հ. Զավրիևի հսկողության տակ, իսկ Կովկասյան Հայաստանը դեռ «լեցուն էր հայերով»¹⁵²: Սակայն այլ ընթացք ստացավ իրադարձությունների հետագա զարգացումը:

Հարվածի հիմնական ուղղությունը դիտելով քրիստոնեական արևմտյան քաղաքակրթության դեմ պայքարը, ուստի և «սոցիալիստական հեղափոխության ռեզերվն ու հենակետը Արևելքում, մահմեդական աշխարհում» փնտրող բոլշևիզմը սկսեց համագործակցել դարավոր ախոյանի՝ թուրքաց աշխարհի հետ: Եվ լույս աշխարհ բերեց լենինյան «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» (20.11.1917թ.) ուղղված ռազմավարական փաստաթուղթը, որտեղ ասվում էր. «Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի բաժանման և նրանից Հայաստանը խլելու մասին եղած դաշնագիրը պատռված է ու ոչնչացված»: (Ահա այսպես, կարճ ու հստակ):

¹⁵¹ Հիշատակելով Ռուսաստանի այս կարճատև քաղաքականությունը, Ե.Վ. Տադևն գրում է. «1915-1917 թվականներին հայերի ոչնչացումը ռազմավարորեն վերաբերում էր ոչ այնքան Անգլիային, որքան Ռուսաստանին, որը ապագայում Թուրքիայի հյուսիսում կորցնում է մի որոշ հենակետ» (ընդգծումը իմն է – Լ.Շ.) (Тарле Е.В., Политика: История территориальных захватов. XV-XX века: Сочинения. М. 2001, с. 646):

¹⁵² Այդ մասին տե՛ս Մատունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, 1914-1918թթ, Բոստոն, 1927:

Ուստի «մեծ ռազմավարության» համատեքստում ՌԽՖՍՀ ժողովրդի «Թուրքահայաստանի մասին» (29.12.1917թ.) հրամանագրի խոստումները ամբողջական հարցը միակողմանի ու անանցյալ շտրիխով սահմանափակելու, բացառապես հայոց, հատկապես նրա քաղաքականապես տհաս և քաղքենի հատվածի համար նախատեսված մտացածին պատրանքները շահարկելու փորձ են, թերևս ցեղասպանության ենթարկված մի ժողովրդի մեջ անհիմն մի տեսակետ սնուցելու նկատառում: Իսկ մեր օրերում առնվազն զավեշտական է: Հետևապես, աննշան վերապահումներով, բոլշևիկյան հռչակավոր հռչակագիրը «Թուրքահայաստանի մասին» դիվանագիտական խարդավանք է, Թուրքիային Ռուսաստանի հետ գործարքների մղելու և երկրաքաղաքական իրադրության արմատական փոփոխության նենգ ու հզոր միջոց, ինչը իրականացվեց աստիճանաբար և վարպետորեն:

Իրավացի է Վարանդյանը: Ա՛յո, «Բրեստ-Լիտովսկի օրերից ի վեր բոլշևիկյան Կոմիստերնը *սիստեմաբար գոհաբերել է* Հայկական Դատը, նա ձգտել է դեպի Արևելք, ոտքի հանելու մահմեդական աշխարհը բրիտանական կապիտալիզմի դեմ և քայլել է իր ճամբուն ընկած հայ ժողովրդի խոշտանգված մարմնի վրայից, քայլել է պաղ անտարբերությամբ, անգլոթոնեն կոխկրտելով»¹⁵³:

Եվ եթե Բրեստ-Լիտովսկը եղավ բոլշևիկյան volte-face-ի մեկնակետը, ապա Կարմիր բանակի ջախջախիչ պարտությունը Եվրոպայի դարպասների առաջ, Վարշավայի պատերի տակ 1920-ի աշնանը նրա վերջին արարը: Վերջնականապես խորտակվեց կարմիր ցնորքը՝ «վառել Եվրոպան», շղթայազերծել «համաշխարհային հեղափոխությունը»:

Մահմեդական Արևելքի հետ ռազմավարական դաշինքն այսուհետև, շուրջ յոթ տասնամյակ, մինչև Խ. Միության լուծարում, դարձավ Կարմիր Ռուսաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարը: «Թուրքիան Արևելքի մեջ, - գրում է Բորյանը, - անհրաժեշտ էր Ռուսաստանին՝ ընդդեմ Արևմտյան աշխարհակալության»¹⁵⁴:

...Նույն թվականի սեպտեմբերին, զուգահեռաբար, Բաքվում գումարվեց Արևելքի ժողովուրդների (առաջին և վերջին) համագումարը, էնվերի և, դժբախտաբար, ծագումով հայ 152 բոլշևիկների մասնակցությամբ, որտեղ Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց հետադեմ և համաշխարհային աշխարհակալության գործակալ: Այսուհետև «ի՛նչ Մոլոտև և ի՛նչ Թալեյրան կարող էր փրկել մեր երկիրը երկզկսանի վամպիրի ճիրաններից, - բացականչում է Վարանդյանը՝ դիմելով Լեոյին և ընկ., - ռուս-թուրքական դաշնակցության փորած անդունդից... Իսկ նա փորված էր դեռ Տրապիզոնի համաձայնությամբ»¹⁵⁵:

Եվ այսպես, եթե հայ ժողովուրդը եղավ «ամենամեծ զոհն» անգլո-ռուս «անիծակոտ հակամարտության», եթե «հայ հեղափոխական շարժումը գալարվեց նրա պողպատյա օղակների մեջ և դեռ նոր փթթված՝ ուժասպառվեց»¹⁵⁶, ապա «տկար, դողահար Օսմանյան կայսրությունը կարողացավ դարերով երկարել իր *հոգեվարք*, հակառակ Եվրոպական ամենեն մեծ ու հզոր պետությանց ընչաքաղ-

¹⁵³Տե՛ս «Հայրենիք», 1926, թիվ 3, էջ 106:

¹⁵⁴ Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, М., 1929, ч. II, ст. 285:

¹⁵⁵ «Հայրենիք», 1926, թիվ 3, էջ 104:

¹⁵⁶ Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմություն. հ. 2, էջ 190:

ցության, ահավոր թշնամությանց, կրկնակի հարձակումներին և հաղթանակներին:

Ինչու՞: Տկարներին պահպանող այդ ուժը մի փոքր տարագ էր՝ *ուժերի հավասարակշռություն*»¹⁵⁷:

Հ.Գ. - Այդուհանդերձ, անհրաժեշտ է ընդունել, որ ժամանակի հայ գիտաքաղաքական միտքն ու հայոց ազգային ընտրանին, ինչպես ցույց է տալիս Հայաստանի ազատագրության դժվարին ու ողբերգական ընթացքը «ուժի հավասարակշռության եվրոպական համակարգի» մութ ծալքերում, մինչև Մեծ եղեռն չկարողացավ գնահատել Օսմանյան կայսրության իրական տեղն ու արժեքը ժամանակի ռազմավարական աշխարհի կառուցվածքի մեջ և նրա համար:

Տուրք տալով մշակութային-քաղաքակրթական չափորոշիչներին և գաղափարախոսական դոգմաներին, նա չըմբռնեց, որ «Համանվագի» տեսանկյունից Օսմանյան կայսրությունը «եվրոպական խոշոր տերություն» էր, որ «անձեռնմխելիությունն այն բանի, ինչը մնում է Օսմանյան կայսրությունից, դա սկզբունքներից մեկն է, որոնց վրա հիմնվում է ուժերի հավասարակշռությունն ու խաղաղությունն Եվրոպայում»... (Բուալիայի վարչապետ Ջիովիտտի, 1911 թ. ապրիլ)¹⁵⁸:

Л.К. ШИРИНЯН – *Национальный аспект армянского вопроса – реалист Вардьян*. – Армянская национальная революция породила своих теоретиков, а также вдохновенных деятелей революции. В этом созвездии свое особое место занимает философ европейского толка, тонкий оратор, политолог-интеллигент, видный деятель Социтерна, один из основателей дипломатии Первой Республики Микаел Вардьян.

Статья посвящена анализу теоретического наследия этого оригинального мыслителя, а также исследованию эволюции армянского вопроса в контексте Европейской политики.

¹⁵⁷ Հյուսէյն Ջահիդ (Յալչըն) (թուրք լրագրող).- Տէ՛ս Նավասարդյան Վ., Նեղուցները (Վոսփոր և Դարդանէլ): Թրքական ջրուղիները և Հայ Դատը. Կահիրե 1947, էջ 251-252:

¹⁵⁸ Джон Д., Истоки Первой мировой войны. Пер.с англ., Ростов на Дону 1998, ст.324:

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ**

Գ.Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Վարչական իրավունք» վերտառությունը շրջանառության է մտել ավելի ուշ, քան հանդես են եկել առաջին պետական կազմավորումները, հընթացս ժողովրդավարական վարչակարգերի ձևավորման: Մակայն, սա ամեննիս այն հետևության ճանապարհով չպետք է տանի, թե այդ իրավունքը առաջացել է հենց այդ ժամանակ: Որպես իրավունքի տարատեսակ, առանց հիշյալ վերտառությամբ, այն գոյություն է ունեցել պետականությունների նախաշեմին, քանզի պետությանը նախորդած իշխանության առաջացումը նույնպես պահանջում էր իրավական գործունեության հենք: Այդ հենքը սովորության իրավունքն էր: Հարկավ, սա չպետք է այն տպավորությունն ստեղծի, թե մենք նույնացնում ենք սովորության իրավունքը վարչական իրավունքի հետ: Բայց և անհնար է անտեսել, որ սովորության իրավունքը, որն առաջացավ այն ժամանակ, երբ սովորությամբ դարձավ պետական իրավունքի նորմա, իր մեջ չէր կրում վարչական իրավունքի տարրեր: Ընդհակառակը՝ այդ իրավունքի բաժնեչափը մեծ էր սովորության իրավունքում, որը նշանակում էր սովորությունների հիմքով կառավարում: Իսկ չէ որ վարչական իրավունքը, որը շատ երկրներում ընդունված է կոչել ադմինստրատիվ իրավունք, նշանակում է կառավարման, ղեկավարման իրավունք, որը տրված է գործադիր իշխանությանը (ադմինստրացիա բառը, որն ունի լատինական ծագում նշանակում է կառավարում):

Մինչև վարչական իրավունքի հայկական պետական կազմավորումներում բնորոշումներին անցնելը, փորձենք տալ նրա ընդունված ձևակերպումը, այն է՝ վարչական իրավունքն այն իրավական նորմերի ամբողջությունն է, որը կարգավորում է գործադիր իշխանության գործառույթները: Իսկ այդ գործառույթներն ընդգրկուն են՝ կառավարում, ղեկավարում, իշխում, հսկում, կարգավորում և այլն:

Մարդկության պատմության զարգացման ողջ ընթացքում գործադիր իշխանության գործառույթների բաշխման սկզբունքների տարբերությամբ են բնորոշվել վարչական իրավունքի առանձնահատկությունները: Փորձենք վարչական իրավունքի դրսևորման առանձնահատկությունները ներկայացնել հայկական պետականությունների զարգացման ընթացքում:

Հայկական հին քաղաքակրթությունները ունեցել են իշխանության այն ձևը, որը գերմանացի մեծ քաղաքագետ Վեբերն անվանում է ավանդական: Այս իշխանությունն առաջացել է դարեր ի վեր գոյություն ունեցած կարգերին ավանդությունների ուժով ենթարկվելու շնորհիվ: Համաձայն այդ ավանդությունների՝ միապետները իշխել են կամոք Աստծու, նրանք սերել են աստվածներից, ուրեմն օրինական են և լեգիտիմ, ու նրանց հակադրվելը նշանակում է հակադրվել Աստծուն: Ուստի և, չկա այդ հակադրությունը: Ավանդական իշխանության հիմքը իշ-

խանավորներին անվերապահորեն ենթարկվելու դարերից եկած սովորույթն է, որը նախ՝ ձևավորվել է ընտանիքում, համայնքում, ապա պահվել է պետության առկայության պայմաններում: Օրինական իշխանության այս ձևը հիմնված է այն հավատի վրա, որ պետական հաստատությունները համապատասխանում են ավանդույթներին, որոնք փոխանցվում են սերնդից սերունդ: Այսպիսով, խոսքը գնում է ավանդույթների հիմքով ժառանգական միապետությունների մասին: Իսկ ինչպիսի առանձնահատկություններ ունեն վարչական իրավունքը ավանդական իշխանության պայմաններում: Բնականաբար, իրավունք այդպիսի վերստառությամբ գոյություն չունեն, բայց միապետի՝ որպես միաժամանակ գործադիր իշխանության կրողի՝ կառավարման իրավունքի ավանդույթների ուժով տրված գործառույթները, ինքնին ենթադրում են վարչական իրավունք: Այսինքն՝ տերմինի չգոյության փաստը բավարար պայման չէ ժխտելու իրավունքի այդ տեսակի գոյությունը: Ավանդական օրինական իշխանության պայմաններում գործադիր իշխանության բաշխման սկզբունքը միանգամայն այլ էր: Վարչական իրավունքը կանոնակարգում էր վարչական կառավարման մեխանիզմը, որը սովորույթների ուժով ձևավորում էր միապետը: Նա ձևավորում էր համապատասխան վարչակարգ, որով իրականացնում էր պետության կառավարումը: Լինելով նաև օրենսդիր իշխանության կրողը, նա միաժամանակ իրականացնում էր օրենսդրի և գործադիր գործառույթներ, երկիրը կառավարում էր այն նորմատիվային ակտերի համաձայն, որոնք կամ բխում էին սովորույթներից կամ էլ ինքն էր ընդունում: Ուրեմն, այստեղ խոսք պետք է գնա ոչ թե ավելի շատ գործադիր իշխանություն իրականացնող մարմինների համակարգի, այլ մարմնի մասին, որը միապետն է: Վարչական իրավունքի իրացում այս դեպքում նշանակում է միապետի կամքի դրսևորում, որը տեղեկում իրականացնում են նրա ներկայացուցիչները կամ ենթակա մարմինները: Վերին իշխանական մարմինը տեղական մարմինների հետ մեկտեղ կազմել են տվյալ պետության վարչակարգը, որն ավանդական իշխանության պայմաններում ոչ միայն գործադիր իշխանության իրականացնողն էր, այլ՝ նաև օրենսդիր և դատական: Ուրեմն, **մարդկության պատմության վաղ ժամանակներում, երբ վարչական իրավունքը միահյուսված էր իրավունքի մյուս ճյուղերին, գործադիր իշխանությունը նույնպես միահյուսված էր օրենսդիր և դատական իշխանությանը:** Թերևս այս առումով բացառություն կարող էր կազմել հանրապետական Հռոմը, ուր գործադիր իշխանությունն օրենսդիրից առանձնացված էր և կային կառավարման իրավունքը ձևավորած օրենքներ:

Չայոց պետականությունների պարագայում պետք է մատնանշել, որ վաղ հեթանոսական քաղաքակրթությունները, որոնք, հարկավ, մտնում էին ավանդական իշխանության դասակարգման մեջ, գործադիր գործառույթները իրականացնում էին սեփական օրենսդրությամբ տրված լիազորությունների շրջանակներում, այսինքն՝ միապետները՝ նաև որպես գործադիր իշխանության իրացնողներ, իրենք էին նախորոշում այդ իշխանության գործունեության իրավական սահմանները, կամ բնորոշում կառավարման կամ կառավարչական իրավունքը, ինչպես շատ հաճախ կոչվում է վարչական իրավունքը:

Այս կամ այն վարչակարգի յուրօրինակությունը կախված է նրանից, թե օրենսդիր, դատական կամ գործադիր իշխանությունները իրարից որքանով են անջրպետված օրենքներով: Անկախ այդ իշխանությունների միջև անջրպետի չափից, կարելի է առանձին բնութագրել վարչական իրավունքով սահմանված գոր-

ծաղիր իշխանության առանձնահատկությունները ավանդական օրինական իշխանության պայմաններում:

Նախ՝ Արարատյան թագավորության մասին: Այստեղ իշխանությունը նույնպես կարելի բնութագրել ավանդական, ուստի միապետն էր հանդիսանում գործադիր իշխանության իրացնողը կամ վարչական իրավունքի երաշխավորը: Նա այդ իշխանությունը իրացնում էր բավական պարզ սխեմայով կամ պարզ վարչական կառավարման մեխանիզմներով: Այս պետության վարչական համակարգի վերաբերյալ բավական ուշագրավ են Ն. Ադունցի տեղեկությունները: Նա հետևյալն է գրում. «Գալով երկրի վարչությանը, պետք է զանազանել բուն Ուրարտուն և գենքի ուժով նվաճված տերիտորիաները, այսինքն՝ Բիաինիլին և Շուրբիլին:

...առաջինը բաժանված էր նահանգների և կառավարվում էր կուսակալների կողմից: Նահանգ նշանակող ուրարտական բառը ծանոթ չէ:

Կուսակալները ոչ միայն օգնականներ կամ փոխ – կուսակալներ ունեին, այլ նաև ստորադաս գործակալներ՝ *šaknōte*, գուցե գավառների առաջնորդներ և սպաներ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ նրանք անմիջապես իրենց հրամանի տակ բանակ ունեին: Այնպես, որ նրանք միավորում էին իրենց ձեռքում քաղաքական և զինվորական իշխանությունը»¹⁵⁹:

Ադունցից այս մեջբերումը վկայում է, որ իսկապես գործադիր իշխանությունը տարանջատված չէր օրենսդիր, դատական իշխանություններից, որտեղից էլ՝ այն եզրակացության ճշտությունը, որ վարչական իրավունքը միահյուսված էր իրավունքի մյուս ճյուղերին: Եվ սա հատուկ է եղել բոլոր ավանդական իշխանություններին:

Հայոց մինչքրիստոնեական և հետքրիստոնեական քաղաքակրթությունների համար էլ կարելի է միանշանակ պնդել, որ դրանցում գործադիրը հստակորեն սահմանազատված չէր իշխանության մյուս մարմիններից և վարչական իրավունքի նորմերի սահմանողը և գործադիր իշխանության իրացնողը թագավորն էր: Պարզապես ժամանակի ընթացքում փոխվում էր կառավարման իրացման համակարգը:

Արշակունյաց հարստության ժամանակաշրջանում, համաձայն «Գահնամակի», գործադիր իշխանությունը դարձյալ պատկանում էր թագավորին, բայց նա ուներ այդ իշխանության պետական այլ իրացնողներ ևս՝ հանձին հազարապետի, սպարապետի և թերևս՝ Հայր Մարդպետի: Հարկավ, գործադիր իշխանության իրացնողներ էին նաև նախարարները, բայց տեղերում: Ավելի մանր վարչական գործառնություններ էին իրականացնում սեպուհները: Սակայն վարչական առումով վերադասը թագավորն էր¹⁶⁰:

Բագրատունյաց հարստության շրջանում ստեղծվում է վարչական սիստեմ նոր պետական կառուցվածքին համապատասխան: Այն բաղկացած էր երկու մասից՝ համապետական, որն ընդգրկում էր ամբողջ դաշնակցային միությունը և տեղական, որոնց տակ պետք է հասկանալ «տվյալ ֆեոդալական տան սահման-

¹⁵⁹ Նիկողայոս Ադունց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 219:

¹⁶⁰ Արշակունյաց հարստության վարչական կարգերի մասին տես Հակոբ Մանանդյան, Երկեր, Բ., Երևան, 1978, էջ 320 - 341:

ներում գործող վարչական օրգանները (կենտրոնական՝ տեղական գահերեց իշխանի արքունիքին կից և տեղերում նշանակված պաշտոնյաներ)»¹⁶¹:

Գործադիր իշխանության գլուխ կանգնած էր թագավորը, որին ենթարկվում էին համապատասխան գործադիր պաշտոնյաները՝ սպարապետ հայոց, իշխանաց իշխան հայոց, իշխան հայոց, մարզպան հայոց: Այս պաշտոնները վարել են Բագրատունիները:

Յուրաքանչյուր խոշոր իշխանապետություն՝ Բագրատունյաց, Արծրունյաց կամ Սյունյաց, ուներ իր տոհմական ուստանի վարչական ապարատը¹⁶²: Դրա ղեկավարը նշանակվում էր թագավորի կողմից:

Հայրենատեր իշխանների տիրույթներում վարչական պաշտոններ էին զբաղեցնում մանր ազնվականները՝ դրա դիմաց ստանալով հողաբաժիններ՝ ցմահ տիրելու իրավունքով:

Նույնը պետք է պնդել Կիլիկիայի հայկական թագավորության մասին: Այստեղ նույնպես գործադիր իշխանության գլուխ կանգնած էր թագավորը, որն այն իրացնում էր զանազան գործակալությունների միջոցով: Վարչական մարմինները իրենց գործառույթներն իրականացնում էին այն իրավական նորմերի հիման վրա, որոնք գլխավորապես մշակվել էին Սմբատ Գունդստաբլի կողմից: Այստեղ նույնպես ստեղծվում է վարչական սիստեմ՝ նոր պետական կառուցվածքին համապատասխան: Գործադիր իշխանության գլխավոր կրողը թագավորն էր, որը միաժամանակ մարմնավորում էր օրենսդիր և դատական իշխանությունները: Գործադիր իշխանությունը նա իրացնում էր արքունի կառավարման մարմինների՝ գործակալությունների միջոցով, որոնցից կարևորները հանձնարարում էր բերդատեր իշխաններին, իսկ մանր և միջին պաշտոնները՝ ձիավորներին՝ ասպետական դասի ներկայացուցիչներին: Գործադիր իշխանությունը իրացնող գլխավոր գործակալներն էին՝ պալլը, մարաջախտը, գունդստաբլը, ջանցլերը և պոռոքսիմոսը: Թագավորի՝ որպես գործադիր իշխանության ղեկավարի իրավունքները, ինչպես նշեցինք, ներկայացրել է Սմբատ Գունդստաբլը¹⁶³: Դրանք մենք մանրամասնորեն վերլուծել ենք մեր ուսումնասիրություններից մեկում: Գունդստաբլը միապետական կառավարման տիպի պետության կողմնակից էր, նրա իրավական ըմբռնումներում, որոնք օրենքի տեսք են ստացել, թագավորն օրենսդիր, գործադիր և դատական իշխանության կրողն է:

Ընդհանրացնելով այս մասով ասվածը, պետք է ընդունենք, որ,

Առաջին. Վարչական իրավունք հասկացողությունը հայկական հին և միջնադարյան պետականությունների գոյության ընթացքում նման ձևակերպմամբ գոյություն չի ունեցել, այլ միահյուսված է եղել իրավունքի մյուս ճյուղերին:

Երկրորդ. Պետության գործադիր իշխանությունը, համաձայն հին իրավունքի, իրականացրել է թագավորը՝ վաղ շրջանի պետականությունների շրջանում ավելի պարզունակ համակարգով, իսկ միջնադարյան պետականությունների գոյության փուլերում՝ ավելի ընդլայնված:

¹⁶¹ Ռ.Ի. Մաթևոսյան, Հայոց թագավորության վարչական կարգը 10 – 11-րդ դարերում, տես «Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, Երևան, 1981, էջ 120:

¹⁶² Նույն տեղում, էջ 122:

¹⁶³ Տես Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Գ. Գալստյանի, Երևան, Հայպետհրատ, 1958:

Երրորդ. Տեղական վարչական իշխանությունները գործադիր վերադաս մարմնի՝ միապետի նման չեն հանդիսացել միայն գործադիր իշխանության իրացնողը, այլ՝ եթե ոչ օրենսդիր, գեթ զինվորական և դատական:

Այս բոլորը միապետական կառավարման տիպի հայկական պետականությունների համար: Իսկ ինչպիսի փոփոխություններ կրեց վարչական իրավունքը հայկական հանրապետական կառավարման տիպի պետություններում: Նախ, փորձենք ընդհանուր կողմերով բնորոշել այն Հայաստանի առաջին Հանրապետության(1918 – 1920թթ.) գոյության շրջանում: Մինչ այդ պետք է շեշտել, որ այս պետականությունը մտնում է Մ. Վեբերի տարաբաժանած և քաղաքագիտության մեջ ընդունված օրինական իշխանության ռացիոնալ (բանական) տարատեսակի մեջ: Իսկ ինչ է այն ներկայացնում իրենից: Իշխանության այս ձևը հենվում է այն համոզմունքի վրա, որ կառավարումն օրինական է, քանզի ձևավորված է ընտրությունների արդյունքում: Լեգիտիմ իշխանության այս տարատեսակը բնորոշ է սահմանադրական պետություններին, որտեղ իշխում է այսպես կոչված օրենքի դիկտատուրան: Այսինքն՝ խոսքը գնում է ժողովրդավարական քաղաքական համակարգերի մասին: Հայաստանի առաջին Հանրապետությունը թեև չունեցավ սահմանադրություն, բայց ուներ ռացիոնալ իշխանություն, քանզի իր էությամբ ժողովրդավարական էր: Վարչական իրավունքը նրա գոյության շրջանում տարանջատվում է իրավունքի մյուս ճյուղերից, քանզի գործադիր իշխանությունն իր գործառնություններով տարանջատվում է իշխանության մյուս տեսակներից: Այն իրացվում է կառավարության կողմից, որը գլխավորում էր վարչապետը, նախարարապետը կամ մինիստր - նախագահը: Կառավարությունը ընտրվում էր խորհրդարանի կողմից, այն քաղաքական ուժից, որը կազմում էր մեծամասնություն: Երկու օրենսդիր մարմնում էլ այդ ուժն հանդիսացել է Հ. Յ. Դաշնակցությունը: ՀՀ վարչական համակարգը մինչև 1920թ. մայիսյան խռովություններն իրենից ներկայացնում էր այլ պատկեր և բոլորովին այլ՝ այդ խռովություններից հետո: Մինչև 1920թ. մայիսի 5-ը, այսինքն Բյուրո-կառավարության իշխանության գալը, տեղերում գործադիր իշխանությունը իրացվում էր գավառապետների միջոցով: Մայիսի 5-ի կառավարության նիստով Հայաստանը բաժանվում է չորս՝ Արարատյան, Շիրակի, Կարսի և Սյունիքի¹⁶⁴: Սակայն Ղազախի շրջանն, իր կարևորության համար թողնված էր որպես անկախ գավառ՝ հետո Շիրակի մարզին միանալու համար¹⁶⁵: Ինչպես այս վարչական փոփոխությունից առաջ, այնպես էլ հետո, կարելի է պնդել, որ չնայած վարչական առումով խորհրդարանի ընդունած իրավական ակտերին, ՀՀ վարչական համակարգը մնաց անկատար: Մրա պատճառը հիմնականում հետևյալն էր՝ թեև գլխավոր գործադիր իշխանություն մտնում էր կառավարությունը, բայց հստակ չէին տեղական վարչական մարմինների վերադաս մարմինները: Այսինքն՝ նահանգները և նրանց մեջ մտնող գավառները, իրենց պետերով, միաժամանակ գտնվում էին տարբեր նախարարությունների ենթակայության տակ: Այսպես, Արամ Մանուկյանի ներքին գործոց նախարար լինելու շրջանում (1918թ. հունիս – 1919թ. հունվար) նրա ենթակայության տակ էին գտնվում գրեթե բոլոր նախարարություն-

¹⁶⁴ Տե՛ս Կ. Սասունի, Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները (Հայաստան 1920-ին), Պէյրոս, 1968, էջ 121:

¹⁶⁵ Նույն տեղում:

ները և սրանց ենթակա տեղական վարչական մարմինները: Սա պայմանավորված էր ոչ միայն վարչական իրավունքի ոչ կատարելիությամբ, քանզի Հայաստանում գործում էին ցարական Ռուսաստանի և ժամանակավոր կառավարության օրենքները, այլ նաև ժամանակի բարդ ու հակաական լինելու հանգամանքով: ՀՀ ներքին և արտաքին թշնամիներով շրջապատված լինելու հանգամանքը պահանջում էր ժողովրդավարական կառավարման համակարգից ժամանակավոր շեղում, որը օրինաչափ և ճիշտ էր համարում Արամը, իսկ Բյուրո-կառավարության շրջանում՝ պաշտպանության և ներքին գործոց նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը: Այնպես, որ վարչական օրենքները լիարժեքորեն ի գործ դնելու համար ոչ ժամանակներն էին նպաստավոր և ոչ էլ վերևից ներքև դրան համակարգված գործելու հնարավորություններն էին անկաշկանդ: Արդյունքում՝ **ՀՀ շրջանում վարչական իրավունքը տեսականորեն գոյություն ուներ ժողովրդավարական պետությունների պահանջների համապատասխան, բայց գործնականում այն մասնակիորեն էր կյանքի կոչվում այդ պետականության տարածքային սահմանների ոչ հստակությամբ պայմանավորված:** Ուստի և, Հայաստանի առաջին Հանրապետության վարչական համակարգը լիարժեքորեն չկայացավ, չնայած այն հանգամանքին, որ մատնանշում էր ժողովրդավարական սկզբունքներ, որոնք բնորոշ են ռացիոնալ իշխանություններին:

Խորհրդային Հայաստանի շրջանում վարչական իրավունքը առավել զարգացում ապրեց: Հասկանալի է, որ մաս կազմելով Խորհրդային Միության, Հայաստանը պետք է ընդօրինակեր իրավունքի այս ճյուղի այն հիմնադրույթները, որոնք մշակվում էին Մոսկվայում: Քանի որ ԽՍՀՄ իշխանությունը կարելի է համարել խարիզմատիկ կամ մարգարեական, քանզի նրա էությունը լրիվ համապատասխանում է Մ. Վեբերի մատնանշած նմանաբնույթ պետությունների հատկանիշներին, ապա չի կարելի պնդել, թե վարչական իրավունքը ԽՍՀՄ-ում լիովին իրացվում էր ադմինստրատիվ իշխանությունների կողմից: Դրանում համոզվելու համար անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ է ենթադրում խարիզմատիկ լեգիտիմ իշխանությունը: Վեբերի բնորոշմամբ՝ այն հենվում է առաջնորդի առանձնահատուկ անհատական հատկանիշների նկատմամբ զանգվածների կույր հավատի վրա, համաձայն որի՝ վերջինս ընկալվում է որպես անփոխարինելի և աստվածային հատկանիշներով օժտված անձնավորություն: Այդ պատճառով նա հաճախ աստվածածվում է, և ստեղծվում է նրա անձի պաշտամունքը: Իշխանության այս ձևը ավելի շատ ձևավորվում է հեղափոխությունների արդյունքում: Հասկանալի է, որ այս դեպքում վարչական իրավունքը համապատասխանեցվում է իշխող անհատի կամ նրա առաջնորդած քաղաքական ուժի շահերին, քանզի նման իշխանությունը ենթադրում է ամբողջատիրական ռեժիմ:

ԽՍՀՄ-ի և բնականաբար ՀԽՍՀ-ի գոյության շրջանում վարչական համակարգը ամբողջովին կախյալ էր կուսակցապետերից, իսկ սա նշանակում է, որ վարչատարածքային մարմինները իրենց իշխանությունն իրացնում էին կուսակցական կամքի լրիվ հաշվառումով: Վարչական բարձրագույն մարմինը սկզբում Կենտգործկոմն էր, ապա՝ Մինիստրների խորհուրդը, որի տեղական մարմիններն Հայաստանում քաղկոմների և շրջկոմների գործադիր կոմիտեներն էին: Սա համաձայն վարչական իրավունքի նորմերի, բայց գործնականում այդ մարմինների գործառույթները թելադրվում էին կուսակցական օղակներից: Եզրակացությունը մեկն է՝ **ԽՍՀՄ և ՀԽՍՀ շրջանում վարչական իրավունքն ավելի կատարելագործ-**

ված էր, բայց նախասահմանած գործառույթներն ու դրանք իրականացնող մարմինները կախյալ էին կուսակցական համակարգից: Վարչական համակարգը և կուսակցական համակարգը միախառնված էին:

Հայաստանի երրորդ հանրապետության շրջանում վարչական իրավունքը ընդունեց միանգամայն նոր երանգ: Այդ իրավունքով գործադիր իշխանությունը իրացվում է ՀՀ կառավարության, նախարարությունների, մարզպետարանների և գյուղապետարանների միջոցով: Կարևոր է մատնանշել, որ գործադիր իշխանության մարմինները միտում ունեն կարգավորել նաև հասարակական հարաբերությունները, որոնք վերաբերում են հասարակական կարգերին, մարդու և քաղաքացիների իրավունքների և պարտականությունների պահպանմանը: Հայաստանի երրորդ հանրապետությունը նույնպես առաջին հանրապետության նման բնորոշվում է իր ռացիոնալ իշխանությամբ, այսինքն՝ տեսականորեն ամրագրված են ժողովրդավարական պետության կառուցման սկզբունքները, որոնցում կարևոր է վարչական իրավունքի և նրանից բխող կառավարման կատարելագործումը: Կարծում ենք, որ վարչական իրավունքում առկա նոր միտումն այն է, որ իրենց մշտական և ամենօրյա գործունեության մեջ պետական կառավարման մարմիններին իրավունք է տրվում հարաբերությունների մեջ մտնել ոչ միայն միմյանց, այլ նաև քաղաքացիների և ոչ պետական կազմավորումների հետ: Այսինքն՝ ընդլայնվում է վարչական իրավունքի առարկան:

Կարծում ենք նաև, որ սրանք են այն հիմնական առանձնահատկությունները, որոնք ունեցել են վարչական իրավունքը և այն իրացնող մարմինները Հայաստանի երեք հանրապետությունների շրջանում: Ավելացնենք, որ ինչպես իրավունքի ցանկացած տարատեսակ, վարչական իրավունքը նույնպես քարացած չէ, ենթակա է անընդհատ փոփոխությունների և կատարելագործման, բայց դրանց ելակետը պետք է լինի կառավարման առավել ժողովրդավարացման և պարզեցման սկզբունքը:

Г.С. АРАКЕЛЯН – Особенности развития административного права в армянских государственных формированиях. – В статье делается попытка определить основные аспекты развития административного права в армянском монаршем до- и послехристианском государстве, а также в трех республиках. Показано право реализации административных функций в отдельных видах политических разностей.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Մ.Ի. ՀԱԿՈԲՅԱՆ

Անձի հոգեբանության արդի տեսությունների ուսումնասիրությունը կրկին անգամ գալիս է հաստատելու այն միտքը, որ ինքնագիտակցությունը առանցքային նշանակություն ունի անձի ձևավորման գործում: Թե՛ արևմտյան և թե՛ նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում անձի հոգեբանության տարբեր տեսություններում առաջադրվող հոգեամոքիչ, հոգեշտկողական և զարգացնող ամենատարբեր տեխնիկաներում ինքնագիտակցության գործընթացը հանդես է գալիս որպես մարդու հոգեկան առողջության, անձնային աճի, հոգեբանական հասունության գրավական [1], [2], [3], [8], [10]:

Հոգեբանական նորագույն գաղափարների ենթատեքստում խիստ արդիական է ինքնագիտակցության հասկացության հոգեբանական բովանդակության ուսումնասիրությունը, դրա հիմնական բնութագրիչների բացահայտումն ու առանձնացումը: Այս անհրաժեշտությամբ է պայմանավորված սույն տեսական հետազոտությունը, որի նպատակն է հոգեբանական տարբեր մոտեցումների համադրավերլուծության միջոցով ներկայացնել ինքնագիտակցություն հասկացության հոգեբանական բնութագիրը, ճշգրտել դրա սահմանումը, առանձնացնել հիմնական բնութագրիչները, ինչը հնարավորություն կտա ամենատարբեր հետազոտություններում կիրառելու դրանք՝ որպես ինքնագիտակցության ուսումնասիրության չափորոշիչներ:

Ինքնագիտակցության հիմքում ընկած են ռեֆլեքսիան, մարդու ընդունակությունը գիտակցելու ներհոգեկան այն բովանդակությունը, որ նա համարում է իր անձի, իր ինքնության, իր Ես-ի բաղկացուցիչը: Որպես սուբյեկտի գիտակցական գործունեության եղանակ՝ այն օրգանապես ընդգրկված է անձի կառուցվածքում՝ որպես դրա բաղադրիչ: Ինքնագիտակցությունը մարդու ընդունակությունն է՝ անմիջական հարաբերակցության մեջ մտնելու ինքն իր հետ, ընկալելու իրեն որպես հաղորդակցման և գործունեության սուբյեկտ: Սակայն բոլոր դեպքերում մարդու կողմից սեփական Ես-ի գիտակցումը անմիջական չէ, այն միջնորդավորված է արտաքին աշխարհի և այլ մարդկանց հետ մարդու ունեցած առնչություններով: Ինքնագիտակցությունը թույլ է տալիս իրականացնել սեփական անձի գիտակցումը աշխարհի հետ ամենաբազմապիսի փոխհարաբերությունների մեջ [5], [11], [13], [15]:

Որպես գիտակցության հատուկ ձև՝ ինքնագիտակցությունը ենթադրում է սուբյեկտի իմացաբանական հարաբերություն օբյեկտի նկատմամբ: Այդ տեսակետից՝ դրա հիմնական գործունեությունը ինքնաճանաչողությունն է: Իմացության

հիմնական օրինաչափությունների համաձայն՝ ինքնագիտակցությունը իր արտացոլիչ գործունեության մակարդակներում հաջորդաբար շարժվում է զգայականից դեպի ռացիոնալ իմացության, որոնք սուբյեկտի օնտոգենետիկ զարգացման գործընթացում հանդես են գալիս որպես մտածողության զարգացման հաջորդական փուլեր [11], [12], [15]:

Օբյեկտի զգայական առկայության փաստումը ինքնաճանաչողության ելակետային և անհրաժեշտ պահն է: Զգայական մակարդակում անհատը հարաբերվում է օբյեկտի հետ անմիջականորեն, նա զգում է դրա գոյության առկայությունը: Այս մակարդակում ինքնագիտակցության ելակետային կառուցվածքային տարրը ինքնազգայությունն է, որին հաջորդում է ինքնաընկալումը, ապա «Ես մտապատկերը» կամ «Ես պատկերը», որը ձևավորվում է դրանց գործառնության արդյունքում: Ինքնազգայությունից անմիջականորեն հառնում է ինքնաընկալումը, որը՝ որպես կառուցվածքային ամբողջություն, իրենից ներկայացնում է ինքնազգայությունների հանրագումար՝ բարձրացված որակական նոր աստիճանի: Ինքնաընկալումը արդեն մտածող հայեցում է [11], [12], [15]:

Ինքնազգայության և ինքնաընկալման տվյալները ամփոփվում են «Ես մտապատկերում» կամ «Ես պատկերում»: „Ես պատկերը“, ինքնաարտացոլման գործընթացի կարևոր աստիճան է, քանի որ հարաբերականորեն ազատ լինելով օբյեկտի անմիջական ներգործությունից և ընդհանրացնելով զգայարանների տվյալները ամբողջական միասնական ակնառու կերպարի մեջ՝ հնարավորություն է տալիս զգայականից բարձրանալու դեպի ռացիոնալ ինքնաիմացության: Այդ վերելքը ընթանում է այնպես, որ երբ միտքը հեռանում է անմիջական հայեցումից՝ զգայություններից, ընկալումից ու մտապատկերներից, այն կրկին վերադառնում է հետ՝ նորովի հարստացնելով դրանց բովանդակությունը [11], [12], [15]:

Ռացիոնալ իմացության կամ մտածողության մակարդակում ինքնաճանաչողությունը ներկայանում է որպես սեփական ինքնության նպատակաուղղված, միջնորդավորված և ընդհանրացված արտացոլում, սեփական անձի ստեղծագործական կառուցողական վերափոխում, ինչը օրինաչափորեն ենթադրում է ինքնաճանաչողական խնդիրների առաջադրում և լուծում: Անցումը մտածողության միջնորդավորող, ընդհանրացնող, վերացարկող և սիմվոլիկ գործունեությունը հնարավորություն է տալիս հաղթահարելու զգայական իմացության սահմանափակությունը, բացահայտելու երևույթների էությունը [11], [12], [15]:

Ռացիոնալ մակարդակում ինքնաիմացությունը հաջորդաբար զարգանում է դոգմատիզմի և սկեպտիցիզմի հերթական փուլերով դեպի դիալեկտիկա: Դիալեկտիկական մակարդակում ինքնաիմացությունը գործառնում է տեսական տրամաբանական ռեֆլեքսիայի միջոցով, որը դրսևորվում է լայն ընդհանրացումներով՝ արդյունքում հանգեցնելով սեփական անձի խորը և բազմակողմանի իմացությանը օբյեկտիվ իրականության համընդհանուր կապերի ու հարաբերությունների հետ: Ինքնաիմացության բարձրագույն մակարդակում արտացոլման բազմակողմանիության և լիարժեքության առումով սուբյեկտիվը հասնում է օբյեկտիվի հետ միասնության առավելագույն աստիճանի, որը բերում է ճշմարիտ իմացության [11], [12], [15]:

Ինքնաիմացությունը՝ որպես անձի հոգեկան գործունեություն, ենթադրում է դրանում արտացոլվող երևույթների արժևորում կամ ինքնարժևորում: Ինք-

նարժեքում ասելով հասկանում ենք անձի կողմից իր որոշ հատկանիշերի, որակների գնահատում և արժևորում, սեփական կենսագործունեության համար օգտակարության, սեփական պահանջմունքների բավարարման հնարավորությունների, ինչպես նաև սոցիալական օպտիմալ հարմարվածության ու ինքնաիրականացման տեսանկյունից [11], [12], [15]:

Ինքնարժևորումը ինքնագիտակցության անքակտելի բաղկացուցիչն է: Դա հնարավոր է միայն ինքնաձանաչողության միջոցով, քանզի միայն երևույթների, դրանց հատկությունների ու օրինաչափությունների իմացությունն է հնարավորություն տալիս դատելու երևույթի հատկության մասին՝ անհատի պահանջմունքները բավարարելու կամ չբավարարելու տեսանկյունից: Բոլոր այն երևույթները, որոնց վրա սևեռվում է ինքնագիտակցությունը, մեխանիկորեն դառնում են նաև ինքնարժևորման առարկա:

Պայմանավորված նրանով, որ մարդկային անհատի պահանջմունքների բավարարումը մշտապես որոշակիորեն միջնորդավորված է հասարակական պատմական պայմաններով, ինքնաիմացության մեջ առանձնակի կարևորվում է սոցիալ-բարոյական ինքնարժևորումը: Այն ենթադրում է անձի կողմից իր առանձին հատկանիշերի ինքնարժևորում հասարակության մեջ գործող ամենատարբեր նորմերի, բարոյական կատեգորիաների, էթետիկական և այլ չափորոշիչների տեսակետից, ինչպես նաև սեփական սոցիալական, բարոյական, էթետիկական և այլ հատկանիշների արժևորումը իր կենսագործունեության համար օգտակարության, սեփական պահանջմունքների բավարարման հնարավորությունների տեսանկյունից [5], [6], [9], [11]:

Այսպիսով՝ ինքնագիտակցության զարգացվածության մակարդակի ուսումնասիրությունը անհրաժեշտաբար ենթադրում է ինքնարժևորման գործընթացի ուսումնասիրություն՝ առանձնակիորեն շեշտադրելով դրա սոցիալական և բարոյական կողմը:

Ինքնագիտակցության հիմնախնդիրներով զբաղվող ամենատարբեր տեսաբանների կարծիքով՝ հոգեկան տարբեր բովանդակությունների շարքում ինքնագիտակցության առարկա են դառնում առաջին հերթին մարմինը, անձնային հատկությունները, այնուհետև գործունեության և հաղորդակցման գործընթացում ձևավորվող սոցիալական դերերն ու դրանց հետ կապված հոգեկան բովանդակությունները [4], [6], [12], [13], [15]: Խոսելով այս մասին՝ Ս.Լ. Ռուբինշտեյնը նշում է, որ մարդը առաջին հերթին իր Ես-ին է վերագրում սեփական մարմինը, հոգեկան ոլորտից՝ առավելապես իր ընդունակությունները, բնավորության առանձնահատկություններն ու խառնվածքը [12, էջ 243]:

Մեկ այլ տեսաբան՝ Վ.Ս. Մերլինը [9], համարում է, որ ծագումնաբանորեն առավել վաղ հանդես է գալիս սեփական անձի նույնականության գիտակցումը, որին հաջորդում է սեփական Ես-ի, ապա սեփական հոգեկան հատկությունների գիտակցումն ու սոցիալ բարոյական արժևորումը: Նա պնդում է, որ ինքնագիտակցման առարկա են դառնում առաջին հերթին այն հոգեկան հատկությունները, որոնցով պայմանավորված է գործունեության հաջողությունը, և միայն զարգացման առավել բարձր աստիճաններում անձի կողմից սեփական հատկությունների գիտակցումը վերածվում է ինքնուրույն նպատակի: Զարգացման բարձրագույն մակարդակում, երբ անձի ընդհանուր ուղղվածությունը ամփոփ-

վում է նրա աշխարհայացքում, սեփական հոգեկան հատկանիշների գիտակցմանը միանում է նաև սեփական աշխարհայացքի գիտակցումը:

Ա.Ն. Լեոնտևը [6] համոզված է, որ ինքնագիտակցման առարկա են դառնում առաջին հերթին այն հոգեկան հատկությունները, որոնցով պայմանավորված է գործունեության հաջողությունը: Եվ միայն զարգացման առավել բարձր աստիճաններում է անձի կողմից սեփական հատկությունների գիտակցումը վերածվում ինքնուրույն նպատակի:

Ինքնագիտակցության գործընթացում և դրա արդյունքում ձևավորվում է գիտելիքը սեփական անձի վերաբերյալ, որը կազմում է «Ես կոնցեպցիայի» գիտակցությանը հասանելի բովանդակությունը: Այդ գիտելիքը հանդես է գալիս բացառապես բառում մարմնավորված հասկացությունների կամ նշանակությունների ձևով: Ինքնագիտակցել նշանակում է արտացոլել սեփական ինքնությունը հասարակության կողմից մշակված նշանակությունների միջոցով:

Սակայն հանգեցնել ինքնագիտակցությունը բացառապես արտաքինից յուրացվող նշանակությունների գործառության, արմատապես սխալ կլինի: Խոսելով այս մասին՝ Ա.Ն. Լեոնտևը գրում է. «...անհատական գիտակցության մեջ արտաքինից յուրացվող նշանակությունները տարբերակում և միավորում են զգայականության երկու տեսակներ՝ արտաքին իրականության զգայական պատկերներ, որոնցում իրականանում է անհատի գործունեությունը, և նրա դրդապատճառների ու դրանց հետևում թաքնված պահանջմունքների բավարարման կամ չբավարարման զգայական ապրման եղանակներ...» [6, էջ 153]:

Նրա կարծիքով՝ միևնույն նշանակությունը անձի համար կարող է ունենալ տարբեր անձնային իմաստներ [6, էջ 145]: Գիտակցության մեջ տեղի է ունենում չեզոք նշանակությունների և անձնային իմաստների անհամապատասխանության մշտական վերարտադրություն, որոնց միջոցով միայն վերջիններս հնարավորություն են ստանում արտահայտելու իրենց: Սրանով է պայմանավորված անհատական գիտակցության մշտական դրամատիզմը: Այն ստեղծվում է իմաստներից, որոնք չեն կարողանում արտահայտել իրենց համարժեք նշանակությունների միջոցով, և նշանակություններից, որոնք զրկված են իրենց կենսական հիմքից, ինչի պատճառով հաճախ արժեզրկում են իրենց սուբյեկտի գիտակցության մեջ:

Երբ մեկնաբանում ենք գիտակցության բովանդակությունը՝ որպես անձնային իմաստից նշանակության և հակառակի փոխանցման հարափոփոխ գործընթաց, մեկ անգամ ևս համոզվում ենք, որ գիտակցության ցանկացած ակտ անխուսափելիորեն վերածվում է ինքնագիտակցության ակտի, իսկ ցանկացած իմացություն ինչ-որ տեսակետից իրենից ներկայացնում է ինքնաիմացություն:

Կարծում ենք, որ անձնային իմաստից նշանակության և հակառակի փոխանցման հարափոփոխ գործընթացը իրենից ներկայացնում է ինքնաիմացության բուն էությունը, դրա իսկական հոգեբանական բովանդակությունը, ինչը հնարավոր է դարձնում անհատի կենսագործունեության իրականացումը զուտ մարդկային եղանակներով:

Այս տեսակետից կարելի է ասել, որ սեփական անձի վերաբերյալ գիտելիքները ձևավորվում են անձնային իմաստներից նշանակության, ինչպես նաև նշանակությունների անձնային իմաստի ձևափոխման հարափոփոխ գործընթացում:

Իր տեսության շրջանակում Ա.Ն. Լեոնտը չի մանրամասնում անձնային իմաստների՝ նշանակության և հակառակի փոխանցման գործընթացի ներհոգեկան ասպեկտը: Չի քննարկվում նաև այն հարցը, թե ինչով են պայմանավորված այդ գործընթացի դրսևորման անհատական առանձնահատկությունները տարբեր անհատների մոտ: Եվ քանի որ նշանակությունը, որպես բառում օբյեկտավորված հասկացություն, մտածողության գործունեության արդյունք է, անձնային իմաստների և նշանակությունների փոխազդեցությունը կոնկրետ մարդու մոտ ձեռք է բերում անհատական առանձնահատկություններ:

Այս մասին խոսում է Լ.Ս. Վիգոտսկին: Նրա կարծիքով՝ անցումը գիտակցության մեկ կառույցից մյուսը իրականանում է բառի նշանակության զարգացման՝ ընդհանրացման շնորհիվ: Ավելին, ըստ նրա՝ ընդհանրացումների զարգացման մակարդակով է անմիջականորեն պայմանավորված գիտակցության իմաստային կառուցվածքի փոփոխությունը, որը և հանգեցնում է գիտակցության համակարգված կառուցվածքի վերակառուցման և կազմում է հոգեկան զարգացման էությունը [5, էջ 156]:

Այս տեսակետից ելնելով՝ կարծում ենք, որ մտածողության գործառույթյամբ, դրա զարգացվածության մակարդակով է պայմանավորված այս կամ այն անհատի կողմից տարբեր նշանակությունների և դրանցում ամփոփված բովանդակությունների յուրացման, իր կենսագործունեության տեսանկյունից դրանք իմաստավորելու, ինչպես նաև կոնկրետ անձնային իմաստին համարժեք նշանակություն տալու, դրանք արտահայտելու ընդունակությունը:

Չնսեմացնելով ինքնագիտակցության ծագումնաբանության և ձևավորման գործում գործունեության և հաղորդակման նշանակությունը՝ նկատում ենք, որ անձի ձևավորմանը զուգընթաց՝ հոգեկան զարգացման առավել բարձր աստիճաններում դրա գործառույթյան մեջ ավելի ու ավելի վճռորոշ է դառնում մտածողության նշանակությունը: Ինքնաիմացության առավել բարձր մակարդակում՝ մտածողության ակտիվ գործառնության արդյունքում, անձի՝ իր մասին ունեցած գիտելիքը սկսում է կրել առավելագույնս խոր և ընդհանրացված բնույթ, ուր ներկայացված են երևույթների էական ընդհանուր և եզակի հատկությունները տեսական հասկացությունների ձևով:

Մտավոր զարգացմանը զուգընթաց՝ անձնային իմաստների և նշանակության հարաբերակցությունը բարձրանում է օբյեկտիվության համեմատաբար բարձր աստիճանի, ինչն էլ հնարավորություն է տալիս անձին իրականացնելու իր նկատմամբ առավելագույն ճշմարիտ իմացությունը [11, էջ 54-70]:

Ինքնաիմացության բարձրագույն մակարդակում, արտացոլման բազմակողմանիության և լիարժեքության տեսակետից, սուբյեկտիվը հասնում է օբյեկտիվի հետ միասնության առավելագույն աստիճանի, ինչը հանգեցնում է ճշմարիտ իմացության: Այս տեսակետից սեփական անձի, սեփական ինքնության վերաբերյալ գիտելիքի հարաբերական համարժեքության աստիճանը մեծ չափով պայմանավորված է անձի մտավոր զարգացվածության մակարդակով:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է առանձնացնել սեփական ինքնության վերաբերյալ գիտելիքի հետազոտության երկու առանցքային չափորոշիչներ՝ առաջինը՝ գիտելիքի տեսական ընդհանրացվածության և երկրորդը՝ կեցության՝ պրակտիկայի նկատմամբ դրա հարաբերական համարժեքության աստիճանը:

Շարունակելով ինքնագիտակցության հոգեբանական բովանդակության դիտարկումը՝ անհրաժեշտ է նշել, որ սեփական անձի վերաբերյալ գիտելիքը, որը ամփոփված է հասկացություններում, մարդու ինքնության պատկերացած արտացոլումը չէ: Ընդգրկվելով «Ես կոնցեպցիա»՝ այն ձևավորում է ակտիվ վերաբերմունք սեփական անձի նկատմամբ, ինչի շնորհիվ մարդը հնարավորություն է ստանում իր ձեռքը վերցնել սեփական ինքնության ձևավորումն ու հետագա կատարելագործումը [2], [6]:

Այս տեսակետից՝ ինքնագիտակցության ուսումնասիրության կարևոր չափորոշիչ կարելի է առանձնացնել մարդու կողմից սեփական ինքնության նկատմամբ ստեղծագործական մոտեցումը, որը դրսևորվում է ինքնարտահայտման և ինքնիրականացման պահանջմունքներում և ինքնակատարելագործման ձգտման մեջ:

Անձի զարգացման առավել բարձր աստիճաններում ինքնակատարելագործումն ու ինքնաիրականացումը կարող են հանդես գալ որպես ինքնուրույն գործունեություն՝ ուղղորդվող ինքնաիմացության պահանջմունքով, առանձին դեպքերում վերածվել վարքի դրդապատճառի: Մյուս կողմից՝ այն դեպքերն են, երբ մարդը գիտակցաբար մտորում է իր անձի շուրջ և իրեն առավել լավ ճանաչելու նպատակով ներգրավվում կոնկրետ գործունեության մեջ:

Ինքնագիտակցության ստեղծագործական ակտիվության շնորհիվ հնարավոր է դառնում թե՛ սեփական ինքնության և թե՛ օբյեկտիվ իրականության ակտիվ ստեղծագործական վերակերտումը: Ինքնագիտակցության ստեղծագործական ակտիվության արդյունքում ձևավորվում են անձի իդեալական, ցանկալի պատկերացումները իր մասին: Այս տեսակետից՝ ինքնագիտակցության ուսումնասիրության կարևոր չափորոշիչ է սեփական անձի մասին իրական և իդեալական պատկերացումների համապատասխանության աստիճանը:

Իրականության ստեղծագործական ակտիվ արտացոլման ու վերակերտման ոչ մի ակտ հնարավոր չէ իրականացնել առանց սեփական պահանջմունքների, ցանկությունների, ձգտումների, նպատակների իմացության: Դրա հետ միասին սեփական անձի, ինչպես նաև օբյեկտիվ իրականության ակտիվ կառուցողական վերակերտման և ձևափոխման ուղղությամբ գործունեության իրականացումը անհրաժեշտաբար ենթադրում է այդ գործունեության նպատակի ձևավորում, ծրագրի ու պլանի մշակում: [6], [13], [15]: Այս տեսակետից ինքնագիտակցության ուսումնասիրության չափորոշիչներից են մարդու նպատակակազմավորման, ծրագրավորման ու պլանավորման ընդունակություններն ու դրա հետ անմիջականորեն առնչվող հավակնությունների մակարդակը:

Ցանկացած գործողության լիարժեք մտածվածությունը հիմնվում է անցյալի փորձի, ապագայի հնարավորությունների և ներկայի հետ դրանց փոխհարաբերության հարաբերականորեն համարժեք գիտակցման վրա: Յուրաքանչյուր գիտակցական գործունեություն ենթադրում է սերտորեն փոխկապակցված երկու գործընթաց՝ ապագայի կանխատեսում և կանխամտածում, որը բխում է երեվոյթների համապատասխան կապերի ու հարաբերությունների իմացությունից, և գործողության ծրագրավորում ու պլանավորում, որը պիտի հանգեցնի նպատակի իրականացմանը: Այս առումով՝ կարելի է առանձնացնել ինքնագիտակցության ուսումնասիրության ևս երկու չափորոշիչներ՝ ա/ անձի կողմից սեփա-

կան Ես-ի գիտակցումը, բ/իմաստավորումն ու արժևորումը ժամանակային անընդմեջության մեջ:

Եթե ինքնակատարելագործումն ու ինքնաիրականացումը բնութագրում են ինքնագիտակցությունը ստրատեգիական տեսակետից, ապա ինքնակարգավորումը բնութագրում է այն տակտիկական առումով: Ինքնագիտակցության և ինքնահիմնացության ուսումնասիրության հաջորդ կարևոր չափորոշիչը անձի ինքնակարգավորման առանձնահատկությունն է:

Ամփոփելով ինքնագիտակցության հասկացության տեսական վերլուծությունը՝ կարելի է այն հակիրճ սահմանել որպես բարձրագույն, բացառապես մարդուն հատուկ խոսքի հետ փոխկապակցված ուղեղի գործառույթ, անձի հատկություն, որը նպատակաուղղված է մարդու կողմից սեփական ինքնության ընդհանրացված, արժևորված արտացոլմանն ու ստեղծագործական վերակերտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբյան Մ.Ի. *Ինքնագիտակցության զարգացած ընդունակությունը որպես անձի հոգեկան առողջության և հասունության չափորոշիչ*: «Կանթեղ» գիտ. հոդվ. ժողովածու թիվ 3(40), Ե., «Ասողիկ», 2009, էջ 201–205
2. Ֆրոմ Է. *Միրելու արվեստը*: Ե., «Մխիթար Գոշ», 1996, 133 էջ
3. Адлер А. *Понять природу человека*. - СПб.: Академический проект, 1997. 256 с.
4. Бернс Р. *Развитие Я концепции и воспитание*. - М., 1986 159 с.
5. Выготский Л.С. *Собрание сочинений: В 6 т.* - т. 4. - М., “Педагогика”, 1984, 368 с.
6. Леонтьев А.Н. *Деятельность. Сознание. Личность*. - М., “Политиздат”, 1977. 304 с.
7. Лисина М.И. *Проблемы онтогенеза общения*. - М., “Педагогика”, 1986, 143 с.
8. Маслоу А. *Мотивация и личность*. - СПб., 1999, 162 с.
9. Мерлин В.С. *Структура личности: характер, способности, самосознание*. - Пермь, 1990, 110 с.
10. Роджерс К. *Взгляд на психотерапию. Становление человека*. - М., 1994, 163 с.
11. Рубинштейн С.Л. *Бытие и сознание*. - М., 1957. - 328 с.
12. Рубинштейн С.Л. *Проблемы общей психологии*. - М., “Педагогика”, 1973, 423 с.
13. Спиркин А.Г. *Сознание и самосознание*. - М., “Политиздат”, 1972, 303 с.
14. Столин В.В. *Самосознание личности*. - М., изд-во МГУ, 1983. 284 с.
15. Чеснокова И.И. *Проблема самосознания в психологии*. - М., 1977. 144 с.

М.И. АКОПЯН – Психологическая характеристика понятия самосознания и основные параметры их изучения. – Целью данной статьи является анализ содержания понятия самосознания в психологии. В контексте теории отражения само-

сознание интерпретируется как активное отображение и творческое преобразование собственной личности, выполняющее познавательные, оценивающие, регулирующие и прогнозирующие функции в отношении собственного Я. Обсуждается ее связь с мышлением, речью, эмоционально-волевой сферой самосознающего субъекта. Выявляются основные параметры ее изучения. Теоретический анализ охватывает такие тесно связанные с самосознанием психологические понятия как “самооценивание”, “саморегулирование”, “Я образ”, “Я концепция”.

SMILE IN DIFFERENT CULTURES

N. GASPARYAN

Body language is the original form of communication. Before spoken words were developed mankind communicated entirely using gestures, posture, and other forms of non-verbal communication. Understanding that body language is imperative for effective communication. However, it is imperative to understand that non-verbal cues vary in their use from one culture to another. This means that specific kinds of body language can have different meanings depending on where you are, and what culture you are interacting with.

The smile is the most basic of facial expressions and can mean different things in different cultures. Smiles are something that can easily be misinterpreted by people from different cultures. There are many types of smiles: formal (a way of greeting people), commercial (the demand of today's service industry), sincere (true emotions), etc. Each has a special meaning depending on what the person feels inside. The act of smiling seems to be a universal body language, but sometimes misunderstanding or conflict occurs in intercultural communication just because people from different cultural backgrounds treat a smile in different ways. While Americans smile freely at strangers, in Russia and in Armenia this is considered strange and even impolite. Russians and Armenians generally smile when they are happy or when something really funny takes place. In Asian cultures a smile isn't necessarily an expression of joy and friendliness but it is often a signal that they are uncomfortable or embarrassed. Even in some Asian cultures, showing the teeth is considered rude. For many Scandinavians smile or any facial expression used to convey emotions is untypical because it is considered weakness to show emotions. The smile of people who live in Europe is more sincere and genuine than the smile of Americans. In Western cultures smiling is a highly valued behaviour and a big, toothy smile is an expression of friendship. In American, English, German and Finnish communicative behaviour smile is necessary when greeting or having a polite conversation. But in Slavic communicative behavior a smile "for politeness" or "out of politeness" is simply not the norm. But, if something is not the norm in one culture it doesn't mean that it has no right to exist or that it is not normal or it's unnatural in another culture. This research aims to find how the use of a smile differs between cultures and to explain how these differences occur. There are numerous reasons why people smile. They smile out of joy, out of pride, out of embarrassment, out of contempt, out of politeness, out of courtesy, out of passion, out of sympathy and so on. Sometimes they smile to show their emotions, to show approval, affection and sometimes they smile to hide their true feelings. But, of course, how, when and why people smile usually depends on culture. Different cultures have their own 'smiling codes'. No one can imagine America without a wide smile today. In American culture positive feelings are very important. This culture encourages cheerfulness. It could be seen first in the American most common mottos: "Cheer up, things could be worse", "Smile, look on the bright side!" This

cheerfulness is inculcated in a person from birth. American parents usually say to their toddlers: "Smile! Look cheerful when you go out in public!" So these children grow up as 'automatic smilers'. American smile also conveys friendliness. There is a strong preference to preserve the appearance of cordiality and friendliness, even when there is strong difference of opinions. Nice words and polite smiles are expected as something natural during everyday social interaction. Very often a statement can be heard: "The American smile is something you like or dislike". If a person understands the nature of American smile he gets used to it and then he even starts liking it. Most people who go to the USA and then come back to their own countries admit that they miss this American smile, especially when they go shopping, when they are at work and so on. But, on the other hand, many people say that Americans smile neither from courtesy, nor from an effort to charm. They say that this smile signifies only the need to smile. Many people find this smile insincere, they can't get used to it and as a result they don't like it. The thing is that an 'everyday smilingness' is not characteristic of communicative behaviour of many cultures. Russian writers have often pointed out the difference between Russian and American smiles, characterizing the American smile as strange and artificial for the Russian. M. Gorky wrote that the thing you see most of all in an American face is their teeth. And there is opinion that they smile to show their well-kept teeth, which is so expensive in the USA. Perfect teeth don't come cheap, for example comedian Chris Rock is rumoured to have paid around \$150,000 for a total mouth makeover. In the USA the more a person smiles during his greeting, the more friendly he is at that moment, and the more politeness his behaviour demonstrates to the person he is talking to. American psychologists report that a polite smile in the USA has also the sense of protecting the addressee from sadness arising from hearing what is being said. Americans are just less tempted to mask their positive feelings and they are more tempted to mask their negative feelings. The smile in public service in the USA also fulfills the function of demonstrating politeness more than anything else. A personnel director in a large department store in the USA specifically prefers to hire a female staff member who even hasn't finished elementary school but she has a lovely smile, instead of hiring a Doctor of Philosophy with a cold face. And you can find such smiles not only in the USA. For example, in Japan women at the entrance of the escalator in large stores smile and bow to each customer who steps on the escalator. The Japanese smile has various meanings. Japanese smile may not be an expression of happiness, it could signify distrust, shame, depression, nervousness, embarrassment or discomfort. It can also be used to hide displeasure, or suppress anger. Japanese don't like to express their feelings. They think to express their true feelings is shameful. The Japanese are masters at masking emotions. Learning to put a mask over one's true feelings and emotions is part of growing up in the Japanese culture where the expression of emotions, even through involuntary facial expressions and gestures, is improper behaviour. They are indeed hard people to understand. Behaviour that is permissible for public display is known as 'tatemae'. Behaving in a tatemae manner supports the Japanese ideal of social harmony. This is because, under the rules of tatemae, the Japanese conjure up whatever facial expression the situation calls for and the visitor expects. Smiles are displayed at the expected time – at the end of a successful deal. To smile beforehand would violate the rules of tatemae. A certain Japanese television documentary about the emergency landing

showed an episode with a stewardess smiling at her passengers before the emergency landing. After the landing was over she fell down writhed in hysterics. So, she fulfilled her professional duty having calmed down the passengers. Researchers have observed that Japanese might smile on sad occasions, such as a funeral. Suppose a Japanese woman is explaining her absence from work due to a death in the family. She may do so with a smile, based on the cultural belief that it is inappropriate to inflict pain or grief upon others. However, in public and formal situations many Japanese do not show their emotions as freely as Americans do. Japanese seem to show their emotions more privately and with friends. Chinese people seldom smile at strangers. A person, no matter he is walking down a crowded street or sharing a table with another person in the dining hall, will normally show no facial expression at all and pretend that the other person is not present. A smile from a stranger means a lot of things. One can assume that the other person is going to ask you to do him a favour or to sell you something. He may also think that there is something wrong with his dressing. Therefore, smiling to strangers is usually avoided in China. In the US, when an employee is having a conversation with his employers, he is likely to wear a big smile to show his respect for his superior, which is quite similar in China. But there is a difference in how much the employer smiles at his inferiors. Usually, an American employer also smiles if the conversation goes well although he may smile less than his employee does. Therefore, an American employer is always ready to smile to send the employee a message of trust, appreciation or respect. This phenomenon is also true in other relationships such as parents and children or teachers and students. A typical Chinese manager rarely smiles at those in the subordinate positions. In most cases, he will keep a cold face throughout the conversation, not allowing his facial expressions to reveal his inner feelings. Similarly, a Chinese parent, especially the father, is not supposed to smile much at his children. In the classroom, the teacher has to be serious to keep the class in order, being afraid that if he smiles at the students, he will not appear to be strict and will lose the control of the classroom. Americans and Chinese differ not only in how much they smile but also in why they smile. In most cases, the American smiles when he feels pleased or satisfied without taking the trouble to consider how others will respond to his smile. It is the person's right and freedom to smile whenever he feels the need of smiling. For Chinese people, the external factors play much more important role in deciding when, how and to whom the smile is displayed. In other words, a Chinese will look at the situation first before he smiles. The results of researches show that the Chinese smile as much as Americans do but the amount of smiling may vary among situations. While making apologies the Chinese often use a smile. However, Americans don't accept apologies with a smile. American teachers in China often comment that on the first day of the classes students appear so happy, full of grins. In fact, many are nervous and yet their smiles give the new inexperienced teacher some encouragement. Related to the smile is the laughter. Americans can enjoy a very heartfelt belly laugh that comes from the deepest emotions. However, most Chinese seldom laugh that way because they are thought to be silly except among intimates. Smile and laughter usually convey friendliness, approval, satisfaction, pleasure, joy and merriment. This is generally true in China as well as in the English-speaking countries. However, there are situations when some Chinese will laugh and that will cause negative reactions by westerners. For

example, when an American is parking his bicycle, and the bicycle accidentally falls over, he feels embarrassed at his awkwardness, and feels humiliated when Chinese on-lookers laugh. Such laughter, of course, is not at the person or his misfortune. It can convey a number of feelings: take it easy, such things can happen to any of us, etc. In another example a foreigner broke a dish in a restaurant and felt embarrassed. But the Chinese who were on the spot smiled at him, which made him angrier. In fact, this smile means "never mind". However, for people unaware of this attitude, the reaction to such laughter is usually quite unpleasant. Some Chinese may smile when they are discussing something sad or uncomfortable or they are in business and the Chinese proverb says, "He who cannot smile, cannot open a shop." We all know about the legendary Thai smile. Thailand is known as "The Land of Smile" and it was invented by travellers. Every visitor to this beautiful country is quickly stricken by the smiles and politeness of the Thais. That smile, called "yim" in Thai, is the most captivating tool disarming the most cold-hearted foreigner. Their smile doesn't mean that the Thais are always happy. In practice, there are many social meanings for the Thai smile. The smile is perceived in Thailand as being just about the most appropriate reaction to any possible situation. It's used to show happiness, politeness, embarrassment, anxiety, remorse, tension, frustration, indifference, nervousness, fear or just to mask their real feelings and it can get the Thai out of almost any bad situation. That famous Thai smile is more of a self-defense than a deeply felt expression of the heart. They use different types of smiles: winner's smile, truly happy smile, apologetic smile, forced smile, arrogant smile, evil smile, nervous smile, guilty smile, sadness masking smile, winning, triumphant smile, plastic smile, flirtatious smile, embarrassed smile, painted on smile, joyous smile, welcoming smile, heart-warming smile, greeting smile, loving smile, admiring smile, encouraging smile, approving smile. There is a much broader range of uses for smiling in Thailand, some of which would be considered inappropriate or even rude in the west. Let's take the following incident: somebody is killed in a car crash. Thai people will surround the crash site within minutes and smile. Not because they think it's funny but because the undeniable tragedies of life are so invincible that only smiling prevents from being driven crazy on the very spot. Let's consider other examples: A Thai appears an hour late for a meeting and smiles. Heavy rains destroy a year's crop but the Thai farmers smile. Somebody gets fired and smiles. It's because Thai people do not want to burden others with their own problems. It is better to keep quiet and smile which is quite incomprehensible for outsiders. The smile is perceived as being just about the most appropriate "answer" to any possible situation. Politeness and non-interference remain highest virtues for them. They do not question a person's authority, do not contradict and always listen politely, even though they're bored to death, they do not raise their voice, but speak softly and smile. Thai people are often incredibly friendly, and many do smile at you on the street. But mostly they look at you, and if your eyes meet and you smile, then they smile back right away, if you don't smile, however, neither do they. In Thailand, however, a man can smile at a totally strange woman and will generally get a beautiful smile in return without any hesitation. It does not mean she likes him, she is just being polite or friendly. In most places in Thailand you will find yourself surrounded by beautiful smiles, genuine friendliness and people who are mostly easy-going, happy and sweet by nature. While many nations smile freely at strangers in

public places, many people in Russia consider smiling at strangers in public to be unusual and even suspicious behavior. A smile for Russians is something very intimate. They don't usually smile at strangers as it can be misunderstood or this will look stupid. Sometimes a smile may mean a sign of flirt. But when Russians get to know you, they will smile broadly and willingly. Russian people don't smile out of politeness. A constant polite smile is considered a 'smile on duty' in Russia and shows people's insincerity and unwillingness to show real feelings. That is why shop assistants never smile at customers as they don't know them personally. In McDonald's in Russia not a single sales person awards you with a smile, though if you are in New York in every fast food chain you will receive a storm of smiles. In Europe a person looks aggressive if he or she is not smiling. In the European world a smile is a formal sign of politeness and non-aggressiveness. In Europe smiling means showing that everything is all right and has nothing in common with a Russian smile, which is only a reaction to positive emotions and happiness, something dear and shared only with friends and very close people. The nature of these two smiles is different.

One of the Professors of Voronezh University I.A. Sternin (1996) has pointed out several distinguishing features of a typical Russian smile. According to him it is not typical to Russian to give a smile in return. It is considered to be bad to smile without any significant reasons. A Russian smile is a sign of personal attraction which shows that a smiling person likes you and he is very friendly to you. In Russia the smile looks like something extraordinary, if someone smiles at you, you feel that you are a chosen one, you are special. Russians do not smile when working or doing something serious. Customs officers do not smile because they are doing their serious business. The same thing is with sellers and waiters. Serving staff never smiles in Russia. Children mustn't smile when studying. Russian adults tell their kids, "Don't smile, be serious at school or when preparing home tasks and when grown-ups are talking to you!" One of the most common remarks of a Russian teacher is, "Why are you smiling? Stop it and start writing". Russian smile is sincere. It is the expression of either high spirits or a good attitude to partner. Russian smile is highly valued and used only when needed. Russians don't smile looking at babies or pets. Russian public opinion condemns a smile of self-encouraging, for example: "Her husband has left her but she is smiling". They condemn a smile of a woman who is trying not to lose courage in a hard situation. It is Russians who most tightly control the display of their emotions, closely followed by the Japanese and Koreans. On these measures, Americans display the least control over their facial expressions. For Russians the smile is a reflection of their conditions, mood and material wealth. A Russian person will hardly smile without evident wealth or very high spirits. In a Russian consciousness a smile needs a proper time for appearing and it should fit the situation. They have a proverb: "Laughter without reasons is the sign of foolishness". People do not smile in a tense situation. They say, "Not a proper time for smiling". It is not considered good to smile near people having serious problems, troubles, illnesses, etc.

It is worth mentioning that in this matter there are many similarities between Russians and Armenians. However, together with these features the Russians in general consider themselves cheerful and witty. It is natural for them not to hide their feelings. Asian people smile less than Westerners but Asians smile with greater frequency using

the expression to smooth over awkward or embarrassing situations, which may appear inappropriate to Americans. In Asian cultures, a smile is frequently used to cover emotional pain or embarrassment. It is also used in situations in which a person feels uncomfortable and instead of disagreeing and giving negative answer Asians often just smile and keep silent. Such a situation Western people will interpret as a sign of approval. Many Asians smile when they are embarrassed, angry, sad, confused, apologetic, and sometimes happy. The smile is another nonverbal symbol conveying the feeling of respect in Vietnamese culture. It is used as an expression of apology for a minor offense, or as an expression of embarrassment when committing an innocent blunder. Vietnamese people may tell the sad story of how they had to leave their country but end the story with a smile. For the Vietnamese, the smile is a proper response in most situations in which verbal expression is not needed or not appropriate. It is used as a substitute for "I'm sorry", "Thank you" or "Hi!" A smile is also a proper response to scolding or harsh words or that one sincerely acknowledges the mistake or fault committed. It should be noted that for certain feelings, Vietnamese culture prefers non-verbal communication while American culture is more inclined to use verbal expression. For casual and informal circumstances, feelings of thankfulness or apology are not expressed by verbal expression but by silence or a smile. Parents and teachers never say "thanks" to their students for a small service, such as closing the window or passing the books around. A smile will do in this case. The person who gives a compliment never expects "thank you" in return. A smile or a blush in the face is the proper response to a compliment. If a verbal response is necessary, one would deny the compliment, saying that one does not deserve it. There is opinion that the smile is universal. Yes, it's a universal movement but it's not universally interpreted. For example, Koreans believe that the smile is a sign of frivolity. In Korea it is considered inappropriate for adults to smile in public. For Koreans, a smile usually indicates embarrassment, and not pleasure. If something is important and serious, you don't smile too much. A Korean saying even goes, "He who smiles a lot is not a real man." or "He who smiles a lot cannot be trusted." In Korean culture, too much smiling is often perceived as a sign of a shallow person. However, while Americans are quick to smile, the French are wary of smiles and laughter, especially among strangers. The French smile only when there is an explicit reason. French smiling is a serious affair. . In Germany a smile for no particular reason will not get a reaction or a smile in return. If there is a reason to smile the Germans will do so but they, like French people find American culture too quick to smile. Spanish speakers smile more and make less eye contact when speaking to another person. This makes English speakers think that Spanish speakers are not serious and not to be trusted and it makes Spanish speakers think that English speakers are cold and threatening. In Australia if you smile when you say sorry, people think you don't really mean it or that you are hiding something. Anyway, when a person is happy he smiles. In Morocco you can smile and greet women in the street, and after a moment's startled reaction, they usually smile back and greet you. In Lebanon, when you go to a restaurant, the waiters will put on a huge smile and most of the time it's rather natural than fake. Besides, they are eager to serve you as needed. In Cuba, people are very kind and they seem to be very happy, they always smile and celebrate every little occasion, mainly accompanied by beer and music, though Cuba is one of the problematic countries. It's so pleasant to

see women about 60 always smiling. Nigerian communication can also be indirect and may rely on non-verbal cues. Many use gestures when communicating. They may smile to mask their true feelings, especially when disappointed or confused. It is common to gaze at the forehead or shoulders of someone they do not know well. Very direct eye contact may be interpreted as being intrusive unless there is a longstanding personal relationship. Israelis believe that there's reason to smile frequently, despite the regional conflict, the economic and political problems. Among most Israelis the main reason for smiling is the family, the second reason is a good joke. Some of them usually smile in response to someone else smiling at them. Young men believe that a smile could help them succeed in a date or in finding a romantic partner. The comparison found that Jerusalemites are more frequent smilers than the residents of Tel Aviv. So, people with a higher-than-average income level prove to be more inclined to smiling than those with lower-than-average income. Armenians are often considered gloomy and unfriendly to foreigners because they don't use formal smiling, especially out of politeness. Armenians tend to be very direct and say exactly what they want to say. Direct eye contact is preferred, There is usually no holding back on what one says. A visitor must not take this to heart. In business interactions, an arm's length of space is acceptable. There is no touching during conversation. Though Armenians have bad manners, they tend to be very friendly and communicative in the company and when they know you, they will smile freely and willingly. In general, people here smile rarely, and if you often smile, they take you for a mad or girls consider themselves to be higher than you. When you smile you don't get a smile back. It is not typical for the Armenian culture to smile in order to cheer up or make others cheer up. Armenians do not smile while working or doing something serious. The shop assistants, waiters don't smile, they speak reluctantly and without any smile. But we must appreciate the work the sellers do at "Grand Candy" shops. Working non-stop the whole day these girls are falling with fatigue, yet they still keep smiling. The first thing foreigners notice and ask is: "Why don't they smile?" The usual explanation is that throughout history Armenians have suffered a lot, they had a very difficult life, that life is still difficult, they work hard, but there is no well-paid job, no money. Of course, the history has left a cruel heritage but is it an excuse for not smiling today? Yes, life is not always a bed of roses, it's hard, full of burdens. But, as a matter of fact, those people complain who need nothing, they have more than enough money to live in luxury. Among poor people, on the contrary, you can find such people who always smile though they are the ones who hardly earn their daily bread. Peasants spend the whole day in the burning sun and in the evening they return home exhausted but with inner satisfaction and gratitude for life. They smile, they crack jokes, they infect others with their laughter. But the youth seems so tired and worn out, as if they have many things to worry about. Actually, they really do, they think what to wear tomorrow, what restaurant to go this time, what cell phone to choose, what make up to use, what colour to dye their hair, and so on. And they even forget to smile at times and walk with such faces as if they search for solutions to global problems. Yes, smiling in Armenia is a serious business. People will look at you, scrutinize your clothes, but they will never smile. This is not because they don't like you, but because you are a stranger. If a man smiles at a woman, she will think he wants to be her best friend. We must be careful about smiling at men. If a woman makes eye con-

tact with a man and smiles, it means something. In Armenia we have to suppress our smile here and there not to be understood wrongly. When you smile, people may be dubious about it, and they may assume quite strange things. Smiling is only for family and friends, for people you trust. Armenians are very family-oriented. Families are extremely tight-knit and protective of their members. The world outside the family circle is regarded with suspicion. So our smiles we keep for those nearest and dearest. But, by time we see a change for the better in the Armenian smiling deficit. What happens is that life gets better gradually. More foreigners come to Armenia bringing smiles, more diaspora Armenians from America and Europe come bringing smiles. So the locals begin to smile back more easily and more often in hotels, restaurants and shops. However, in the street you're still smiling at your own risk. Walk on the streets of Armenia and you will see no smile, no cheer, people are disappointed in everything, people are undefended. Whether one considers the American smile as insincere or just polite, we must admit that this represents something good for any culture to learn and accept. To see open faces, smiles and kindness between all people, not necessarily your friends, makes our life much easier. For now, we can't expect it to be a part of our culture. As the Armenian proverb says: "The face is the mirror of the heart."

When speaking English, it is generally good to smile at your listener from time to time, especially when he has made an interesting comment. Smile is also very important in teaching. Researchers think that a smiling teacher promotes a supportive and non-threatening classroom atmosphere. If the teacher smiles frequently, she will be perceived as more likable, friendly, warm and approachable. Smiling is often contagious and students will react favourably and learn more. In fact, most university students expect their teachers to have rich facial expressions and to smile a lot. For English people, the good and responsible teachers are full of enthusiasm, they deliver the lectures with full emotions, when they enter the auditorium nicely smiling and such behaviour always has a positive impact on the students. If the students give a right answer, the teacher could feel happy and smile at the students. And this kind of smile could be a sort of approval and praise for the students. But if the students give a wrong answer, the teacher could also smile at them and this could be an encouragement for the students. It will make them feel confident and encourage them to make greater efforts to learn better. Considering gender differences it is worth saying that women, as a rule, smile more than men. There is a tendency for women and children to smile and use more nonverbal gestures than men. Studies show that women are more emotionally expressive and sensitive than men and that's why they smile more often. Older women smile less than younger women. (Manusov and Patterson 2006). Why women smile more is also based on the idea that a smile can reflect social unease. When women don't know what to do, they are embarrassed or even when they make a mistake they smile. This often used "nervous smile" diverts social pressure and hostility, and is attributed to shy women. Put a woman in front of a mirror or a shop window, and even alone, she's more likely to smile. Experts coded women's smiles in their yearbook photos. Women who gave real smiles were compared to those who didn't. Years later, the real smilers overwhelmingly had happier lives. Psychologists have found that how much people smile in old photographs can predict their later success in marriage. The results indicate that people who frown in photos are five times more likely to get a divorce than people who smile.

“Maybe smiling represents a positive disposition towards life,” said Matthew Hertenstein (2009), a psychologist at DePauw University in Indiana. “Or maybe smiling people attract other happier people, and the combination may lead to a greater likelihood of a long-lasting marriage.” Hertenstein said he has considered other explanations, such as the possibility that people who smile more often tend to attract more friends, and it makes easier to keep a marriage healthy. People who smile when a photographer tells them to do are more likely to have obedient personalities, which could make marriage easier. Our earliest baby smiles are involuntary reflexes having only the vaguest connection to contentment or comfort. Though babies aren’t born smiling, about three weeks after birth, babies give a fleeting smile in response to touch and sound and visual cues like the funny faces and sounds you tend to make. They start recognizing faces and smiling socially. By the time babies are six months old, they smile and laugh regularly in reaction to feedings, hugs, and so on. Even babies who are born blind intuitively know how to react to pleasurable changes with a smile, though their first smiles start later than those of sighted children. A child’s smile has been shown to give the same level of stimulation as eating 2,000 chocolate bars or receiving \$15,000 dollars in cash. Psychologists and psychiatrists have noted that babies also smile and laugh with relief when they realize that something they thought might be dangerous is not dangerous after all. From the medical point of view, studies have shown that smile and laughter have numerous benefits. Michael Miller (2009), medicine professor of University of Maryland said that laughter is the most natural analgesics with least side effects. People could smile often to ease pain. Smile could burn calories and help weight loss. Laughter is the best way to keep slim. Laugh also helps blood circulation. It makes the heart stronger. It is proved that humorous people have a lower risk of heart disease. When a person laughs, it drives away negative emotions, reduces stress, depression and releases pressure. It also has a good effect on mental health, strengthens the immune system. Since laugh has so many advantages, you can try to make yourself happy not only to keep good mood but also to have a healthy body. People say that our face is the mirror of our inner ego. It’s nice that people smile but it must not be artificial, it must come from our inner state. A sincere smile represents friendship and joy everywhere in the world. I think everything can be done with smile. Treating everything with smile means softening our life. Smile is the most powerful tool we have for persuading people to like us, agree with us and say “yes”.. People want to be liked and smiling makes them feel this. To smile means to cheer up and never give up. To smile is to hope. Even when we are in bad moods or angry with someone, it’s better to smile, and we’ll feel the sustaining ease occupying our mind and soul. Smiling can give you confidence, warmth, sincerity, empathy, co-operation, can draw the distance between persons. Smiling is a self-cultivation. A woman’s look revealed on face is always more important than the clothes she wears. Smile can not only make a person look attractive, sociable, and confident, but also help people have the courage to overcome difficulties. People who like to smile are easy to be promoted. Smiling people get more opportunities than others, smile always encourages and aspires us to do more. It’s a reflection of your good mood and happiness that you want other people to see and appreciate. It’s the most effective method to raise the spirits of people. So we need to “learn to smile” in order not to offend our visitors but to bestow a smile upon everyone. As an idiom goes “When in Rome, do

as the Romans do.” It is the main principle in communication. This principle refers that communicators should respect and understand the culture of other nations and eliminate the interference of their own cultures. According to this principle, we should know the differences of their customs, beliefs and their connotations of body language. The whole world smiles, but the amount of smiling and the stimulus that the smile produces, often shift from culture to culture. In conclusion, no matter what nationality you are, the smile means encouragement, warmth, tolerance and friendliness. The smile is the lighting system of the face, the cooling system of the head and the heating system of the heart. Keep smiling and walk through your life with your head up, as there are no borders for smile – all people smile in the same language.

REFERENCE

1. Brown P. and Levinson S. (1987). *Politeness: Some universals in language usage*. Cambridge: Cambridge University Press.
2. Argyle M. (1986). *Rules for social relationships in four cultures*. Australian Journal of Psychology, 38, 309-318.
3. Briton N. & Hall J. (1995). *Gender-based expectancies and observer judgments of smiling*. Journal of Nonverbal Behavior, 49-65.
4. DeSantis M., Sierra N. (2000). *Women smiled more often and openly than men when photographed for a pleasant, public occasion in 20th century United States society*. Psychology: A Journal of Human Behavior, 37, 21-31.
7. Dodd D., Russell B. & Jenkins C. (1999). *Smiling in school yearbook photos: Gender differences from kindergarten to adulthood*. Psychological Record, 49, 543-554.
8. Ekman P. & Friesen W. (1982). *Felt, false, and miserable smiles*. Journal of nonverbal behavior, 6, 238-252.
9. Hertenstein M. (2009). *Smiles Predict Marriage Success*. Journal of Motivation and Emotion.
10. Manusov V. & Patterson M. (2006). *The SAGE handbook of nonverbal communication*. Thousand Oaks, Calif: Sage Publications.
11. Miller M. (2009). *The Effect of Mirthful Laughter on the human cardiovascular system*. Med Hypotheses, 73, 636-639
12. Стернин И.А. (1996). *Почему русские мало улыбаются?* Практика, № 2. С.5-6.

Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆ – Ժպիտը և նրա նշանակությունը տարբեր մշակույթներում: – Ժպիտը, ինչպես նաև մյուս ոչ խոսքային միջոցները, ունի տարբեր իմաստներ և նշանակություններ տարբեր մշակույթներում: Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե տարբեր մշակույթներին և սոցիալական խավերին պատկանող մարդիկ ինչպես են ընկալում ժպիտը և ինչպիսի արձագանքներ են տալիս դրան: Ժպիտը ամերիկյան, ճապոնական, ինչպես նաև թաիլանդական էթիկայի անբաժան մասն է կազմում, սակայն ամերիկյան լեզվամշակույթում ժպիտը զուտ քաղաքավարության արտահայտման միջոց է, իսկ ճապոնացիները ժպտում են, որպեսզի թաքցնեն իրենց իրական զգացմունքները: Թաիլանդական ժպիտը ունի

շատ իմաստներ, և նրանք ժպտում են համարյա բոլոր իրավիճակներում: Եվրոպացիների համար ժպիտը համարվում է հիացմունքի և ջերմության արտահայտման միջոց, և ամերիկյան ժպիտը նրանք համարում են կեղծ և արհեստական: Հայերը, ինչպես նաև ռուսները չեն սիրում ժպտալ և տխուր ազգ են համարվում, իսկ եթե ժպտում են, ուրեմն իսկապես ուրախ են: Ասիական լեզվամշակութային ժպիտը պարտադիր չէ, որ արտահայտի ուրախություն: Քննարկելով ժպիտի տարբեր տեսակները՝ նշենք, որ այն լինում է տարբեր. անկեղծ կամ բնական, կեղծ կամ արհեստական, տխուր, բարեկամական, մտերմիկ, հաճելի, քաղաքավարի, գործնական, մեղավոր, հաղթական, հեգնական, նյարդային, գրավիչ, գայթակղիչ, հիացմունքի, բարյացակամ, ոգևորող, խրախուսող և այլն: Ժպիտը կարող է տարբեր գործոնների փոխազդեցության հետևանք լինել, բայց, միննույն է, անկախ ազգային պատկանելությունից, այն համարվում է խրախուսանքի, հավանության, հիացմունքի, ուրախության, ոգևորության և համակրանքի արտահայտման միջոց:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վ.Ե. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Դեռևս շուկայական հարաբերություններին անցման սկզբնական ժամանակաշրջանում Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում ամենամեծ կորուստն ունեցավ համախառն հասարակական արդյունքի արտադրությամբ, որն առավել մոտ է ՀՆԱ -ին: ԽՍՀՄ կազմում Հայաստանը 1987թ. արտադրում էր մոտ 13,5 միլիարդ դոլարի համարժեք համախառն ներքին արդյունք¹⁶⁶:

Սակայն 1992թ. ՀՆԱ-ի ծավալը իրական տնտեսության բոլոր հատվածներում կազմում էր ընդամենը 5 միլիարդ դոլար, այսինքն՝ 1987թ. մակարդակի միայն 37%: Իսկ 1994թ. տնտեսության անկման ամենացածր կետում («հատակը») ՀՆԱ կազմեց 1987թ. մակարդակի միջին 16%-ը¹⁶⁷:

Համեմատության համար նշենք, որ ՀՆԱ-ի կորուստով երկրորդ տեղը զբաղեցնում էր Ռուսաստանի դաշնությունը՝ 40%-ով, երրորդ տեղը՝ Ուկրաինան՝ 37 %-ով:

Հայաստանում տնտեսական անկումը (տրանսֆորմացիոն անկումը) պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Դրանց թվին կարելի է դասել.

- 1988 Սպիտակի ավերիչ երկրաշարժը, որը խլեց 25000 մարդու կյանք և անօթևան մնաց շուրջ 500000 մարդ: Երկրաշարժի հետևանքով Հայաստանը կորցրեց իր արդյունաբերական ներուժի մոտ 40%-ը:
- ԽՍՀՄ-ի փլուզումը և Հայաստանի Հանրապետության տնտեսական և քաղաքական անկախության ձեռք բերումը: Այդ պատճառը բնականաբար յուրահատուկ էր բոլոր ԱՊՀ երկրներին: Սակայն Հայաստանի արդյունաբերությունը գրեթե ամբողջությամբ (95%-ով) աշխատում էր հումքի ներկրման հաշվին: Հետևաբար ԱՊՀ երկրների հետ տնտեսական կապերի խզումը դարձավ տնտեսական անկման հիմնական պատճառը:
- Արցախյան պատերազմը, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը:
- Էներգետիկական ճգնաժամը:
- Վրաստանի և Աբխազայի միջև ծագած պատերազմի հետևանքով Հայաստանը Ռուսաստանի Դաշնությանը կապող միակ երկաթուղու փակումը:
- Որպես ընդհանուր պատճառ եղավ անցումային շրջանում որդեգրած ռազմավարությունը՝ հանձին՝ «շուկային թերապիայի», որը նախատես-

¹⁶⁶ Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, Երևան, «պետական ծառայություն», 1999, էջ 278

¹⁶⁷ նույն տեղը, էջ 282

սում էր հնարավորինս արագորեն իրականացնել տնտեսության կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումներ: Այդ վերափոխումները ներառում էին գների ազատականացում, հողի, արդյունաբերական ձեռնարկությունների և այլ տնտեսական օբյեկտների արագ սեփականաշնորհում, պետական ծախսերի կտրուկ կրճատում, ինֆլյացիան վերահսկելու նպատակով կոշտ դրամավարկային քաղաքականության կիրառում, ազատ առևտրի քաղաքականության կիրառում՝ ընդհուպ շատ ցածր սակագների սահմանում, կապիտալի շարժի վրա վերահսկողության վերացում, հայկական դրամի ուշացած մուտք դրամաշրջանառության ոլորտ և այլն:

- Սուբյեկտիվ կարգի պատճառներից տնտեսության անկման, մասնավորապես արդյունաբերության կազմալուծման առումով, բացասական ազդեցություն ունեցավ, մեղմ ասած, անկանոն և ոչ խելամիտ սեփականաշնորհումը, որի հետևանքով համատարած ձևով փակվեցին գործող գրեթե բոլոր հսկա արդյունաբերական ձեռնարկությունները: Տեղի ունեցավ իշխանության և սեփականության միաձուլում: Հողի և գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսական տեխնիկայի, անասունների գլխաքանակի թերի սեփականաշնորհումը աղքատության եզրին կանգնեցրեց գյուղացիությանը:
- Սուբյեկտիվ կարգի թերություններից կարելի է նշել նաև ղեկավար կադրերի մասնագիտական հասունության ցածր մակարդակը և այլն:

Տրանսֆորմացիոն անկման հետևանքով երկրում զգալի չափերով աճեց գործազրկությունը և ինֆլյացիան: Սրանց հետևանքով երկրում շատ կարճ ժամկետում բնակչության բավարար ունևորության մակարդակը փոխեց իր վեկտորը դեպի համընդհանուր աղքատություն: Արագ թափ ստացավ արտագաղթը, որի հիմնական պատճառը (75%-ով) գործազրկությունն ու աղքատությունն էր:

Ինչպես վերը նշվեց, 1994թ. Հայաստանում տնտեսությունը կայունացավ և մինչև 2000թ. գրանցվեց տարեկան 5-6% տնտեսական աճ, իսկ 2001թ. մինչև 2008թ. տնտեսական աճը, ըստ վիճակագրական ծառայության տվյալների, կազմեց 10-14%: Արդեն 2008թ. այն կազմեց ավելի քան 11 միլիարդ դոլար:

Ճիշտ է, տնտեսությունը կայունացել էր, և զգալի էին տնտեսական աճի տեմպերը, սակայն Հայաստանի տնտեսությունը դեռևս չէր ապահովել ՀՆԱ արտադրության նախաճգնաժամային մակարդակը (13,5 միլիարդ դոլար), երբ տնտեսությունը ընկավ նոր ֆինանսատնտեսական ճգնաժամի գիրկը: Չնայած ճրգնաժամը «թակում էր մեր դուռը», սակայն Հայաստանի կառավարությունը այդ իրողությունը դեռևս չէր կանխատեսում: Տարածված էր այն կարծիքը, որ Հայաստանը փոքր երկիր է, հետևաբար ճգնաժամը կշրջանցի մեր երկրի տնտեսությունը: Իրականում 2009թ. տնտեսական ճգնաժամը ԱՊՀ երկրներից ամենաբարձր ուժգնությամբ արտահայտվեց մեր երկրում: Հայաստանում ՀՆԱ-ը կրճատվեց մոտ 17%-ով: ՀՆԱ-ը նվազեց մոտ 2,5 միլիարդ դոլարով (առանց ինֆլյացիայի հաշվարկման): Չնայած 2010թ. տնտեսությունը կայունացավ և արձանագրվեց 2,1% տնտեսական աճ, սակայն ՀՆԱ-ի արտադրությամբ 2010թ. չէր ապահովում նախաճգնաժամային մակարդակը (11 միլիարդ դոլար): 2010թ. ՀՆԱ-ի արտադրությունը կազմեց մոտ 9 միլիարդ դոլար՝ առանց ինֆլյացիայի 9,3% հաշվարկման, այսինքն իրական ՀՆԱ-ը կազմեց մոտ 8,1 միլիարդ դոլար:

Այսպիսով՝ դեռևս չապահովվելով տրանսֆորմացիոն անկման նախաճրգ-նաժամային մակարդակը՝ Հայաստանի տնտեսությունը 2009թ. ընկավ նոր ֆի-նանսա-տնտեսական ճգնաժամի գիրկը: Ներկայումս երկրի տնտեսությունը գտնվում է ֆինանսա-տնտեսական ճգնաժամի երկրորդ փուլում, որտեղ պետք է լուծվեն բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրներ՝ ճգնաժամը լիարժեք հաղ-թահարելու համար:

Ժամանակակից ֆինանսա-տնտեսական ճգնաժամը, բացի տնտեսության անկումից, պատճառեց նաև լուրջ սոցիալ-տնտեսական հետևանքներ: Դրանց թվին կարելի է դասել.

1. **Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի աննախադեպ ա-վելացումը:** Մեկ տարվա ընթացքում պետական պարտքը աճեց ավելի քան 1 միլիարդ դոլարով, և ընդհանուր արտաքին պարտքը հասավ մոտ 4 միլիարդ դոլարի՝ կազմելով ՀՆԱ-ի 40%-ը: Ընդ որում, ավելացված պարտքը ոչ թե ներդրվեց տնտեսության զարգացմանը՝ նոր աշխատա-տեղերի ստեղծման և արտադրության չափերի ընդլայնման համար, այլև հիմնականում օգտագործվեց պետական բյուջեի դեֆիցիտը ծած-կելու նպատակով (կենսաթոշակների և նպաստների վճարում, պետ-բյուջետային հիմնարկություններում աշխատողների աշխատավարձի վճարում և այլն): Այսինքն՝ չստեղծվեց համապատասխան բազա՝ օ-տարերկրյա վարկերի արագ փոխհատուցման համար: Բնականաբար, ինչպես նախորդ ժամանակաշրջանում կուտակված, այնպես էլ նոր օ-տարերկրյա պարտքերի վճարման լուծը ընկավ գալիք սերնդի ուսերին:
2. **ՀՆԱ-ի նվազումը և արտադրության չափերի կրճատումը հանգեցրեց գործազրկության աճին:** Չնայած Հայաստանի վիճակագրության ծառա-յությունների տվյալներով երկրում գործազրկության մակարդակը գրե-թե հավասար է բնական գործազրկության մակարդակին (7,1%), սա-կայն իրականում (թաքուն գործազրկության հաշվառմամբ) երկրում առկա է շուրջ 30% գործազրկություն:
3. **Տնտեսության անկումը և գործազրկության մակարդակի բարձրացումը ուղեկցվեց գների ընդհանուր մակարդակի աննախադեպ բարձրաց-մամբ (ստագֆլյացիա):** Չնայած Հայաստանի վիճակագրական ծառա-յության տվյալներով 2010թ. գների մակարդակը բարձրացել է 9,3%-ով, սակայն այդ ցուցանիշը հեռու է իրական լինելուց: Օրինակ՝ Վրաստա-նի նախագահ Միքայել Սահակաշվիլու տվյալներով՝ Հայաստանում գները աճել են 23-ով: Հատկանշական է, որ գների մակարդակի աննա-խադեպ բարձրացումը հիմնականում վերաբերում է կենսական առա-ջին անհրաժեշտության և մասնավորապես պարենային ապրանքնե-րին: Հաճախ պետական այրերը Հայաստանում գների բարձրացումը ձգտում են հիմնավորել միջազգային շուկայում տեղի ունեցող գների բարձրացմամբ: Սակայն իրականում դա այդքան էլ այդպես չի: Ճիշտ է, որոշ չափով Հայաստանում գների աճը պայմանավորված է միջազգա-յին շուկայում տեղի ունեցող գների աճով, սակայն երբ միջազգային շու-կայում ենթադրենք գները աճում են 2–3%-ով, ապա Հայաստանում այդ աճը կազմում է 20–30%: Դեռ ավելին՝ միջազգային շուկայում գները հաճախակի իջնում են, իսկ այդ նույն ապրանքատեսակների գները Հա-

յաստանում աճում են, ինչպես, օրինակ, բոլորովին վերջերս՝ մայիսի սկզբին, բենզինի գինն իջավ 9%-ով, սակայն Հայաստանում աճեց 10 դրամով: Նորություն չէ, որ Հայաստանում գների աճը հիմնականում պայմանավորված է օլիգոպոլացված տնտեսության առկայությամբ, որը շուկայում թելադրում է մոնոպոլ բարձր գներ՝ մոնոպոլ շահույթ ստանալու նպատակով: Հետևաբար, այս բնագավառում առկա են բազմաթիվ չլուծված հարցեր, որոնք պահանջում են արագ և արմատական փոփոխություններ: Մասնավորապես խոսքը վերաբերում է հակամենատիրական քաղաքականության իրականացմանը: Ներկայումս ազատ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքները թերի են և չեն կարող էական նշանակություն ունենալ գնագոյացման արդյունավետ քաղաքականության մշակման գործում: Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է երկրում սահմանել գների վերին (առաստաղ) և ներքի (հատակ) սահմաններ: Ինչպես, օրինակ, ուսումնասիրել, թե 1կգ. հավի, կամ 1 ձվի արտադրության ծախսերը ինչպիսին են, այնուհետև հաշվարկել ձեռնարկության և առևտրական կազմակերպությունների շահույթը և սահմանել դրանց վաճառքի գների վերին սահմանը: Դրա հետ մեկտեղ պետք է պետական ակտիվ միջամտություն՝ ներմուծվող ապրանքների նկատմամբ մոնոպոլ խոչընդոտների վերացման համար: Մի շարք ստրատեգիական ապրանքների (բենզին, այլուր, դեղորայք և այլն) ներմուծումը և վաճառքը կազմակերպել պետական մակարդակով:

4. **Բնակչության կենսամակարդակի նվազում:** Քանի որ ֆինանսա-տնտեսական ճգնաժամը ուղեկցվեց ՀՆԱ-ի կրճատումով, գործազրկության և ինֆլյացիայի աճով, հետևաբար անվանական աշխատավարձի չնչին աճի (մինիմալ աշխատավարձը աճեց 2500 դրամով) դեպքում տեղի ունեցավ իրական աշխատավարձի նվազում և բնականաբար կենսամակարդակի իջեցում: Այսօր Հայաստանի բնակչության 54% գոյատևում է, իսկ 34-ը՝ տառապում: Պետության կողմից իրականացվող տնտեսական և սոցիալական բարեփոխումները նախ և առաջ պետք է նպատակաուղղված լինեն բնակչության կյանքի պայմանների բարելավմանը: Ինչպիսին էլ որ լինի բարեփոխումների բնույթը, դրանք առաջին հերթին պետք է ուղղված լինեն.
 - նոր աշխատատեղերի ստեղծմանը
 - բնակչության իրական եկամուտների աճին (ինդեքսավորում)
 - կրթության և բժշկական ծառայության մատչելիությանը
 - սոցիալական և կենսաթոշակային ապահովվածության բարելավմանը
 - բնակչության բնական աճի խրախուսմանը և արտագաղթի կանխմանը:
5. **Աղքատության և արտագաղթի աճ:** Դեռևս շուկայական հարաբերություններին անցումով Հայաստանում աղքատությունն ընդունեց համատարած բնույթ: Սակայն 1994թ. մինչև 2009թ.-ի տնտեսական աճը էականորեն կրճատեց աղքատության տեսակարար կշիռը՝ այն հասցնելով մոտ 22,5%: Ժամանակակից ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում արտադրության անկումը, գործազրկության և ինֆլյացիայի աճը

նոր թափ հաղորդեցին աղքատության աճին: Աղքատությունը Հայաստանում աճեց ավելի քան 11 -ով և հասավ 34,1%-ի:

Հայաստանի բնակչությունը աղքատության տեսակետից բաժանվում է երկու հիմնական խմբի՝ ծայրահեղ աղքատների, որոնց միջին ընթացիկ ծախսերը, մեկ շնչի հաշվով, ցածր են աղքատության պարենային գծից, որոնց թիվը ընդհանուր աղքատության մեջ կազմում է 110000 մարդ, և աղքատներ, որոնց միջին ընթացիկ ծախսերը մեկ շնչի հաշվով գերազանցում են աղքատության պարենային գիծը, սակայն ցածր են աղքատության ընդհանուր գծից. դրանց թիվը կազմում է մոտ 1 միլիոն մարդ: Հայաստանում աղքատության տեսակարար կշիռը մեծ է հատկապես գյուղացիության շրջանում: Իշխանության և կառավարության կողմից գյուղատնտեսության զարգացման ծրագիրը «կաղում» է: Փաստորեն գյուղացին հող չի մշակում, քանի որ հողի և ջրի հարկերը, պարարտանյութի գները չափազանց բարձր են, գյուղատնտեսական տեխնիկան և գյուղատնտեսության արտադրության մեքենայացման մակարդակը շատ ցածր է և այլն: Զարգացած շուկայական տնտեսության շատ երկրներում վաղուց ի վեր անցել են բազմահարկ գյուղատնտեսության, իսկ Հայաստանում դեռևս առաջին հարկում հողային տարածությունների կեսից ավելին չեն մշակվում անարդյունավետության պատճառով:

Ներկայումս որոշակի քայլեր են կատարվում գյուղատնտեսության մեջ իրավիճակը շտկելու համար, սակայն ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ չհամակարգված միջոցառումները չեն ապահովելու ցանկալի արդյունքներ: Գյուղատնտեսության զարգացումը և հողային տարածությունների լիարժեք օգտագործումը պահանջում են արմատական վերափոխումներ: Մասնավորապես խոսքը վերաբերում է մանր հողային տարածությունների միավորմանը խոշոր գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում, մեքենայական տեխնիկայի և պարարտանյութերի օգտագործմանը, հողային և վարկային քաղաքականության մեղմացմանը, գյուղատնտեսության ապահովագրությանը և այլն: Չնայած գյուղատնտեսության ոլորտը հիմնականում ազատ մրցակցային է, սակայն վերջին ժամանակներում գյուղատնտեսական մթերքների գների աննախադեպ աճը կանխելու համար անհրաժեշտ է դեմքով շուռ գալ դեպի գյուղը և ամեն կերպ նպաստել գյուղի զարգացմանը: Գյուղատնտեսության նախարարությունը պետք է ունենա միայն մեկ ֆունկցիա՝ օգնել գյուղացիությանը և նպաստել գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Պատահական չէ, որ Հայաստանում աղքատության տեսակարար կշիռը ամենաբարձրը գյուղացիության մեջ է: Պատահական չէ նաև, որ արտագաղթը հիմնականում տեղի է ունենում գյուղացիության շրջաններից:

Գործազրկության և աղքատության աճը, բնականաբար, բերեցին նաև արտագաղթի աճ: Եթե 2004թ. Հայաստանից արտագաղթել էին մոտ 3800 մարդ, ապա 2010թ.-ին՝ ավելի քան 73000: Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի տվյալներով՝ անկախության 20 տարիների ընթացքում Հայաստանից արտագաղթել է մոտ 1,5 միլիոն մարդ: Սոցիոլոգ Ադիբեկյանի տվյալներով Հայաստանում բնակչության թիվը կազմում է 2,5 միլիոն մարդ և Հայաստանը դասվում է «Ճ» դասի երկրների շարքին:

Այսպիսով տրանսֆորմացիոն և այնուհետև, ժամանակակից ֆինանսատնտեսական ճգնաժամը անորոշ ժամանակով հետաձգում է Հայաստանում ան-

ցումային ժամանակաշրջանի ավարտը և շուկայական տնտեսության կառուցումը:

Ժամանակն է, որ Հայաստանի իշխանությունները և կառավարությունը հաշվի նստեն այդ իրողության հետ և մշակեն ու կիրառեն շուկայական հարաբերություններին անցման արմատական վերափոխումներ: Դրա համար անհրաժեշտ է.

- օրենքների լիարժեք կիրառում
- կաշառակերության վերացում
- ստվերային /արտոնյալ/ տնտեսության վերացում
- հակամենաշնորհային քաղաքականության ուժեղացում և ազատ մրցակցության ապահովում
- հարկային, վարկային, մաքսային և սակագնային քաղաքականության կատարելագործում:

Այդ բոլորը կհանգեցնեն կայուն, բարձր տեմպերով տնտեսական աճի և կրտանեն բնակչության կենսամակարդակի բարձրացան:

Հակառակը կնշանակի տնտեսական քաղաքականության մեջ «կարճատեսություն», որը կտանի Հայաստանի Հանրապետության տնտեսության վերջնական քայքայման:

В.Е. ОВСЕПЯН – *Социально-экономические последствия современного финансово-экономического кризиса в РА.* – В статье анализируется воздействие переходного (трансформационного) спада и современного финансово-экономического кризиса на уровень жизни населения, бедности, заработной платы и инфляции.

В статье предлагается план конкретных мероприятий по повышению жизненного уровня и сокращению иммиграции.

LE RÔLE DE L'AUTONOMIE DES APPRENANTS DANS L'ENSEIGNEMENT DU FRANÇAIS COMME LANGUE SECONDE

A.S. MARDANIAN, A.M. HOVHANNISSIAN

Les éducateurs reconnaissent aujourd'hui la nécessité d'établir un équilibre entre les trois composantes du triangle pédagogique-apprenant, enseignant, objet à apprendre et à enseigner. Nous tentons ici d'atteindre cet objectif dans le cadre de l'enseignement des langues secondes, en examinant ce qu'est l'apprentissage, en faisant une plus grande place à l'apprenant et en privilégiant son autonomie. La résolution de problèmes, l'apprentissage coopératif et l'évaluation formative sont des pratiques qui visent cette autonomie. Elles favorisent également la compétence langagière et sont tout à fait conformes aux approches psycholinguistiques de l'acquisition de la langue seconde. Parfois difficiles à implanter, elles donnent des résultats qui justifient les efforts de l'enseignant et l'important changement de rôle qu'il doit effectuer.

La langue française est enseignée dans les établissements d'enseignement supérieur arméniens depuis longtemps. Il y a une opinion que pendant la dernière décennie le français ne jouit pas d'une grande popularité dans les écoles arméniennes. C'est un point de vue contestable, des raisons objectives et subjectives viennent s'y ajouter : la prédominance de l'anglais, l'extension de l'allemand, le recul du français en Europe etc. Ces facteurs justifient et valorisent les mesures prises par des experts de la langue afin de développer des compétences de l'enseignement de la langue française comme deuxième langue étrangère.

Définir l'enseignant comme un animateur facilitant l'autonomie de l'apprenant n'est pas nouveau en pédagogie. On se souviendra que Socrate voyait en l'enseignant celui qui a l'art de faire découvrir à l'élève, par une série de questions, les vérités qu'il porte en lui. En tant qu'éducateurs cependant, nous avons été tellement préoccupés par l'enseignement que nous avons souvent négligé l'apprentissage. Selon Daniel Hameline. "Instaurer un équilibre ni stable, ni instable mais «métastable» entre les trois composantes du triangle pédagogiques : l'apprenant, l'enseignant, l'objet à apprendre et à enseigner». (Hameline, 1989, p.738)

Dans notre article nous tenterons de restaurer l'équilibre pédagogique préconisé par quelques spécialistes, en accordant une plus grande place à l'apprenant. L'article se divise en trois parties. La première partie traite de ce qu'est l'apprentissage et de la nécessité de rechercher l'autonomie de l'élève, la deuxième partie examine les changements survenus dans notre conception de l'enseignement d'une deuxième langue et comment ceux-ci devraient affecter notre pratique pédagogique, et la troisième partie essaie de dégager les implications de ce qui précède afin d'élaborer des pratiques pédagogiques qui peuvent aider à développer l'autonomie de nos élèves et lui accorder le rôle qui lui revient dans le triangle pédagogique.

Carl Rogers distingue deux modes principaux d'apprentissage : dénué de sens (par exemple, la mémorisation d'items) qui « n'implique la présence ni des sentiments, ni des significations personnelles » et l'apprentissage « expérientiel » qui est « important pour la personne et lourd de signification » (Rogers, 1984, p.2). Toujours selon Rogers, l'apprentissage expérientiel exige que l'apprenant engage tout son être (cognitif et affectif) dans le processus, qui devient significatif quand il est relié à l'expérience personnelle.

Les perspectives évoquées font partie d'une philosophie de l'éducation selon laquelle l'apprentissage a son point de départ dans l'individu lui-même. L'autonomie et le sens des responsabilités, attitudes à développer chez les élèves, sont étroitement associés à cette philosophie de l'éducation. Selon cette perspective, l'enseignant doit jouer un rôle de facilitateur plutôt que de transmettre des connaissances. Il fait confiance aux élèves et leur laisse des choix. C'est une approche qui implique la non-directivité de l'enseignant.

Selon les perspectives cognitivistes et humanistes de l'apprentissage, l'autonomie de l'apprenant est désirable car c'est en elle que l'apprenant trouvera sa motivation interne, qu'il pourra se sentir responsable de son apprentissage. Chaque individu réagit d'une façon personnelle à un environnement donné. L'acte d'enseigner n'aboutit donc pas nécessairement à l'apprentissage.

Dans le domaine des langues aussi, il est important de s'interroger non seulement sur l'enseignement mais aussi sur l'apprentissage. Autant dans la pédagogie de l'enseignement de la langue maternelle que seconde, le concept de l'apprentissage d'une langue et les approches pédagogiques qui en ont découlé ont évolué. Nous sommes passés d'une perspective structurale où l'accent portait essentiellement sur l'apprentissage du code (la grammaire) à une approche communicative centrée sur la communication par l'enfant de la réalité.

Les nouvelles orientations de l'enseignement de la langue visent non seulement à développer la langue comme outil de communication mais aussi comme outil de pensée. On veut amener l'enfant à développer sa pensée par l'utilisation de la langue, en d'autres mots « à percevoir, structurer, organiser et conceptualiser différents aspects de sa réalité, par le biais de la langue française ». La capacité de comprendre et de manipuler de l'information, de façon à créer de nouveaux schèmes de pensée et d'action, repose sur l'utilisation des divers processus mentaux qui sont à la base des différentes formes de l'emploi de la langue, telles que repérer et reproduire de l'information, sélectionner parmi un ensemble d'informations, regrouper des informations (résumer, synthétiser, comparer, évaluer, intégrer) et inférer des informations. Si toutes les activités de la classe visent à amener l'élève à faire du repérage (mémorisation) et de la reproduction de faits, de formules, etc, l'enfant ne parviendra pas à utiliser la langue pour raisonner. L'élève doit avoir l'occasion d'utiliser tous ses processus mentaux – aussi bien les processus d'analyse, de synthèse et d'évaluation que ceux de rappel des connaissances, de compréhension et d'application. Les activités qui privilégient la répétition et la mémorisation ne font pas appel aux processus mentaux supérieurs et n'engagent pas l'apprenant d'une façon significative.

L'enseignant doit amener l'enfant à utiliser la langue comme outil de pensée, l'amener à conceptualiser dans cette deuxième langue, à réfléchir de façon critique et à expliquer des raisonnements. Les activités qui visent le développement de la pensée

critique favorisent l'autonomie de l'apprenant. La personne qui peut analyser une situation et apporter une évaluation critique est plus autonome et n'a pas besoin de se fier aux autres.

Nous voulons présenter trois pratiques pédagogiques qui permettent à l'enseignant de développer l'autonomie de l'apprenant dans la classe de langue seconde. Ces pratiques pédagogiques, quoique très importantes pour l'apprentissage d'une langue première, revêtent une importance spéciale en langue seconde.

Passons à la première partie de l'article : **résolution de problèmes**

La résolution de problèmes peut stimuler la pensée car elle fait appel aux processus mentaux supérieurs. La question «pourquoi» est critique dans l'enseignement des habilités à penser. Ce type de questions permet aux individus de se projeter hors de leurs expériences personnelles pour accéder à une compréhension plus large du problème. Taba (1966) présente une hiérarchie de tâches cognitives permettant d'amener les élèves à penser : description du problème, réponse affective, inférences, généralisations, application et évaluation. Cette hiérarchie d'habilités correspond aux étapes de l'élaboration d'une problématique, telle que présentée par Freire. Cette approche est utilisée avec beaucoup de succès dans l'enseignement du français langue seconde. Elle commence par des questions au sujet de la vie des gens et, par le dialogue, encourage les élèves à acquérir une vue critique de leur vie et des façons d'augmenter leur estime de soi. Le but d'une approche question-dialogue est d'encourager la pensée critique. L'approche de Freire qui propose un processus d'enseignement à cinq étapes vise le développement de la pensée critique par un dialogue débouchant sur l'action. Par ses questions, l'enseignant guide le groupe d'apprenant à décrire le contenu et les sentiments véhiculés par un code donné (par exemple un dialogue, une histoire, une image ou une chanson qui touche un aspect pertinent de leur vie), à définir le problème représenté par le code, à déterminer la présence du problème dans la vie personnelle des élèves, à situer le problème en question dans un contexte plus large, historique, culturel, social et politique, et à identifier les initiatives que les élèves peuvent eux-mêmes prendre pour résoudre le problème. Cette stratégie de questionnement inductif qui consiste à poser des problèmes, cherche à enseigner aux élèves que penser à des niveaux supérieurs est important et possible à tous les niveaux langagières.

L'élaboration d'une problématique est aussi une excellente façon de faire parler les élèves. Il est possible de créer un environnement accueillant et non stressant en salle de classe en utilisant des techniques de groupe telles que les dialogues, le travail avec les pairs et les cercles de conversation. Ces stratégies réduisent le filtre affectif et permettent une meilleure disposition à l'apprentissage de la langue. Les sujets de conversation sont nombreux. N'oublions pas que nous aimons tous parler de ce qui nous touche de près : les amis, la famille, les loisirs, l'école, les vêtements, les stéréotypes et les vedettes, pour n'en nommer que quelques-uns.

La deuxième partie est consacrée à **l'apprentissage coopératif**.

L'apprentissage coopératif est un excellent moyen de développer l'autonomie et la pensée critique de l'apprenant et de l'amener à produire dans la langue cible. La supériorité de l'apprentissage coopératif sur l'apprentissage plus traditionnel est confirmée par les théoriciens de la motivation et les théoriciens cognitifs.

Selon les théories de la motivation, la structure d'apprentissage en groupe crée une situation où la seule façon d'atteindre le but personnel est par la réussite du groupe. L'apprentissage coopératif encourage l'apprentissage mutuel et renforce les efforts de tous les membres du groupe. Une telle dynamique a un effet motivateur. Deux points de vue différents viennent soutenir l'approche coopérative : la perspective développementale et celle du traitement de l'information. Selon l'hypothèse des théoriciens de la psychologie développementale l'interaction entre les enfants augmente leur capacité de maîtriser les concepts. L'activité collaborative entre les enfants favorise la croissance parce que les enfants d'âges semblables opèrent à l'intérieur de zones proximales de développement, ce qui amène à un niveau de comportement plus élevé que ce qu'ils pourraient atteindre individuellement. Les connaissances sociales- langage, valeurs, règles, moralité- ne peuvent s'apprendre que par l'interaction avec les autres. Quand l'élève cherche à rétablir l'équilibre, une connaissance nouvelle se forme à un niveau supérieur de raisonnement.

La seconde perspective est issue des théories cognitives de l'apprentissage et porte sur le traitement de l'information. Celle-ci soutient que, si l'information nouvelle doit être retenue et reliée à l'information déjà assimilée, l'apprenant doit s'engager dans une forme de restructuration cognitive ou d'élaboration du matériel. Une des meilleures façons d'atteindre ce but est pour l'apprenant d'avoir tâche d'expliquer les données à quelqu'un d'autre.

Plusieurs recherches démontrent la supériorité de l'approche coopérative par rapport à l'apprentissage traditionnel. L'apprentissage coopératif par rapport à l'enseignement traditionnel promet un accomplissement supérieur dans le questionnement à un niveau plus élevé.

Plusieurs arguments ont été invoqués sur le plan cognitif pour appuyer l'apprentissage coopératif. Mais nous pouvons aussi invoquer des arguments psycholinguistiques et pédagogiques pour démontrer la valeur du travail de groupe dans les cours de langue seconde. Plusieurs auteurs sont en faveur du travail coopératif pour les classes de langue seconde. Voici brièvement leurs arguments :

- le travail en groupe augmente les occasions de pratique dans la langue. Des études reposent sur l'observation des salles de classe témoignent du fait que l'enseignant parle de 60 à 70% du temps. Les élèves ont beaucoup plus d'occasion de «produire» lorsqu'ils travaillent en groupe.

- le travail en groupe augmente la qualité du langage des élèves. Dans une classe traditionnelle où l'enseignement est dirigé par l'enseignant, la nature de la conversation est souvent structurée, artificielle et arbitraire. La communication est rarement authentique, le professeur connaît d'avance les réponses des élèves. Le type de questions posées exige la plupart du temps des réponses courtes qui ne requièrent aucune réflexion complexe. Au contraire, la communication face à face dans un petit groupe est un milieu plus naturel pour la conversation. Le rôle de l'élève n'est pas limité à celui de récepteur ; l'élève peut et doit produire des phrases et utiliser ainsi le langage pour un plus grand nombre de fonctions.

- le travail de groupe augmente la possibilité de négocier le sens de la communication et de modifier la langue afin d'assurer que le message soit compris. Par négociation, on entend les modifications de conversation-les demandes de clarification, les vérifica-

tions de compréhension, les répétitions(exactes ou sémantiques), entre autres. On confirme que , bien que les apprenants ne puissent pas échanger de données grammaticales et sociolinguistiques correctes au même titre que les personnes qui utilisent leur langue maternelle, ils peuvent s'offrir mutuellement une pratique de communication authentique , qui comprend la négociation du sens qu'on croit utile à l'acquisition d'une langue seconde.

-le travail de groupe aide à individualiser l'instruction.L'approche traditionnelle ne tient pas suffisamment compte des différences individuelles qui peuvent exister parmi les élèves d'une même classe –par exemple , styles d'apprentissage, attitude, motivation, expériences langagières antérieures. Souvent, dans le travail de groupe , les élèves sont libres de choisir des sujets ou des thèmes qui les intéressent plutôt que ceux présentés par l'enseignant. On est plus apte alors d'avoir une communication plus authentique dans les activités de groupe que dans les activités où participe toute la classe.

-le travail de groupe promet un climat affectif positif.Le groupe des pairs offre normalement un milieu plus sécurisant et plus intime que le grand groupe traditionnel de la salle de classe. Dans une grande classe, l'élève est victime de «l'effet de l'auditoire»: il a le sentiment d'être jugé par l'enseignant qui l'écoute et de devoir fournir un produit court et poli(au sens de «parfait»).

-le travail de groupe motive les apprenants ; il offre une plus grande quantité et une plus grande variété de pratiques dans la langue, s'adapte mieux aux besoins individuels et se fait dans un climat affectif. L'apprentissage est alors plus motivant.

La troisième partie c'est **l'évaluation formative.**

Selon Gérard Scallon. «Le rôle de l'élève en évaluation formative peut être gradué en intensité, depuis la passivité la plus totale, en passant par des degrés divers de participation ou de collaboration pour arriver enfin à des démarches d'autonomie, c'est-à-dire à des démarches d'auto-évaluation».(Scallon,1988, p.137)

Le rôle important que joue l'élève dans l'évaluation formative est reconnu dans les nouvelles orientations de l'enseignement de la langue. Les étapes d'objectivation et d'auto-évaluation font partie des principes d'une approche communicative centrée sur l'apprenant.Ces étapes obligent l'apprenant à faire un retour sur la production, à réfléchir sur les objectifs qu'il devait atteindre dans son travail et à assumer la responsabilité de son travail. Il doit porter un regard critique sur son propre travail et effectuer les modifications nécessaires pour l'améliorer. Dans les programmes de langues, les enseignants sont invités à élargir leur format d'évaluation. On parle de co-évaluation, d'auto-évaluation en plus de l'évaluation faite uniquement par l'enseignant. On sollicite une plus grande participation des élèves dans l'évaluation afin qu'ils puissent eux-mêmes contrôler leurs propres apprentissages.

«L'auto-évaluation est conçue comme une habilité à développer, qui tire sa justification non pas dans la facilitation de la gestion de l'évaluation formative, comme dans les cas des autotests, mais dans la valeur intrinsèque des objectifs ultimes de la formation ou de l'éducation reliés au développement de l'autonomie et du sens des responsabilités». (Scallon, 1988,p.145)

Les élèves participent à la préparation de grilles d'objectivation et d'évaluation basées sur les objectifs à atteindre. Ils peuvent ensuite utiliser ces grilles pour faire la co-évaluation du travail de leurs pairs et fournir une rétroaction à la présentation orale

d'un discours informatif par chacun des élèves aux membres de la classe. Ces grilles peuvent aussi servir à l'auto-évaluation.

L'autonomie de l'apprenant est désirable car elle est à la base de tout apprentissage significatif ; les pratiques pédagogiques qui favorisent l'autonomie de l'apprenant favorisent aussi la compétence langagière des élèves dans les classes de langue seconde et sont tout à fait compatible avec les approches psycholinguistiques de l'acquisition d'une langue seconde. Les pratiques pédagogiques qui visent l'autonomie de l'apprenant amènent un changement important au rôle de l'enseignant par rapport à celui qu'il joue dans le cadre de l'enseignement collectif traditionnel. C'est seulement en intégrant l'apprenant que l'on pourra restaurer le triangle pédagogique.

La résolution de problèmes, l'apprentissage coopératif et la participation active de l'élève dans l'évaluation formative sont trois pratiques pédagogiques qui peuvent favoriser l'autonomie de l'apprenant. Les défis sont nombreux. Ces pratiques ne sont pas toujours faciles à implanter mais les efforts en valent la peine.

BIBLIOGRAPHIE

1. Hameline, Daniel (1989). *Pédagogie: les problèmes contemporains*
2. Freire, Paulo (1973). *Education for critical consciousness*. New York
3. Paquette, Claude (1979). *Vers une pratique de la pédagogie ouverte*. Victoria-ville, p.220
4. Scallon, Gérard (1988). *Evaluation formative des apprentissages*. (tome 1: La réflexion), Québec
5. Rogers Carl R. (1984). *Liberté pour apprendre*. Paris, 364 p.
6. Taba, Holda (1966). *Teaching Strategies and Cognitive Functioning in Elementary School Children*. San Francisco

Ա.Ս. ՄԱՐԴԱՆՅԱՆ, Ա.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – Սովորողների ինքնուրույնության դերը ֆրանսերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի ուսուցման պրոցեսում:
Կրթության ոլորտում ուսուցման կարևոր հիմնահարցերից մեկը մանկավարժական “եռանկյունու” երեք բաղադրիչների՝ սովորողի, դասավանդողի և դասավանդվող նյութի միջև հավասարակշռություն հաստատելն է:

Հոդվածում փորձ է արվել այդ հավասարակշռությունը ներկայացնել երկրորդ օտար լեզվի ուսուցման շրջանակներում՝ սովորողին ինքնուրույնության մղելը դիտելով իբրև ուսուցման նպատակ:

Երկրորդ օտար լեզու դասավանդողների բազմազան մեթոդները պիտի նպատակաուղղվեն սովորողների գործնական հմտությունների ձեռքբերմանը, որոնք պայմանավորված են դասավանդողի հմտությամբ, նրա հարուստ ու խոր գիտելիքներով: Եվ եթե դասավանդողին հաջողվում է սովորողին ներգրավել ուսուցման գործընթացի մեջ՝ նրան դարձնելով “եռանկյունու” ամենաակտիվ ու շահագրգիռ մասնակիցն ու դերակատարը, ուրեմն լուծված պիտի համարել երկրորդ օտար լեզվի ուսուցման բարդ ու դժվարին գերխնդիրը:

ՄՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԳԱՆՑԸ ՈՐՊԵՍ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Բ.Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

19-րդ դարի կեսերին հայ իրականության մեջ հրապարակախոս, լուսավորության մեծագույն երախտավոր, կրթական գործիչ Խ. Աբովյանից հետո ժողովրդի կենսական ու ցավոտ խնդիրների բացահայտումով, ժամանակաշրջանի խոցելի կողմերի անողորմ քննադատումով հանդես եկավ Ստեփանոս Նազարյանցը:

Նա ծնվել է 1812թ. Թիֆլիսում, քահանայի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է Ղարաբաղցի Պողոս վարդապետի մոտ, ապա ավարտել է Ներսիսյան դպրոցը: Որոշ ժամանակ ֆրանսերեն է սովորել պրոֆ. Շահան Զրպետի մոտ, այնուհետև պատմություն և աշխարհագրություն է դասավանդել նրա դպրոցում: 1832թ. Խ. Աբովյանի միջնորդությամբ մեկնում է Դորպատ և ընդունվում գիմնազիա, իսկ 1835թ. սովորում է համալսարանի տնտեսագիտական և բժշկական ֆակուլտետներում, այնուհետև պետական թոշակառուի կարգավիճակով ընդունվում է փիլիսոփայության ֆակուլտետը և ավարտում 1840թ.: Նազարյանցը մեկ տարի լինում է Պետերբուրգում, ուր գրում է «Սպարտան և Աթենքը Պելեպոնեսյան պատերազմում և մի քանի խոսք նախընթաց դեպքերի մասին» թեզը՝ իրավունք ստանալով դասախոսելու Կազանի համալսարանում: Այստեղ էլ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ նվիրված Ֆիրդուսու Շահ Նամեին: 1849թ. տեղափոխվում է Մոսկվա և Լազարյան ճեմարանում դասավանդում արաբերեն, պարսկերեն, լատիներեն լեզուներ: 1858թ. Ս. Նալբանդյանի հետ հրատարակում է «Հյուսիսսփայլ» հանրահայտ ամսագիրը: Շարունակելով Մոսկվայի Լազարյան ճեմարանի շրջանավարտների լավագույն ավանդույթները՝ Ստեփանոս Նազարյանցը «Հյուսիսսփայլի» էջերում հանդես է գալիս գեղարվեստական, լեզվաբանական, մանկավարժական, կրթական բնույթի բազմաթիվ հրապարակումներով: «Հյուսիսսփայլը» լույս է տեսնում հետևյալ բնաբանով. «Այսուհետև ոչինչ եգիպտոսյան խորամանկ քուրմեր, որ կամեին լինել գիտության միայնակ պահապանք, այսուհետև ոչինչ Չինական պարիսպ, որ պիտո էր փակել լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բարեւոյան գերությունից»:

Նազարյանցը հանդես եկավ աշխարհաբարի դատի կրքոտ պաշտպանությամբ, հայ ազգի ռուսական կողմնորոշման ամրապնդման դիրքերում՝ այն հիմնավորելով հետևյալ կարգախոսով՝ «հայը քաղաքականապես ռուս է»:

Նազարյանցը ազգի զարգացման ուղին համարում էր լուսավորությունը և հույսը կապում լուսավորյալ միապետի հետ: Այսինքն՝ նա միապետության վերացման հարց չէր դնում:

Հետաքրքիր է, որ նա դիմում էր նաև հայ գիտուններին հետևյալ հարցադրումներով՝ արդյոք նրանց ռուսամականության պտուղներից օգտվել է ազգը, լուսավոր գաղափարներ տարածել են նրանք իրենց եղբայրակիցների մեջ,

նպաստե՞լ են հարազատ ժողովրդի ընկերական կյանքի զարգացմանը և վերջապես՝ դաստիարակե՞լ են ազգի մարդկանց հոգին ու սիրտը:

Նազարյանցը հայ ազգի գոյության, նրա պահպանության ամենագլխավոր գործոնները համարում էր կրոնը և լեզուն: Նրա կարծիքով՝ «հայոց ազգի տունը պիտո է և կարող է շինվել նրա լեզվի շինությամբ: Հայի համար յուր լեզուն պարտական է համարել յուր ամենասուրբ բանը, յուր աչքի լուսը, յուր սրտի արյունը»: «Հյուսիսափայլի» խմբագիրը Մ. Նալբանդյանի էժեն Սյուլի «Թափառական հրեա»-ի թարգմանությանը վերաբերող իր «Կրիտիկա» հոդվածում արտահայտում է մի շարք լուսավորչական գաղափարներ: Նա գտնում է, որ անհրաժեշտ է ստեղծել ազգային դպրոց, որտեղ պետք է ծաղկի ոսնահարված հայ լեզուն, որտեղ մանուկ սերունդը ուսում կստանա մայրենի լեզվով, կիսուսի ու կմտածի հայացի: Մինչև մայրենի լեզվի ամուր հիմքը չդրվի, օտար լեզվի ուսուցումը հարկավոր չէ դպրոցում: Այդ լեզուն անհարազատ կլինի և դժվար յուրացվող, մյուս կողմից օտար լեզվով ստացած կրթությունը սովորողների մեջ չի դաստիարակի ազգային «ոգի և զգացմունք»: Նազարյանցը միաժամանակ շտապում է հայտարարելու, որ բնավ դեմ չի արևելահայ հատվածի երեխաների ռուսերեն լեզվի ուսուցմանը, ընդհակառակը, «հայոց մանուկը պիտի ամենայն ժրաջանությամբ ուսանի ռուս լեզուն»: Խոսելով ժողովրդի բոլոր սեռերի ներկայացուցիչների կրթության տալու անհրաժեշտության մասին՝ ցավ է հայտնում, որ հայ իրականության մեջ իզական սեռը, դուրս մնալով կրթությունից, վտարված է հասարակությունից և ընդհանրապես հասարակական կյանքից: Նազարյանցը շոշափում է նաև բարեկարգ հայ դպրոցներ ստեղծելու պայմանների ապահովման հարցերը: Այդ գործում կարևոր է համարում հաջող դասագրքեր ու ձեռնակներ ունենալը բոլոր դասարանների համար, նաև ուրիշ կարևոր պարագաներ ու կահավորանք: Սակայն դպրոցական գործի բարելավման ամենագլխավոր պայմանը տեսնում է ուսուցչական կադրերի պատրաստման մեջ: «Հայ դպրոցի «վարժապետները» տգետ են», - գրում էր Նազարյանցը, - «սահմանափակ մտքի տեր, անսիրտ, անհոգի դեպի իրենց պարտականությունները: Այդպիսի ուսուցիչներով դպրոցը երբեք չի բարեկարգվի: Հրամայական անհրաժեշտություն է նոր ուսուցչություն պատրաստել՝ գիտուն, մանկավարժական գիտելիքներով զինված, բարեխիղճ»:

Կարծես թե մեր օրերի համար է ասված:

«Հյուսիսափայլում» Նազարյանցն ու Նալբանդյանը առաջ են քաշում կենտրոնական միջնակարգ դպրոց՝ իբրև «մայր և ծննդատուն մյուս դպրոցների», ստեղծելու խնդիրը: «Այդ դպրոցը, - նշում էր լուսավորիչ հրապարակախոսը, - պետք է նախ ուսուցիչներ պատրաստի ժողովրդական դպրոցների համար, այդտեղ սովորողներին զինի այն բոլոր առարկաների հիմնավոր գիտելիքներով, որոնցով նրանք կարողանան մուտք գործել Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի կուլտուրական կենտրոնները՝ բարձրագույն կրթություն ստանալու համալսարաններում և վերադառնալով հայրենիք՝ տարբեր մասնագիտություններով գործեն ազգային հիմնարկներում»: Այդպիսի դպրոցի ստեղծումը Նազարյանցը հարմար է գտնում Նոր Նախիջևանում, որը ռուսական մշակութային կենտրոնների հետ շփման ու հաղորդակցության համար միանգամայն հարմար վայր է: Նազարյանցը 1864թ. իր «Ազգային մայր դպրոց» հրապարակման մեջ գրում է. «Այս պատճառով մտածում ենք, որ դպրոցի առավել պատշաճավոր տեղն է Նախիջևանը, Դոն գետի վրա, Ազովյան, ուրեմն և Սև ծովին շատ մոտավոր, իսկ ժո-

դովորողը բոլորովին հայ և մոտ 20000 հոգի իր շրջակա գյուղերով»: Երկու տարի անց, հյուրընկալվելով Նոր Նախիջևանում, նա քաղաքի բնակչությանը առաջարկում է հիմնել գիմնազիա, որը և իրականացվում է: Այդ մասին քաղաքագլուխ Կ. Հայրապետյանը շնորհակալությամբ տեղյակ է պահում Նազարյանցին: Ազգային լուսավորության գորավոր խթանները, բացի դպրոցից, Նազարյանցը տեսնում էր բարեկարգ տպարաններ, պատշաճավոր մատենադրություն ստեղծելու մեջ, իսկ մամուլը, թատերական բեմը պետք էր գործի դնել՝ ապահովելով ազգային լուսավորության իրականացումը: Նազարյանցը, երկար տարիներ լինելով մանկավարժական գործունեության քառուղիներում և միաժամանակ լինելով Ներսիսյան դպրոցի տեսուչ, խորապես մտահոգվել է դասավանդման հարցերով: Կազմել ու շարադրել է մի շարք դասագրքեր ու ձեռնարկներ, որոնք ժամանակին արժեքավոր դեր են կատարել հայ դպրոցներում մայրենի և ռուսաց լեզուների դասավանդման գործում: Այդ դասագրքերից են՝ «Առաջին հոգեղեն կերակուր հայազգի մանուկների համար», «Հանդես նոր հայախոսության», «Տեսական և գործնական առաջնորդ ռուս լեզվի ի պետս հայկազյան մանուկների»: Բացի դասագրքերից, Նազարյանցը «Հյուսիսափայլում» մի շարք հոդվածներ է հրապարակում մանկավարժության ու դաստիարակության վերաբերյալ, կատարում թարգմանություններ:

Նա իր ժամանակակիցներից ավելի գործնականորեն էր մոտենում կրթական գործի բարելավման հարցերին: Նրա գաղափարները այն արձագանք են ստանում հայկական առաջադեմ մտավորականության կողմից: Ըստ նրա՝ դպրոցական շինարարությունը պետք է սկսել ներքևից, նախ՝ ապահովելով «հասարակ»-տարրական կրթությունը՝ հիմնել իսկական ժողովրդական դպրոցներ և իսպառ հրաժարվել հայ գյուղական գոմերի սաքուններում կազմակերպված «դպրոցներից», իրենց տիրացու վարժապետներով և այլն: Նա իր լիակատար համաձայնությունն է արտահայտում Մ. Նալբանդյանի այն դատողությանը, որ ժողովուրդը ուղեկից է ժամանակին և նրա հզոր ազդեցությանը, հետևապես վերակենդանացնել ավելի քան հազարամյակի կուլտուրական արժեքները և նրանցով սոսկ սնվել, անկարելի է:

«Երբ որ մի ազգ,- գրում էր Նազարյանը,- ժամանակի հետ առաջ խաղալով՝ փոխում է յուր կյանքի պայմանները, այնուհետև այդ նոր կյանքի համար պիտո է ծնել նոր ձևեր, լուսավորչական նոր կերպարանքներ»: Նազարյանցը մեր գրական քննադատության ու նոր հրապարակախոսության մեծագույն երախտավորներից էր: Նրա լուսավորչական գաղափարները ժամանակին խոշոր ազդեցություն են ունեցել հայ «ազատամիտ» կոչվող հոսանքի մտավորականության վրա: Լեռի բնութագրմամբ՝ Նազարյանն ամուր կանգնած էր հայ լուսավորիչների շարքերում:

Հայ ազգի լուսավորիչ երախտավորը իր մահկանացուն կնքեց 1879թ. և հողին հանձնվեց Մոսկվայի Վահանյան հայկական գերեզմանոցում:

Նրա՝ ազգի կրթության համընդհանուր վերափոխման գաղափարները, համարձակ մտքերը այժմ էլ չեն կորցրել իրենց կարևորությունը և շատ դեպքերում կարող են ուղենիշ դառնալ կրթական գործի անընդհատ իրականացվող բարեփոխումներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփանոս Նազարյանց, *Երկեր*, Թիֆլիս, 1913թ.:
2. Լեո, *Ստեփանոս Նազարյանց*, Թիֆլիս, 1902թ.:
3. Նանուկյան Ռ., *Ստեփանոս Նազարյանց*, Երևան, 1978թ.:
4. *Հայ Գրական Քննադատության Քրեատումատիա*, Երևան, 1981թ.:
5. Արշավիր Շավարշյան, *Հայ Մանկավարժներ*, Երևան, 1953թ.:

В.Т. ВАРДАНИЯН – Степанос Назарянц как просветитель и деятель образования. – В статье представлены жизнь и взгляды великого армянского педагога и просветителя, главы либералов Степаноса Назарянца. Раскрываются его педагогические взгляды, которые актуальны и в наше время.

**ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ**

Ա.Վ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Թանգարանը գիտահետազոտական, գիտակրթական հաստատություն է, որը համալրում, պահպանում, ուսումնասիրում, ցուցադրում և մասսայականացնում է արվեստի ստեղծագործությունները, պատմության, գիտության, կենցաղի, արդյունաբերության և գյուղատնտեսության առարկաները, ականավոր գործիչների կյանքի և գործունեության մասին նյութերը: Թանգարանը կոչված է ծառայելու հասարակությանը և նրա զարգացմանը: Թանգարանի կարևորությունը տարբեր պատմական դարաշրջաններում տարբեր է եղել: Սկզբում նրանք միայն ազնվականներին էին մատչելի, իսկ այժմ՝ բոլորին:

Ժամանակակից աշխարհում թանգարանը պատմականորեն պատճառաբանված բազմագործառույթ, սոցիալական տեղեկատվության ինստիտուտ է, որը նախատեսված է պատմամշակութային և բնագիտական արժեքների պահպանման համար:

Հատկապես մշակութային ժառանգության հայտնաբերումը կարևոր է զբոսաշրջության զարգացման համար, և նրանց համագործակցությունը խոստումնալից ուղղություն է մոտակա հեռանկարում:

Թանգարանները ճանաչողական և մշակութային զբոսաշրջության մեջ իրենց կարևոր դերն ունեն: Մարզում կա չորս թանգարան և երկու պատկերասրահ՝ հետաքրքիր ցուցանմուշներով: Մակայն մարզի թանգարանների ներկա վիճակը բավարար չէ դրանք որպես զբոսաշրջային ռեսուրս լիովին օգտագործելու համար:

Թանգարանային գործը մարզում ունի բազում հիմնախնդիրներ՝ կապված ֆինանսական հնարավորությունների հետ, որոնց թեկուզ մասնակի վերացումը կարևոր խթան կարող է լինել մարզում մշակութային զբոսաշրջության զարգացման գործում:

Տավուշի մարզը, որ ընդգրկում է նախկին Իջևանի, Նոյեմբերյանի, Շամշադինի շրջանները և առողջարանային Դիլիջան քաղաքը, մշակութային հարուստ ավանդույթներ ունի:

Մարզը հարուստ է զբոսաշրջային ռեսուրսներով՝ պատմամշակութային համալիրներով, հնագույն ամրոցներով, թանգարաններով: Մարզի քաղաքները՝ որպես առողջարանային կենտրոններ, հայտնի են դեռևս անցյալ դարերից: Այսօր նախկին առողջարանների և հանգստյան տների կողքին կառուցվում են նոր, ժամանակակից համալիրներ:

Մարզը միշտ էլ հայտնի է եղել իր շնորհալի վարպետներով, քանդակագործներով, նկարիչներով: Մարզը տվել է գեղանկարիչներ, ձեռարվեստի բազմաթիվ վարպետներ: Դիլիջանի, Իջևանի, Կողբի արվեստի դպրոցներում բարձր մակարդակով են ուսուցանվում գեղանկարչություն, գրաֆիկա, ասեղնագործու-

թյուն, հեյլունագործություն, մակրամե, խեցեգործություն, փայտի գեղարվեստական մշակում, դարբնագործություն:

Դիլիջանը կարելի է համարել թանգարանների քաղաք:

1950թ. Եղիշե Հովսեփյանը, Դիլիջանի գրադարանի շենքի սենյակներից մեկում հավաքելով հնագիտական և կենցաղային շատ իրեր, հիմք է դնում **Դիլիջանի երկրագիտական թանգարանի**: Այսօր թանգարանը ունի երեք հազար և ավելի տարիների հնություն ունեցող նյութեր և հանրահայտ նկարիչների նկարների բնօրինակներ Հ. Այվազովսկուց («Քրիստոսն իր աշակերտներով»), («Ներքինին հարեմուն»), Փ. Թերլեմեզյանից («Նիագարայի ջրվեժը»), Է. Շահինից («Լուիզա Ֆրանս»), Մ. Սարյանից («Մ. Մարգարյանի դիմանկարը», «Հոբելյանական ծաղիկներ»), Գ. Խանջյանից («Մխիթար Գոշ»), Մ. Ավետիսյանից («Անդորր»), Ի. Պորֆիրովից, Ս. Բոդկինից, Գրյոզից, Ռոբուեյից, Քենտից, Գառուից և ուրիշներից: Այստեղ կան նաև նիդեռլանդական, իտալական և ֆրանսիական նկարիչների գործեր: Թանգարանում կան թանկարժեք մետաղներից պատրաստված գուտիներ, ականջօղներ, ապարանջաններ: Հետագայում թանգարանի երկարամյա տնօրեն Ալբերտ Մատինյանը և Դիլիջանին նվիրյալ Շարամբեյանը այն դարձրին հնագիտական իրերի և արվեստի գործերի իսկական գանձարան: Թանգարանում պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, ցուցահանդես-վաճառքներ, հանրակրթական դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար պատմության և արվեստի դասաժամեր և այլն:

Թանգարանն ընդգրկված է մարզի զբոսաշրջային երթուղու մեջ:

Հովհաննես Շարամբեյանի անվան հետ է կապված նաև **Դիլիջանի պատմամշակութային արգելոց թանգարանի ստեղծումը**: Թանգարանի արտաքին հրապույրը վարպետորեն վերականգնված 19-րդ դարի ժողովրդական ճարտարապետությունն է: Արգելավայր-թանգարանն ունի 19-րդ դարի ժողովրդական կենցաղի բաժիններ, ժողովրդական ստեղծագործության և կիրառական արվեստի նմուշներ, գեղանկարներ, լուսանկարներ: Այն թանգարան այցելողին իր նախնիների կենցաղը զգալու բացառիկ հնարավորություն է ընձեռում: Գոշավանքին կից գործում է Գոշի թանգարանը, որտեղ ցուցադրվում են Գոշի տարածքում հայտնաբերված կենցաղային իրեր և գործիքներ: Ազգային պարկի թանգարանում տարածքում գոյություն ունեցող կենդանական և բուսական աշխարհի ցուցանմուշներ են պահվում:

1970 թվականին նվիրյալ արվեստագետ, մշակույթի տան տնօրեն Սուրեն Աբովյանը սկիզբ դրեց մի գործի. նա հիմնեց հայրենի **Կողբ ցյուղի պատմության թանգարանը** և շուրջ չորս տասնամյակ անփոփոխ ղեկավարում էր այն: Նա շարունակ փնտրում էր հին իրեր և անընդհատ հարստացնում թանգարանը: Կողբի բնակիչները նույնպես մեծ աջակցություն են ցուցաբերել թանգարանի հարստացման գործում և հպարտանում են իրենց թանգարանով: Թանգարանում կա 1300 ցուցանմուշ: Սուրեն Աբովյանը անընդհատ կապի մեջ էր իր անվանի համացուղացիների հետ, որոնց ներկայացրել է թանգարանում լուսանկարներով և կենսագրական նյութերով: Մշտական շփումների մեջ էր համերկրացիների՝ մշակույթի հայտնի գործիչներ նկարիչ Հենրիկ Մամյանի, երաժիշտ Սվետլանա Նավասարդյանի, երգչուհի Արաքս Դավթյանի, Լոս Անջելեսում բնակվող գիտնական Պավել Բարսեղյանի, ինչպես նաև Էրմիտաժի տնօրեն Բորիս Պիոտրովսկու, նույն թանգարանի գիտաշխատող Անատոլի Լեոպոդովիչի, Լուվրի թանգարա-

նի գիտաշխատող Նազիկ Անջելյանի (ով եղել է Կողբի թանգարանում) և այլոց հետ և նամակներով խորհրդատվություններ էր ստանում նրանցից:

Կողբի պատմության թանգարանի ամենահին նմուշը 2500 տարեկան սուրն է, որ գտնվել է գյուղի Տվարագեղցի եկեղեցու մերձակայքից: Նույն տեղանքից՝ քարե դագաղից, հայտնաբերվել է մարդու քարե կիսանդրի: Կողբ գյուղի և հարակից շրջանների պատմության հետաքրքիր վկայություններ են մեկ դարից ավելի վաղեմության լուսանկարները: Թանգարանի զարդն են գյուղի եկեղեցիների մանրակերտները, որոնք նույնպես Սուրեն Աբովյանի ձեռքի աշխատանքն են: Երբ արտասահմանից զբոսաշրջիկներ են գալիս Կողբ, անպայման նրանց այստեղ են առաջնորդում: Հայրենագիտական այս թանգարանը դարձել է դպրոցականների էքսկուրսիաների ցանկալի վայրը:

Բերդի պատմության և կենցաղի թանգարանը բացվել է 1990 թվականին: Ցուցանմուշների քանակը 600 է: Թանգարանի տարբեր բաժիններում ցուցադրված են գյուղական կենցաղի զանազան իրեր՝ խնոցի, տարբեր տիպի և նշանակության խեցեղեն, գորգեր, կարպետներ, Տավուշի պատմությանն ու անվանի մարդկանց վերաբերող նյութեր:

Իջևանի հեղափոխության թանգարանը հիմնադրվել է 1955 թվականին և գոյություն է ունեցել մինչև 1985 թվականը, երբ Իջևանի շրջանային կոմիտեի որոշմամբ թանգարանը լիկվիդացվել է՝ նորը կառուցելու նպատակով: Երկար ժամանակ թանգարանի ցուցանմուշները պահվել են քաղաքային արխիվում, իսկ 1990 թվականին տեղափոխվել և ի պահ են տրվել Սարդարապատի ազգագրական թանգարան: Ներկայիս թանգարանը գտնվում է քաղաքի հարավային կողմում՝ Երևանյան փողոցի վրա: Թանգարանի մուտքի մոտ դրված է երկու հրանոթ, որ ազդարարել են Կարմիր Բանակի մուտքը Հայաստան: Թանգարանը խորհրդային շրջանում կառուցված մեկուկես հարկանի պարզ հատակագծով շինություն է՝ բաղկացած երկու սենյակից և ամբողջ ճակատով ձգված պատշգամբից: Առաջին սենյակում են գտնվում Մորգեյի հեռագրական ապարատը, որով հեղկոմի անդամ Կ. Այվազյանը հեռագիր է հղել Վ.Ի. Լենինին մայիսյան ապստամբության մասին, զինկոմիսար Ս. Կապյանի հեռախոսը, գրասենյակի կահույքը, Սևբաբեցի Սաքոյի մասին պատմող նյութեր, ինչպես նաև Իջևանի հայտնի մարդկանց նկարները: Ազգագրության բաժնում կան տարբեր չափերի սափորներ, փայտե կահույք, խնոցի, գորգեր, հին կարպետներ: Թանգարանն ունի շուրջ 800 ցուցանմուշ, իսկ վերջերս համալրվեց ևս 85-ով: Իջևանի թիվ 4 դպրոցի մոտ շինարարական աշխատանքներ կատարելիս բացվեց ուշ բրոնզե դարի երկու դամբարան, որտեղից հայտնաբերված իրերի մեջ հետաքրքրության են արժանի բրոնզե սուրը, քրեղանիները, սև սափորները: Թանգարանի ամենահին նմուշները քարեդարյան գործիքներն են, էնեոլիթյան և ուշ բրոնզեդարյան ցուցանմուշները: Թանգարան ընդգրկված է մարզի զբոսաշրջային փաթեթի մեջ: Այցելուները այստեղ տեսնում են Տավուշի մարզն իր հնագույն պատմությամբ, բուսական ու կենդանական աշխարհով, արհեստագործ վարպետների անձեռակերտ աշխատանքներով, զգում են անվանի տավուշցիների ներկայությունը և թանգարանից հեռանում նորովի հարստացած... Այսօր Իջևանի թանգարանը իր նոր շնչառությունն է ստացել շնորհիվ նրա տնօրեն, աշխարհագրության հմուտ մասնագետ, քարտեզագործ, բազմավաստակ ուսուցիչ Ն. Թանանյանի շնորհիվ: Իր գործի ջերմեռանդ նվիրյալը լինում է մարզի գյուղերում, որոնում, հայթայթում

թանգարանային ցուցանմուշներ՝ հարստացնելու հայրենի քաղաքի թանգարանը:

Իջևանի պատկերասրահը գործում է 2010 թվականից: Պատկերասրահը գտնվում է Իջևանի քաղաքային զբոսայգում: Այն տիպային ժամանակակից շենք է, ունի երեք հարկ: Պատկերասրահում պայմաններ կան գիտաժողովների, սեմինարների, միջոցառումների կազմակերպման համար: Մայիս ամսվա սկզբին առաջին հարկում բացվեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված անվանի հայրենակցի՝ կյանքից անժամանակ հեռացած տաղանդավոր նկարիչ Սպարտակ Սարգսյանի ծննդյան օրվան: Երկրորդ հարկում լուսանկարների ցուցահանդես է բացված: Պատկերասրահն ունի հայ նկարիչների ստեղծագործությունների մեծ հավաքածու, որը կցուցադրվի երրորդ հարկի նորոգումից հետո: Ազգային կիրառական ստեղծագործությունների զարգացմանը մեծապես նպաստում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետը:

Տավուշի մարզի թանգարանային գործի կարևոր հիմնախնդիրներից են.

- ֆինանսական միջոցների սղությունը,
- շենքային անբարենպաստ պայմանները /շենքերի վերանորոգման, դրանց արդիականացման անհրաժեշտությունը/,
- ներսի և դրսի ցուցանմուշների պատշաճ ցուցադրության պակասը,
- օդաջերմային նորմալ ռեժիմի բացակայությունը,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը,
- թանգարանային գործի մասնագետների պակասը,
- ոչ լիովին գովազդված լինելը:

Մարզում թանգարանային շենքերի հիմնական մասը նորացման կարիք ունի: Թանգարանների շենքերի փոքր չափերի պատճառով ներսի և դրսի ցուցանմուշները ըստ արժանվույն չեն ցուցադրվում: Ֆինանսական միջոցների սղության պատճառով ձմռանը թանգարանների շենքերը մասամբ են ջեռուցվում, և շինությունների ներսում օդաջերմային ռեժիմը կայուն պահելն անհնար է:

Դիլիջան քաղաքի երկրագիտական թանգարանը համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է: Շենքը կառուցվել է 1990-ական թվերի սկզբին, գտնվում է վթարային վիճակում, աշխատանքներ են տարվում բարեգործական որևէ ծրագրով շենքի ամրացումը իրագործելու ուղղությամբ: Թանգարանում պահպանվում են 8670 իրեր, որոնցից 5589-ը հիմնական ֆոնդն է: Թանգարանում գործում են հնագիտության և կերպարվեստի բաժիններ, մյուս բաժինների ցուցադրությունը ժամանակավորապես փակված է վթարային լինելու պատճառով:

«Դիլիջան» պատմամշակութային արգելոց-թանգարանի ֆոնդը բաղկացած է 2266 /հիմնական՝ 1233/ ցուցանմուշից: Դիլիջան քաղաքի բոլոր թանգարանների մշակութային արժեքների ճակատագիրը կասկածի տակ է շենքային անբարենպաստ պայմանների պատճառով:

Բերդ քաղաքի թանգարանի հիմնախնդիրները ևս շատ են. շենքը կապիտալ վերանորոգման կարիք ունի, հատկապես շենքի տանիքի թիթեղյա ծածկը պետք է փոխվի, աշխատասենյակները պետք է վերանորոգվեն: Շենքի արտաքին տեսքը արդիականացման, բակը կանաչապատման կարիք ունեն: Շատ ցուցանմուշներ

պետք է վերականգնվեն, իսկ լուսանկարները և քարտեզները նորացվեն ու արդիականացվեն, ֆինանսական միջոցներ ներդրվեն՝ նոր ցուցանմուշներ ձեռք բերելու գնման միջոցով:

Իջևանի թանգարանի շենքային պայմանները նույնպես շատ հեռու են բավարար լինելուց: Թանգարանի շենքը վերանորոգման կարիք ունի: Ֆինանսական միջոցների սղության պատճառով գնման միջոցով նոր ցուցանմուշների ձեռք բերումը անհնար է, ձմռանը շենքը նորմալ չի ջեռուցվում: Ցուցանմուշների մեծ մասը շինության փոքր չափերի պատճառով ցուցադրվում է գետնին, ցուցադրման համար չկան ցուցասեղաններ: Թանգարանը հովանավորության և աջակցության կարիք ունի:

Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչների մեջ կարևոր տեղ է հատկացված մարզային և համայնքային ենթակայության մշակութային հաստատությունների աշխատանքների կազմակերպմանը: Թանգարանների գործունեությունն ապահովելու համար նախատեսվել է՝

- ✓ աջակցել թանգարանների հավաքածուները հարստացնելուն,
- ✓ ստեղծել նրաստավոր պայմաններ այցելուների հետաքրքրության բարձրացման ուղղությամբ,
- ✓ ստեղծել նրաստավոր պայմաններ մշակութային ժառանգության պահպանումն ու անխաթար փոխանցումը սերունդներին իր ամբողջ բազմազանությամբ իրականացնելու համար,
- ✓ ստեղծել մատչելի պայմաններ մշակութային արժեքներին հաղորդակցվելու համար:

Թանգարանների բնականոն աշխատանքի ապահովման ուղղությամբ Տավուշի մարզում նախատեսված է 2012թ. ՀՀ պետական բյուջեի նախագծում համապատասխան հայտի ներկայացում շենքային պայմանների բարելավման և նոր մշտական ցուցադրության կազմակերպման, շենքերի հիմնանորոգման, այդ թվում՝ ջեռուցման և անվտանգության համակարգերի տեղադրման նպատակով:

Իջևանի քաղաքային զբոսայգում խորհրդային շրջանում անց էր կացվում քանդակի միջազգային սիմպոզիում: Սիմպոզիումի ընթացքում ստեղծված քանդակները մնում էին քաղաքային զբոսայգում՝ ստեղծելով մի յուրահատուկ բաց թանգարան: Սիմպոզիումը սկիզբ է առել 1985 թվականին և շարունակվել մինչև 1991 թվականը: Այդ ընթացքում դրան մասնակցել է շուրջ 20 երկրի 95 քանդակագործ: Նրանց ստեղծած աշխատանքներն այսօր էլ յուրահատուկ շունչ են տալիս քաղաքին: Կառավարության արտագնա նիստի ժամանակ Գործադիրը հավանություն է տվել քանդակի Իջևանի սիմպոզիումի վերականգնման ծրագիր-առաջարկին: Իջևանի սիմպոզիումը նախատեսված է վերականգնել 2011 թվականին: Սիմպոզիումը ոչ միայն կհարստացնի քաղաքը նոր քանդակներով, այլև զբոսաշրջիկների համար հետաքրքիր և գրավիչ մշակութային միջոցառում կլինի:

Վերը նշված հիմնախնդիրների լուծումը կնպաստի թանգարանների մշակութային ազդեցության լայնացմանը, այցելուների հոսքի մեծացմանը, ներթանգարանային կառուցվածքի կատարելագործմանը, նոր թանգարանային մասնագիտությունների առաջացմանը, և որպես հետևանք՝ թանգարանների ֆինանսական անկախությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Лыскова О.Л. *Музеи мира*, Москва, 2002г.
2. Газалова К.М. *Музей в современном мире*, Москва, 2002г.
3. Чевтайкина *Традиции и новаторство в проектировании современных музейных экспозиций*
4. Дурович *Организация туризма*, Минск, 2003г.
5. Горбылева *Экономика туризма*, Минск, 2001г.
6. www.muzeum.ru
7. www.dilijanvisitor.am

А.В. УЛИХАНЯН – Проблемы музейного дела Тавушской области. – Тавушская область богата культурно-историческими комплексами, старинными крепостями, живописными уголками, музеями. Тавуш всегда был известен своими культурными традициями. Его будущее главным образом связывается с развитием туризма. В Тавушской области есть 4 музея и 2 галереи. В музее Дилижана хранятся редкие картины известных художников, таких как И. Айвазовский, Гарзу, Е. Тадевосян, Г. Башинджагян и.т.д. Музеи играют большую роль в развитии культурного туризма. Однако, сегодня музеи области имеют множество проблем. В статье анализируются проблемы, связанные с музейным делом Тавушской области. Среди них можно упомянуть финансовые проблемы, связанные с состоянием сооружений музеев, с приобретением новых экспонатов и.т.д. Решение этих проблем может способствовать развитию культурного туризма в регионе.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իրավիճակը և բժշկասանիտարական գործի կազմակերպումը Վանի նահանգապետության գավառներում (1915թ. մայիսի 7 – հուլիսի 18)..... 3

В.Г. ТУНЯН

Департамент полиции и “Дашнакцутюн” 1908 г. 12

Ն.Է. ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ – ամերիկյան հարաբերությունների զարգացման ընթացքը 1830 – 1890-ական թվականներին..... 22

Ա.Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Սատևնում Համիդյան կոտորածների բացահայտումը «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը 1895 թվականին» ժողովածուում..... 28

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռ.Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

«Ազգ»–արենակցական համակարգը հայոց մեջ..... 35

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ա. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Եղիշե Չարենց – Նիկողոս Սարաֆեան. Ուրուագիծ մը գրական ղիմանկարներու խորքէն..... 46

Ա.Ա. ՍԱՐԶԱՏՅԱՆ

Մարդկային հույզերի արտացոլանքները Մեծ հայրենականի քնարերգության մեջ 53

Ա.Ա. ԱՂԱՍՅԱՆ

Կյանքի և մահվան փիլիսոփայությունը Մկրտիչ Սարգսյանի «Կյանքը կրակի տակ» վեպում 60

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լ.Պ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Ռուսերենի միջոցով ֆրանսիական ծագում ունեցող բառերի փոխառությունները հայերենում 67

Ա.Ս. ՄԱՐԴԱՆՅԱՆ, Ա.Ա. ՎԱՆԵՍՅԱՆ

Ֆրանսերենի ասացվածքների թարգմանության որոշ առանձնահատկություններ..... 72

<i>Ա.Ա. ՎԱՆԵՍՅԱՆ</i>	
Բանաստեղծության թարգմանությունը որպես նոր իմաստի սկիզբ (Ռընե Շար)	77

<i>L.A. SAKANIAN</i>	
Les particularités référentielles du pronom «on».....	84

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<i>Լ.Ղ. ՇԻՐԻՆՅԱՆ</i>	
Հայոց հարցի ազգային հայեցակետը (Վարանդյան-իրապաշտը)	89

<i>Գ.Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ</i>	
Վարչական իրավունքի զարգացման առանձնահատկությունները հայկական պետական կազմավորումներում	99

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<i>Ս.Ի. ՀԱԿՈԲՅԱՆ</i>	
Ինքնագիտակցություն հասկացության հոգեբանական բնութագիրը և դրա ուսումնասիրության հիմնական չափորոշիչները	106

<i>N. GASPARYAN</i>	
Smile in different cultures	114

<i>Վ.Ե. ՀՈՎՍԵՓՅԱՆ</i>	
Ժամանակակից ֆինանսա-տնտեսական ճգնաժամի սոցիալ-տնտեսական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում	125

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

<i>A.S. MARDANIAN, A.M. HOVHANNISSIAN</i>	
Le rôle de l'autonomie des apprenants dans l'enseignement du français comme langue seconde.....	131

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

<i>Բ.Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ</i>	
Ստեփանոս Նազարյանը որպես լուսավորիչ և կրթական գործիչ.....	137

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

<i>Ա.Վ. ՈՒԼԻԻՍԱՆՅԱՆ</i>	
Թանգարանային գործի հիմնախնդիրները Տավուշի մարզում	141

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 15.07.2011 թ.:
Չափսը՝ $70 \times 100^{1/16}$: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 7.8 մամուլ,
տպագր. 9.375 մամուլ = 8.72 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 147:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: